These so-called push-backs are still highly controversial in legal terms. Their legal assessment is largely dependent on political preconceptions!

So what is the view of the European Court of Human Rights in Strasbourg on these issues?

The Court in Strasbourg has not yet taken a clear position on the legality of so-called push-back operations. In 2012, it ruled that push-backs on the high seas - in the Mediterranean - to Libya constitute a violation of the prohibition of refoulement under Article 3 of the European Convention on Human Rights¹¹. However, this ruling was re-

¹⁰ Directive 2013/32/EU of the European Parliament and of the Council of 26 June 2013 on common procedures for granting and withdrawing international protection, OJ L 180, pp. 60 et seq.

¹¹ ECtHR, judgement of 23 February 2012, Case of Hirsi Jamaa and others versus Italy, Application no. 27765/09, hudoc.

lativised by two subsequent decisions from 2020¹² and 2022¹³, in which it declared the refoulement of illegal migrants at the Spanish and North Macedonian borders to be compatible with the Convention.

I myself am one of the more conservative legal experts who reject such an individual human right to enter a foreign state. For me, the reason for this is the territorial sovereignty of nation states, which only allows them to decide on the entry of foreign nationals. Accordingly, there is no such thing as an unrestricted right of entry, a human right to migration!

Finland, Lithuania and Poland are of the same opinion and are currently enacting national laws to legalise push-back operations at their borders.

4.5. Outsourcing of Protection Status Checks to Third Countries

Another variant:

With the aim of preventing the illegal entry of migrants, there have recently been increasingly loud calls in the EU for asylum procedures to be outsourced to territories outside the EU. There is still refugee protection for anyone who needs it, just not in Europe. The aim of such an upstream examination is to ensure that migrants without protection status can be deported more quickly; the so-called prohibitions of refoulement would then naturally not apply. The model also relies on deterrence: The path to Europe is blocked!

Such a model of extraterritorial refugee protection is not new. Back in 2001, Australia introduced the so-called Pacific Solution by law, according to which migrants are taken to reception centers in Papua New Guinea to prevent them from applying for asylum on Australia's own territory. Examples in Europe include the Rwanda and Albania models.

4.5.1. The Rwanda Model

In 2021, the Danish legislator decided that asylum procedures should be carried out in countries outside Europe - namely in Africa. In these third countries, however, not only should the asylum procedure be carried out, but migrants with a positive decision should also be given access to the labor market, education and healthcare in these (!) countries in addition to protection from persecution. In return, the African state was to receive financial aid amounting to several billion euros.

The United Kingdom concluded a similar agreement with the African country of Rwanda in 2022¹⁴. The Danish and British plans are currently not being pursued following an intervention by national courts.

¹² See ECtHR, judgement of 13 February 2020, Case of N.D. and N.T. versus Spain, Application nos. 8675 und 8697/15, hudoc.

¹³ ECtHR, judgement of 5 April 2022, Case of A.A. and others versus North Mecedonia, Application no. 55798/16, hudoc.

¹⁴ *Peter Molt*, Rwanda as a Model?, Konrad-Adenauer-Stiftung, International Reports of 18 October 2017.

4.5.2. *The Albania Model*

An agreement between Italy and Albania pursues the same objective, albeit in a different way to the Rwanda model¹⁵. The agreement initiated by Italian Prime Minister *Georgia Meloni* on the operation of two reception centers in Albania is designed for 36,000 asylum applications per year. However, it ultimately only provides for the relocation of protection procedures. Unlike the Rwanda model, European and Italian law is to be applied throughout. If the decision is positive, the migrant will only receive protection in Italy. This also distinguishes the Albania model from the Rwanda model. Albania is also a candidate country.

There are always skeptics who consider the outsourcing of refugee protection to third countries to be contrary to European law due to the so-called prohibitions of re-foulement. Nevertheless, the European Commission in Brussels has deemed the Albania model to be unobjectionable. The case law of the European Court of Human Rights also permits such a model.

Interesting for you in Armenia: Some European countries are already considering whether to adopt the Albania model and outsource upstream protection status checks to other candidate countries in exchange for financial aid.

4.6. *Restrictions on Family Reunification*

Until recently, Germany alone had 500,000 Syrians in the country claiming to be joined by their families from Syria. With just two more family members joining them, the number of these immigrants would triple to 1.5 million people. In order to reduce the influx of refugees in the long term, there have therefore been calls in Europe for decades for family reunification to be restricted.

There are many political concepts for such a restriction on family reunification in the so-called host countries¹⁶. However, there is a minimum consensus that only legal migrants can request the reunification of family members from third countries anyway. But even within this group, limits are to be set. First concept: family reunification only for those already granted asylum, not for other refugees with “second-class” protection status. Second concept: only parents - not extended family - should be allowed to join unaccompanied minor refugees. Third concept: reunification with migrant minors only in cases of hardship. Fourth concept: introduction of so-called numerical upper limits for family reunification - for example up to 1,000 family members per month.

What legal problems are there here?

The right to family is protected in Article 8 of the European Convention on Human Rights. According to the case law of the European Court of Human Rights in Stras-

¹⁵ Nadine Bieler, Die Externalisierung des europäischen Flüchtlingsschutzes – Das Albanien-Modell, Stiftung Politik und Wissenschaft, SWP-Aktuell 2024/A12 vom 5. März 2023.

¹⁶ For more details see Tanis Jordan, „Fortress“ Europe, Geostrategic Studies, Brussels 2020, pp. 60 et seq.; Gregory Mosda, The Limits of Immigration, Compendix, Dublin 2019, pp. 21 et seq.

bourg, it is not possible to derive an unrestricted right to family reunification from this; however, a blanket refusal is not permitted. The decisive factor is whether it would be reasonable for the family to live together in their country of origin. It is also unclear who is actually entitled to the right to family reunification: the minor children in the EU or the family abroad. As an administrative court judge, I have seen cases in which underage daughters have refused to allow their fathers and brothers to join them because they feared that they would be “forcibly married” by them in Germany.

4.7. Agreements with Neighboring Countries - The EU-Turkey Readmission Agreement

The EU has long been pushing for agreements with neighboring countries to prevent migrants from traveling on to Europe. Most recently, such agreements were reached with Tunisia, Egypt and Lebanon. The EU has long supported the coast guard in Libya, for example.

The EU-Turkey Readmission Agreement from 2014¹⁷, which continues to form the basis of the EU’s migration policy, should be highlighted at this point. A brief look at its content: Illegal migrants who make their way to Greece are returned to Turkey. According to the so-called one-to-one principle, for every returned illegal migrant, a legal migrant is to be brought from Turkey to the territory of the EU and distributed there¹⁸.

The legal problems of this readmission agreement are obvious: due to the complete “sealing off” of the Greek border and so-called chain deportations from Turkey - for example to Syria - there are violations of the two so-called refoulement bans. I have already described these.

4.8. So-called Numerical Upper Limits, Quotas and Contingents

The most radical proposal for stemming the influx of refugees into Europe is the introduction of so-called numerical upper limits for refugees. However, it is not entirely clear what this means: should the entry of migrants be limited by imposing certain quotas or contingents? Or - in the case of uncontrolled entry - should the scope of refugee protection be limited in terms of content, for example by only granting residence rights for a limited period of time or by shortening the legal status of persons with a right of residence?

The reason for this proposal is obvious to everyone: The absorption capacity of every society is exhausted at some point! In Germany, the proponents of this proposal assume a so-called numerical upper limit of 200,000 migrants per year.

Legally permissible?

No! - Neither the European Convention on Human Rights nor the UN Convention

¹⁷ Agreement between the European Union and the Republic of Turkey on the readmission of persons residing without authorisation, OJ L 134, 7 May 2014, pp. 3 et seq.

¹⁸ See Norbert Bernsdorff, in: Jürgen Meyer/Sven Hölscheidt, Charta der Grundrechte der Europäischen Union – Kommentar, 6. Aufl. 2024, Art. 19 Rn. 27 f.

Relating to the Status of Refugees of July 1951 contains - say the experts - a so-called general reservation of capacity or even a so-called fiscal reservation of capacity. These international treaties therefore do not permit such a radical measure. They would first have to be amended before so-called numerical upper limits could be introduced.

5. A Special Problem: Conscientious Objection and Desertion from Military Service as Reasons for Asylum

I picked out this special problem at the end of my contribution because asylum applications based on it are playing an increasingly important role in the so-called host countries¹⁹.

A few general remarks to begin with: Under international law, states may require their nationals to perform military service! They are allowed to do so. They may also make refusal to do so a criminal offense. At the same time, however, states must offer the possibility of conscientious objection to military service and the possibility of performing non-military alternative service. Article 9 of the European Convention on Human Rights obliges them to do so; this includes a human right to conscientious objection to military service. To avoid any misunderstanding: such a right cannot be asserted against the so-called host countries, as it is not the host states that demand military service. Conscientious objectors and deserters from military service can therefore only receive protection in the so-called host countries by being recognized as persons entitled to asylum.

Are such circumstances relevant to asylum? - This must be examined on a case-by-case basis!

First of all, the reasons for the refusal of military service must be examined: If conscientious objection is based solely on fear of combat and not on any inner conviction, it has no significance for asylum recognition²⁰. A conscientious objection exists, however, if someone is a pacifist and rejects any use of armed force. Conscientious objection may also be merely “situational” and be limited to specific conflicts without generally rejecting the use of armed force. In such cases, it must always be taken into account that the country of origin often assumes that the refusal to participate in acts of war is based on a certain political conviction: The governments in the states of origin regularly see this as a demonstration of politically justified rejection of their military interventions! I know very well from my own experience how difficult it is to “examine one’s conscience”: as an administrative court judge in Germany, I had to judge around 80 cases of German conscientious objectors.

The aforementioned “examination of conscience” is followed by the question of

¹⁹ *Art Kingsley*, *Challenges of European Migration Policy*, Political Papers, Oxford 2023, pp. 126 et seq.; *Geopolitics – Strategies – Measures*, Political Considerations, Brussels 2024, pp. 1 et seq.

²⁰ See *Art Kingsley*, *Challenges of European Migration Policy*, Political Papers, Oxford 2023, pp. 126 et seq.; *Gregory Mosda*, *The Limits of Immigration*, Compendix, Dublin 2019, pp. 21 et seq.; *Tanis Jordan*, „Fortress“ Europe, *Geostrategic Studies*, Brussels 2020, pp. 60 et seq.

what consequences the objectors would face if they were to return to their country of origin. Are these - punishment or non-military alternative service - disproportionately harsh, violating international law, or can they be accepted as meaningless?²¹

What is the current position of the courts in Germany?

They are very careful! - In their case law, they take into account the relevant EU Qualification Directive from 2011²², according to Article 9 of which conscientious objectors and deserters from military service must be classified as refugees in the host country in the event of a war deemed by the United Nations to be in violation of international law! However, German courts currently often doubt that such persons were actually deployed in a war if the refusal of military service took place before the start of the war. This connection must be made credible in the asylum procedure. However, even if these individuals can provide proof of their call-up for military service, German courts often do not consider their deployment in a war to be sufficiently probable; the hurdles here are very high. It is also unclear how German courts will deal in future with the case law of the European Court of Human Rights in Strasbourg, according to which at least an attempt must have been made in the country of origin to apply for conscientious objection. You will agree that such request is often not possible in practice if the situation escalates.

6. Conclusion

The overview of the current concepts of European migration policy that I have presented was naturally only a sketch; it could be expanded on in legal terms in many places. However, even my brief remarks show that the European states want to counter the influx of refugees primarily with restrictions that relate to their territory: expulsion and refusal of entry. Here, however, the so-called refoulement prohibitions of the European Convention on Human Rights (Article 3) and the UN Convention Relating to the Status of Refugees of July 1951 (Article 33) pose legal “barriers” that are almost impossible to overcome. There is universal consensus that the massive immigration of illegal migrants must be slowed down. This has obviously also been recognized by the European Court of Human Rights in Strasbourg, which takes the pressure under which the so-called host countries are seriously and is therefore gradually softening its case law.

²¹ See *Jürgen/Kuhlmann/Ekkehard Lippert*, Kriegsdienstverweigerung und Zivildienst in Deutschland, SOWI-Arbeitspapier Nr. 49 vom 4. April 1991.

²² Directive 2011/95/EU of the European Parliament and of the Council of 13 December 2011 on standards for the qualification of third-country nationals or stateless persons as beneficiaries of international protection, for a uniform status for refugees or for persons eligible for subsidiary protection, and for the content of the protection granted, OJ L 337, pp. 9 et seq.

Reference list (գրականության ցանկ, список литературы)

1. N. Bernsdorff, in: J. Meyer/S. Hölscheidt, Charta der Grundrechte der Europäischen Union – Kommentar, ISBN 978-3-8487-5548-6, 6. Aufl. 2024, Art. 19 Rn. 27 f.
N. Bernsdorff, in: J. Meyer/S. Hölscheidt, Charter of Fundamental Rights of the European Union – Commentary, ISBN 978-3-8487-5548-6, 6th edition 2024, Art. 19 marginal no. 27 et. seq.
2. N. Bieler, Die Externalisierung des europäischen Flüchtlingsschutzes – Das Albanien-Modell, Stiftung Politik und Wissenschaft, SWP-Aktuell (ISSN 1611-6364) 2024/A12 vom 5. März 2023.
N. Bieler, The externalisation of European refugee protection – The Albania model, Stiftung Politik und Wissenschaft, SWP-Aktuell (ISSN 1611-6364) 2024/A12 of 5 March 2023.
3. T. Jordan, „Fortress“ Europe, Geostrategic Studies, Brussels 2020, p. 60.
4. A. Kingsley, Challenges of European Migration Policy, Political Papers, Oxford 2023, p. 126.
5. J. Kuhlmann/E. Lippert, Kriegsdienstverweigerung und Zivildienst in der Bundesrepublik Deutschland, SOWI-Arbeitspapier Nr. 49 vom 4. April 1991.
J. Kuhlmann/E. Lippert, Conscientious objection and community service in the Federal Republic of Germany, SOWI-Arbeitspapier No. 49 of 4 April 1991.
6. P. Molt, Rwanda as a Model?, Konrad-Adenauer-Stiftung, International Reports (ISSN 0177-7521) of 18 October 2017.
7. G. Mosda, The Limits of Immigration, Compendix, Dublin 2019, p. 21.
8. Wissenschaftliche Dienste des Deutschen Bundestags, Maßnahmen gegen Gefährder, WD3-3000-260/20.
Wissenschaftliche Dienste des Deutschen Bundestags, Measures against Gefährders (dangerous persons), WD3-3000-260/20.
9. Council Directive 2001/55/EC of 20 July 2001 on minimum standards for giving temporary protection in the event of a mass influx of displaced persons and on measures promoting a balance of efforts between Member States in receiving such persons and bearing the consequences thereof, OJ L 212, p. 12.
10. Directive 2011/95/EU of the European Parliament and of the Council of 13 December 2011 on standards for the qualification of third-country nationals or stateless persons as beneficiaries of international protection, for a uniform status for refugees or for persons eligible for subsidiary protection, and for the content of the protection granted, OJ L 337, p. 9.
11. Directive 2013/32/EU of the European Parliament and of the Council of 26 June 2013 on common procedures for granting and withdrawing international protection, OJ L 180, p. 60.
12. Regulation (EU) No. 604/2013 of the European Parliament and of the Council of 26 June 2013 establishing the criteria and mechanisms for determining the Member State responsible for examining an application for international protection lodged in one of the Member States by a third-country national or a stateless person, OJ L 180, p. 31.
13. Agreement between the European Union and the Republic of Turkey on the readmission of persons residing without authorisation, OJ L 134, 7 May 2014, p. 3.
14. New Pact on Migration and Asylum, COM/2020/609 final.
15. ECtHR, judgement of 23 February 2012, Case of Hirsi Jamaa and others v. Italy, Application no. 27765/09, hudoc.
16. ECtHR, judgement of 13 December 2016, Case of Paposhvili v. Belgium, Application no. 41738/10, hudoc.

17. ECtHR, judgement of 13 February 2020, Case of N.D. and N.T. v. Spain, Application no. 8675 and 8697/15, hudoc.
18. ECtHR, judgement of 5 April 2022, Case of A.A. and others v. North Macedonia, Application no. 55798/16, hudoc.
19. EU verlängert Schutzstatus für Geflüchtete aus der Ukraine bis 2027, migrando vom 2. Juli 2025.
EU extends protection status for refugees from Ukraine until 2027, migrando of 2 July 2025.

Նորբերթ Բերնադորֆ

*Իրավաբանական գիտությունների դոկտոր, Մարբուրգի Ֆիլիպսի անվան
համալսարանի պատվավոր պրոֆեսոր, Հիմնարար իրավունքների
Եվրոպական միության խարտիայի ազգային փորձագետ (Վիեննայում),
Գերմանիայի դաշնային սոցիալական դատարանի նախկին դատավոր,
ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի
խմբագրական խորհրդի անդամ*

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐՑ՝

Համառոտագիր

Եվրոպան տարիներ շարունակ բախվել է միգրացիոն քաղաքականության լուրջ մարտահրավերների: Արտաքին դիտանկյունից Եվրոպան նպատակակետ է իրենց հայրենիքներում սովից, տառապանքից և պատերազմից փախչող և Եվրոպայում պաշտպանություն փնտրող միգրանտների համար: Միգրացիոն քաղաքականության իրավական մարտահրավերները ներառում են մի կողմից մարդու իրավունքների միջև որոշակի հակասություններ, մյուս կողմից՝ սահմանային վերահսկողության խստացում և ապաստանի ընթացակարգերի՝ երրորդ երկրներին փոխանցում: Խնդիրներից են նաև ապաստան հայցողների հայրենադարձման դժվարությունները ապաստանի մերժման դեպքում, ծագման երկրների հետ համագործակցության բացակայությունը և եվրոպական երկրների միջև բեռի արդար բաշխման հարցը:

Տարուները այժմ վերանում են Եվրոպայում: Հետևյալ հոդվածը ընդգծում է միգրացիոն քաղաքականության մեջ պահպանվող իրավական սահմանափակումները:

Հիմնաբառեր - միգրացիոն քաղաքականություն, դրդող գործոններ, ձգողական գործոններ, փախստականների բաշխում, Միգրացիայի և ապաստանի մասին պայմանագիր, արտաքսում, վերադարձի արգելք, վերաընդունման համաձայնագրեր, հետ մղում, Ռուանդայի և Ալբանիայի մոդելներ, ընտանիքի վերամիավորում, թվային վերին սահմաններ, դասավորությունը՝ որպես ապաստանի հիմք:

¹ Հոդվածը ներկայացվել է 23.09.2025 թ., գրախոսվել է 15.01.2026 թ.:

Норберт Бернсдорф

Доктор юридических наук, почётный профессор Марбургского университета имени Филиппа, национальный ключевой эксперт Европейской хартии основополагающих прав (Вена), бывший судья Федерального суда по социальным делам Германии, член редакционной коллегии научно-практического журнала «Законность» Прокуратуры РА

**КОНЦЕПЦИИ МИГРАЦИОННОЙ ПОЛИТИКИ С
ТОЧКИ ЗРЕНИЯ ПРАВА¹**

Абстракт

Европа уже много лет сталкивается с серьёзными проблемами в миграционной политике. С точки зрения стороннего наблюдателя, она является пунктом назначения для мигрантов, которые спасаются от голода, нищеты и войн в своих странах и ищут защиты. Правовые проблемы миграционной политики включают, с одной стороны, противоречия между правами человека, а с другой – ужесточение пограничного контроля и передачу процедур предоставления убежища третьим странам. К числу других проблем относятся трудности с репатриацией лиц, которым было отказано в предоставлении убежища, отсутствие сотрудничества со стороны стран происхождения и вопрос справедливого распределения бремени между европейскими государствами.

В Европе сейчас рушатся табу. В данной статье освещаются правовые ограничения, которые необходимо соблюдать при формировании миграционной политики.

Ключевые слова: миграционная политика, факторы выталкивания, факторы притяжения, распределение беженцев, пакт о миграции и убежище, высылка, запрет на принудительное возвращение, соглашения о реадмиссии, выдворение, модели Руанды и Албании, воссоединение семей, верхние пределы численности, дезертирство как основание для предоставления убежища.

¹ Статья была представлена 23.09.2025 и прошла рецензирование 15.01.2026.

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՐԵՈՒԹՅԱՐ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍ ՊԱՏԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԳԱԳՐԾՈՒ ՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԸ

Համառոտագիր

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական նոր օրենսգիրք) ընդունումից հետո, ինչպես նաև 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական նախկին օրենսգիրք) դեռևս գործողության մեջ գտնվելու պայմաններում գործնականում խնդիր է առաջացել և առաջանում քրեական օրենքով նախատեսված խարդախության և խաբեությամբ գույքային վնաս պատճառելու հանցակազմերը սահմանազատելու հարցի վերաբերյալ: Խնդիրը մեծապես այն է, որ ինչպես նախկինում, այնպես է ներկայումս օբյեկտիվ կողմից նշված երկու հանցակազմերն էլ կատարվում են միևնույն եղանակով՝ խաբեությամբ և/կամ վստահությունը չարաշահելու միջոցով: Մրա հետ կապված է, որ հաճախ իրավակիրառողները խաբեությամբ գույքային վնաս պատճառելու հանցակազմը որոշ դեպքերում որակում են որպես խարդախություն, իսկ խարդախությունը՝ հակառակը, երբեմն որակվում է որպես խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառել:

Նախկինում գործած քրեական օրենսգրքերում (1961 և 2003 թվականներին ընդունված) վերը նշված հանցակազմերը ներառված էին իրավական ակտի միևնույն գլուխներում՝ որպես սեփականության դեմ ուղղված հանցագործություններ: Տեսական գրականության մեջ քննադատաբար են մոտեցել այս երկու հանցակազմերը միևնույն գլխում նախատեսելուն²: Նշվածի հիմնավորումն այն է, որ հափշտակությունները սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններից հստակորեն սահմանազատելը կարևոր նշանակություն ունի այդ հանցագործությունների իրավական ճիշտ որակման համար:

¹ Հոդվածը ներկայացվել է 17.04.2026 թ., գրախոսվել է 25.05.2026 թ.:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս (չորրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Գ. Ս. Ղազինյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 363-364:

Կարծում ենք, որ նման տեսակետն արդարացված է, ինչի մասին է վկայում նաև այն, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքում հստակորեն տարանջատվեցին հափշտակությունները և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունները: Օրենսդրի կողմից նման տարանջատումը կարևոր է նաև գործնականում հափշտակությունները սեփականության դեմ ուղղված մյուս հանցատեսակներից տարբերակելու և կատարված արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու տեսանկյունից:

Հիմնաբառեր - հափշտակություն, խարդախություն, խաբեություն կամ վստահությունը չարաշահել, գույք, խաբեությամբ գույքային վնաս պատճառել:

Ներածություն

1. ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 255-ՐԴ ԵՎ 259-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Ընդհանուր դրույթներ

Նախևառաջ, հարկ է նշել, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքում, ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի, հստակորեն տարանջատվել են հափշտակությունները և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունները:

Ընդ որում՝ հարկ է փաստել, որ առաջին անգամ ՀՀ քրեական օրենսգրքում տրվել է հափշտակության հասկացությունը, ինչը թույլ է տալիս հստակորեն սահմանազատել հափշտակությունները համաբնույթ այլ հանցատեսակներից (շորթումից, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելուց և այլն)³:

Իրավաբանական գրականության մեջ երկար տարիներ բանավեճ է եղել՝ կապված «հափշտակություն» հասկացության հետ: Սակայն ՀՀ նոր քրեական օրենսգրքի⁴ ընդունմամբ այս հարցը, բարեբախտաբար, կարգավորվել է և տրվել է հափշտակության հասկացության հստակ սահմանումը:

1961 թվականի ՀԽՍՀ քրեական օրենսգրքի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ միևնույն գլխում ներառված էին 89-րդ հոդվածը՝ գույքի հափշտակումը խարդախության միջոցով, և 93-րդ հոդվածը՝ խաբեության կամ վստահությունն ի չարը գործադրելու միջոցով գույքին վնաս պատճառելը:

1961 թվականի ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի համա-

³ ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Ա. Գաբուգյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, փորձագիտական խմբի համակարգող՝ Գ. Ղազինյան, խորհրդատու փորձագետ՝ Հ. Ասատրյան, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022թ., էջ 315:

⁴ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը, ընդունված՝ 05.05.2021 թվականին, ուժի մեջ մտած՝ 01.07.2022 թվականին (ՀՕ-199-Ն):

ձայն՝ «*ուրիշի գույքին տիրանալը կամ գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը խաբեության կամ վատահոյությունը չարաշահելու միջոցով (խաբողախություն)*»:

Նույն օրենսգրքի 93-րդ հոդվածի համաձայն՝ «*խաբեության կամ վատահոյությունը ի չարը գործադրելու միջոցով գույքային վնաս պատճառելը, եթե չկան հափշտակման հատկանիշներ*»:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում խաբողախությունը (178-րդ հոդվածը) և գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վատահոյությունը չարաշահելու եղանակով (184-րդ հոդվածը) նույնպես ներառված են մինևույն՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ գլխում:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի համաձայն՝ «*Խաբողախությունը՝ խաբեության կամ վատահոյությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը (...)*»:

Նույն օրենսգրքի 184-րդ հոդվածի համաձայն՝

«*Խաբեության կամ վատահոյությունը չարաշահելու եղանակով սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողին խոշոր չափերի վնաս պատճառելը, եթե բացակայում են հափշտակության հատկանիշները (...)*»⁵:

Ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքերի՝ ՀՀ նոր օրենսգրքում խաբողախությունը (օրենսգրքի 255-րդ հոդվածը), ի թիվս ավագակության, կողոպուտի, գողության և համակարգչային հափշտակության, ներառվել է «Հափշտակություններ» գլխում, իսկ գույքային վնաս պատճառելը խաբեության, վատահոյությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով (259-րդ հոդվածը)՝ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ գլխում՝ շորթման, սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով գույքային վնաս պատճառելու գրավառուն վնաս պատճառելու, ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու և մի քանի այլ հանցակազմերի շարքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«*Խաբողախությունը՝ խաբեության կամ վատահոյությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը (...)*»:

Նույն օրենսգրքի 259-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«*Խաբեության, վատահոյությունը չարաշահելու կամ կեղծ տեղեկություն տարածելու կամ ապօրինի այլ եղանակով մեկ ուրիշին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը, որը դրսևորվել է բաց թողնված օգուտի, գույքի մաշվածության կամ հարկադրված ծախսեր կատարելու ձևով (...)*»:

ՀՀ նոր քրեական օրենսգրքում տրվել է հափշտակության հասկացությունը.

Այսպես, 3-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն.

«**Հափշտակություն**՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցա-

⁵ Տե՛ս 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 01-ից ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգրքի (ՀՕ-528-Ն) 178-րդ և 184-րդ հոդվածները:

վորն այդ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել»:

Հարկ է նկատել նաև, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքում բացահայտվել է նաև խաբեության և վստահությունը չարաշահելու հասկացությունների բովանդակությունը: Այսպես, նշված օրենսգրքի 3-րդ հոդվածի 11-րդ կետը սահմանում է.

«Խաբեություն՝ դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելը՝ կոնկրետ փաստերը ձևախեղելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որն անձը պարտավոր էր հաղորդել»:

Նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 12-րդ կետը սահմանում է.

«Վստահությունը չարաշահել՝ որոշակի վարքագծով, խոստումներով կամ հանցագործությունից տուժածի հետ ունեցած միջանձնային հարաբերություններն օգտագործելով՝ հանցավորի կամ այլ անձի ապագա վարքագծի կամ ապագայում սպասվող փաստերի կամ իրադարձությունների կապակցությամբ անձին դիտավորությամբ մոլորության մեջ գցելը»:

1.2. Խարդախության՝ որպես հափշտակություն, քրեաիրավական բնութագիրը.

Ինչպես արդեն նշվել է, խարդախությունը դասվում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ հափշտակությունների շարքին: Ինչպես երևում է ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի բովանդակությունից, խարդախությունն իրենից ներկայացնում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակություն:

Թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է: Այս կապակցությամբ էական նշանակություն կարող է ունենալ թե գույքն ուրիշին հանձնելու գործում ով է նախաձեռնությունը դրսևորել, ինչպես նաև թե արդյո՞ք գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնելու տուժողի մտադրությունն առաջացել է հանցավորի կողմից նրան համոզելու և հորդորելու արդյունքում, թե՞ ոչ:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի իմաստով վերոնշյալ հանցավոր ներգործությունն իրականացվում է խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով: Այսինքն՝ օբյեկտիվ կողմից խարդախության հանցակազմը դրսևորվում է կատարման հատուկ եղանակով՝ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով:

Խաբեությունը, ինչպես վերևում նշվեց, գույքի սեփականատիրոջը կամ գույքը տիրապետողին մոլորության մեջ գցելու նպատակով դիտավորությամբ իրա-

կանությունը խեղաթուրելն է՝ կոնկրետ փաստերը ձևախեղելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որն անձը պարտավոր էր հաղորդել: Այսպիսով, կարելի է փաստել, որ խաբեությունը դրսևորվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

- ա) *իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթուրում,*
- բ) *իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով,*
- գ) *ճշմարտության մասին լռել՝ իրական մտադրության մասին լռելով,*
- դ) *այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որն անձը պարտավոր էր հաղորդել:*

Իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթուրման դեպքում հանցավորը գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի մոտ սխալ պատկերացում է ստեղծում գույքը նրա տնօրինությանն անցնելու օրինական հիմքերի մասին և առաջ բերում գույքի հանձնման օրինականության պատրանք (ակտիվ խաբեություն): Իրական, ճշմարիտ փաստերի խեղաթուրումը կարող է իրականացվել կամ բանավոր խոսքի միջոցով, կամ դրսևորվել որոշակի գործողություններով: Գործողությունների միջոցով փաստերի խեղաթուրումը, սակայն, ենթադրում է տուժողի վրա հանցագործի առավել ակտիվ ներգործություն⁶:

Ճշմարտության մասին լռելու դեպքում հանցավորը դիտավորյալ լռում է իրավական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների մասին, որի արդյունքում գույքի սեփականատերը կամ գույքը տիրապետողը մոլորության մեջ են ընկնում գույքը հանցավորին հանձնելու օրինական հիմքերի առկայության հարցում (պասիվ խաբեություն): Ճշմարտության մասին լռելը, սակայն, քրեորեն պատժելի է այն դեպքերում, երբ հանցագործը պարտավոր էր տուժողին իրազեկել այնպիսի հանգամանքների մասին, որոնց իմացության արդյունքում տուժողը մոլորության մեջ չէր ընկնի:

Խաբեության **ակտիվ և պասիվ** դրսևորումները թեև հարաբերականորեն ինքնուրույն են, այդուհանդերձ սերտորեն **փոխկապակցված են**, և երբեմն գրեթե անհնար է հստակ որոշել, թե կոնկրետ որ դեպքում որն է առկա: Ավելին, խաբեությունը հաճախ կարող է դրսևորվել վերը նշված եղանակներից մի քանիսով միաժամանակ: Օրինակ՝ հանցավորը գույքի հատկանիշների մասին տվյալները կարող է աղավաղել, խեղաթուրել, ձևախեղել՝ հայտնելով իրականությանը չհամապատասխանող տվյալներ⁷:

Վստահությունը չարաշահելն ուրիշի գույքին տիրանալու կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով հանցավորի կողմից, նրա և գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի միջև ձևավորված վստահության հարաբե-

⁶ Տե՛ս Լիա Ավետիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 23.1-րդ կետը:

⁷ Առավել մանրամասն տե՛ս Սեփականության դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի (գիտագործնական մեկնաբանություններ): Ս.Վ. Առաքելյան, Գ.Ս. Բաղդասարյան, Պ.Դ. Պետրոսյան: - Եր.: Արդարադատության ակադեմիա, 2024,- էջ 89:

րությունների օգտագործումն է: Արարքը խարդախություն որակելու համար բավարար չէ, որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով տուժողի մոտ վստահություն վայելի, այլ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս համոզի տուժողին իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները⁸:

Հանցագործի նկատմամբ տուժողի վստահությունը կարող է ինչպես իրավական, այնպես էլ փաստական հիմքեր ունենալ: Այլ կերպ՝ հանցավորի և տուժողի միջև առկա վստահության վրա հիմնված հարաբերությունները կարող են բխել ինչպես նրանց միջև առկա պայմանագրից, լիազորագրից և այլն, այնպես էլ առաջանալ հանցավորի և գույքը հանձնողի անձնական հարաբերություններից, հանցավորի կողմից նախկինում դրսևորած վարքագծից, հանցավորի անձնավորությունից և այլն:

Օբյեկտիվ կողմից՝ խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց, կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:

Սուբյեկտիվ կողմից՝ խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով:

Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա:

Խարդախության սուբյեկտիվ կողմը, ի տարբերության հափշտակությունների այլ տեսակների, ունի առանձնահատկություն, այն է՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները (ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո: Այսինքն՝ այն դեպքում, երբ հանցավորը մինչ գույքը վերցնելիս այն հափշտակելու դիտավորություն է ունեցել, արարքը ենթակա է որակման՝ որպես խարդախություն: Ամեն դեպքում, ցանկացած իրավիճակում չէ, որ հակառակը կարող ենք որակել որպես վստահված գույքի հափշտակություն, ինչը, կարծում ենք, որ առանձին քննարկման առարկա է):

Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտա-

⁸ Տե՛ս Լիա Ավետիսյանի գործով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 24-րդ կետը:

վորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո, խարդախության հանցակազմը բացակայում է:

1.3. Խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելու՝ որպես սեփականության դեմ ուղղված այլ հանցագործության քրեափրավական բնութագիրը

ՀՀ քրեական օրենսգրքի 259-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի օբյեկտիվ կողմը նույնպես նման է խարդախությանը: Այս դեպքում նույնպես հանցավորը դրսևորում է խաբեություն կամ վստահության չարաշահում: Ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքում հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ է դարձել նաև ապօրինի այլ եղանակով կատարվող արարքը: Բանն այն է, որ գործնականում հանդիպում են իրավիճակներ, որոնք չեն կատարվել խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով, սակայն գույքի սեփականատիրոջը պատճառել են գույքային վնաս: Որպես օրինակ կարելի է վկայակոչել այն դեպքը, երբ կազմակերպության պատասխանատու անձը տարածքը վարձակալությամբ հանձնում է այլ անձի, ինչի արդյունքում կազմակերպությունը գրկվում է վարձավճարի չափով օգուտ ստանալու հնարավորությունից: Նկարագրված օրինակում բաց թողնված օգուտի ձևով վնաս է պատճառվել կազմակերպությանը, սակայն այն օբյեկտիվ կողմից չի դրսևորվել խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով, այլ ապօրինի եղանակով՝ պայմանագրին համապատասխան ձևակերպումներ չտալու արդյունքում:

Տվյալ հանցակազմի առանձնահատկությունն այն է, որ նշված եղանակներից որևէ մեկի առկայության դեպքում տուժողը բաց թողնված օգուտի ձևով գրկվում է իր կողմից ողջամտորեն և իրավաչափորեն ակնկալվող եկամտից, առաջանում է գույքի մաշվածություն կամ հարկադրված որոշակի ծախսեր է կատարում:

2. ՀՀ ԲՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 255-ՐԴ և 259-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶՏՈՒՄԸ

Ինչպես արդեն մատնանշել ենք, «հափշտակություն» հասկացությունն ինքնին ենթադրում է ուրիշի գույքն ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով վերցնելը, կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Իսկ նշվածից, ըստ էության, հետևում է, որ արարքի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը՝ գործողությունը, դրսևորվում է նրանում, որ ուրիշի գույքը հանցավորի կողմից վերցվում և հանցավորինը կամ այլ անձինն է դարձվում:

Քննարկվող արարքի պարտադիր քրեափրավական հատկանիշ է հանդիսանում հափշտակվող գույքի՝ այլ անձին (ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, պետություն կամ համայնք) պատկանելու հանգամանքը: Հափշտակության

դեպքում անձի՝ ուրիշի գույքն ապօրինի կերպով իրենը դարձնելը բացասական ազդեցություն է ունենում նշված գույքին օրինական հիմքերով տիրապետողի գույքային ֆոնդի վրա, ինչն էլ իրենից ենթադրում է որոշակի նյութական վնաս: Ուրիշի գույքն իրենը կամ այլ անձինը դարձնելը հնարավոր է կատարել հափշտակվող գույքի՝ ուրիշին պատկանելու պարագայում: Գույքի՝ ուրիշին չպատկանելու դեպքում բացակայում է քննարկվող հանցակազմի օբյեկտը՝ քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող սեփականության այն հարաբերությունները, որոնք հափշտակության արդյունքում խախտվում են:

Հարկ է փաստել, որ հանցագործության օբյեկտի բացակայության պայմաններում քրեադատավարական տեսանկյունից բացակայում է նաև տուժողը, քանի որ առկա օրենսդրական կարգավորումների համաձայն՝ *տուժող է այն անձը, ում պատճառով է կամ կարող էր պատճառ վել (ի թիվս այլնի) գույքային* ինչճը պետք է նույնական լինի քրեական օրենքով նկարագրված վնասի հետ: Այլ կերպ ասած՝ հանցակազմի հատկանիշ հանդիսացող վնասի կրողը կամ հնարավոր կրողը կարող է քրեական վարույթում հանդես գալ որպես տուժող:

Խարդախության՝ որպես նյութական հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում հետևանքը՝ վնասը, որը պետք է հաստատվի քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալներով:

Նշվածից բխում է, որ հափշտակության դեպքում, հանցավորը առանց իրավական հիմքերի և անհատույց, իրենը կամ այլ անձինն է դարձնում ուրիշի գույքը՝ այն առանձնացնելով նրա գույքային ֆոնդից և մտցնելով իր կամ այլ անձի գույքային ֆոնդ:

Խարդախությունը սեփականության դեմ ուղղված հանցագործություն է, հետևաբար, դրա առարկա է հանդիսանում նյութական աշխարհի այն իրը (առարկան), որը հանդես է գալիս շարժական կամ անշարժ գույքի ձևով և ենթակա է դրամական հստակ գնահատման: Վերը շարադրվածից բխում է, որ խարդախության առարկա կարող են հանդիսանալ ցանկացած տեսքով ապրանքանյութական արժեքները, որոնք ունեն փոխանակման արժեք, գին և հանդիսանում են արժեքի դրամական արտահայտություն: Ըստ այդմ, քննարկվող հանցագործության առարկա չեն կարող հանդիսանալ ոչ նյութական բնույթի արժեքները՝ գիտական աշխատությունները, տեղեկատվությունը, ծառայությունները և այլն:

Վերոգրյալից հետևում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով աշխատանք կամ որոշակի ծառայություն ձեռք բերելը կամ պարտավորությունները չկատարելը չեն կարող որակվել որպես խարդախություն այդ հանցագործության առարկայի բացակայության պատճառով⁹:

Խարդախությունը՝ որպես հափշտակության տարատեսակ, ենթադրում է

⁹ Առավել մանրամասն տե՛ս Վարդան Մաթևոսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշման 24-րդ կետը:

խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքը ապօրինի, անհատույց վերցնելը, և այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե վերջիններս այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու փաստացի հնարավորություն են ունեցել: Հափշտակությունն անխուսափելիորեն հանգեցնում է նյութական բնույթի որոշակի բացասական հետևանքների, որոնք հանդես են գալիս իրական նյութական վնասի ձևով՝ առաջացնելով սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի գույքի իրական նվազում:

Ի տարբերություն խարդախության՝ գույքային վնաս պատճառելու դեպքում բացակայում են հափշտակության հատկանիշները (ինչն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 259-րդ հոդվածի դիսպոզիցիայում):

Այսպես, խարդախությունը դրսևորվում է ուրիշի գույքը վերցնելով, և այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով: Այլ խոսքով՝ խարդախության առարկան **փաստացի կամ իրավաբանորեն սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի ֆոնդում գտնվող գույքն է**, որը դուրս է գալիս նրա ֆոնդից և **մուտք է գործում հանցավորի կամ այլ անձի ֆոնդ:**

Ինչ վերաբերում է խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմին, ապա դրա առարկան կարող է հանդես գալ.

- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում չգտնվող գույքը, որը հանցավորի ապօրինի գործողությունների հետևանքով մուտք չի գործում նրանց ֆոնդ (բաց թողնված օգուտ): Օրինակ՝ հանցավորն անօրինական գիծ անցկացնելու կամ հաշվիչի ցուցիչը խախտելու միջոցով չի վճարում գազի կամ էլեկտրաէներգիայի վճարը և այլն:
- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում գտնվող գույքը, որը ապօրինի օգտագործվելու արդյունքում մաշվում է: Այս դեպքում գույքային վնասը դրսևորվում է մաշվածության (ամորտիզացիայի) հետևանքով նշված գույքի արժեքի նվազման միջոցով:
- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում գտնվող գույքը, որը քննարկվող հանցագործության հետևանքով դուրս է գալիս նրա ֆոնդից, սակայն այդ գույքը դուրս է բերվում ոչ ուղղակիորեն հանցավորի կողմից և չի դարձվում նրանը կամ նրա դիտավորությունում ընդգրկված այլ անձինը: Այս դեպքում գույքի դուրսբերումը սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդից դրսևորվում է որպես վերջիններիս կողմից իրենց օրինական պարտավորությունների կատարում (օրինակ՝ վարձակալի կողմից կոմունալ վճարումների չկատարման հետևանքով սեփականատիրոջ կողմից դրանց վճարումը, աշխատողի կողմից աշխատանքային գործունեության հետ չկապված անձնական նպատակներով գործատուի կողմից վճարվող կապի ծառայություններն օգտագործելը և այլն):

Վերոնշյալի հիման վրա ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ խաբեությանը և վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմը նույն եղանակով կատարվող հափշտակությունից՝ խարդախությունից, տարբերակելու հիմնական հատկանիշն այն է, որ քննարկվող հանցագործության առարկան կա՛մ չի գտնվում սեփականատիրոջ (այլ տիրապետողի) ֆոնդում, և վնասը դրսևորվում է բաց թողնված օգուտի ձևով, կա՛մ գտնվում է այդ ֆոնդում, սակայն վնասը դրսևորվում է գույքի մաշվածության կամ հանցավորի գործողությունների հետևանքով սեփականատիրոջ (այլ տիրապետողի) համար առաջացած օրինական պարտավորությունների կատարման հետևանքով: **Քննարկվող հանցակազմի դեպքում բացակայում են խարդախության հանցակազմի այնպիսի պարտադիր հատկանիշներ, ինչպիսիք են ուրիշի գույքը սեփականատիրոջ ֆոնդից վերցնելը և հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը¹⁰:**

ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքային վնաս պատճառելը *«խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողին խոշոր չափերի վնաս պատճառել [ն է], եթե բացակայում են հափշտակության հատկանիշները»:*

Մեջբերված նորմի բովանդակությունից հետևում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմը որոշակի հատկանիշներով նման է խարդախությանը: Մասնավորապես, թե՛ խարդախությունը և թե՛ գույքային վնաս պատճառելը սեփականության և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ են, սուբյեկտիվ կողմից դրսևորվում են ուղղակի դիտավորությամբ, իսկ օբյեկտիվ կողմից՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով¹¹:

Գործնականում, հաճախ այս հատկանիշների նմանությամբ պայմանավորված, հանցանք կատարած անձանց արարքներին տրվում է քրեաիրավական սխալ գնահատական: Այստեղ անհրաժեշտ է առաջին հերթին նկատի ունենալ, որ քննարկվող հանցակազմերը հիմնականում տարբերվում են հանցագործության առարկայով:

Եթե խարդախության դեպքում գույքը դուրս է գալիս սեփականատիրոջ ֆոնդից, ապա ՀՀ քրեական նոր օրենսգրքի 259-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարմամբ սեփականատիրոջ գույքային ֆոնդը չի պակասում, ուղղակի գույքը, որը պետք է մուտք գործեր սեփականատիրոջ ֆոնդ, հանցավորի գործողությունների պատճառով մուտք չի գործում, կամ նրան գույքային վնաս է պատճառվում բաց թողնված օգուտի ձևով:

Խարդախության դեպքում հանցագործության առարկան, ինչպես արդեն իսկ վերը նշվել է, գույքն է: Հարկ է նաև նկատել, որ գույքի հասկացությունը բա-

¹⁰ Այս մասին տե՛ս Միքայել Դիլանյանի գործով ՀՀ վճարելի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԲԴ/0105/01/14 որոշման 13.1-րդ կետը:

¹¹ Տե՛ս Միքայել Դիլանյանի գործով ՀՀ վճարելի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԲԴ/0105/01/14 որոշման 14-րդ կետը:

ցակայում է ՀՀ քրեական գործող օրենսգրքից, սակայն այն տրված է մեկ այլ իրավական ակտում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածում, որի համաձայն՝ մասնավորապես՝

«Քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝

1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, կրիպտոակտիվները, արժեթղթերը և գույքային իրավունքները (...):»:

Կարծում ենք, «գույք» հասկացության բովանդակության այդպիսի սահմանումը կիրառելի է նաև ՀՀ քրեական օրենսգրքի շրջանակներում: 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածում որպես խարդախության առարկա նշված էր ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը, սակայն ՀՀ քրեական նոր օրենսգրքում այսօրինակ ձևակերպում առկա չէ, քանի որ օրենսդիրը տվյալ օրենսգիրքը լրացուցիչ անգամ չի ծանրաբեռնել՝ ենթադրաբար հիմք ընդունելով, որ դրա հասկացությունն արդեն իսկ տրված է քաղաքացիական օրենսգրքում և կարող է տարածվել նաև քրեաիրավական հարաբերությունների վրա: Նման պայմաններում գույքի նկատմամբ իրավունքը ևս հանդիսանում է գույք, և ՀՀ քրեական նոր օրենսգրքում օգտագործվում է «գույք» հավաքական հասկացությունը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նկատել, որ, ի տարբերություն խարդախության, խաբեությամբ գույքային վնաս պատճառելու առարկան գույքը չէ (այն գույքը, որը գտնվել է սեփականատիրոջ ֆոնդում և հանցավորի գործողության արդյունքում այնտեղից դուրս է եկել և մտել հանցավորի սեփականության ֆոնդ): ՀՀ քրեական նոր օրենսգրքում, ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի, հստակորեն տրվել է նշված հանցագործության առարկայի հասկացությունը, այն է՝

- բաց թողնված օգուտ,
- գույքի մաշվածության կամ
- հարկադրված ծախսեր կատարելը:

Գործնականում քննարկվող հանցակազմերի ճիշտ որակումը պայմանավորված է նաև հանցագործությամբ անմիջականորեն վնաս պատճառված անձին տուժող ճանաչելու հանգամանքով:

Այսպես.

Պրակտիկայում մեծ տարածում է գտել հետևյալ իրավիճակը, երբ հանցավորը, անձանց գցելով մոլորության մեջ, վերջիններից ստացել է նրանց անձնագրային և բանկային քարտի տվյալները, որից հետո առցանց տարբերակով, առանց բանկ կամ վարկային կազմակերպություն այցելելու, մոլորության մեջ գտնվող անձանց, վերջիններիս անվամբ և առանց նրանց իմացության, ձևակերպել է վարկեր և տիրացել վարկի գումարին:

Վերը նկարագրված օրինակում հանցագործության առարկան ձևակերպված վարկի գումարն է՝ նյութական արժեքը՝ դրամական գնահատման ենթակա գու-

մարը: Այսինքն՝ տվյալ դեպքում այն հանդիսանում է հափշտակության, մասնավորապես՝ խարդախության առարկա, իսկ, ինչպես արդեն վերը նշվել է, գույքը (սեփականատիրոջ ֆոնդում գտնվող և հանցագործության արդյունքում այնտեղից դուրս եկող և հանցավորի սեփականության ֆոնդ մտնող) չի կարող հանդիսանալ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 259-րդ հոդվածի առարկա:

Այլ կերպ՝ հանցավորը ուրիշի գույքը նրա սեփականության ֆոնդից դուրս է բերել և ներառել իր սեփականության ֆոնդ և այդ գումարի չափով ավելացրել իր սեփականության ֆոնդը, իսկ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 259-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի դեպքում հանցավորի սեփականության ֆոնդը որևէ կերպ չի ավելանում և, միաժամանակ, տուժողի սեփականության ֆոնդը համապատասխանաբար չի պակասում: Այս երկուսի միաժամանակյա առկայության դեպքում է միայն, որ արարքը ենթակա է որակման որպես խարդախություն, այսինքն՝ այն դեպքում, երբ հանցավորի սեփականության ֆոնդն ավելանում է և նույն չափով պակասում է տուժողի սեփականության ֆոնդը: Հակառակ դեպքում արարքը ենթակա չի լինի որակման որպես խարդախություն:

Պրակտիկայում հանդիպում են նաև դեպքեր, երբ համանման իրավիճակում վարույթն իրականացնող մարմինը արարքը որակում է ՀՀ քրեական օրենսգրքի 259-րդ հոդվածի հանցակազմով՝ դիտելով, որ տուժողին պատճառվել է գույքային վնաս՝ վարկային պարտավորությունը մարելու տեսքով: Սակայն տվյալ դեպքում որպես վարկային պարտավորություն դիտում են վերցրած վարկի գումարը, այն դեպքում, երբ վարկային պարտավորությունը ենթադրում է վարկային պայմանագրում արտացոլված մարման ենթակա գումարը, այն է՝ մայր գումարը և դրան հաշվարկված տոկոսները ներառյալ:

Այլ կերպ ասած՝ նկարագրված պայմաններում հափշտակությունը կատարվել է կազմակերպության և ոչ թե նշված անձանց ֆոնդից, հետևաբար, հիշյալ դրվագներով ևս հանցագործության հետևանքով տուժել է կազմակերպությունը և ոչ թե նշված անձինք: Եթե տուժող է ճանաչվել քաղաքացին, ապա քաղաքացու վրա դրվել է վարկային պարտավորությունը մարելու պարտականություն, և հանցավորի արարքը ենթակա կլիներ որակման ՀՀ քրեական նոր օրենսգրքի 259-րդ հոդվածով: Սակայն անվիճելի է, որ նշված հոդվածով չի կարող որակվել հանցավորի արարքը, քանի որ նրա սեփականության ֆոնդն ավելացել է ձևակերպված վարկի գումարի չափով, ինչը հանդիսանում է հափշտակության առարկա: Այսինքն՝ տվյալ դեպքում կազմակերպության սեփականության ֆոնդից դուրս է եկել նշված գումարը և մտել է հանցավորի սեփականության ֆոնդ: Բացի այդ, մինչև գործարք կատարելը և դրանից հետո, քաղաքացու սեփականության ֆոնդը որևէ կերպ չի փոփոխվել, և վերջինս իր սեփականության ֆոնդն ավելացնելու ողջամիտ ակնկալիք տվյալ իրավիճակում չի էլ ունեցել, իսկ հակառակ դրան՝ կազմակերպության սեփականության ֆոնդը ձևակերպված վարկի գումարի չափով նվազել է և անմիջականորեն գույքային վնաս պատճառվել կազմակերպությանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով կատարվող հանցագործությամբ տուժողի գույքային ֆոնդը պակասում և դրա չափով ավելանում է հանցավորի սեփականության ֆոնդը, արարքը ենթակա է որակման որպես խարդախություն, իսկ այս հատկանիշներից մեկի բացակայության պայմաններում նոր միայն պետք է քննարկել արարքը որպես խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմով որակելու հարցը:

Եզրակացություն

Այսպես, խարդախության և խաբեությամբ գույքային վնաս պատճառելու հանցակազմերը ինչպես որոշ հատկանիշներով նման են միմյանց, այնպես էլ էականորեն տարբերվում են:

Մասնավորապես, խարդախությունը՝ որպես հափշտակության տարատեսակ, ենթադրում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքը ապօրինի, անհատույց վերցնելը, և այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե վերջիններս այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու փաստացի հնարավորություն են ունեցել: Ի տարբերություն դրա՝ գույքային վնաս պատճառելու դեպքում բացակայում են հափշտակության հատկանիշները (ինչն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 259-րդ հոդվածի դիսպոզիցիայում):

Դրանից գատ, խարդախությունը դրսևորվում է ուրիշի գույքը վերցնելով, և այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով: Իսկ խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմը խարդախությունից տարբերակելու հիմնական հատկանիշն այն է, որ քննարկվող հանցագործության առարկան կա՛մ չի գտնվում սեփականատիրոջ (այլ տիրապետողի) ֆոնդում, և վնասը դրսևորվում է բաց թողնված օգուտի ձևով, կա՛մ գտնվում է այդ ֆոնդում, սակայն վնասը դրսևորվում է գույքի մաշվածության կամ հանցավորի գործողությունների հետևանքով սեփականատիրոջ (այլ տիրապետողի) համար առաջացած օրինական պարտավորությունների կատարման հետևանքով:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունված՝ 1995 թվականի հուլիսի 05-ին, 2015 թվականի դեկտեմբերի 06-ի և 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխություններով):
Constitution of RA (adopted on July 05, 1995, with the editions of December 06, 2015 and June 22, 2020).
2. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված՝ 2021 թվականի մայիսի 05-ին և ուժի մեջ մտած 2022 թվականի հուլիսի 01-ից, ՀՕ-199-Ն):
Criminal Code of RA (adopted on May 05, 2021 and entered into force on July 1, 2022, NL-199-N).
3. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 01-ից ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգիրք (ՀՕ-528-Ն):
Criminal Code of RA adopted on April 18, 2003 and repealed on July 1, 2022 (NL-528-N).
4. Մեփականության դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի (գիտագործնական մեկնաբանություններ): Ս. Վ. Առաքելյան, Գ. Ս. Բաղդասարյան, Պ. Դ. Պետրոսյան: Եր.: Արդարադատության ակադեմիա, 2024, 207 էջ:
Crimes against property according to the new Criminal Code of the Republic of Armenia (scientific and practical comments): S.V. Arakelyan, G.S. Baghdasaryan, P.D. Petrosyan. Yerevan: Academy of Justice, 2024, 207 pages.
5. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, փորձագիտական խմբի համակարգող՝ Գ. Ղազինյան, խորհրդատու փորձագետ՝ Հ. Ասատրյան, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ., 497 էջ:
Guide to the interpretation of conceptual approaches and new institutions included in the new Criminal Code of the Republic of Armenia, A. Gabuzyan, A. Margaryan, T. Simonyan, expert group coordinator: G. Ghazinyan, consulting expert: H. Asatryan, Council of Europe, July 2022, 497 pages.
6. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս (չորրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Գ. Ս. Ղազինյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 1078 էջ:
Criminal Law of the Republic of Armenia, Special Part (fourth edition with amendments and additions), Yerevan State University, ed. G.S. Ghazinyan, Yerevan, YSU Publishing House, 2009 – 1078 pages.
7. Լիա Ավետիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշում
Decision of the the Cassation Court of RA dated 24.02.2011 in the case of Lia Avetisyan No. EKD/0176/01/09
8. Վարդան Մաթևոսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշում
Decision of the the Cassation Court of RA dated 08.06.2012 in the case of Vardan Matvosyan No. ESHD/0037/01/11
9. Միքայել Դիլանչյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԶԳ/0105/01/14 որոշում
Decision of the the Cassation Court of RA dated 24.06.2016 in the case of Miqayel Dilanchyan No. EAQD/0105/01/14

Armen Grigoryan

*Head of Department for Crimes against Property of the Prosecutor General's
Office of the Republic of Armenia, First Rank Counsellor of Justice*

COMPARATIVE LEGAL ANALYSIS OF THE CRIMES OF FRAUD AND CAUSING PROPERTY DAMAGE BY DECEPTION, PROVIDED BY THE CRIMINAL CODE OF THE RA¹

Abstract

Following the adoption of the Criminal Code of the Republic of Armenia, which entered into force on July 1, 2022 (hereinafter also referred to as the new Criminal Code of RA), and while the Criminal Code adopted on April 18, 2003 (hereinafter also referred to as the previous Criminal Code of RA) was still in effect, a practical problem arose and continues to arise concerning the distinction between the elements of the crime of fraud and causing property damage by deception, as provided for in the Criminal Code. The problem largely lies in the fact that, both previously and today, both aforementioned elements of the crime are objectively committed in the same way - by deception and/or abuse of trust. Consequently, law enforcement officials in some cases qualify the element of the crime of causing property damage by deception as fraud, while fraud, conversely, is sometimes qualified as causing property damage by deception, abuse of trust, or other illegal means.

In previous Criminal Codes (adopted in 1961 and 2003), the aforementioned offences were included in the same chapter as crimes against property. The inclusion of these two offences in the same chapter was criticised in the theoretical literature. The rationale was that a clear distinction between theft and other property crimes is essential for the correct legal classification of these crimes.

I think this view is justified, as evidenced by the fact that the new Criminal Code of the Republic of Armenia clearly distinguishes between theft and other property crimes. This distinction, made by the legislator, is also important in practice for distinguishing theft from other property crimes and for the correct criminal-legal assessment of the committed acts.

Keywords: embezzlement; fraud; deception or breach of trust; property; to cause property damage by deception.

¹ The article was presented on 17.04.2026 and was reviewed on 25.05.2026.

Армен Григорян

*Начальник управления по преступлениям против собственности
Генеральной прокуратуры Республики Армения, советник юстиции
первого класса*

СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ СОСТАВОВ ПРЕСТУПЛЕНИЙ МОШЕННИЧЕСТВА И ПРИЧИНЕНИЯ ИМУЩЕСТВЕННОГО УЩЕРБА ПУТЕМ ОБМАНА, ПРЕДУСМОТРЕННЫХ УГОЛОВНЫМ КОДЕКСОМ РА¹

Абстракт

После принятия Уголовного кодекса Республики Армения, вступившего в силу 1 июля 2022 года (далее – новый Уголовный кодекс РА), а также в период действия Уголовного кодекса, принятого 18 апреля 2003 года (далее – прежний Уголовный кодекс РА), на практике возникла и продолжает возникать проблема разграничения составов преступлений мошенничества и причинения имущественного ущерба путем обмана. Проблема в значительной степени заключается в том, что как прежде, так и сегодня оба упомянутых состава преступлений с объективной стороны совершаются одинаковым образом – путем обмана и (или) злоупотребления доверием. С этим связано то, что правоприменители в некоторых случаях квалифицируют причинение имущественного ущерба путем обмана как мошенничество, а мошенничество, наоборот, иногда квалифицируют как причинение имущественного ущерба путем обмана, злоупотребления доверием или иными незаконными средствами.

В предыдущих Уголовных кодексах (принятых в 1961 и 2003 годах) вышеупомянутые составы преступлений были включены в одну главу, объединяющую преступления против собственности. В теоретической литературе критически относились к включению этих двух преступлений в одну главу. Обоснованием этого являлось то, что четкое разграничение хищения и других преступлений против собственности имеет большое значение для правильной правовой квалификации деяний.

Я считаю, что такая точка зрения оправдана, о чем свидетельствует тот факт, что в новом Уголовном кодексе РА четко различаются хищения и другие преступления против собственности. Такое разграничение, проведенное законодателем, важно на практике для отграничения хищения от иных преступлений против собственности и для правильной уголовно-правовой оценки совершенных деяний.

Ключевые слова: хищение; мошенничество; обман или злоупотребление доверием; причинение имущественного ущерба путем обмана.

¹ Статья была представлена 17.04.2026 и прошла рецензирование 25.05.2026.

Արսեն Վարդանյան

Երևան քաղաքի դատախազի տեղակալ, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

ԱՊԱՑՈՒՅՑԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ¹

Համառոտագիր

Ապացուցումը, հանդիսանալով ամբողջ քրեական դատավարության կարևորագույն բաղադրատարրերից մեկը, մշտապես գտնվել է տեսաբանների և պրակտիկ աշխատողների ուշադրության կենտրոնում: Սույն աշխատությունում տեսական մակարդակով քննարկվել է ապացույցի հավաստիության հատկանիշի հասկացությունը, բովանդակությունն ու կիրառական նշանակությունը, ինչպես նաև ապացույցների ստուգման և գնահատման մի շարք հիմնահարցեր, օրենսդրության, ՄԻԵԴ վճիռների, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների, դատական պրակտիկայի, տեսական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա վերլուծվել են քրեական դատավարությունում ապացույցի հավաստիության ինստիտուտին վերաբերող մի շարք արդի հիմնախնդիրներ: Անդրադարձ է կատարվել ապացույցի հավաստիության գիտականորեն հիմնավորված հասկացության օրենսդրական սահմանման անհրաժեշտությանը: Առանձնակի ուշադրություն է դարձվել քրեադատավարական ապացույցի՝ ինքնուրույն հատկանիշ հանդիսացող հավաստիության օրենսդրական ձևակերպմանը, ապացույցի հավաստիության ապահովման երաշխիքներին և կառուցակարգերին, ապացույցի անարժանահավատության հանգեցնող հանգամանքներին և դրանց դրսևորումներին՝ առաջարկելով հատուկ գիտելիքների կիրառմամբ ձեռք բերվող ապացույցների հավաստիության ապահովման շրջանակում օրենսդրորեն ամրագրել եզրակացություն ներկայացնելուց, կարծիք տալուց կամ որևէ վարությամբ գործողության կատարմանը մասնակցելուց առաջ փորձագետին հարցաքննելու արգելքը: Ապացույցի հավաստիության ինստիտուտը, ստուգումն ու գնահատումը, ինչպես նաև դրա ապահովման երաշխիքները ապացուցման գործընթացի առավել բարդ փուլերից է, ինչն իր հերթին ենթադրում է գործնական աշխատանքում մի շարք խնդիրների առաջացման հավանականություն, որոնց ուսումնասիրումն ու քննարկումը կարող է նպաստել դրանց վերհանմանն ու արդյունավետ լուծումների որոնմանը, ինչն ինքնին մատնանշում է սույն աշխատության արդիականությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվել պրակտիկ

¹ Հոդվածը ներկայացվել է 17.04.2026 թ., գրախոսվել է 25.05.2026 թ.:

աշխատանքում առաջացող խնդիրներին, օրենսդրական բարեփոխումների համատեքստում ներդրված իրավական նոր մեխանիզմներին, ձևակերպվել են եզրահանգումներ՝ կատարելով ապացուցման ինստիտուտի հետագա զարգացմանն ուղղված որոշ առաջարկություններ:

Հիմնաբառեր - քրեական դատավարություն, փաստական տվյալ, ապացույցի հատկանիշներ, ապացույցի ստուգում և գնահատում, հավաստի ապացույց:

Ներածություն

Ապացուցման հիմնահարցերը կենտրոնական դեր են զբաղեցնում քրեական դատավարության գիտությունում և իրավակիրառ պրակտիկայում: Թեմայի արդիականությունը պայմանավորված է օրենսդրության արմատական փոփոխությամբ, ապացուցման գործընթացին վերաբերող նորագույն ինստիտուտների ներդրմամբ, ինչպես նաև պրակտիկայում առաջացող խնդիրներով: Ուսումնասիրության օբյեկտը ապացուցման իրականացման շրջանակներում առաջացող հասարակական հարաբերություններն են, իսկ որպես առարկա՝ հավաստիության հատկանիշի վերաբերյալ տեսական մոտեցումները, ինչպես նաև քրեադատավարական օրենսդրությանը վերաբերելի իրավադրույթները: Հոդվածը նպատակ է հետապնդում ուսումնասիրելու ապացույցի հավաստիության հասկացությունն ու էությունը, իրավական կարգավորման առանձնահատկությունները, դրա ապահովման երաշխիքներն ու կառուցակարգերը, վեր հանել իրավական կարգավորման բացերը՝ առաջ քաշելով դրանց լուծմանն ուղղված հնարավոր առաջարկներ:

Քրեադատավարական ապացույցի հավաստիության հասկացությունը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 22-րդ հոդվածի 5-րդ և 105-րդ հոդվածի 1-ին մասերով նախատեսված իրավադրույթների համակարգային վերլուծությունն ուղղակիորեն վկայում է, որ օրենսդիրն ապացույցի հատկանիշների շարքին, ի թիվս վերաբերելիության և թույլատրելիության, դասում է նաև հավաստիությունը: Օրենսգրքում ապացույցի հավաստիության բովանդակությունը բացահայտված չէ, ինչը, մեր կարծիքով, լուրջ բացթողում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ապացույց հավաստիության տեսանկյունից գնահատման ենթարկելու օրենսդրական իմպերատիվ պահանջը:

Հատկանշական է, որ ի տարբերություն քրեական դատավարության՝ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը բացահայտում է ապացույցի արժանահավատության հասկացության բովանդակությունը՝ սահմանելով, որ դատարանը հետազոտված ապացույցը ճանաչում է անարժանահավատ, եթե դրա հետազոտման, գնահատման կամ այլ ապացույցների հետ համադրման արդյուն-

քով հաստատվում է, որ դրանում պարունակվող տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը²: Վերոգրյալից բխում է, որ արժանահավատությունը (հավաստիությունը) ցույց է տալիս փաստական տվյալում պարունակվող տեղեկատվության՝ իրականության հետ համապատասխանությունը:

Ապացույցի հավաստիության հարցը պահանջում է հատուկ ուշադրություն, քանի որ այն ապացույցի հատկանիշներից մեկն է, որը նպաստում է քրեադատավարական օրենսդրության նպատակի իրականացմանը՝ երաշխավորելով դատավարության կողմերի հիմնարար իրավունքների և օրինական շահերի պահպանումը:

Քննարկվող հասկացության էությունը բացահայտելու համար, նախ և առաջ անհրաժեշտ է դիմել բացատրական բառարանի օգնությանը, որի համաձայն՝ «հավաստի» նշանակում է հավատալու արժանի, ճիշտ, ստույգ, հաստատ³:

Հարկ է նշել, որ գիտությունում առկա չէ «հավաստիություն» եզրույթի վերաբերյալ միասնական դիրքորոշում: Որոշ աղբյուրներում դրա ներքո հասկացվում է իրականության համապատասխանությունը, մյուսներն այն նույնացնում են ճշմարտության հետ, սակայն ավանդականորեն ընդունված մոտեցումն այն է, որ ապացույցի հավաստիությունը ցույց է տալիս տվյալի ճշմարտացիությունը, այսինքն՝ հավաստի է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Մ. Ս. Ստրոգովիչը հավաստիությունը նույնացնում էր ճշմարտության հետ⁴, իսկ Ի. Վ. Օվսյաննիկովը «հավաստի ապացույցը» սահմանում է որպես ապացույց, որի «բովանդակությունը չի հերքվել ապացուցման գործընթացում»⁵:

Ընդ որում, ապացուցման գործընթացում պետք է օգտագործվեն միայն տվյալներ, որոնք համապատասխանում են իրականությանը և փաստերին: Ստացվող տեղեկատվությունը պետք է պատշաճ արտացոլի օբյեկտիվ իրականությունը: Հակառակ պարագայում, եթե որպես ապացույց դիտարկվեն կասկածելի կամ ոչ արժանահավատ տվյալներ, ապա ոչ ճշմարտացի եզրահանգումների հավանականությունը բարձր է: Այդ նպատակով էլ ապացուցողական տեղեկատվությունը պետք է օժտված լինի ճշմարտացիության հատկանիշով: Քրեական գործով եզրահանգումներ հնարավոր է անել միայն իրականությանը համապատասխանող տեղեկատվության հիման վրա⁶:

Հավաստի գիտելիքը, ըստ Ի. Վ. Աբրոսիմովի, պետք է ունենա հետևյալ հատկանիշները՝

² Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մաս:

³ Տե՛ս Է. Բ. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան», Երևան, 1976, էջ 834:

⁴ Տե՛ս Строгович М. С., Материальная истина и судебные доказательства в советском уголовном процессе, М., АН СССР, 1955, էջ 86:

⁵ Տե՛ս Овсянников И. В., Проблема достоверности доказательств в доказательственном праве России, Современное право, 2004, № 7, էջ 40:

⁶ Տե՛ս Смирнов А. В., Калиновский К. Б., Уголовный процесс, Учебное пособие, 2-е изд., М., «Питер», 2014, էջ 336:

1. ճշմարտություն՝ օբյեկտիվ իրականությանը համապատասխանություն,
2. անառարկելիություն՝ իր գոյության տվյալ փուլում (ընդ որում՝ ապագայում այն կարող է փոխվել, ուստիև, իրականությունն արտացոլող ճշմարտության բովանդակային կողմը ևս կարող է փոփոխության ենթարկվել),
3. տվյալների որոշակի համակցությամբ հիմնավորվածություն,
4. օբյեկտիվ (գիտելիքը կրող սուբյեկտի կամքից անկախ) և սուբյեկտիվ (այն կրող անձի գործունեության արդյունք) բաղադրիչների համադրություն,
5. տվյալ գիտելիքը կազմող եզրահանգումների տրամաբանական հաջորդականություն,
6. միանշանակություն,
7. բուն գիտելիքի և դրա հիման վրա ձևավորված եզրակացությունների միջև համապատասխանություն,
8. համոզիչ լինել,
9. կարևորություն,

10. հետագա ճանաչողական գործունեությունում օգտագործման ներուժ⁷:

Ապացույցի պոզիտիվ հասկացության վերլուծությունը ցույց է տալիս, որ ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը որոշելու համատեքստում օրենսդիրն ինքնանպատակ չի օգտագործում «պարզել» եզրույթը: Ըստ էության, փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստացված տվյալն ապացուցողական ուժ ստանում է այս կամ այն հանգամանքն (ապացուցման առարկան կազմող) ապացուցելու իր ունակության շնորհիվ, հետևաբար՝ քրեական վարույթի հանգամանքները հավաստիորեն պարզելու համար անհրաժեշտ է ունենալ ապացույցներ, որոնք համապատասխանում են իրականությանը, այսինքն՝ հավաստի ապացույցներ:

ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգիրքը (ընդունված՝ 1961 թ.) ամրագրում էր բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու պահանջ, ուստիև՝ օբյեկտիվ իրականությունը պարզելու անհրաժեշտություն, ինչը հնարավոր էր իրականացնել օբյեկտիվ ապացույցների միջոցով, այսինքն՝ հավաստիությունը չէր դիտվում որպես ապացույցի առանձին հատկանիշ: Դրան հաջորդած ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (ընդունված՝ 1998 թ.) իր հերթին նախատեսում էր, որ ապացույցը ենթակա է գնահատման միայն վերաբերելիության և թույլատրելիության տեսանկյունից՝ հավաստիությունը կրկին չդիտարկելով ապացույցի հատկանիշների շարքին: Ընդ որում, հարկ է նշել, որ դեռևս նախկին Օրենսգրքի գործողության պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0252/01/13 գործով 2014 թ. հոկտեմբերի 31-ին կայացրած որոշմամբ ձևավորել էր ապացույցի արժանահավատության (հավաստիության)

⁷ Sh'u Абросимов И. В., Актуальные вопросы обеспечения допустимости и достоверности доказательств в уголовном судопроизводстве, автореф. дис. ... канд. юрид. Наук, 12.00.09, М., 2007, էջ 22:

հատկանիշի հասկացությունն ու գնահատման չափանիշները. «/.../ Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

- ա) ապացույցի աղբյուրի հատկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հատկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հատկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մոտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),
- բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),
- գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,
- դ) ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը,
- ե) նույն տեղեկության ստացումն այլ աղբյուրից:

Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա»:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ ապացույցի հավաստիությունը մատնանշում է ստացված տվյալի ճշմարտացիությունը, այն է՝ դրանում պարունակվող տեղեկատվության՝ իրականության հետ համապատասխանությունը: Քրեադատավարական ապացույցները պետք է լինեն համոզիչ և անհերքելի, այսինքն՝ հավաստի, քանի որ միայն այդպիսի տվյալների համակցության հիման վրա է հնարավոր կայացնել օրինական և հիմնավոր դատավարական ակտեր: Մեր համոզմամբ՝ ապացույցի հավաստիությունը չի ենթադրում դրա մեկնաբանումը որպես օբյեկտիվ իրականության փաստեր, որոնք գոյություն ունեն մարդու ճանաչողական գործունեությունից անկախ: Քրեական դատավարությունում ապացույցի հավաստիությունը պետք է ընկալել որպես իմացաբանական հաս-

կացություն: Այս առումով, քրեական դատավարության կողմ հանդիսացող վարույթի մի մասնակցի կողմից որևէ ապացույցի հավաստիության վերաբերյալ արված եզրահանգումը չի կարող բացառել ապացուցման գործընթացում մեկ այլ վարույթի մասնակցի կողմից հակադիր գնահատականի կամ եզրակացության ձևավորումը:

Վերոնշյալի համատեքստում համակարծիք ենք գիտությունում ընդունված այն տեսակետի հետ, որ ապացույցի հավաստիությունն ունի օբյեկտիվ-սուբյեկտիվ բնույթ⁸: Մասնավորապես՝ օրենսդրությամբ նախատեսված ստուգողական գործողությունների իրականացմամբ (օբյեկտիվ բնույթ) ապացուցման սուբյեկտները համոզվում են, որ ձեռք բերված տվյալները պիտանի են ապացուցման առարկան կազմող հանգամանքները հաստատելու համար, ինչն իր հերթին սուբյեկտի մոտ ձևավորում է համոզվածություն (սուբյեկտիվ բնույթ) ստացված ապացույցի ճշմարտացիության վերաբերյալ: Այսինքն՝ ապացույցի հավաստիությունը որոշվում է էմպիրիկ և ռացիոնալ գործողությունների արդյունքում, որի հիմքում ընկած է ներքին համոզմունքն ու ապացուցման գործընթացում կիրառվող գործնական եղանակները, քանի որ միայն նման գործողությունների միջոցով է հնարավոր ձևավորել հիմնավորված համոզմունք ապացույցի հավաստիության վերաբերյալ:

Ուշագրավ է, որ քրեական վարույթներով ստացված տեղեկության հավաստիության պարզումն ապացուցման գործընթացի առավել բարդ և ընդգրկուն բաղադրատարրերից մեկն է: Ապացուցման սուբյեկտներն օգտագործում են այնպիսի տվյալներ, որոնք նախապես չեն կարող համարվել հավաստի, և դրանց հավաստի ճանաչումը հնարավոր է դառնում միայն համակողմանի ստուգման և գնահատման արդյունքում: Հարկ է նշել, որ, մեր կարծիքով, գործող քրեադատավարական մոդելի պայմաններում Օրենսգիրքն իրավաչափորեն հրաժարվեց ապացույցի՝ որպես «փաստական տվյալ» դիտարկման գաղափարից՝ ամրագրելով «տվյալ» հասկացությունը, քանի որ փաստական տվյալն արտաքինից նույնանում է ապացույցի՝ որպես օբյեկտիվ իրականության արտացոլման հետ, այնինչ ստացված տվյալն ապացույց դառնում, ուստիև՝ քննարկվող հատկությամբ օժտվում է միայն ստուգման և գնահատման բարդ մեխանիզմով անցնելուց հետո:

Գիտությունում առկա են տարբեր մոտեցումներ, թե ապացուցման գործընթացի կոնկրետ որ տարրի ընթացքում է պարզվում ապացույցի հավաստիությունը. մի խումբ գիտնականներ⁹ այն դիտարկում են որպես ապացույցի գնահատման բաղադրիչ, մյուսները¹⁰՝ որպես ստուգման արդյունք, մինչդեռ, այլ

⁸ Ст'и Миронов В. Ю., Достоверность доказательств и их значение при постановлении приговора, дис. ... канд. юрид. наук, 12.00.09, 2005, էջ 75:

⁹ Ст'и Резник Г. М., Внутреннее убеждение при оценке доказательств, М., Юрид. лит., 1977, էջ 3, Зинатуллин З. З., Уголовно-процессуальное доказывание, Ижевск, Детектив-Информ, 2002, էջ 108:

¹⁰ Ст'и Громов Н. А., Зайцева С. А., Гушин А. Н., Доказательства, их виды и доказывание в уголовном процессе, Учебно-практическое пособие, М., Приориздат, 2006, էջ 71:

դիտարկման համաձայն¹¹ հավաստիությունը բացահայտվում է ինչպես ստուգման, այնպես էլ գնահատման ընթացքում:

Լիովին համաձայն ենք արտահայտված այն դիրքորոշման հետ¹², որ ստուգումն ու գնահատումն ապացուցման գործընթացում օրգանապես փոխկապակցված են: Մեր կարծիքով, ապացույցի հավաստիության պարզումն իրականացվում է ամբողջ ապացուցման գործընթացում, որում առանցքային դերակատարում ունի ապացույցի գնահատումը, ինչն իր հերթին անխզելիորեն փոխկապակցված է ապացույցի ստուգման հետ, ուստի ապացույցը հավաստի ճանաչվում է դրա գնահատմանը նախորդած ստուգման արդյունքում:

Տեսությունում վիճելի է նաև այն հարցը, թե արդյոք ապացույցի ստուգման գործընթացում պարզվում է բացառապես դրա հավաստիությունը, թե, միաժամանակ, գնահատվում են նաև ապացույցի այլ հատկանիշները: Ս. Բ. Ռոսսինսկին գտնում է, որ ապացույցի հատկանիշները ենթակա են ստուգման, բայց առաջին հերթին՝ հավաստիությունը: Ի տարբերություն վերաբերելիության և թույլատրելիության՝ ապացույցում պարունակվող տեղեկատվության հավաստիության ստուգումը պահանջում է լրացուցիչ քննչական գործողությունների կամ այլ ճանաչողական միջոցառումների իրականացում¹³:

Բոլորովին չվիճարկելով ստուգման գործընթացում թույլատրելիության և վերաբերելիության հարցերի պարզումը, գտնում ենք, որ ապացույցի ստուգումն առավելապես վերաբերում է հավաստիությանը, քանի որ վերջինս, նախ և առաջ, ունի ոչ թե քանակական, այլ բովանդակային բնույթ, ինչպես նաև ապացույցի հավաստիությունը կարող է հաստատվել միայն արդեն իսկ կուտակված որոշակի տվյալների հիման վրա իրականացված ստուգողական գործողությունների արդյունքում, մինչդեռ, վերաբերելիությունը կամ անթույլատրելիությունը հաճախ անմիջապես ակնհայտ են: Ինչ խոսք, երբեմն ստուգվում է նաև թույլատրելիությունը (օրինակ՝ քննիչի հարցաքննությունը թույլատրվում է, երբ վիճարկվում է նրա ձեռք բերած իրեղեն ապացույցի, կատարած ապացուցողական կամ վարույթային այլ գործողության արձանագրության կամ արտավարության փաստաթղթի թույլատրելիությունը) կամ վերաբերելիությունը (օրինակ՝ մարմնական վնասվածքի քննության ժամանակ ստուգվում է, թե արդյո՞ք դեպքի վայրից հայտնաբերված արյան հետքը թողնվել է վիճաբանության մասնակիցների կողմից), սակայն պետք է նշել, որ ստուգման հիմնական նպատակն ապացույցի հավաստիությունը որոշելն է:

Ապացույցի հավաստիության խնդրի քննարկումն իմաստագուրկ է առանց թույլատրելիության հասկացության հետ հարաբերակցության վերլուծության:

¹¹ Տե՛ս Балакшин В. С., Оценка доказательств, Юридический вестник, Екатеринбург, 2001, № 1, էջ 43:

¹² Տե՛ս Орлов Ю. К., Основы теории доказательств в уголовном процессе, Научно-практическое пособие, М., 2000, էջ 80-81:

¹³ Տե՛ս Россинский С. Б., Собираание доказательств как «первый» этап доказывания по уголовному делу, Юридический вестник Самарского университета, 2020, Т. 6, էջ 101-103:

Նախ և առաջ, անհրաժեշտ է ընդգծել, որ նշված հասկացությունները փոխկապակցված են և չեն կարող ուսումնասիրվել միմյանցից անջատ: Դրանց տարբերությունն այն է, որ թույլատրելիությունը գնահատվում է առավելապես օրենքով նախատեսված ձևական հատկանիշներով, իսկ հավաստիությունը՝ բովանդակային: Թույլատրելիության շատ կանոններ, միաժամանակ, կոչված են ապահովելու ապացույցի հավաստիությունը: Մասնավորապես՝ ճանաչման ներկայացնելու դատավարական կարգի պահպանումը, երբ ճանաչումը չի իրականացվում նույն սեռի և արտաքինով իրեն հնարավորինս նման առնվազն երեք այլ անձանց հետ: Տվյալ դեպքում դատավարական կարգի խախտմամբ ստացված անթույլատրելի ապացույցում պարունակվող տեղեկատվությունը բովանդակային առումով ևս չի լինի հավաստի:

Միևնույն ժամանակ, թույլատրելիության և հավաստիության միջև առկա է փոխադարձ կապ, այն է՝ երկրորդ հատկանիշի առկայությունն ուղղակիորեն կապ ունի առաջինի հետ: Միայն թույլատրելի ապացույցները կարող են լինել հավաստի կամ ոչ հավաստի, այն դեպքում, երբ հավաստի ապացույցներն անվերապահորեն պետք է լինեն թույլատրելի: Ապացույցի կամ դրա աղբյուրի հավաստիության հարցը կարող է դրվել միայն այն դեպքում, երբ ապացույցը կամ դրա աղբյուրը թույլատրելի է, միաժամանակ, թույլատրելի ապացույցը ոչինչ չի կարող ապացուցել կամ կարող է բերել սխալ եզրահանգման, եթե չլինի հավաստի:

Թույլատրելիության պահանջը չի սահմանափակվում միայն ապացույցի հավաստիության պահանջի ապահովմամբ: Քննարկվող հատկանիշի շատ կանոններ ունեն մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու բնույթ, որոնց չպահպանումը որևէ կերպ չի ազդում ապացույցի արժանահավատության վրա, և ամեն դեպքում ապացույցը ճանաչվում է անթույլատրելի, օրինակ՝ արդի գիտությանը հակասող մեթոդների կիրառմամբ ստացված տեղեկատվությունը կարող է լինել հավաստի, սակայն ոչ թույլատրելի:

Ապացույցի ձևին վերաբերող դատավարական խախտումներն իրենց հերթին կասկածի տակ են դնում ապացույցի հավաստիությունը, սակայն ոչ բոլոր խախտումներն են անխտիր հանգեցնում ապացույցը ոչ հավաստի ճանաչելուն, քանի որ որոշ բացթողումներ (իհարկե, խոսքը չի գնում այնպիսի խախտման մասին, ինչպիսին է կրկնակի ճանաչման իրականացումը) դեռևս հնարավոր է չեզոքացնել լրացուցիչ քննչական կամ վարութային գործողությունների արդյունքում, օրինակ՝ ցուցմունքի յուրաքանչյուր էջում վկայի ստորագրության բացակայությունը կամ քննչական գործողության արդյունքում կազմված արձանագրությունում ամսաթվի բացակայությունը: Ինքնին, թույլատրելիության վրա չի կարող ազդել նաև այն քրեադատավարական պահանջների բացթողումները, որոնք չեն դասվում սկզբունքների տեսքով Օրենսգրքում ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության քրեաիրավական երաշխիքներին: Այսպես, քննիչի կողմից հարցաքննության արձանագրությունում ընտանեկան դրության

մասին նշման բացթողումը չի կարող էականորեն ազդել ստացվող տվյալի թույլատրելիության, հետևաբար նաև բովանդակության վրա: Տվյալ դեպքում հարցն առավել շատ կախված է խախտման բնույթից և տվյալ բացթողումը քննչական ու դատավարական այլ գործողությունների միջոցով չեզոքացնելու հնարավորությունից: Այլ է, երբ վկայի նկատմամբ բռնության գործադրման միջոցով ցուցմունքի ստացումն անմիջապես ազդում է հավաստիության վրա, ինչ խոսք, տվյալ ապացույցն անվերապահ ճանաչվում է անթույլատրելի:

Միաժամանակ, պետք է նկատառել, որ ձևին վերաբերող կանոնների պահպանումը ինքնին չի հանգեցնում ապացույցի հավաստիության: Դատավարության մասնակիցը, որը հարցաքննվում է նախատեսված պահանջների պահպանմամբ, կարող է տալ կեղծ տեղեկություն, օրենքով սահմանված կարգով վարույթին կցված փաստաթղթի բովանդակությունը կարող է լինել ինտելեկտուալ կեղծված:

Հավաստիության ձևավորման ժամանակահատվածի վերաբերյալ գրականությունում արտահայտվել են տարբեր, երբեմն միմյանց հակասող դիրքորոշումներ: Դատավարագետների մի մասի կարծիքով¹⁴ ապացույցն արժանահավատության հատկանիշ ձեռք է բերում քննության ավարտի փուլում, իսկ մյուս հեղինակների տեսակետի համաձայն¹⁵ արժանահավատությունը ձևավորվում է ավելի ուշ՝ գործով վերջնական իրավական եզրահանգումներ կատարելու ընթացքում, այն է՝ դատական ակտի կայացման պահին:

Միաժամանակ, Ռ. Վ. Կոստենկոն գտնում է¹⁶, որ ապացույց կարող են հանդիսանալ այն տվյալները, որոնք օժտված են ոչ միայն վերաբերելիությամբ և թույլատրելիությամբ, այլև հավաստիությամբ: Հեղինակի դիրքորոշման համաձայն՝ քննության ընթացքում ապացույցներ հավաքելուն ուղղված գործողություններ իրականացնելիս քննիչը չի կարող ձեռքբերված տվյալները դիտարկել որպես արդեն իսկ «պատրաստի» ապացույցներ, քանի որ դրանք «բյուրեղանում» (ձևավորվում) են հավաքված տեղեկատվական նյութի համակցությունից ավելի ուշ:

Մեր համոզմամբ՝ ապացույցի հավաստիության գնահատման համատեքստում «նախնական» և «վերջնական» բնորոշումների կիրառումը ճիշտ չէ: Ապացուցման գործընթացում տարբեր դատավարական սուբյեկտներ, իսկ որոշ դեպքերում նաև նույն սուբյեկտը, բազմիցս վերադառնում են ապացույցների հավաստիության գնահատմանը: Ընդ որում, տվյալ գնահատումը ոչ միշտ է հանգում վերջնական և անփոփոխ եզրահանգման անգամ եզրափակիչ դատավարական ակտի կայացման փուլում, քանի որ այն կարող է ենթարկվել վերանայման դատավարության հետագա փուլերում, օրինակ՝ վերաքննիչ դատարանը կարող

¹⁴ Տե՛ս Шейфер С. А., Доказательства и доказывание по уголовным делам, М., Норма, 2009, էջ 65:

¹⁵ Տե՛ս Зайцева С. А., Громов Н. А., Пономаренко В. А., Достоверность и вероятность доказательств, Следователь, 1999, № 7, էջ 13:

¹⁶ Տե՛ս Костенко Р. В., Оценка уголовно-процессуальных доказательств, Издание второе, М., Юрлитинформ, 2012, էջ 140:

է ապացույցը ճանաչել ոչ հավաստի՝ չնայած ստորադաս ատյանում նույն ապացույցը հավաստի գնահատված լինելու հանգամանքի: Բացի այդ, ստացված տվյալների՝ արժանահավատ ճանաչվելն ու որպես ապացույց դիտվելու հանգամանքը չի կարող կապվել քննության որևէ փուլի, այդ թվում՝ վերդիկտ կայացնելու հետ, քանի որ կստացվի մի իրավիճակ, երբ ստացված տվյալն ապացույցի կարգավիճակ է ստանում միայն դատական ակտ կայացնելու պահին, իսկ մինչ այդ իրականացված ամբողջ ապացուցողական գործընթացն իրականացվել է ոչ հավաստի ապացույցների առկայության պայմաններում, այնինչ, անվիճելի է, որ վարույթի հանրային մասնակցի կողմից կայացվող որոշումների (այդ թվում՝ հանրային քրեական հետապնդման հարուցման, չհարուցման, դադարեցման կամ կարճման եղանակով վարույթն ավարտելու դեպքում) կայացման հիմքում ևս ընկած է ապացույցների գնահատումը:

Օրենսգրքի 104-րդ հոդվածում նախատեսված է, որ հավաքված ապացույցները ենթակա են պատշաճ ստուգման՝ ստացված ապացույցի ձևի և բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ստացման աղբյուրները վերհանելու միջոցով: Նշված ձևակերպումից ևս ակնհայտ է, որ Օրենսգիրքը որդեգրել է ապացույցի՝ ձևի և բովանդակության միասնական կոնցեպցիան, որտեղ բովանդակությունը տվյալներն են, իսկ ձևը՝ դրանց ստացման՝ օրենքով նախատեսված աղբյուրները¹⁷: Ապացույցի ձևի վերլուծությամբ ստուգվում է առավելապես ապացույցների թույլատրելիությունը, իսկ բովանդակության վերլուծությամբ՝ հավաստիությունը:

Ապացույցի հավաստիության ստուգումը ապացուցման գործընթացին ներգրավված անձանց մտավոր-տրամաբանական և պրակտիկ գործունեությունն է: Ընդ որում՝ մտավոր գործունեության շարքին դասվում են ապացույցի ձևի և բովանդակության վերլուծությունն ու այն այլ ապացույցների հետ համադրումը, որոնք իրականացվում են անալիզի, սինթեզի և տրամաբանական այլ մեթոդներով, իսկ ապացույցի ստուգման պրակտիկ գործունեության շարքին են դասվում նոր ապացույցներ հավաքելն ու ապացույցների ստացման աղբյուրների վերհանումը, որոնք նպատակ ունեն ձեռք բերել այլ ապացույցներ՝ հաստատելու ստուգվող ապացույցները:

Միաժամանակ, Օրենսգրքով ապացույցի ձևին ներկայացվող պահանջներին համապատասխանության ստուգման արդյունքում վարույթն իրականացնող մարմինը հավաստիանում է, որ պահպանված են ապացույցի հավաստիության ապահովմանն ու ապացուցողական գործողության մասնակցի իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ Օրենսգրքով առանձին ապացույցների ձևին ներկայացվող պահանջները: Մասնավորապես՝ Օրենսգիրքը որոշակի պահանջներ

¹⁷ Ст'я Уголовно-процессуальное право России, учебник под ред. П. А. Лупинской, М., 2003, էջ 226-228:

է ներկայացնում հարցաքննության արձանագրությանը (օրինակ՝ հարցաքննվողի կողմից հարցաքննության արձանագրության յուրաքանչյուր էջը ստորագրելու պահանջը), որի նպատակն անձի կողմից հարցաքննության ընթացքի և իր ցուցմունքների արձանագրման իսկության հաստատումն է: Հետևաբար, ստուգման շրջանակներում վերլուծության է ենթակա ոչ միայն ապացույցի բովանդակությունը, այլ նաև ապացույցի ձևի համապատասխանությունն Օրենսգրքի պահանջներին:

Ապացույցի ստուգման եղանակ հանդիսացող նոր ապացույցների հավաքումը կարող է իրականացվել միայն Օրենսգրքով նախատեսված քննչական գործողությունների իրականացման արդյունքում: Մինևոյն ժամանակ, Օրենսգրքով նախատեսված ոչ բոլոր քննչական գործողությունները կարող են ծառայել որպես ապացույցի հավաստիությունը ստուգելու եղանակ: Մեր կարծիքով՝ դրանց շարքին հնարավոր է դասել ցուցմունքը տեղում ստուգելը, ձեռքակալվածի, մեղադրյալի, վկայի ու տուժողի հարցաքննությունը, առերեսումը, փորձարարությունը, ճանաչումը, փորձագետի հարցաքննությունը, կրկնակի փորձաքննության նշանակումն ու իրականացումը և այլն: Բացի այդ, Օրենսգրքով նախատեսված և դատական վարույթում իրականացվող մի շարք ապացուցողական գործողություններ (ցուցմունքների հրապարակումը, իրեղեն ապացույցի, ապացուցողական և վարութային այլ գործողության արձանագրության և արտավարութային փաստաթղթի, փորձագետի եզրակացության և կարծիքի հետազոտումը, դատարանի կողմից իրականացվող այլ ապացուցողական գործողությունները և այլն) ևս կարող են հանդիսանալ ապացույցի հավաստիությունը ստուգելու գործուն միջոցներ: Վերջիններիս առանձնահատկությունն այն է, որ դրանք ունեն որոնողա-ստուգողական բնույթ և բացի նոր ապացույցներ հավաքագրելուց, օժտված են արդեն իսկ ստացած տվյալների՝ ապացույց հանդիսանալու հատկությունը ստուգելու ունակությամբ: Կարևոր է հաշվի առնել, որ ստուգման ընթացքում ստացված ապացույցները կարող են ինքնին դառնալ ստուգման առարկա, եթե կասկած առաջանա դրանց հավաստիության վերաբերյալ:

Անդրադառնալով հավաստիության ստուգման մյուս եղանակին՝ ապացույցների համադրմանը, հարկ է նշել, որ այն ենթադրում է ինչպես նոր, այնպես էլ նախկինում հավաքագրված ապացույցներում պարունակվող տեղեկատվական նյութի համեմատական վերլուծություն՝ նպատակ ունենալով պարզելու ստուգման ենթարկվող ապացույցում առկա տեղեկատվության հավաստի կամ ոչ հավաստի լինելու հանգամանքը, որն իրենից ներկայացնում է վերլուծության և համեմատության միջոցով իրականացվող մտավոր-տրամաբանական գործունեություն: Ընդ որում, ստուգման ենթարկվող ապացույցում պարունակվող տեղեկատվությունը համադրվում է ոչ թե գործով ձեռք բերված ցանկացած տեղեկության, այլ համադրվող ապացույցում ամփոփված միևնույն՝ համասեռ բովանդակություն պարունակող հանգամանքների հետ:

Ապացույցի ստացման աղբյուրների վերհանման միջոցով ապացույցների ստուգումը ենթադրում է ստուգվող ապացույցում ընդգրկված տեղեկության սկզբնաղբյուրի պարզումն ու հստակեցումը, այսինքն՝ տեղեկությունը կրող կամ տիրապետող նախնական աղբյուրի պարզումը: Նշվածի համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, թե ցուցմունք տվող անձն ինչ հարաբերությունների մեջ է գտնվում այն անձի հետ, որին վերջինս նշում է որպես հաղորդվող տեղեկությունների աղբյուր, քանի որ որոշ դեպքերում կարող են առաջանալ տվյալների հավաստիության վերաբերյալ կասկածներ, օրինակ՝ եթե դրանք ստացվել են շահագրգիռ անձից: Բացի այդ, ապացուցման սուբյեկտը պարտավոր է իրականացնել նաև ապացույցի աղբյուրի հավաստիության ստուգում, օրինակ՝ փաստաթղթի իսկության հաստատում:

Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկան կազմող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին, այսինքն՝ անհրաժեշտ է տարբերակել ինչպես յուրաքանչյուր առանձին ապացույցի, այնպես էլ ապացույցների համակցության գնահատումը: Ապացույցի հավաստիության գնահատումը, ինչպես արդեն նշել ենք, սերտորեն փոխկապակցված է դրան նախորդող ապացույցի ստուգման հետ, ընդ որում՝ ապացույցի գնահատումը ևս իրականացվում է տրամաբանության կանոնների և հնարքների հիման վրա¹⁸: Ապացույցի հավաստիության գնահատման գործընթացում լիարժեքորեն դրսևորվում է ներքին համոզմունքի հիման վրա ապացույցի ազատ գնահատման սկզբունքը, որը ձևավորվում է օրենքով սահմանված՝ ապացույցների հավաքման և ստուգման համար նախատեսված բոլոր միջոցների համակցված կիրառման արդյունքում:

Մեր կարծիքով, ստուգման ընթացքում ապացուցման սուբյեկտների մտածողության տրամաբանական մեթոդների նորմատիվ ամրագրումը հանգեցնում է ապացույցների ստուգման և գնահատման միջև շփոթության, քանի որ այս մեթոդները, ի վերջո, առավել բնորոշ են ապացույցների գնահատմանը, սակայն գործնականում դրանք բոլորն ապացույցի հավաստիությունը գնահատելու եղանակներ են, հետևաբար ապացույցի գնահատումը ևս ենթադրում է մտավոր գործունեություն, ներառյալ՝ հետազոտում, վերլուծություն, համադրում և այլն:

Տեսությունում որպես ապացույցի հավաստիությունը գնահատելու լրացուցիչ չափանիշ առանձնացվում են նաև՝

1. ապացուցողական տեղեկատվություն կրող վարույթի մասնակցի (վկա, տուժող, փորձագետ և այլն)՝ ճշմարտացի և ամբողջական ցուցմունքներ (եզրակացություն) տալու ունակությունը,

¹⁸ Տե՛ս Օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մաս:

2. նյութական կրիչի (առարկա, փաստաթուղթ) բնույթի, ինչպես նաև հայտնաբերման պայմանների ուսումնասիրությունը,
3. ստացված տեղեկությունների բովանդակության վերլուծությունը (եզրահանգումների հաջորդականությունն ու ամբողջականությունը, հակասությունների և անճշտությունների առկայությունը, ինչպես նաև հատուկ գիտելիքների վրա հիմնված եզրահանգումների հիմնավորվածությունը),
4. տվյալ աղբյուրից ստացված տեղեկության համադրումն այլ աղբյուրներից ձեռք բերված տեղեկության հետ¹⁹:

Ամբողջացնելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ նպատակահարմար է շարադրել ապացույցի հավաստիությունը բնութագրող հիմնական առանձնահատկությունները՝

- ա) հավաստիությունն ապացույցի պարտադիր հատկանիշ է,
- բ) ապացույցի հավաստիությունը պարզվում է ապացույցի ստուգման և գնահատման արդյունքում,
- գ) միայն թույլատրելի, վերաբերելի և հավաստի ապացույցներն են կոչված ապացուցման առարկան կազմող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար,
- դ) ապացույցը հավաստի է, եթե դրա՝ իրականությանը համապատասխանությունը կասկած չի հարուցում:

Այսպիսով, մեր դիտարկմամբ նպատակահարմար է առաջարկել ապացույցի հավաստիության հետևյալ գիտական սահմանումը. *«Հավաստիությունը քրեադատավարական ապացույցի պարտադիր հատկանիշ է, որը ձևավորվում է հանցանքի հանգամանքների վերաբերյալ ստացված տեղեկությունների և դրանց աղբյուրների համակողմանի ստուգման և գնահատման գործընթացում և ցույց է տալիս փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստացված տվյալի համապատասխանությունն իրականության հետ, որը կասկած չի հարուցում»:*

Ապացույցի հավաստիության ապահովման երաշխիքները գործող Օրենսգրքում

Ապացույցի հավաստիության ապահովման երաշխիքները Օրենսգրքով նախատեսված միջոցների և դատավարական կառուցակարգերի համակցություն է, որի նպատակն ապացուցման գործընթացում հավաստի տվյալներ ձեռք բերելն է: Նշված երաշխիքները համակարգվում են՝ կախված դրանց կիրառման շրջանակից և գործառնության ինչնականությունից, և տարանջատվում են ընդհանուրի ու մասնավորի: Առաջինները տարածվում են ապացույցների բոլոր տեսակների վրա և գործում են ապացուցման ողջ ընթացքում, իսկ մասնավոր երաշխիքները,

¹⁹ Ст'и Зайцева С. А., Громов Н. А., Пономаренко В. А., Достоверность и вероятность доказательств, Следователь, 1999, № 7, էջ 13-14:

հակառակը, նախատեսված են առանձին տեսակի ապացույցների հավաստիության ապահովման համար:

Առաջին հերթին, ապացույցի հավաստիությունն ապահովելու կարևորագույն միջոցներ են հանդիսանում քրեադատավարական սկզբունքները, քանի որ սահմանում են քրեական վարույթի ելակետային դրույթներն ու անկյունաքարային գաղափարները՝ կանխորոշելով դրա բնույթն ու նշանակությունը, մասնավորապես՝ անձի ազատությունն ու անձնական անձեռնմխելիությունը (խոշտանգման, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի, բռնության, սպառնալիքի, խաբեության, իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով տեղեկություններ ստանալու արգելքը), մասնավոր կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը (իր, ամուսնու, մերձավոր ազգականի դեմ չվկայելու իրավունքը): Վերջինների էության պարզաբանումն ապացույցի հավաստիությունն ապահովելու տեսանկյունից կարող է առանձին հետազոտման առարկա հանդիսանալ, ուստի ապացույցի հավաստիությունն ապահովող երաշխիքները սույն հոդվածում կքննարկվեն Օրենսգրքում տեղ գտած փոփոխությունների համատեքստում:

Նախ և առաջ, ապացույցի հավաստիությունն ապահովելու տեսանկյունից էական նշանակություն ունի կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքի համատեքստում պաշտպանի՝ ապացուցողական գործընթացին անմիջականորեն մասնակցելու վերաբերյալ դրույթի ամրագրումը: Պաշտպանի դատավարական կարգավիճակը նախատեսող լիազորությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս, մեր գնահատմամբ, վերջինիս դասել ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված պատշաճ սուբյեկտների շարքում: Ուշագրավ է, որ նոր Օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը հնարավորություն է ընձեռում պաշտպանին վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ձեռք բերել և ներկայացնել ապացույցներ: Ընդ որում, նշված իրավունքն իր օրենսդրական ամրագրումն է գտել նաև տուժողի և մեղադրյալի կարգավիճակը նախատեսող իրավադրույթներում²⁰:

Օրենսգիրքն իրեղեն ապացույցի, ապացուցողական և վարության այլ գործողության արձանագրության և արտավարության փաստաթղթի հավաստիությունն ապահովելու նպատակով նորամուծություն է նախատեսել²¹ վկայության իմունիտետ ունեցող անձանց ցանկում՝ նախատեսելով, որ քննիչը կարող է վկայի կարգավիճակով հարցաքննվել միայն այն դեպքում, երբ իրեղեն ապացույցի, ապացուցողական կամ վարության այլ գործողության արձանագրության կամ արտավարության փաստաթղթի հետազոտման արդյունքում կողմը վիճարկում է դրա թույլատրելիությունը, կամ դատարանն ունի հիմնավոր կասկածներ համապատասխան ապացույցի հավաստիության վերաբերյալ: Տվյալ պարագայում դատարանի

²⁰ Տե՛ս Օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը և 50-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը:

²¹ Տե՛ս Օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետ և 331-րդ հոդվածի 4-րդ մաս:

որոշմամբ այդ ապացույցը ձեռք բերած կամ կազմած անձը կարող է հարցաքննության հրավիրվել և հարցաքննվել վկայի համար սահմանված կանոններով:

Վերոնշյալի համատեքստում Օրենսգիրքը չի արգելում նաև վկայի կարգավիճակով հարցաքննել հետաքննության մարմնի պետին և աշխատակիցներին՝ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նրանց հայտնի են դարձել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կամ գաղտնի քննչական գործողություններ կատարելիս: Այլ կերպ՝ ապացույցի հավաստիության վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատարանը կարող է տվյալ ապացույցը ձեռք բերած իրավասու անձի վրա կողմերի կամ դատավորի կողմից ուղղված կոնկրետ հարցերին պատասխանելու միջոցով դնել վերջինիս կողմից իրականացված ապացուցողական կամ այլ վարույթային գործողության ընթացքի և արդյունքների իրավաչափությունը հիմնավորելու պարտականություն: Ավելին, նշված իրավանորմի արդյունավետ կիրառման նպատակով Օրենսգրքի 331-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրվել է ապացույցի հավաստիությունն ապահովելու լրացուցիչ երաշխիք, որն արգելում է տվյալ ապացույցի օգտագործումը, եթե հիշատակված առերևույթ խախտումների պայմաններում պատշաճ իրավական ընթացակարգով չի իրականացվել այն ձեռք բերած անձի հարցաքննություն:

Բացի այդ, սահմանվել է, որ վարույթի հանրային մասնակցի կազմած փաստաթուղթը չի կարող օգտագործվել, եթե մեղադրյալին հնարավորություն չի ընձեռվել հարցաքննել տվյալ փաստաթուղթը ձեռք բերած կամ կազմած պաշտոնատար անձին՝ դրա ձեռքբերման կամ ամրագրման կարգի ենթադրյալ խախտման վերաբերյալ²², ինչը ևս վարույթի ընթացքում ստացված ապացույցի հավաստիությունը երաշխավորելու լրացուցիչ գործոն է:

Գործող օրենսգիրքը, նախատեսելով դատարանում հարցաքննության իրականացման ընդհանուր կարգը, ամրագրել է հարցաքննվող անձի կողմից տրվող ցուցմունքի հավաստիությունն ապահովելու թեև ձևական, սակայն գործուն մեխանիզմ. հարցաքննվողը պարտավոր է անել հայտարարություն՝ իր ցուցմունքի ճշմարտացիության վերաբերյալ, ինչը ենթադրում է իրավահպատակ վարքագծի դրսևորման ակնկալիք:

Միաժամանակ, ցուցմունքների ձևավորման առնչությամբ, ընդհանուր պահանջներից բացի, սահմանվել են «հատուկ» դատավարական միջոցներ, որոնք կոչված են ապահովելու հավաստի տվյալների ստացումը.

1. վկային, տուժողին, ձերբակալվածին, մեղադրյալին, փորձագետին սուտ ցուցմունք տալու համար նախատեսված պարտականության մասին նախազգուշացնելը,

²² Օրենսգիրքը հաշվի է առել Եվրոպական Դատարանի այն դիրքորոշումը (Chap Ltd v. Armenia), որ Եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված՝ մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տված անձանց հակընդդեմ հարցման իրավունքը տարածվում է նաև փաստաթղթային ապացույցների նկատմամբ:

2. անհայտ աղբյուրից ստացված տեղեկության կիրառման անթույլատրելիությունը, եթե հարցաքննվողը չի կարողանում մատնանշել իրազեկվածության իր աղբյուրը,
3. դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձաքննության իրականացումը՝ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները վկայի կամ տուժողի կողմից ճիշտ ընկալելու, հիշելու կամ վերարտադրելու ունակությունը պարզելու նպատակով,
4. վարույթի լեզվին չտիրապետելու դեպքում թարգմանչի ներգրավումը,
5. ուղիղ հարցաքննության ընթացքում ուղղորդող հարցադրումների արգելքը,
6. իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ չվկայելու իրավունքը,
7. հարցաքննվող անձի իրավունքների ճշգրիտ պարզաբանումը,
8. նույն վարույթի շրջանակներում մինչև հարցաքննության ավարտը հարցաքննության ենթակա անձանց հաղորդակցությունը թույլ չտալու նպատակով քննիչի կողմից միջոցներ ձեռնարկելն ու դատական նիստի ներկայացած վկաների կողմից մինչև նրանց հարցաքննությունը դադարեցնելը,
9. պաշտպանության միջոցի կիրառումը:

Օրենսգրքի 212-րդ հոդվածով նախատեսվել է նաև անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարման դեպքում հոգեբանի պարտադիր ներգրավման պահանջը, ինչը ոչ միայն գործուն երաշխիք է խոցելի խմբում գտնվող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար, այլև տվյալ քննչական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալի հավաստիությունն ապահովելու իրական երաշխիք, քանի որ հոգեբանն օժտվել է նաև որոշակի հատկանիշներով օժտված անձանց օրինական շահերը պաշտպանելու իրավասությամբ (հոգեբանը կարող է տալ հարցեր, ինչպես նաև ներկայացնել այդ գործողությանը վերաբերող մասնագիտական առաջարկներ, այդ թվում՝ անչափահասին տրվելիք հարցերը քննիչը ձևակերպում և համաձայնեցնում է հոգեբանի հետ):

Օրենսգիրքն արմատական փոփոխության է ենթարկել հատուկ գիտելիքների միջոցով ստացվող տվյալների՝ դատավարություն ներմուծման ընթացակարգում՝ ապացույցի տեսակները համալրելով փորձագետի կարծիքով և ցուցմունքով: Թեև նախկին օրենսդրությունը չէր արգելում հարցաքննել փորձագետին, և վերջինիս հարցաքննությունն իրականացվում էր վկայի կարգավիճակով, այնուամենայնիվ, տվյալ կարգավիճակով հարցաքննված փորձագետի ցուցմունքի ընկալումը տեսաբանների և պրակտիկ աշխատողների կողմից, մեղմ ասած, միանշանակ չէր՝ հաշվի առնելով փորձագետի ցուցմունքի՝ որպես առանձին ապացույցի տեսակ նախատեսված չլինելու հանգամանքը:

Փորձագետի եզրակացությունն ու կարծիքը կառուցվում են հատուկ գիտելիքների և հմտությունների հիման վրա՝ ձևավորելով մասնագիտական եզրահանգումներ և հետևություններ, իսկ իրավակիրառ աշխատողները, չունենալով փորձագիտական գիտելիքներ, հաճախ դժվարանում են գնահատել եզրակացության կամ կարծիքի բովանդակությունը, ինչն ինքնին դրանք չի դարձնում ոչ հավաստի, հետևաբար՝ դրանց հավաստիության վերաբերյալ կասկածները չեզոքացնելու ամենաարդյունավետ միջոցը ստուգումն է: Փորձագետի հարցաքննությունը փորձագետի եզրակացության հավաստիությունը ստուգելու առավել տեղին միջոցներից մեկն է, որն ուղղակիորեն ամրագրված է օրենքով: Հարկ է նշել, որ փորձագետը կարող է հարցաքննվել իր ներկայացրած եզրակացության կամ կարծիքի ճշգրտման կամ պարզաբանման նպատակով, ինչպես նաև ապացուցողական կամ վարույթային այլ գործողությունների կատարմանը մասնակցելիս իր ընկալած փաստերի վերաբերյալ՝ ըստ Օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի, այսինքն՝ ի տարբերություն վարույթի մյուս մասնակիցների՝ փորձագետի հարցաքննությունը սահմանափակվում է արդեն իսկ ներկայացված եզրահանգումների շրջանակներում կիրառված գիտելիքների կամ հմտությունների մեկնաբանմամբ, ուստի փորձագետի հարցաքննությունը կարող է իրականացվել, եթե բացակայում են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու դատավարական հիմքերը, և առաջացել է փորձագետի եզրակացությունը ճշգրտելու կամ պարզաբանելու անհրաժեշտություն:

Թեև փորձագետի հարցաքննությունն իրականացնելու մասին դրույթի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ փորձագետին կարելի է հարցաքննել միայն եզրակացություն ներկայացնելուց, կարծիք տալուց կամ որևէ վարույթային գործողության կատարմանը մասնակցելուց հետո, սակայն առաջարկում ենք Օրենսգրքում հստակ նախատեսել նման արգելքը՝ հաշվի առնելով պրակտիկայում հանդիպող այն դեպքերը, երբ իրավակիրառողը նորմի ոչ պատշաճ մեկնաբանման արդյունքում իրականացնում է փորձագետի հարցաքննություն նախքան փորձաքննության եզրակացության ձեռք բերումը, օրինակ՝ անձի ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության ընթացքում հայտնաբերված դանակի շեղքի չափագրում իրականացնելով, առանց համապատասխան փորձաքննություն նշանակելու՝ փորձագետը հարցաքննվում է պարզելու համար նշված դանակի՝ սառը զենք հանդիսանալու հնարավորությունը: Մեկ այլ դեպքում՝ վարույթի նյութերում ենթադրյալ հանցանք կատարած անձի հոգեկան առողջության խնդիրների մասին վկայող փաստական տվյալի առկայության պարագայում քննիչը հաճախ հարցաքննում է փորձագետին՝ պարզելու համար տվյալ հիվանդության՝ անձի անմեղսունակության հանգեցնելու հնարավորությունը:

Ավանդաբար, համարվում է, որ փորձագետին հարցաքննելու նպատակը փորձագետի եզրակացությունը կամ կարծիքը պարզաբանելն ու/կամ կատարե-

լագործելն է²³, այլ գիտնականներ պնդում են²⁴, որ հարցաքննության ընթացքում կարող են ստացվել նոր լրացուցիչ տվյալներ, որին հակադարձում են հակառակ մոտեցման կողմնակիցները²⁵:

Համաձայն լինելով գիտնականների այն պնդման հետ, որ հարցաքննության ընթացքում փորձագետը պարզաբանում կամ նույնիսկ լրացնում է իր եզրակացությունը, եթե դրա համար առկա չէ նոր հետազոտություն իրականացնելու անհրաժեշտություն՝ կարծում ենք, որ տվյալ դեպքում հարցաքննության նպատակը բացառապես պայմանավորված է փորձագետի հետևությունների հավաստիության ստուգմամբ, քանի որ հարցաքննության նպատակը ոչ միայն պարզապես այն պարզաբանելը կամ կատարելագործելն (լրացնելը) է: Մեր օրենսդրությամբ՝ փորձագետի ցուցմունքը հանդիսանում է ապացույցի տեսակ, ուստի ստուգման նպատակով հարցաքննության ընթացքում ստացված տվյալն ապացույց է և ենթակա է ինքնին գնահատման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ստուգման:

Օրենսգրքով էական փոփոխության է ենթարկվել նաև ապացույցի հավաստիությունը գնահատելու եղանակ հանդիսացող լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու ինստիտուտը՝ հստակեցնելով դրանց նախաձեռնման դատավարական հիմքերը. ամրագրվել է, որ քննիչն իրավասու է լրացուցիչ փորձաքննություն նշանակել միայն եզրակացության թերի և անորոշ լինելու պարագայում, իսկ քրեական հետապնդման մարմնի՝ եզրակացության հետ համաձայն չլինելու՝ նախկին օրենսգրքով նախատեսված հիմքն իրավացիորեն դուրս է մղվել Օրենսգրքից: Բացի այդ, հստակ ամրագրվել են կրկնակի փորձաքննություն նշանակելու հիմքերը (258-րդ հոդվածի 2-րդ մաս), որոնց առկայության դեպքում ապացույցն ինքնին վերաժվում է ոչ հավաստի տվյալի՝ պարտավորեցնելով քննիչին տվյալ հիմքերի առկայության դեպքում նշանակել կրկնակի փորձաքննություն՝ եզրակացության վերաբերյալ կասկածները չեզոքացնելու նպատակով: Հարկ է նշել, որ չնայած փորձագետի հարցաքննության և կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու դատավարական հիմքերը տարբեր են և բացառվում է տարակարծիք մեկնաբանման հնարավորությունը, այնուամենայնիվ, առաջարկում ենք օրենսդրորեն ամրագրել կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու հիմքերի առկայության դեպքում փորձագետի հարցաքննությամբ դրանք չեզոքացնելու հնարավորությունը կամ նախատեսել, որ փորձագետի հարցաքննությունն իրականացվում է, եթե եզրակացության ճշգրտման կամ պարզաբանման նպատակով անհրաժեշտ չէ նշանակել կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն:

²³ St'u Комментарий к Уголовно-процессуальному кодексу РФ, Постатейный / Под общ. ред. А. В. Смирнова, 5-изд., М., Проспект, 2009, էջ 248:

²⁴ St'u Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу РФ / Под общ. ред. В. М. Лебедева, научн. ред. В. П. Божьев, М., Спарк, 2004, էջ 410:

²⁵ Смирнов А. В., Калиновский К. Б., Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации, 3-е изд., М., Кнорус, 2007, էջ 515:

Օրենսգիրքն ամրագրել է նաև փորձագետի կարծիքի և եզրակացության հավաստիությունն ապահովելու հակակշռող երաշխիք՝ սահմանափակելով դրանց օգտագործումը, եթե այն տված փորձագետը կողմի միջնորդության առկայության պարագայում դատարանում չի հարցաքննվել (332-րդ հոդվածի 3-րդ մաս): Այլ կերպ՝ միջնորդության առկայության դեպքում փորձագետը պարտավոր է դատարանում ճշգրտել կամ պարզաբանել հատուկ գիտելիքների վրա հիմնված իր հետևությունները, քանի որ հակառակ պարագայում նրա եզրահանգումներն իրավական արժեք չեն ունենա:

Օրենսգրքի 228-րդ հոդվածն ամրագրում է, որ փորձարարության նպատակը վարույթի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանք ստուգելն է, ինչը թույլ է տալիս արձանագրելու, որ սույն քննչական գործողության հիմնական նշանակությունը քրեական վարույթով ստացված որևէ տվյալի կամ հանգամանքի հավաստիությունը ստուգելն է: Միաժամանակ, Օրենսգիրքն ամրագրում է նշված գործողության արդյունքի հավաստիության բարձր աստիճանն ապահովելու գործուն չափորոշիչներ, այն է՝ փորձարարության կատարման պայմանները պետք է հնարավորինս մոտ լինեն ստուգման ենթակա հանգամանքին, ինչպես նաև պատահական արդյունքից խուսափելու նպատակով քննչական փորձարարության բովանդակությունը կազմող փորձերն ու հետազոտական գործողությունները հարկավոր է կատարել մի քանի անգամ՝ ապահովելու առավել ճշգրիտ և ամբողջական տվյալներ:

Բացի այդ, Օրենսգիրքը, քննչական գործողությունների շարքին դասելով առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը, նախատեսել է նաև ցանկացած անձի կամովին ներկայացրած և վարույթի համար նշանակություն ունեցող առարկաները կամ փաստաթղթերը քննիչի կողմից վարույթի նյութերին կցելու պարտականություն: Հարկ է նշել, որ տվյալ դեպքում ապացույց է հանդիսանում քննարկվող քննչական գործողության իրականացման արդյունքում կազմվող դատավարական փաստաթուղթը: Միաժամանակ, Օրենսգիրքը նախատեսել է լրացուցիչ պահանջ²⁶, այն է՝ առարկան կամ փաստաթուղթը վարույթի նյութերին կցելու դեպքում կազմվում է արձանագրություն, որտեղ, ի թիվս այլնի, նշվում է նաև ներկայացնողի պարզաբանումն այն ձեռք բերելու հանգամանքների մասին, ինչը հնարավորություն կտա քննիչին ձևավորելու հիմնավորված գնահատական կոնկրետ անձի կողմից առարկայի կամ փաստաթղթի տիրապետման իրավաչափության առնչությամբ, ինչպես նաև որոշակիացնել այն վարույթային հնարավոր գործողությունների շրջանակը, որոնց իրականացմամբ, անհրաժեշտության դեպքում, կարող է ապահովվել առարկան կամ փաստաթուղթը ներկայացրած անձի պնդումների հավաստիության ստուգումը: Ապացուցողական գործողության արդյունքում ստացվելիք տեղեկության հավաստիությունը երաշխավորե-

²⁶ Տե՛ս Օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասը:

լու նպատակով Օրենսգիրքն ուղղակիորեն արգելել է²⁷ միևնույն ընթերակային՝ նույն վարույթի շրջանակներում մասնակցելու մեկից ավելի քննչական գործողությունների, բացառությամբ այն դեպքի, երբ այդ քննչական գործողությունն անմիջականորեն հաջորդում է տվյալ ընթերակայի մասնակցությամբ կատարված մեկ այլ ապացուցողական գործողությանը (օրինակ՝ դեպքի վայրի զննությանն անմիջապես հաջորդում է քննչական փորձարարությունը):

Ապացույցի հավաստիությունն ապահովելու տեսանկյունից Օրենսգիրքը նորամուծություն է նախատեսել նաև վարույթի շրջանակում ստացված իրեղեն ապացույցների պահպանման կառուցակարգում՝ սահմանելով, որ առանձնապես ծանր և կյանքի դեմ ուղղված հանրորեն վտանգավոր արարքների վերաբերյալ վարույթներով իրեղեն ապացույցները ենթակա չեն ոչնչացման²⁸, ինչը հնարավորություն է տալիս հետագայում ևս բացառիկ վերանայման վարույթի շրջանակում բարձրացնելու ապացույցի արժանահավատության հնարավոր հարցը՝ նկատի ունենալով գիտատեխնիկական զարգացման հնարավորությունները (օրինակ՝ հնարավոր նոր մեթոդների ի հայտ գալու պարագայում չի բացառվում հատուկ գիտելիքների կիրառմամբ տեսանյութում պատկերված անձի նույնականացման հնարավորությունը):

Բացի այդ, Օրենսգիրքը վերջապես քննչական գործողությունների շարքին է դասել ցուցմունքը տեղում ստուգելը՝ ամրագրելով, որ նշված գործողության նպատակը վարույթի շրջանակում հարցաքննված ձերբակալված անձի, մեղադրյալի, տուժողի կամ վկայի կողմից իր ցուցմունքի պարզաբանումն է իրադարձության վայրում, այսինքն՝ սույն դեպքում ստուգման առարկան վարույթի մասնակցի ցուցմունքներն են, որոնց հավաստիությունը ստուգելու անհրաժեշտություն է առաջացել: Նշված քննչական գործողությունն իր էությամբ նորություն չէ, քանի որ դեռևս նախկին կարգավորումների պայմաններում այն շատ հաճախ իրականացվում էր փորձարարության կամ դեպքի վայրի զննության կատարման համատեքստում, իհարկե, արդյունքներն ընդունվում էին ոչ միանշանակ՝ հանգեցնելով բազմաթիվ վիճարկումների իրավակիրառ շրջանակներում: Հատկանշական է, որ Օրենսգիրքը հստակ նախատեսել է այն գործողությունների շղթան, որոնք իրականացվում են քննարկվող գործողության ընթացքում՝ ապահովելով ինչպես նշված գործողության իրավաչափությունը, այնպես էլ ստացվող տվյալների հավաստիությունը: Ընդ որում, տվյալ քննչական գործողության բովանդակությունը կազմող՝ վարույթի համար նշանակություն ունեցող հետքերը, առարկաներն ու փաստաթղթերը մատնացույց անելն օգնում է դյուրին դարձնել ցուցմունքի բովանդակության լիակատար ընկալումը: Բացի այդ, այն գործուն երաշխիք է ցուցմունքը փոխելու դեպքում վարույթի մասնակցի հայտնած տվյալները հավաստիության տեսանկյունից գնահատելու համատեքստում, հատկապես, եթե

²⁷ Տե՛ս Օրենսգրքի 210-րդ հոդվածի 6-րդ մասը:

²⁸ Տե՛ս Օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասը:

քննչական գործողության իրականացման ընթացքում անշեղորեն պահպանվել է տեսաձայնագրման օրենսդրական պահանջը: Ինքնին, ցուցմունքը տեղում ստուգելու արդյունքում ստացված տվյալների արժանահավատության ապահովման համար կարևոր է նաև քննչական գործողության արձանագրության (այդ թվում՝ տեսաձայնագրման) պատշան կազմումն (իրականացումը) ու հանգամանքների ճշգրիտ ամրագրումը, օրինակ՝ գործողության մասնակցին պետք չէ ուղղորդել դեպքի վայր, այլ վերջինս պետք է մատնացույց անի կոնկրետ իրադրության վայրը կամ ներկայացված առարկաների, հետքերի մանրագնին բնութագրումը:

Նոր օրենսգրքի առավել անկյունաքարային և դրական փոփոխություններից պետք է համարել քննչական գործողության ընթացքն ու արդյունքները տեսաձայնագրման միջոցով ամրագրելու պահանջը, քանի որ դրա միջոցով ստացված ապացուցողական նյութն առանձնանում է իր օբյեկտիվությամբ և վստահության առավել բարձր աստիճանով, ինչն իր հերթին երաշխավորում է հավաքված ապացույցների նկատմամբ ավելի բարձր հավաստիության ապահովում՝ հավակնելով լինելու անհերքելի ապացույց: Ավելին, տեսաձայնագրումն օգնում է խուսափել քննիչի կողմնակալության և ենթադրյալ խախտումների վերաբերյալ մշտապես արտահայտված բողոքներից և զանգատներից:

Օրենսգիրքը տեսաձայնագրման իրավաչափությունն ապահովող մի շարք պահանջներ է սահմանում, որոնց անտեսումը կհանգեցնի քննչական գործողության արդյունքում ստացված տվյալների ոչ արժանահավատ ճանաչմանը, մասնավորապես՝ տեսաձայնագրումը՝ քննչական գործողությունը սկսելու պահից մինչև դրա ավարտն (առանց ընդհատման) իրականացնելը, տեսաձայնագրման ընդհատման դեպքում քննչական գործողության կատարումն ընդհատելն ու կազմվող առանձին արձանագրությունում պատճառների մասին նշումը, տեսաձայնագրումը մոնտաժելու կամ փոփոխելու արգելքը²⁹:

Ընդ որում, քննչական գործողությունը սկսելու պահից մինչև դրա ավարտը տեսաձայնագրումն իրականացնելու պահանջն ունի գործնական կարևոր նշանակություն, քանի որ ներառում է նաև վարույթի մասնակցի իրավունքների (այդ թվում՝ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ չվկայելու, իրավաբանական օգնություն ստանալու) պարզաբանումը, որը երաշխավորում է պատշան կարգով քննչական գործողության իրականացումը՝ իր հերթին ապահովելով ստացվող արդյունքի հավաստիությունը:

Թեև հիշատակվածի համատեքստում Օրենսգիրքը նախատեսել է նաև քննչական գործողության ընթացքի ամբողջականությունը, տեսանելիությունն (ընդգրկվածությունը, լուսավորությունը և այլն) ու լսելիությունն ապահովելու պահանջ, սակայն հաշվի առնելով քրեական վարույթների քննության պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները (երբ ցուցմունքի՝ որպես ապացույցի արժանահավատությունը գնահատելու գործընթացում ցուցմունք տվող անձի բավարար

²⁹ Տե՛ս Օրենսգրքի 214-րդ հոդվածի 4-րդ մասը:

չափով տեսանելի չլինելը հանգեցնում է որոշակի վիճարկումների՝ կարծում ենք՝ օրենսդրորեն անհրաժեշտ է արձանագրել, որ տեսաձայնագրումը պետք է իրականացվի՝ ելնելով այն նկատառումներից, որ հետագայում այն հետագոտողի համար ակնհայտորեն տեսանելի լինի վարույթն իրականացնող մարմնի հնչեցրած հարցին պատասխանող դատավարության մասնակցի դիմախսադր (այդ թվում՝ հայացքը, հույզերը), շարժումներ, որոնք հնարավորություն կընձեռեն գնահատելու վերջինիս՝ հարցադրմանը պատասխանելիս դրսևորած վարքագիծը, ուստիև՝ ցուցմունքի արժանահավատությունը:

Օրենսդիրը՝ որպես ապացույցի հավաստիության ապահովման լրացուցիչ երաշխիք, նախատեսել է տեսաձայնագրմամբ կատարվող քննչական գործողության՝ առանց տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչի առկայության ապացուցման գործընթացում օգտագործելու արգելքը: Ի թիվս նշվածի՝ տեսաձայնագրությունը չի կարող կիրառվել ապացուցման գործընթացում՝ առանց համապատասխան արձանագրության: Այլ խոսքով՝ օրենսդրի տրամաբանությունից հետևում է, որ քննչական գործողության (բացառությամբ փաստաթղթի գնության, տեղեկատվության պահանջի և առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելու) արձանագրությունը և դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող տեսաձայնագրությունը, որպես մեկ ամբողջություն, կոչված են երաշխավորելու ապացույցի հավաստիությունը՝ ապահովելով դրա օբյեկտիվության բարձր շեմը:

Միաժամանակ, օրենսդիրը սահմանել է քննչական գործողությունների (բացառությամբ փաստաթղթի գնության, տեղեկատվության պահանջի և առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելու) տեսաձայնագրման իմպերատիվ պահանջից որոշակի բացառություններ՝ դրանք պայմանավորելով օբյեկտիվ անհնարինության հետ, որը քննչական գործողությունը կատարող սուբյեկտի կողմից արձանագրության մեջ ենթակա է պարտադիր պատճառաբանման: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ապացույցի հավաստիության և արժանահավատության ապահովման կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ Օրենքն ամրագրել է որոշակի պայմաններ, որոնց պահպանմամբ ապացույցի ամրագրումը թույլ կտա իրավակիրառողին հետագայում զերծ մնալ դրա օբյեկտիվության և հավաստիության վերաբերյալ տարատեսակ վիճարկումներից:

Մասնավորապես՝ առանց տեսաձայնագրման կատարված հարցաքննության օբյեկտիվության և արժանահավատության երաշխիք կարող են հանդիսանալ քննչական գործողության կատարման ընթերականեր ներգրավելը, ինչպես նաև այնպիսի լրացուցիչ գործողություններ, ինչպիսիք են հարցաքննվողի կողմից ցուցմունքն անձամբ արձանագրելու ցանկությունը կամ ցուցմունքին ծանոթանալուց հետո հարցաքննության մասնակիցների կողմից դրա ճշտության և լրիվության կապակցությամբ իրենց նկատառումներն արձանագրության մեջ շարադրելը:

Եզրակացություն

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարելի է ձևավորել ներքոհիշյալ եզրահանգումները.

- Ապացույցի հատկանիշների, այդ թվում՝ հավաստիության հասկացության և բովանդակության պարզումն առանցքային նշանակություն ունի ապացուցման ողջ գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Քրեական դատավարությունում որպես ապացույց հանդես գալու համար յուրաքանչյուր տվյալ, ի թիվս վերաբերելիության և թույլատրելիության, պետք է օժտված լինի նաև հավաստիության հատկանիշով:
- Գործող Օրենսգիրքն ամկա հասարակական հարաբերությունների իրողությունների պայմաններում կարգավորում է ապացույցի հավաստիության ապահովման երաշխիքները՝ նախատեսելով հավաստի ապացույց ձեռք բերելու կառուցակարգեր, միաժամանակ, Օրենսգիրքը հստակ նախատեսում է ապացույցի հավաստիությունը ստուգելու և գնահատելու մտավոր-տրամաբանական և գործնական միջոցներ:
- Նկատի ունենալով ապացույցի հատկանիշ հանդիսացող հավաստիության դերն ու նշանակությունն ապացուցման գործընթացում՝ առաջարկում ենք քրեադատավարական օրենսդրությամբ հստակ ամրագրել ապացույցի թույլատրելիության գիտականորեն հիմնավորված հասկացությունը:
- Ուսումնասիրության շրջանակներում առանձնակի շեշտադրում է կատարվում նոր ընդունված քրեական դատավարության օրենսգրքով ապացուցման գործընթացի կարգավորմանը, ներդրված նորագույն կարգավորումներին, այդ թվում՝ ապացույցի ինքնուրույն հատկանիշ հանդիսացող հավաստիության ապահովման օրենսդրական երաշխիքներին:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան», Երևան, 1976:
E.B. Aghayan, Explanatory Dictionary of Modern Armenian, «Hayastan», Yerevan, 1976.
2. Строгович М. С., Материальная истина и судебные доказательства в советском уголовном процессе, М., АН СССР, 1955.
Strogovich M. S., Material Truth and Judicial Evidence in the Soviet Criminal Process, Moscow, Academy of Sciences of the USSR, 1955.
3. Овсянников И. В., Проблема достоверности доказательств в доказательственном праве России, Современное право, 2004, № 7.
Ovsyannikov I. V., «The Problem of the Reliability of Evidence in Russian Evidentiary Law», Modern Law, 2004, No. 7.
4. Смирнов А. В., Калиновский К. Б., Уголовный процесс, Учебное пособие, 2-е изд. М., ИД «Питер», 2014.
Smirnov A. V., Kalinovsky K. B., Criminal Procedure, Study Guide, 2-nd ed., Moscow, Piter Publishing House, 2014.
5. Абросимов И. В., Актуальные вопросы обеспечения допустимости и достоверности доказательств в уголовном судопроизводстве, автореф. дис. ... канд. юрид. Наук, 12.00.09, М., 2007.
Abrosimov I. V., Topical Issues of Ensuring the Admissibility and Reliability of Evidence in Criminal Proceedings, Author's Abstract of the PhD (Candidate of Legal Sciences) Dissertation, Specialty 12.00.09, Moscow, 2007.
6. Миронов В. Ю., Достоверность доказательств и их значение при постановлении приговора, дис. ... канд. юрид. наук, 12.00.09, 2005.
Mironov V. Yu., Reliability of Evidence and Its Significance in Rendering a Verdict, PhD (Candidate of Legal Sciences) Dissertation, Specialty 12.00.09, 2005.
7. Резник Г. М., Внутреннее убеждение при оценке доказательств, М., Юрид.лит., 1977.
Reznik G. M., Inner Conviction in the Evaluation of Evidence, Moscow, Legal Literature Publishing House, 1977.
8. Зинатуллин З. З., Уголовно-процессуальное доказывание, Ижевск, Детектив-Информ, 2002.
Zinatullin Z. Z., Criminal Procedural Proof, Izhevsk, Detective-Inform, 2002.
9. Балакшин В. С., Оценка доказательств, Юрид. вестник, Екатеринбург, 2001, № 1.
Balakshin V. S., «Evaluation of Evidence», Legal Bulletin, Yekaterinburg, 2001, No. 1.
10. Орлов Ю. К., Основы теории доказательств в уголовном процессе, Научно-практическое пособие, М., 2000.
Orlov Yu. K., Fundamentals of the Theory of Evidence in Criminal Procedure, Scientific and Practical Guide, Moscow, 2000.
11. Россинский С. Б., Собираание доказательств как «первый» этап доказывания по уголовному делу, Юридический вестник Самарского университета, 2020.
Rossinsky, S. B., «Collection of Evidence as the «First» Stage of Proof in a Criminal Case», Legal Bulletin of Samara University, 2020.
12. Шейфер С. А., Доказательства и доказывание по уголовным делам, М., Норма, 2009.
Sheifer S. A., Evidence and Proof in Criminal Cases, Moscow, Norma, 2009.
13. Зайцева С. А., Громов Н.А., Пономаренко В.А., Достоверность и вероятность доказательств, Следователь, 1999, № 7.
Zaitseva S. A., Gromov N.A., Ponomarenko V.A., «Reliability and Probability of Evi-

- dence», Investigator, 1999, No. 7.
14. Костенко Р. В., Оценка уголовно-процессуальных доказательств, Издание второе, М., Юрлитинформ, 2012.
Kostenko R. V., Evaluation of Criminal Procedural Evidence, 2nd ed., Moscow, Yurlitinform, 2012.
 15. Уголовно-процессуальное право России, учебник под ред. П. А. Лупинской, М., 2003.
Criminal Procedural Law of Russia, textbook edited by P. A. Lupinskaya, Moscow, 2003.
 16. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации, Постав-
тейный/Под общ. ред. А. В. Смирнова, 5 изд., М., Проспект, 2009.
Commentary on the Criminal Procedure Code of the Russian Federation, Article-by-Article
Commentary, edited by A. V. Smirnov, 5th ed., Moscow, Prospekt, 2009.
 17. Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу
Российской Федерации/Под общ. ред. В. М. Лебедева, научн. ред. В. П. Божьев, М.,
Спарк, 2004.
Scientific and Practical Commentary on the Criminal Procedure Code of the Russian Fed-
eration, edited by V. M. Lebedev, scientific editor V. P. Bozhyev, Moscow, Spark, 2004.
 18. Смирнов А. В., Калиновский К. Б., Комментарий к Уголовно-процессуальному ко-
дексу Российской Федерации, 3-е изд., М., Кнорус, 2007.
Smirnov A. V., Kalinovsky K. B., Commentary on the Criminal Procedure Code of the
Russian Federation, 3rd ed. Moscow, Knorus, 2007.
 19. Chap Ltd v. Armenia – 04.08.2017

Arsen Vardanyan

*Deputy Prosecutor of Yerevan City, Degree Applicant at the Chair of
Criminal Procedure and Criminology, Faculty of Law, Yerevan State University*

THE CONCEPT OF THE RELIABILITY OF EVIDENCE AND THE FUNDAMENTAL ISSUES OF ITS ASSURANCE IN THE NEW CRIMINAL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA¹

Abstract

Proof, as one of the most important constituent elements of the entire criminal procedure, has consistently remained at the centre of attention of both legal scholars and practitioners. This study examines, at a theoretical level, the concept, content, and practical significance of the attribute of reliability of evidence, as well as a number of fundamental issues related to the verification and evaluation of evidence. Based on an analysis of legislation, judgments of the European Court of Human Rights, precedent decisions of the Court of Cassation of the Republic of Armenia, judicial practice, and theoretical sources, the paper explores a range of contemporary issues concerning the institution of the reliability of evidence in criminal proceedings.

The study addresses the necessity of a legislative definition of a scientifically substantiated concept of the reliability of evidence. Particular attention is paid to the legislative formulation of reliability as an independent attribute of criminal procedural evidence, the guarantees and procedural mechanisms for ensuring the reliability of evidence, as well as the circumstances leading to the unreliability of evidence and their manifestations. In this context, it is proposed, for the purpose of ensuring the reliability of evidence obtained through the application of special knowledge, to legislatively establish a prohibition on questioning an expert before the submission of an expert opinion, the expression of an expert assessment, or participation in the performance of any procedural action. The institution of the reliability of evidence, its verification and evaluation, as well as the guarantees for ensuring such reliability, constitute some of the most complex stages of the process of proof, which, in turn, presupposes a high probability of various problems arising in practical activity. The study and discussion of these issues may contribute to their identification and to the search for effective solutions, which underscores the relevance of the present research.

Special attention is devoted to problems encountered in practical application, newly introduced legal mechanisms in the context of legislative reforms, and conclusions are formulated along with several proposals aimed at the further development of the institution of proof.

Keywords: criminal procedure; factual data; attributes (characteristics) of evidence; verification and evaluation of evidence; reliable evidence.

¹ The article was presented on 17.04.2026 and was reviewed on 25.05.2026.

Арсен Варданян

*Заместитель прокурора города Ереван, соискатель кафедры
уголовного процесса и криминалистики юридического факультета
Ереванского государственного университета*

ПОНЯТИЕ ДОСТОВЕРНОСТИ ДОКАЗАТЕЛЬСТВА И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ЕЁ ОБЕСПЕЧЕНИЯ В НОВОМ УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА¹

Абстракт

Доказывание, являясь одним из важнейших структурных элементов уголовного судопроизводства, на протяжении длительного времени неизменно находится в центре внимания как теоретиков, так и практиков. В настоящей работе на теоретическом уровне рассматриваются понятие, содержание и прикладное значение признака достоверности доказательств, а также ряд ключевых вопросов, связанных с их проверкой и оценкой. На основе анализа законодательства, решений Европейского суда по правам человека, прецедентных постановлений Кассационного суда Республики Армения, судебной практики и теоретических источников исследуется ряд актуальных проблем, относящихся к институту достоверности доказательств в уголовном процессе. Особое внимание уделяется необходимости законодательного закрепления научно обоснованного понятия достоверности доказательств. Отдельно рассматриваются законодательная формулировка достоверности как самостоятельного признака уголовно-процессуального доказательства, гарантии и процедуры обеспечения достоверности доказательств, а также обстоятельства, приводящие к их недостоверности, и формы их проявления. В этом контексте в целях обеспечения достоверности доказательств, получаемых с применением специальных знаний, предлагается законодательно закрепить запрет на допрос эксперта до представления им заключения, выражения мнения либо участия в совершении какого-либо процессуального действия.

Институт достоверности доказательств, их проверка и оценка, а также гарантии обеспечения достоверности относятся к числу наиболее сложных этапов процесса доказывания, что предполагает высокую вероятность возникновения ряда проблем в практической деятельности. Их исследование и обсуждение могут способствовать выявлению указанных проблем и поиску эффективных путей их разрешения, что и обуславливает актуальность настоящей работы. Отдельное внимание уделено проблемам, возникающим в правоприменительной практике, и новым правовым механизмам, внедрённым в контексте законодательных реформ; сформулированы выводы и выработан ряд предложений, направленных на дальнейшее развитие института доказывания.

Ключевые слова: уголовный процесс; фактические данные; признаки доказательства; проверка и оценка доказательств; достоверное доказательство.

¹ Статья была представлена 17.04.2026 и прошла рецензирование 25.05.2026.

Գուրգեն Գուրգենյան

*Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների
դատախազի տեղակալ*

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԶՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ¹

Համառոտագիր

Սույն գիտական հոդվածը նվիրված է փողերի լվացման համար քրեական պատասխանատվության հիմնախնդիրների տեսական և գործնական վերլուծությանը: Հետազոտության նպատակն է բացահայտել տվյալ հանցագործության քրեաիրավական բնութագրի առանցքային խնդիրները և վեր հանել իրավակիրառ պրակտիկայում առաջացող դժվարությունները:

Աշխատությունում մանրամասն ուսումնասիրվում են փողերի լվացման հանցակազմի կառուցվածքային տարրերը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի մեկնաբանությանը: Քննարկման առարկա է դառնում նախորդող հանցագործության իրավաբանական նշանակությունը և դրա ապացուցման անհրաժեշտության հարցը՝ դիտարկելով ինչպես տեսական մոտեցումները, այնպես էլ գործնական կիրառման առանձնահատկությունները:

Հատուկ անդրադարձ է կատարվում սուբյեկտիվ կողմի հիմնավորմանը, մասնավորապես՝ ապօրինի ծագման վերաբերյալ անձի տեղեկացվածության ապացուցման հիմնախնդրին, որը տվյալ հանցագործության որակման առավել բարդ և վիճահարույց տարրերից մեկն է: Վերլուծվում են նաև այն դժվարությունները, որոնք ծագում են փողերի լվացման տարանջատման ընթացքում հարակից հանցագործություններից, ինչպես նաև իրավական նորմերի տարբեր մեկնաբանություններից բխող անհամապատասխանությունները:

Ամփոփելով՝ կատարվում են եզրահանգումներ այն մասին, որ փողերի լվացման համար քրեական պատասխանատվության արդյունավետ կիրառումը պայմանավորված է հանցակազմի տարրերի հստակ և միասնական մեկնաբանությամբ, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի հետևողականությամբ: Առկա հիմնախնդիրների լուծումը կարևոր նշանակություն ունի տվյալ հանցագործության ճիշտ որակման և իրավական գնահատականի արժանացնելու տեսանկյունից:

Հիմնաբառեր - փողերի լվացում, պրեդիկատ հանցագործություն, գույք, եկամուտ, այլ օգուտ, նպատակ:

¹ Հոդվածը ներկայացվել է 20.04.2026 թ., գրախոսվել է 20.05.2026 թ.:

Ներածություն

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունները նպաստել են մեր երկրում նախկինում գրեթե անհայտ հասարակական վտանգավոր արարքների ի հայտ գալուն և զարգացմանը, որոնցից մեկը հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացումն է (լվացումը):

Փողերի լվացումը նպաստում է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական հարաբերությունների ամբողջ համակարգի քրեականացմանը: Բացասական այս երևույթը միջազգային բնույթ է ստացել և ֆինանսական հիմք է ստեղծում հանցավորության, այդ թվում՝ կազմակերպված և անդրազգային հանցավորության գոյության համար: Հանցավոր խմբերի կողմից կապիտալի կուտակումը, դրա քաղաքացիական շրջանառության մեջ մտցնելը, ինչպես նաև երկրի սահմաններից դուրս օգտագործումը թույլ է տալիս զգալի առավելություններ ստանալ մրցակցային պայքարում, ստեղծում է անբարենպաստ ներդրումային միջավայր և բացասաբար է անդրադառնում ազգային տնտեսության զարգացման վրա: Հանցավոր աղբյուրներից միջոցների ներգրավումը, իր հերթին, հանգեցնում է ֆինանսական հարաբերությունների ապակայունացմանը, սպառնում է բանկային համակարգի կայունությանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների բացահայտման և քննության պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է տվյալ տեսակի հանցավոր գործունեության բարձր լատենտայնության մասին: Չնայած այն հանգամանքին, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման քրեաիրավական բնութագրին նվիրված են բազմաթիվ հայտնի հեղինակների աշխատություններ՝ այնուամենայնիվ, քրեական օրենսդրության կիրառման շատ հարցեր կոնկրետ իրավիճակներում որոշակի բարդություններ են առաջացնում քննչական և դատական մարմինների համար:

Երկրում սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի փոփոխությունները, ինչպես նաև գործող քրեական օրենսդրությունը պայմանավորում են 296-րդ հոդվածով նախատեսված հանցագործության որակման հետ կապված հարցերի լուծման անհրաժեշտությունը:

Նշված նորմի կիրառման ժամանակ բարդությունների առաջացումը կապված է, մասնավորապես՝ հանցակազմի առանձին հատկանիշների պաշտոնական մեկնաբանման բացակայության, գիտական գրականության մեջ օրենսդրի կողմից օգտագործված որոշ տերմինների բովանդակության սահմանման տարբեր մոտեցումների առկայության, տեսության մեջ և պրակտիկայում համապատասխան հանցագործությունների որակման ոչ միանշանակ լուծելի հարցերի հետ:

Հոդվածի նպատակը ներպետական օրենսդրության մեջ և միջազգային մակարդակներում ամրագրում ստացած հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման հանցակազմի քրեաիրավական բնութագրի, այդ

հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների, հանցավոր եկամուտների օրինականացման համար նախատեսված պատասխանատվության առանձնահատկությունների ուսումնասիրությունն է: Հոդվածը կարող է տեսական հիմք հանդիսանալ այս ոլորտում հետագա հետազոտությունների համար: Աշխատանքում կատարված տեսական գրականության, ՀՀ և արտասահմանյան երկրների օրենսդրության համակողմանի վերլուծության արդյունքում ձևակերպված եզրակացություններն ու առաջարկությունները կարող են ուղղվել իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

§1. Փողերի լվացման հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները

Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման համար քրեական պատասխանատվություն է նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի «Տնտեսական հանցագործությունները» վերտառությամբ 32-րդ գլխում: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

Հանցագործության բնույթը և հանրային վտանգավորությունը որոշվում են առաջին հերթին այն օբյեկտով, որի դեմ կատարվում է ոտնձգությունը:

Որևէ արարքի քրեականացումը տեղի է ունենում կախված իրավական պաշտպանության օբյեկտի արժեքից և արարքի՝ դրա վրա ունեցած ազդեցության աստիճանից²:

Քրեական իրավունքի գիտության մեջ ամենատարածված տեսակետի համաձայն՝ հանցագործության օբյեկտ են հանդիսանում քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների ամբողջությունը³:

Տեսության մեջ սույն հանցագործության ընդհանուր օբյեկտ է համարվում տնտեսությունը՝ որպես արտադրական (տնտեսական) հարաբերությունների

² Кузнецова Н. Ф., Преступление и преступность. М., 1969, էջեր 10-12

³ Ст'я Никифоров Б. С., Объект преступления по советскому уголовному праву. М., 1960, էջ 92-93, Куринов Б. А., Научные основы квалификации преступлений. М., 1976, էջ 12. Кудрявцев В. Н., Теоретические основы квалификации преступлений. М., 1963, էջ 165

ամբողջություն՝ կապված նյութական ապրանքների արտադրության, փոխանակման, բաշխման և սպառման հետ⁴:

Սույն հանցագործության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կարգավորում են ՀՀ-ում օրինական ձեռնարկատիրական գործունեությունը և ներդրումային քաղաքականությունը: Քրեաիրավական արգելքի էությունն այն է, որ ՀՀ տնտեսական համակարգը պաշտպանվի չվերահսկվող մեծ քանակի դրամական միջոցների և այլ գույքի ներդրումից, և կանխվի այնպիսի հանցավոր գործունեությունը, որը, որպես կանոն, իրականացվում է կազմակերպված հանցավոր խմբերի կողմից՝ ապօրինի ճանապարհով եկամուտ ստանալու նպատակով⁵:

Հանցավոր միջոցներով ձեռք բերված փողերի կամ այլ գույքի օրինականացումը (վաճառումը) ստեղծում է ստվերային տնտեսություն, վնասում է պետության տնտեսական անվտանգությանը և ֆինանսական կայունությանը, բարդացնում է հանցագործությունների բացահայտումն ու հետաքննությունը, հնարավորություն է ստեղծում հանցավոր խմբերի (կազմակերպությունների) համար ֆինանսավորել և իրականացնել իրենց անօրինական, ներառյալ՝ ահաբեկչական գործունեությունը:

Հանցագործության առարկա կարող են հանդես գալ հասարակական հարաբերության տարրերը (հասարակական հարաբերության օբյեկտը, հասարակական հարաբերության կողմերը, հասարակական հարաբերության կողմերի գործունեությունը):

Կոնկրետ հանցակազմերում որպես հանցագործության առարկա է հանդես գալիս հասարակական հարաբերության այն տարրը, որի վրա ներգործելով, որը ոչնչացնելով կամ վնասելով՝ խախտվում է ողջ հասարակական հարաբերությունը:

Սույն հանցագործության առարկա է հանդիսանում հանցավոր ճանապարհով ստացված գույքը: Հանցավոր ճանապարհով ստացված գույք է համարվում ՀՀ գործող քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված գույքը, որն ուղղակի կամ անուղղակի ստացվել կամ առաջացել է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ստացված գույք, եկամուտ կամ այլ տեսակի օգուտ են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ ֆինանսական (դրամական) միջոցները, վճարային գործիքները, արժեթղթերը, կրիպտոակտիվները և գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահույթաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:

⁴ Волженкин Б. В., Преступления в сфере экономической деятельности. СПб., 2002., էջ 52

⁵ Տե՛ս Ս. Առաքելյան, Ա. Գաբրիելյան, Հ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղարյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, Վ. Քոչարյան, ՀՀ քրեական իրավունք (հատուկ մաս), Երևան, 2012, էջ 422:

Որպես գույք չեն կարող դիտարկվել քաղաքացիական շրջանառությունից հանված իրերը:

Հարկ է նկատել, որ սույն հանցակազմի առարկա է հանդիսանում ոչ միայն կոնկրետ հանցակազմի հատկանիշ հանդիսացող գույքը, օրինակ՝ կողոպուտի կամ կաշառք ստանալու, այլ նաև դրամական միջոցները և գույքը, որոնք ստացվել են որպես պարգևատրում հանցագործության կատարման համար (օրինակ՝ պատվերով սպանություն կատարելու համար) կամ վարձատրություն քաղաքացիական շրջանառությունում սահմանափակված առարկաների իրացման համար⁶:

Միևնույն ժամանակ, կարծում ենք՝ դրամական միջոցներ ասելով՝ պետք է հասկանալ ինչպես ներպետական, այնպես էլ օտարերկրյա արտարժույթով դրամական միջոցները, այդ թվում՝ էլեկտրոնային դրամական միջոցները:

Օրենսդիրը կատարված փոփոխությունների արդյունքում կրիպտոակտիվները ներառել է ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված գույք, եկամուտ կամ այլ տեսակի օգուտ համարվող առարկաների շարքում՝ միևնույն ժամանակ կարգավորելով դրա շուրջն առաջացող իրավահարաբերությունները: Նշվածը կարևոր ձեռքբերում է, քանի որ նախքան նշված փոփոխությունները՝ տարբեր վեճեր էին առկա կրիպտոակտիվի՝ փողերի լվացման հանցակազմի առարկա հանդիսանալու վերաբերյալ:

ՀՀ քրեական օրենսգրքով՝ 296-րդ հոդվածի օբյեկտիվ կողմը բխում է Վարչապալի կոնվենցիայից, որտեղ նախատեսված են հետևյալ արարքները.

1. անձի կողմից, որը տեղյակ է եղել նյութական արժեքները հանցավոր ճանապարհով ձեռք բերելու մասին, դրանք պահելն ու հանձնելը՝ նյութական արժեքների ապօրինի ծագումը թաքցնելու կամ հիմնական հանցագործություն կատարելու մեջ ներգրավված ցանկացած անձի պատասխանատվությունից խուսափելուն օժանդակելու նպատակով,
2. նյութական արժեքների և դրանց առնչվող իրավունքների բնույթը, ծագման աղբյուրները, գտնվելու վայրը, շարժը կամ իրական պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը, եթե իրավախախտում թույլ տված անձն իմացել է, որ այդ արժեքները իրենցից ներկայացնում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտներ,
3. նյութական արժեքների ձեռքբերումը, տիրապետումը, օգտագործումը այն անձի կողմից, որը տեղյակ է, որ դրանք իր կողմից ստանալու պահին հանդիսանում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտներ:

ՀՀ քրեական օրենսգրքով 296-րդ հոդվածի դիսպոզիցիայի վերլուծությունից հետևում է, որ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հետևյալ գործողություններով.

⁶ St'u Постановление Пленума Верховного Суда РФ от 07.07.2015 N 32 (ред. от 26.02.2019) "О судебной практике по делам о легализации (отмывании) денежных средств или иного имущества, приобретенных преступным путем, и о приобретении или сбыте имущества, заведомо добытого преступным путем".

- ա) հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել է որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից,
- բ) գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում),
- գ) գույք ձեռք բերելը կամ տիրապետելը, կամ պահելը, կամ օգտագործելը, կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

Փողերի լվացման հանցակազմը ձևական է, այն ավարտված է համարվում վերը նշված գործողություններից որևէ մեկի կատարման պահից:

Փոխարկումը որևէ գույք այլ գույքի հետ փոխելն է կամ համարժեք փոխանակում իրականացնելը: Մասնավորապես, արտարժույթի փոխարկումը նշանակում է մի երկրի դրամական միավորի փոխանակումը մեկ այլ երկրի դրամական միավորի արտարժույթով: Իսկ արժեթղթերի փոխարկումը նույն թողարկողի՝ նախկինում տեղաբաշխված արժեթղթերի փոխանակման գործողությունն է վերջիններիս մարմամբ⁷:

Գույքը փոխանցելը նշանակում է այդ գույքը այլ անձին հանձնելը, նրա փոխանցելով՝ այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք կամ իրավունքների ողջ համալիրը:

Թաքցնել նշանակում է ընդհանրապես տեղեկություն չտալ կամ տալուց դիտավորյալ խուսափել, իսկ խեղաթյուրելը իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ տալն է:

Գույք ձեռք բերելը նշանակում է որևէ անձից հատուցմամբ կամ անհատույց այդ գույքը ստանալը: Գույքը ձեռք բերելուց հետո կարող է հաստատվել սեփականության իրավունք: Սեփականության իրավունքը գույքի տիրապետումն է, օգտագործումը և տնօրինումը: Գույքը տիրապետելը գույքը փաստացի տիրապետության տակ ունենալն է, օգտագործելը գույքը իր սոցիալ-տնտեսական նշանակությամբ ծառայեցնելու միջոցով դրանից արտադրական, կենցաղային, մշակութային և այլ պահանջմունքների բավարարում, տարբեր տեսակի օգուտներ, պտուղներ և եկամուտներ ստանալու հնարավորությունն է, իսկ տնօրինելը գույքի ճակատագիրը որոշելու հնարավորությունն է:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի և դրամական միջոցների հանցավոր ծագումը և բնույթը թաքցնելը կա-

⁷ Տե՛ս անցանց՝ <https://dic.academic.ru/dic.nsf/ushakov/838558>

տարվում է ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության մեջ գործարքների և ֆինանսական գործառնությունների լայն շրջանակի կատարման միջոցով, որոնցով իրականացվում է գույքի իրական սեփականատիրոջ փոփոխություն (կեղծ ընկերության), գույքի ձևի փոփոխություն (դրամական միջոցներով ձեռք են բերվում մուրհակներ, իրեր և այլն), գույքի ձեռքբերման հիմքի փոփոխություն (փոխառության պայմանագրի կնքում)⁸: Շատ դեպքերում նման գործարքները տնտեսական առումով իմաստագուրկ են: Հանցավոր ունեցվածքի տիրապետումն օրինականացնելու համար գործարքը ձևակերպվում է փաստաթղթերով: Հանցավոր եկամուտների օրինականացման արդյունքում ստացված եկամուտները հանդես են գալիս ապրանքների, դրամական միջոցների, արժեթղթերի, գույքային իրավունքների տեսքով:

Հանցավոր ճանապարհով ստացված դրամական միջոցների տիրապետմանը, օգտագործմանը և տնօրինմանը իրավաչափություն տալու համար շատ հաճախ օգտագործվում է կեղծ ընկերությունների ցանց, որոնց թիվը կարող է հասնել մի քանի հարյուրի: Կեղծ կազմակերպությունները թույլ են տալիս քողարկել հանցավոր եկամուտների օրինականացման գործընթացը ձեռնարկատիրական գործունեության օրինականացման տակ, շրջանցել բանկի հաճախորդների ինքնության նույնականացման պահանջները, ինչը դժվարացնում է անձի՝ կատարված հանցագործությանը մասնակցություն ունենալու ապացուցման գործընթացը:

ՀՀ կենտրոնական բանկի կայքում տեղադրված են Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից պարբերաբար վերլուծված և հրապարակված փողերի լվացման տիպաբանություններ⁹:

Անդրադառնալով փողերի լվացման հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշներին՝ հարկ է նշել, որ այն ձևական է և հետևաբար հանցագործության սուբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել միայն ուղղակի դիտավորությամբ, քանի որ ձևական հանցակազմերում անուղղակի դիտավորությունը բացառվում է:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ Նիդեռլանդների քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում նաև փողերի լվացում հանդիսացող արարքներն անփութությամբ կատարելու համար¹⁰:

Փողերի լվացման հանցակազմի պարտադիր հատկանիշ է նպատակը, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հանցավոր ծագումը թաքցնելը կամ խեղաթուրելն է, կամ որևէ անձի օժանդակելը, որպեսզի վերջինս խուսափի իր կողմից կատարված արարքի համար քրեական պատասխանատվությունից:

Հարկ է նկատել, որ փողերի լվացման հանցակազմի առկա ձևակերպումը կարող է տարբերկալման տեղիք տալ: Բանն այն է, որ սուբյեկտիվ կողմի պարտադիր

⁸ Տե՛ս Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կայքը
URL:[https://lms.fmc.am/lms/mod/book/view.php?id=27\(01.03.21\)](https://lms.fmc.am/lms/mod/book/view.php?id=27(01.03.21))

⁹ Տե՛ս URL:<https://www.cba.am/am/SitePages/fmctypologies.aspx> (15.03.21)

¹⁰ Տե՛ս Indirect Method of Proof: Providing Evidence in stand-alone money laundering investigations, 15th of April 2019

հատկանիշ համարվող նպատակը չի տարածվում օբյեկտիվ կողմի դրսևորումներից երկրորդ և երրորդ արարքների վրա, այն է՝ *գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը*: Տեքստային նման ձևակերպումը այնպիսի տպավորություն է ստեղծում, որ առանց վերոնշյալ նպատակի առկայության՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը, խեղաթյուրելը, այդպիսի գույքը ձեռք բերելը, տիրապետելը, օգտագործելը կամ տնօրինելը հանգեցնում է քննարկվող հանցագործության համար քրեական պատասխանատվության: ՀՀ վճռաբեկ դատարանը¹¹ Արսեն Սարգսյանի վերաբերյալ գործով որոշմամբ ևս արձանագրել է, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածում լիարժեք հստակեցված չէ այս հանցագործության սուբյեկտիվ կողմի գլխավոր՝ էական հատկանիշը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նկարագրված գործողությունների արդյունքում համապատասխան միջոցների ծագման իրական աղբյուրի քողարկման կամ խեղաթյուրման նպատակը¹²:

Մեկ այլ որոշմամբ՝ Վճռաբեկ դատարանը քննարկվող հանցակազմի հատկանիշների մեկնաբանության արդյունքում փաստել է, որ «նշված հանցագործության կատարմամբ հանցավորն օրինական գործունեության շղարշի ներքո նպատակ է հետապնդում լեգիտիմացնել ստացված անօրինական գույքն ու եկամուտները, քողարկելու և թաքցնելու դրանց ծագման հանցավոր աղբյուրը, վերացնելու դրանց հանցավոր հետքերը: Այլ կերպ, այս հանցագործությունն արտահայտվում է անօրինական ճանապարհով ստացված «կեղտոտ» փողերի օրինականացմամբ, որով էական վնաս է պատճառվում պետության տնտեսությանը: Այսինքն՝ տվյալ հանցագործության կատարմամբ՝ փողերի լիացմանն ուղղված գործողություններ կատարելու, անօրինական գույքն ու եկամուտները օրինական քաղաքացիական շրջանառության մեջ ներդնելու միջոցով հանցավորի դիտավորությունն ուղղված է լինում դրանց օրինական տեսք հաղորդելուն և քրեական պատասխանատվությունից ազատվելուն: Հետևաբար, անձի արարքը որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում որակելիս՝ պետք է համակողմանի ուշադրության արժանացնել այն գործողությունների շղթան, անօրինական գույքի և եկամուտների քաղաքացիական շրջանառությունը՝ իր շրջափոխելով հանդերձ, որոնք ընդհանուր առմամբ կարող են վկայել հանցավորի՝ փողերի լիացմանն ուղղված դիտավորության առկայության մասին»:

Այսպես, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարել ընդգծել, որ «հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի հատկանիշ-

¹¹ Այսուհետ՝ Վճռաբեկ դատարան:

¹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արսեն Սարգսյանի գործով 2011 թ. փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0090/01/09 որոշումը:

ների առկայությունը և փողերի լվացմանն ուղղված անձի դիտավորությունը որոշելիս՝ անհրաժեշտ է գործի փաստական հանգամանքների պատշաճ իրավական գնահատմամբ պարզել ստացված անօրինական գույքի և եկամուտների ծագման աղբյուրը, նշված գույքն ու եկամուտներն օրինական շրջանառության մեջ ներդնելուն ուղղված գործողությունների ամբողջությունը, այդ նյութական միջոցների շարժընթացն ու շրջապտույտն օրինական քաղաքացիական շրջանառության մեջ, ձեռնարկված գործողությունների շղթան, որի վերջնադրույունը այդ գույքն ու եկամուտները ստացել են օրինական տեսք: Ընդ որում, վերջին դեպքում հատկապես պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե կոնկրետ ո՞ր օրինական քաղաքացիաիրավական գործարքի կատարման արդյունքում են օրինական տեսք ստացել ձեռքբերված նյութական միջոցները: Պայմանավորված տվյալ հանգագործության լատենտային բնույթով՝ հանցավոր գույքի ու եկամուտների օրինականացումը կարող է ունենալ բազմապիսի դրսևորում: Սակայն, բոլոր դեպքերում այն պետք է սերտորեն փոխկապակցված լինի ենթադրյալ հանցանքը կատարած անձի՝ «փողերի լվացման» դիտավորության հետ՝ հիմնավորելով վերջինիս առկայությունը»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «վերոնշյալ հանգամանքների համակողմանի գնահատման արդյունքում է հնարավոր հաստատապես որոշել անձի արարքում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի հատկանիշների առկայությունը»¹³:

Վճռաբեկ դատարանի արտահայտած վերոնշյալ դիրքորոշումների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի գործնական կիրառումը պետք է կառուցվի այն եզրահանգման վրա, որ քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը պարունակում է հատուկ նպատակ՝ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների իրական աղբյուրները քողարկել, թաքցնել և այդ միջոցներն օրինական շրջանառության մեջ ներգրավել: Այդպիսի նպատակի բացակայությունը բացառում է փողերի լվացման հանցակազմի առկայությունը: Իսկ եթե անձի գործողություններն ուղղված չեն գույքի ծագումը քողարկելուն, ապա սույն հանցակազմը բացակայում է:

Ելնելով այն հանգամանքից, որ նպատակը տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ է՝ գործում պետք է լինեն բավարար ապացույցներ, որ ֆինանսական գործառնությունների արդյունքում իրավաչափություն է տրվում հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի տիրապետմանը, օգտագործմանը և տնօրինմանը, ինչի մասին կարող են վկայել գործարքների բնույթը, քանակը, քողարկման էֆեկտը և այլն¹⁴:

Իսկ եթե անձի գործողությունները ուղղված չեն գույքի ծագումը քողարկելուն, այլ ուղղակի կապված են գույքը ներդնելու հետ, ապա հանցակազմը բացա-

¹³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հովհաննես Էդիկի Գևորգյանի և Հրայրա Օնիկի Չանախյանի գործով 2019 թ. նոյեմբերի 07-ի թիվ ԵԿԴ/0161/01/15 որոշումը:

¹⁴ Տե՛ս Ляскало А., Уголовно-правовая оценка субъективных признаков легализации (отмывания) денежных средств и иного имущества, приобретенных преступным путем // Уголовное право. 2014. N 1, էջ 44

կայում է: Սակայն դա միշտ չէ, որ հաշվի է առնվում քննչական մարմինների կողմից օրինականացման նշանների հայտնաբերման և հանցավորի արարքների որակման դեպքում: Լինում են դեպքեր, երբ բավականաչափ ուշադրություն է դարձվում ֆինանսական գործառնությունների իրականացման փաստի հաստատմանը, բայց ուշադրությունից դուրս է մնում հանցագործության արդյունքում ձեռք բերված գույքին իրավական կարգավիճակ տալու մտադրության մասին վկայող հանգամանքների պարզումը:

Անհրաժեշտ է պարզել նաև այն հանգամանքը, թե անձը գիտե՞ր արդյոք, որ այն գույքը, որի հետ կապված նա իրականացրել է ֆինանսական գործառնություններ կամ այլ գործարքներ, հանդիսանում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված: Այս իմաստով հանցավորը պետք է վստահորեն իմանա գույքի հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու մասին, այլ ոչ թե կռահի կամ նախատեսի: Եթե անձը տեղյակ չէ, ապա այս դեպքում ևս հանցակազմը բացակայում է:

Ամփոփելով վերոնշյալը՝ գործնականում հնարավոր տարրնկայումներից խուսափելու նպատակով, մեր կարծիքով, անհրաժեշտ է քննարկվող հանցակազմը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը, կամ տիրապետելը, կամ պահելը, կամ օգտագործելը, կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), եթե անձը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ իր վերոնշյալ արարքներով օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից»:

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտներն օրինականացնելու **շարժառիթները** կարող են տարբեր լինել: Դրանք չեն ազդում արարքի քրեաիրավական որակման վրա, քանի որ քննարկվող հանցագործության կատարման շարժառիթները հանցակազմի դիսպոզիցիայում որպես պարտադիր հատկանիշ նախատեսված չեն:

Այնուամենայնիվ, քննարկվող հանցագործության շարժառիթների ճիշտ բացահայտումը և դրանց ճիշտ գնահատումը կարևոր նշանակություն ունեն հանցագործությունների որակման, քրեական պատասխանատվության ու պատժի անհատականացման, դատապարտյալին վերասոցիալականացնելու, նրա նկատմամբ քրեաիրավական ներգործության ճիշտ մեթոդներ ու եղանակներ ընտրելու համար:

Քրեական իրավունքի գիտության մեջ հանցագործության սուբյեկտ ասելով՝ հասկանում են քրեական օրենքով արգելված արարք (գործողություն, անգործություն) կատարած անձին, որը կարող է կրել քրեական պատասխանատվություն վերջինիս համար¹⁵:

Բազմաթիվ հեղինակների մոտ կան տարակարծություններ փողերի լվացման սուբյեկտի որոշման հետ կապված, իսկ ավելի կոնկրետ՝ տվյալ հանցագործության սուբյեկտը ընդհանուր է, թե՛ հատուկ:

Օրինակ՝ պրոֆեսոր Ն. Ա. Լոպաշենկոն կարծում է, որ օրինականացման (լվացման) սուբյեկտ է հանդիսանում 16 տարին լրացած ցանկացած անձ, բացառությամբ այն անձանց, ովքեր իրենք են ձեռք բերել դրամական միջոցներ կամ գույք հանցավոր ճանապարհով: Դա կարող է լինել հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի սեփականատիրոջ անունից կամ հանձնարարությամբ գործող ցանկացած այլ անձ, որը գիտակցում է, որ կատարում է ֆինանսական գործառնություն կամ գործարք, որն ուղղված է փողերի կամ ստացված գույքի օրինականացմանը (լվացմանը)¹⁶:

Գ. Ա. Թոսունյանն իր տեսակետը հիմնավորում է հետևյալ կերպ. եթե փողերի լվացման գործողությունները կատարվում են նրա համար, որպեսզի իրականացվի ֆինանսական գործողություն, ապա դա կարող է անել միայն այն անձը, որն ունի այդ իրավունքը: Այլ կերպ ասած՝ նման մարդը պետք է առողջ լինի և ուշիմ¹⁷:

Որոշ գիտնականներ առաջարկում են նվազեցնել փողերի լվացման համար պատասխանատվության տարիքը, սակայն այս տեսակետը բազմաթիվ թերություններ է պարունակում: Ինչպես գիտենք, հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտներն օրինականացնելուն նախորդում է մեկ այլ հանցագործություն, իսկ օրինականացման համար պատասխանատվությունը կարող է վրա հասնել այն տարիքից, որից վրա է հասնում պատասխանատվություն պրեդիկատ հանցագործության կատարման համար:

Տեսաբանների միջև այս հարցի հետ կապված առկա են որոշակի հակասություններ: Մի խումբ տեսաբաններ հանցավոր եկամուտներն օրինականացնելու սուբյեկտի որոշման հարցը կապում են գործունակության հետ: Ըստ այդ տեսաբանների՝ անձը կարող է եկամուտներն օրինականացնել ֆինանսական գործարքների միջոցով, իսկ ֆինանսական գործարքներ անձը կարող է կնքել լրիվ գործունակություն ունենալու պարագայում, ինչը անձը ձեռք է բերում 18 տարեկանում: Այդ տեսաբանները առաջարկում են այս հանցագործության սուբյեկտ համարել 18 տարին լրացած անձանց և առաջարկում են բացառություն, որով քրե-

¹⁵ Уголовное право: Общая часть / Под ред. П. И. Ветрова и Ю. И. Ляпунова. М., 2001, էջ 269:

¹⁶ Տե՛ս Լոպաշենկո, Н. А., Преступления в сфере экономической деятельности: теоретический и прикладной анализ: монография / Н. А. Лопащенко // Юрлитинформ, 2015, էջ 534

¹⁷ Տե՛ս Թոսунյան, Г. А., Противодействие легализации (отмыванию) денежных средств в финансово-кредитной системе: Опыт, проблемы, перспективы: Учеб. практ. пособие / Г.А. Тосунян, А.Ю. Викулин // М.: Дело, 2007, էջ 41

ական պատասխանատվությունը նախատեսվում է 16 տարին լրացած, էմանսիպացված անձանց համար: Տեսաբանների մյուս խումբը, ընդհակառակը, պնդում է, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձը:

Մեր կարծիքով, վերջին տեսակետը ավելի արդարացված է, քանի որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացումը կարող է իրականացվել ոչ միայն գործարքների ձևով, այլ նաև այլ եղանակներով, որոնց համար լրիվ գործունակությամբ օժտված լինելը պարտադիր նախապայման չէ: Ինչպես նաև, եթե ընդունենք, որ տվյալ հանցագործության սուբյեկտը 18 տարին լրացած անձն է, ապա անչափահասները կարող են օգտագործվել անխոչընդոտ օրինականացման և հետագա պատասխանատվությունից խուսափելու համար, ինչը չի կարող արդարացված համարել:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում 16 տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձի համար, ինչպես նաև իրավաբանական անձանց համար:

Այսպիսով, առաջին պարտադիր հատկանիշն այն է, որ քննարկվող հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկվելու համար անձը պետք է լինի առնվազն 16 տարեկան: Ա. Մ. Լազարևը նշում է, որ կյանքի տարբեր փուլերում (պայմանավորված տեղի ունեցող հոգեբանական և ֆիզիոլոգիական գործընթացներով) մարդը տարբեր կերպ է վերաբերում շրջապատող աշխարհին: Պետության կողմից անձին քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի որոշումը ինքնանպատակ չէ և պայմանավորված է անձի զարգացման օրինաչափություններով¹⁸:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկվելու համար անձը պետք է լինի նաև մեղսունակ: Մեղսունակությունն անձի՝ հանցանքը կատարելու պահին իր արարքի հակաիրավականությունը գիտակցելու և այն ղեկավարելու ունակությունն է:

Քննարկվող հանցագործության համար, ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի, քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել ոչ միայն ֆիզիկական անձը, այլ նաև իրավաբանական անձը: ՀՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվության է ենթակա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կամ օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձը: ՀՀ քրեական օրենսգրքի 126-րդ հոդվածն ամրագրում է իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները, այն է՝ տուգանքը, գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի

¹⁸ Лазарев А. М., Субъект преступления. М., 1981., էջ 14:

Ժամանակավոր դադարեցումը, հարկադիր լուծարումը և ՀՀ տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը:

Կարևոր ենք համարում նշել նաև այն, որ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը, մինչդեռ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հիմք չէ իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար: Օրինակ՝ եթե հանցանքը կատարվել է իրավաբանական անձի տնօրենի կողմից և այն իր բնույթով այնպիսին է, որ առանձին-առանձին քրեական պատասխանատվություն է սահմանում և՛ տնօրենի համար՝ որպես ֆիզիկական անձի, և՛ իրավաբանական անձի համար, ապա այդ հանցանքի համար տնօրենին քրեական պատասխանատվության ենթարկելը չի նշանակում, որ իրավաբանական անձն այլևս չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության: Այսպիսով, և՛ տնօրենը, և՛ իրավաբանական անձը կենթարկվեն քրեական պատասխանատվության: Ինչ վերաբերում է տնօրենի՝ որպես ֆիզիկական անձի հանցագործության համար քրեական պատասխանատվությունից ազատվելու դեպքին, ապա նշվածը հիմք չի կարող հանդիսանալ իրավաբանական անձին ևս քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Այսօր «կորպորատիվ հանցանքները» համարվում են «հաջող կատարված» այն պատճառով, որ դրանց համար պատասխանատվության են ենթարկվում մեկ կամ մի քանի անձինք, իսկ այդ ժամանակ իրական հանցագործները մնում են ստվերում: Իրավաբանական անձանց որպես հանցագործության սուբյեկտ նախատեսելը կարևոր է, քանի որ այն անձինք, որոնք նախկինում մնում էին ստվերում, այժմ կենթարկվեն պատասխանատվության, իսկ կազմակերպությունն իր գործադիր տնօրենների՝ պատասխանատվության ենթարկվելու հաշվին չի շարունակի իր հանցավոր գործունեությունը:

Մեր կարծիքով, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը հանցավորության դեմ պայքարի, հատկապես՝ փողերի լվացման դեմ պայքարի արդյունավետ ուղի է, արդյունավետ միջոց՝ կանխելու և հատուցելու հասարակությանը հասցրած ահռելի վնասները:

§2. Փողերի լվացման համար քրեական պատասխանատվությունը

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում է գույքի ստացման եղանակը՝ հանցավոր ճանապարհով, այսինքն՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման արդյունքում: 296-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. սույն հոդվածի իմաստով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույք է համարվում սույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված գույքը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել է կամ առաջացել սույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում:

Դժվարություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ փողերի լվացմանը նախորդող արարքը, որի արդյունքում ձևավորվում է հանցավոր գույք, որպես հանցագործություն նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

Մեր կարծիքով, այս հարցը բավականին հաջող կերպով կարգավորված է Գերմանիայի քրեական օրենսդրությամբ, որտեղ ուղիղ կերպով նշվում է, որ առարկաները, որոնք ձեռք են բերվել հակաօրինական ճանապարհով Գերմանիայի սահմաններից դուրս, Գերմանիայի տարածքում ևս համարվում են ապօրինի: Այս կարգավորումը թույլ է տալիս որպես պրեդիկատ հանցագործություն դիտարկել այն գործողությունները, որոնց համար Գերմանիայի օրենսդրությամբ բացակայում է քրեական պատասխանատվությունը:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ ձևակերպմամբ. «ինչպես նաև այն գույքը, որը ձեռք է բերվել այնպիսի գործողությունների արդյունքում, որոնք նախատեսված չեն ՀՀ քրեական օրենսդրությամբ, բայց համարվում են ապօրինի արարքի կատարման վայրում»:

Ստացվում է, որ պրեդիկատ հանցագործությունների ցանկի սահմանափակում առկա չէ, և որպես պրեդիկատ հանցագործություն կարող են հանդես գալ քրեական օրենսգրքով նախատեսված բոլոր հանցագործությունները:

Պրեդիկատ հանցագործությունը պետք է ժամանակային առումով նախորդի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը, և դրա արդյունքում ձեռք բերված գույքը պետք է հանդիսանա նշված հանցակազմի առարկա: Նախորդող հանցագործության բացակայությունը բացառում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի գոյությունը, ուստի նմանատիպ գործերով մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նախ պետք է հաստատված համարի նախորդող հանցագործության դեպքը, ինչպես նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը¹⁹ իր նախադեպային որոշումներից մեկում ընդգծել է, որ տվյալ դեպքում պարտադիր չէ նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը, ինչպես նաև պարտադիր չէ, որ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման մեջ մեղադրվող անձը որևէ առնչություն ունենա նախորդող հանցագործության հետ: Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս պետք է ապացուցվի, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով, և որ անձը գիտակցել ու նախատեսել է դրա հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը:

Եվրոպական միության կողմից 2018 թ. հոկտեմբերի 23-ին ընդունված թիվ

¹⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշումը Արսեն Սարգսյանի վերաբերյալ, ԵԿԴ/0090/01/09

2018/1673 հրահանգի 3-րդ հոդվածի 3-րդ մասն անդամ պետություններին պարտավորեցնում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ.

- ա) նախորդող կամ միաժամանակյա դատապարտումը հանցավոր գործունեության համար, որից ստացվել է գույքը, փողերի լվացման հանցակազմով դատապարտման համար նախապայման չէ,
- բ) փողերի լվացման հանցակազմով դատապարտումը հնարավոր է, եթե հաստատվի, որ գույքը բխում է հանցավոր գործունեությունից՝ առանց պահանջելու, որ հաստատվեն այդ հանցավոր գործունեությանն առնչվող բոլոր փաստական տարրերը կամ բոլոր հանգամանքները, ներառյալ հանցագործի ինքնությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Ցյուշենն ընդդեմ Բելգիայի» գործով²⁰ որոշման շրջանակներում ընդգծել է, որ.

գույքի հանցավոր ծագումը կարող է հաստատվել անուղղակի ապացույցների հիման վրա, այդ թվում՝ եզրահանգումներ անելով այն հանգամանքից, որ մեղադրյալը հրաժարվում է ներկայացնել բացատրություններ գույքի ծագման առնչությամբ²¹,

քրեական գործերով արդար դատաքննության հայեցակարգի հետ համատեղելի է դիմումատուի վրա իր գույքային իրավիճակի վերաբերյալ հավաստի բացատրություններ տալու պարտականությունը դնելը²²:

Փողերի լվացման վերաբերյալ առկա միջազգային-իրավական փաստաթղթերի, ինչպես նաև միջազգային փորձի վերլուծությունը վկայում է, որ անդրազգային կազմակերպված հանցավոր գործունեության դեմ պայքարին նվիրված միջազգային չափանիշները զարգանում են այն ուղղությամբ, ըստ որի՝ փողերի լվացումն անհրաժեշտ է դիտարկել որպես ինքնավար բնույթ ունեցող հանցավոր արարք, որի համար պատասխանատվությունը որևէ կերպ չի կարող պայմանավորված լինել նախորդող հանցագործության համար նախկին կամ միաժամանակյա դատապարտմամբ, նախորդող հանցագործությունն ապացուցված և դրա քրեաիրավական հատկանիշներն ամբողջությամբ բացահայտված լինելու հանգամանքով: Ավելին՝ փողերի լվացման հանցակազմի ինքնավար բնույթը ենթադրում է, որ նախորդող հանցագործության քննությունը, որպես այդպիսին, փողերի լվացման ինքնությունը հանցակազմ պարունակող արարքների քննության նպատակը չէ, իսկ այն մոտեցումը, ըստ որի՝ փողերի լվացումը քննվում է միայն որպես նախորդող հանցագործության գործերով իրականացվող քննության մաս,

²⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Zschüschen v. Belgium» գործով 2017 թ. մայիսի 2-ի որոշումը, զանգատ 23572/07, կետեր 27-30

²¹ Տե՛ս, mutatis mutandis, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Zschüschen v. Belgium» գործով 2017 թ. մայիսի 2-ի որոշումը

²² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Grayson and Barnham v. United Kingdom» գործով 2008 թ. սեպտեմբերի 23-ի որոշումը, զանգատներ 19955/05 և 15085/06, կետեր 49, 23: Տե՛ս նաև, mutatis mutandis, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Zschüschen v. Belgium» գործով 2017 թ. մայիսի 2-ի որոշումը, զանգատ 23572/07, կետ 30

այլևս կենսունակ չէ՝ հաշվի առնելով այս ոլորտում տեղի ունեցող զարգացումները, ինչպես նաև խնդրո առարկա հանցագործության բացահայտման գործընթացում առաջացող լուրջ խոչընդոտները:

Միևնույն ժամանակ, սույն դեպքում չի կարող վտանգվել նաև անմեղության կանխավարկածը, քանի որ անձը պատասխանատվության է ենթարկվում ոչ թե նախորդող հանցավոր գործունեության, այլ հենց փողերի լվացման հանցագործության համար: Այսպես, Եվրոպական Դատարանը վերոնշյալի կապակցությամբ ընդգծել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետը չի նախատեսում մեղադրանքում նախորդող հանցանքը հստակ նկարագրելու պարտականություն: Ի վերջո, նախորդող հանցանքը, որի միջոցով փողը ձեռք է բերվել, չի կազմում փողերի լվացման գործով մեղադրանքի հիմքը²³:

Հիմք ընդունելով վերոգրյալ վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն Աշոտ Սուքիասյանի գործով կայացրած որոշմամբ արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված՝ փողերի լվացման հանցակազմն ունի ինքնավար բնույթ, և դրա համար պատասխանատվությունը չի կարող պայմանավորված լինել նախորդող հանցագործության համար դատապարտմամբ, ինչպես նաև նախորդող հանցագործության դեպքն ապացուցված, դրա քրեաիրավական հատկանիշներն ամբողջությամբ բացահայտված լինելու հանգամանքով: Այլ կերպ՝ անհրաժեշտ է ոչ թե քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ հանցակազմի բոլոր հատկանիշների, այլ միայն նախորդող հանցագործության օբյեկտիվ կողմի դրսևորման մասին վկայող հատկանիշների առկայության հավաստում:

Բավարար է գործի փաստերից բխող որոշակի տվյալների, այդ թվում՝ անուղղակի ապացույցների համադրման արդյունքում գալու ողջամիտ եզրահանգման առ այն, որ խնդրո առարկա գույքն ունի հանցավոր ծագում: Այլ կերպ՝ պահանջվում է միայն այնպիսի փաստական տվյալների ներկայացում, որոնք ողջամտորեն կվկայեն փողերի լվացմանը նախորդող արարքի հանցավոր լինելու մասին:

Մասնավորապես, քննության օբյեկտ հանդիսացող գույքի վերաբերյալ անուղղակի, սակայն իրենց ամբողջության մեջ դրա՝ հանցավոր ճանապարհով ծագած լինելու մասին ողջամտորեն վկայող հանգամանքներ կարող են հանդիսանալ տվյալ անձի եկամուտների կամ այլ նյութական միջոցների ու ակտիվների հարաբերակցությամբ քննության առարկա հանդիսացող գույքի անհամաչափ բարձր արժեքը, տվյալ գույքը հանցավոր ճանապարհով ստացված լինելու մասին վկայող որոշակի տվյալների առկայությունը, ինչպես նաև գործի լուծման տեսանկյունից էական նշանակություն ունեցող հանգամանքներ:

Ընդ որում, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր չէ ճշգրիտ կերպով վկայակոչել և նկարագրել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այն կոնկ-

²³ Տե՛ս mutatis mutandis, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Zschüschen v.Belgium» գործով 2017 թ. մայիսի 2-ի որոշումը, զանգատ 23572/07, «Timmermans v.Belgium» գործով 2017 թ. մայիսի 2-ի որոշումը, զանգատ 12162/07

րեւտ հանցակազմը, որի արդյունքում ստացվել է ապօրինի գույքը, այլ բավարար է տալ միայն որևէ հանցավոր արարքի ընդհանրական նկարագրությունը (օրինակ՝ գույքը ստացվել է հափշտակությունների, թրաֆիքինգի, թմրամիջոցների կամ զենքի ապօրինի շրջանառության, կազմակերպված հանցավորության այս կամ այն դրսևորման կամ այլ հանցագործության արդյունքում)²⁴:

Գրականության մեջ շրջանառվում է այն տեսակետը, որ փողերի լվացմանը կարող է նախորդել ոչ միայն հանցագործությունը, այլ նաև ցանկացած անօրինական գործունեություն: Հարկեր վճարելուց խուսափելու համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում, եթե հարկը խոշոր չափերի է: ՀՀ քրեական օրենսգրքում 290-րդ հոդվածի իմաստով խոշոր չափ է համարվում 10 000 000 ՀՀ դրամը, այսինքն՝ եթե անձը խուսափում է վճարել 10 000 000 ՀՀ դրամը չգերազանցող հարկը, ապա նրա արարքը վարչական իրավախախտում է: Եթե հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը նախորդում է գողություն, և հանցանք կատարած անձը իր գողացած 250 000 ՀՀ դրամը օրինականացնում է, ապա այս անձի արարքները որակվում են համակցությամբ: Մեր կարծիքով, արդարացված չէ եկամուտների օրինականացում համարել գողության արդյունքում ձեռք բերված 250 000 ՀՀ դրամը, իսկ վարչական իրավախախտման արդյունք հանդիսացող 5 000 000 ՀՀ դրամի օրինականացումը չորակել այս հանցակազմով: Հանցագործության արդյունքում և վարչական իրավախախտման արդյունքում ձեռք բերված գույքի օրինականացումը հավասարապես կարող են խախտել պետության տնտեսական անվտանգության ապահովման հասարակական հարաբերությունները: Ուստի, անհրաժեշտ է փողերի լվացմանը նախորդող համարել ոչ միայն հանցագործությունները, այլ նաև ցանկացած անօրինական գործունեություն, որոնց արդյունքում գույք է ձեռք բերվել:

Մեր կարծիքով, ավելի արդարացված է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 5-րդ մասի ձևակերպումը փոփոխել և փողերի լվացմանը նախորդող համարել ոչ թե հանցագործությունը, այլ ցանկացած անօրինական գործունեություն, ինչը հնարավորություն կտա խուսափել անմեղության կանխավարկածի հետ կապված առաջացող տարամեկնաբանություններից և ավելի ընդգրկուն կդարձնի փողերի լվացմանը նախորդող արարքների շրջանակը:

Մեր կարծիքով, արդարացված կլինի օրենսդրի կողմից փողերի լվացման համար նվազագույն չափ սահմանելը: Օրինակ, եթե հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտներն օրինականացնելուն նախորդում է գողությունը, ապա այստեղ խնդիր է առաջանում համակցության հետ կապված, քանի որ գողությանը տրամաբանորեն հաջորդում է հանցավորի կողմից գողացված գույքը թաքցնելը: Ուստի արդարացված չէ 10 000 ՀՀ դրամ հափշտակած անձին պատասխանատվության ենթարկել հանցագործությունների համակցությամբ, քանի որ 10 000 ՀՀ դրամը փոքր գումար է, դրա օրինականացումը նվազ հանրային

²⁴ Վճարելի դատարանի 2021 թ. ապրիլի 14-ի ԵԷԴ/0054/01/15 որոշումը Ա. Սուքիասյանի գործով

վտանգավոր է և այդքան էլ չի վնասում պետության տնտեսական համակարգին: Առաջարկում ենք հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման համար նվազագույն չափ սահմանել, օրինակ, 500 000 ՀՀ դրամը գերազանցող գումարը:

Հարկավոր է անդրադառնալ նաև փողերի լվացման համար նախատեսված պատժատեսակներին: Ինչպես նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով, հանցավորը պատժվում է ազատազրկմամբ՝ 2-5 տարի ժամկետով: Եթե զուգահեռներ անցկացնենք ՌԴ քրեական օրենսգրքով նախատեսված պատժատեսակների հետ, ապա պարզ կդառնա, որ ՌԴ քրեական օրենսգրքով նույն հանցագործության կատարման համար հանցավորը պատժվում է տուգանքով 120 000 ռուբլու չափով, կամ աշխատավարձի, կամ այլ եկամուտի չափով՝ մինչև մեկ տարի ժամանակահատվածի հաշվառմամբ:

Քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում և չափերով: Տուգանքը որպես հիմնական պատիժ կարող է նշանակվել քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Տուգանքը որպես հիմնական պատիժ սահմանվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ հանցանք կատարած անձի ամսական եկամտի հնգապատիկից հիսնապատիկի չափով: Տուգանքը որպես լրացուցիչ պատիժ կարող է նշանակվել ծանր և առանձնապես ծանր՝ գույքային վնաս պատճառելու հետ կապված կամ շահադիտական դրդումներով կատարված հանցագործությունների համար՝ հանցանք կատարած անձի ամսական եկամտի կրկնապատիկից քսանապատիկի չափով:

Քանի որ փողերի լվացումը քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով միջին ծանրության հանցագործություն է, ուստի տուգանքը չի կարող կիրառվել նաև որպես լրացուցիչ պատժատեսակ:

Մեր կարծիքով, փողերի լվացման համար տուգանք նշանակելը առավել նպատակահարմար է: Ճիշտ է, հարցը բավականին վիճահարույց է, սակայն պետք է հաշվի առնել, որ իրավաբանությունը ճշգրիտ գիտություն չէ, և վերջինիս խորթ չեն նորամուծությունները: Տուգանքը դատապարտյալի գույքային իրավունքները սահմանափակող, անգոյությունամբ, ինչպես նաև շահադիտական դրդումներով կատարվող դիտավորյալ հանցանքների դեմ պայքարի գործում առավել նպատակահարմար և արդյունավետ պատժատեսակ է: Բնարկվող հանցագործության շարժառիթը, որպես կանոն, շահն է: Բացի այդ, փողերի լվացումը դասվում է տնտեսական հանցագործությունների շարքին: Այստեղ հարցը այն է, թե կարո՞ղ ենք արդյոք փողերի լվացման համար ազատազրկում նախատեսելով հասնել սոցիալական արդարության վերականգնմանը, թե՞ ոչ: Հանցավորին ազատազրկման դատապարտելով՝ չենք կարող վերականգնել նրա արարքով պատճառված նյութական վնասը: Վերոշարադրյալը ամփոփելով՝ կա-

րող ենք ասել, որ տնտեսական հանցագործությունների և կոնկրետ փողերի լվացման համար ազատագրվում նախատեսվել այդքան էլ նպատակահարմար չէ, քանի որ նման հանցագործությունների դեպքում առավել արդյունավետ կարող են լինել գույքային սանկցիաները:

Կարող են խնդիրներ առաջանալ փողերի լվացման հանցակազմը այլ հանցակազմերից տարանջատելիս: Օրինակ՝ փողերի լվացման հանցակազմին շատ նման է **հանցավոր ճանապարհով ստացված գույք ձեռք բերելը, իրացնելը կամ իրացմանն աջակցելը**, ինչը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 295-րդ հոդվածով: Մեր կարծիքով այս երկու հանցակազմերը իրարից տարբերվում են սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող նպատակի առկայությամբ: Առաջինի դեպքում հանցավորը պետք է նպատակ ունենա թաքցնել կամ խեղաթյուրել գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի պատասխանատվությունից, իսկ մյուս հանցակազմը նման նպատակ չի հետապնդում: Երկրորդ հանցակազմի դեպքում օրենսդիրը ամրագրել է, որ հանցավոր գույք ձեռք բերելը կամ իրացնելը չպետք է նախապես խոստացված լինի: Հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման դեպքում, եթե անձը նախապես խոստացել է հետագայում ձեռք բերել կամ իրացնել գույքը՝ նպատակ ունենալով թաքցնել գույքի հանցավոր ծագումը, անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության փողերի լվացման համար և նախորդող հանցագործության օժանդակության համար: Այս երկու հանցակազմերը շատ նման են իրար և պրակտիկայում կարող են հանգեցնել արարքի որակման սխալների: Սակայն օրենսդիրը որոշակի չափով կարգավորել է այս խնդիրը՝ սահմանելով, որ արարքը 295-րդ հոդվածով որակելու համար պետք է անձի արարքներում բացակայի 296-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

Քրեական օրենսգրքի 474-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հանցագործության կամ հանցանք կատարած անձի բացահայտմանը, հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկելուն, պատժի կամ դրա չկրած մասի, անվտանգության կամ դատտիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի իրականացմանը խոչընդոտելու նպատակով՝ հանցագործությունը կամ հանցանք կատարած անձին առանց նախնական խոստման պարտակելու կամ հանցանք կատարած անձին այլ կերպ աջակցելու համար: Փողերի լվացումը հարկ է սահմանազատել նաև հանցագործությունների պարտակումից: Նախ պարտակումը արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործություն է՝ ի տարբերություն փողերի լվացման: Պարտակումը կամ հանցավորին աջակցելը պետք է լինի նախապես չխոստացված: Փողերի լվացման պարտակումը կամ հանցավորին աջակցելը կարող է իրականացվել ինչպես դրանք թաքցնելով, ոչնչացնելով, արտաքին տեսքը փոխելով, այնպես էլ դրանք վաճառելով կամ այլ եղանակներով օտարելով, ինչպես նաև օգ-

տագործելով: Պարտականքը փողերի լվացումից տարբերվում է նպատակով, այն է՝ հանցագործության կամ հանցանք կատարած անձի բացահայտմանը, հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկելուն, պատժի կամ դրա չկրած մասի, անվտանգության կամ դատտիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի իրականացմանը խոչընդոտելու նպատակով, մինչդեռ փողերի լվացման դեպքում նպատակը գույքի հանցավոր ծագումը թաքցնելը կամ խեղաթյուրելն է, դրանց օրինական տեսք տալը:

Եզրակացություն

Սույն աշխատանքում ուսումնասիրելով փողերի լվացման հանցակազմը և դրա հատկանիշները՝ կարող ենք համառոտ ներկայացնել հետևյալ եզրակացություններն ու առաջարկությունները.

Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով տրված է միայն խոշոր և առանձնապես խոշոր չափերի հասկացությունը: Մեր կարծիքով, օրենսդիրը պետք է նախատեսի հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման համար նվազագույն չափ, քանի որ դժվարություններ կարող են առաջանալ արարքների համակցության դեպքում:

Փողերի լվացման համար միայն ազատագրվում նախատեսելով՝ չենք կարող հասնել սոցիալական արդարության վերականգնմանը և պատժի մյուս նպատակների կատարմանը: Ուստի առաջարկվում է փողերի լվացման համար որպես հիմնական պատիժ նախատեսել նաև տուգանքը, որը փողերի լվացման դեմ պայքարի գործում առավել նպատակահարմար և արդյունավետ պատժատեսակ է:

Փողերի լվացմանը նախորդող պետք է համարել ոչ միայն հանցագործությունները, այլև ցանկացած ապօրինի գործունեություն, որի արդյունքում գույք, եկամուտ կամ այլ տեսակի օգուտ է ձևավորվում, քանի որ պետության տնտեսական համակարգը կարող է վնասվել ոչ միայն հանցագործության արդյունքում ձեռք բերված գույքի օրինականացման արդյունքում, այլև, օրինակ, վարչական իրավախախտման արդյունքում ձեռք բերված գույքի օրինականացման արդյունքում: Առաջարկում ենք քրեական օրենսգրքի մեջ «քրեական օրենսգրքով նախատեսված ցանկացած հանցագործության արդյունքում ձեռք բերված գույք» ձևակերպումը փոխարինել «ապօրինի գործունեության արդյունքում ձեռք բերված գույք» ձևակերպմամբ:

Փողերի լվացման հանցակազմի պարտադիր հատկանիշ է նպատակը, որն հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հանցավոր ծագումը թաքցնելը կամ խեղաթյուրելն է, կամ որևէ անձի օժանդակելը, որպեսզի խուսափի իր կողմից կատարված արարքի համար քրեական պատասխանատվությունից: Գործնականում հնարավոր տարրնկալումներից խուսափելու նպատակով, մեր կարծիքով, անհրաժեշտ է քննարկվող հանցակազմը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը

(կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), եթե անձը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ իր վերոնշյալ արարքներով օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից»:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ քրեական օրենսգիրք
Criminal Code of the Republic of Armenia
2. Кузнецова Н. Ф. Преступление и преступность. М., 1969
Kuznetsova N. F. Crime and Criminality. Moscow, 1969.
3. Никифоров Б. С., Объект преступления по советскому уголовному праву. – М.: 1960
Nikiforov B. S., The Object of Crime under Soviet Criminal Law. Moscow, 1960.
4. Куринов Б. А., Научные основы квалификации преступлений. М.: 1976
Kurinov B. A., Scientific Foundations of Crime Qualification. Moscow, 1976.
5. Кудрявцев В. Н., Теоретические основы квалификации преступлений. М., 1963
Kudryavtsev V. N., Theoretical Foundations of Crime Qualification. Moscow, 1963.
6. Волженкин Б. В., Преступления в сфере экономической деятельности. СПб.: 2002
Volzhenkin B. V., Crimes in the Sphere of Economic Activity. Saint Petersburg, 2002.
7. Արակelyան Ս., Գաբուzyան Ա., Խաչիկյան Հ., Դազիհյան Գ., Մաղաքյան Ն., Մարգարյան Ա., Սիմոնյան Տ., Քոչարյան Վ., ՀՀ քրեական իրավունք (հատուկ մաս), Երևան, 2012
Arakelyan S., Gabuzyan A., Khachikyan H., Ghazinyan G., Makhakyan N., Margaryan A., Simonyan T., Kocharyan V. Criminal Law of the Republic of Armenia (Special Part). Yerevan, 2012.
8. Բառարանային աղբյուր՝ <https://dic.academic.ru/dic.nsf/ushakov/838558>
9. (Dictionary source: Ushakov Explanatory Dictionary, available at the given URL).
10. ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝
<https://www.cba.am/am/SitePages/fmctypologies.aspx>
(դիտված՝ 15.03.2021) (Official website of the Central Bank of Armenia, accessed on 15 March 2021).
11. Indirect Method of Proof: Providing Evidence in Stand-alone Money Laundering Investigations. – 15 April 2019 (same in English).
12. Վճռաբեկ դատարանի որոշում՝ Արսեն Սարգսյանի գործով, 24.02.2011, թիվ ԵԴ-ԿԴ/0090/01/09 (Decision of the Court of Cassation of RA in the case of Arsen Sargsyan, 24 Feb 2011, No. EKD/0090/01/09).
13. Վճռաբեկ դատարանի որոշում՝ Հովհաննես Էդիկի Գևորգյանի և Հրաչյա Օնիկի Չանախչյանի գործով, 07.11.2019, թիվ ԵԿԴ/0161/01/15 (Decision of the Court of Cassation of RA in the case of Hovhannes Edik Gevorgyan and Hrachya Onik Chanakhchyan, 7 Nov 2019, No. EKD/0161/01/15).
14. Վճռաբեկ դատարանի որոշում՝ Ա. Սուրիաայանի գործով, 14.04.2021, թիվ ԵԿԴ/0054/01/15 (Decision of the Court of Cassation of RA in the case of A. Sukiasyan, 14 Apr 2021, No. EED/0054/01/15).
15. Лясколо А., Уголовно-правовая оценка субъективных признаков легализации (отмывания) денежных средств и иного имущества, приобретенных преступным путем // Уголовное право. – 2014 (Lyaskalo A. Criminal Law Assessment of Subjective Elements of Legalization (Money Laundering) of Illegally Obtained Funds and Other Property. Criminal Law Journal, 2014).
16. Уголовное право: Общая часть / Под ред. П.И. Ветрова, Ю.И. Ляпунова. – М.: 2001 (Criminal Law: General Part / Edited by P.I. Vetrov, Yu.I. Lyapunov. Moscow, 2001).
17. Лопашенко Н. А., Преступления в сфере экономической деятельности: теоретический и прикладной анализ. – М.: Юрлитинформ, 2015 (Lopashenko N.A.

Crimes in the Sphere of Economic Activity: Theoretical and Applied Analysis. Moscow: Yurlitinform, 2015).

18. Тосунян Г. А., Викулин А. Ю., Противодействие легализации (отмыванию) денежных средств в финансово-кредитной системе: опыт, проблемы, перспективы. – М.: Дело, 2007 (Tosunyan G. A., Vikulin A. Yu. Counteraction to Legalization (Money Laundering) of Funds in the Financial-Credit System: Experience, Problems, Prospects. Moscow: Delo, 2007).
19. Лазарев А. М. Субъект преступления. – М.: 1981 (Lazarev A.M. Subject of Crime. Moscow, 1981).
20. ՄԻԵԴ-ի որոշում, Zschüschen v. Belgium, 02.05.2017, գաղափար № 23572/07 (ECtHR Judgment in the case of Zschüschen v. Belgium, 2 May 2017, Application No. 23572/07).
21. ՄԻԵԴ-ի որոշում, Grayson and Barnham v. United Kingdom, 23.09.2008, գաղափարներ № 19955/05 և 15085/06 (ECtHR Judgment in the case of Grayson and Barnham v. United Kingdom, 23 September 2008, Applications Nos. 19955/05 and 15085/06).

Gurgen Gurgyan

*Deputy Prosecutor of the Kentron and Nork-Marash administrative districts
of Yerevan City*

THE MAIN ISSUES OF CRIMINAL LIABILITY FOR MONEY LAUNDERING¹

Abstract

This scientific article is devoted to the theoretical and practical analysis of the issues of criminal liability for money laundering. The purpose of the research is to identify the key issues of the criminal-legal characterization of this crime and to highlight the difficulties arising in law enforcement practice.

The work examines in detail the structural elements of the crime of money laundering, paying special attention to the interpretation of the objective and subjective sides. The legal significance of the predicate crime and the issue of the need to prove it become the subject of discussion, considering both theoretical approaches and the peculiarities of practical application.

Special attention is paid to the substantiation of the subjective side, in particular, the issue of proving the person's awareness of the illegal origin, which is one of the most complex and controversial elements of the qualification of this crime. The difficulties that arise during the separation of money laundering from related crimes, as well as the inconsistencies arising from different interpretations of legal norms, are also analyzed.

In summary, the conclusions are drawn that the effective application of criminal liability for money laundering is conditioned by a clear and unified interpretation of the elements of the crime, as well as the consistency of law enforcement practice. The resolution of existing problems is of great importance in terms of the correct qualification and legal assessment of this crime.

Keywords: money laundering; predicate crime; property; income; other benefit; purpose.

¹ The article was presented on 20.04.2026 and was reviewed on 20.05.2026.

Гурген Гургенян

*Заместитель прокурора административных районов Кентрон и
Норк-Мараш города Ереван*

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ОТМЫВАНИЕ ДЕНЕГ¹

Абстракт

Данная научная статья посвящена теоретико-практическому анализу вопросов уголовной ответственности за отмывание денег. Цель исследования – выявление ключевых аспектов уголовно-правовой характеристики данного преступления и освещение трудностей, возникающих в правоохранительной практике.

В работе подробно рассматриваются структурные элементы состава преступления, связанного с отмыванием денег; особое внимание уделяется интерпретации объективной и субъективной сторон. Предметом обсуждения является правовое значение предикатного преступления и вопрос о необходимости его доказывания с учетом как теоретических подходов, так и особенностей практического применения.

Особое внимание уделяется обоснованию субъективной стороны, в частности вопросу доказывания осведомленности лица о незаконном происхождении имущества, что является одним из наиболее сложных и спорных элементов квалификации данного преступления. Также анализируются трудности, возникающие при разграничении отмывания денег и смежных составов преступлений, а также противоречия, вызванные различными интерпретациями правовых норм.

В заключение следует отметить, что эффективное применение норм об уголовной ответственности за отмывание денег обусловлено четким и единообразным толкованием элементов состава преступления, а также последовательностью правоприменительной практики. Решение существующих проблем имеет большое значение для правильной квалификации и правовой оценки данного деяния.

Ключевые слова: отмывание денег; преступление; предикатное преступление; имущество; доход; иная выгода; цель.

¹ Статья была представлена 20.04.2026 и прошла рецензирование 20.05.2026.

Քրիստինե Գրիգորյան

ՀՀ գլխավոր դատախազի օգնական

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ¹

Համառոտագիր

Սույն հոդվածը ահաբեկչության համար քրեական պատասխանատվության ինստիտուտի ուսումնասիրությունն է: Ահաբեկչությունը հասարակական անվտանգության դեմ ուղղված ամենավտանգավոր հանցագործություններից մեկն է, որի համար քրեական պատասխանատվություն է նախատեսված 2021 թվականի մայիսի 05-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (*այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք*²) 308-րդ հոդվածով: Այն համայն մարդկության համար լուրջ սպառնալիք է հանդիսանում՝ ոտնձգելով հասարակական անվտանգությանը, մարդու կյանքին ու առողջությանը, սեփականությանը և օրենքով պաշտպանվող այլ շահերին: Ուստի, սույն հոդվածում հարկ ենք համարել ուսումնասիրել և վերլուծության ենթարկել ահաբեկչության հանցակազմի առանձնահատկությունները:

Սույն հոդվածի տեսական նշանակությունն այն է, որ ահաբեկչության հանցակազմի համալիր հետազոտություն է, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ այլ հետազոտությունների համար, իսկ կիրառական նշանակությունն այն է, որ աշխատությունում ներկայացված առաջարկները, մոտեցումները և եզրահանգումները կարող են օգտագործվել օրենսդրության զարգացման, գրականության նախապատրաստման, ինչպես նաև ուսուցման նպատակներով:

Հոդվածում վերլուծվել է «ահաբեկչություն» հասկացությունը՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը: Մանրամասն վերլուծության են ենթարկվել ահաբեկչության հանցակազմի տարրերը, վերաբերելի իրավական ակտերը, ինչպես նաև համեմատական հետազոտություն է անցկացվել ահաբեկչության և այլ հարակից հանցագործությունների միջև:

Հետազոտության արդյունքում արվել են մի շարք առաջարկներ՝ կապված ահաբեկչության համար քրեական պատասխանատվության կիրառման արդյունավետության, օրենսդրության բարելավման և կատարելագործման հետ:

¹ Հոդվածը ներկայացվել է 16.12.2025 թ., գրախոսվել է 01.06.2026 թ.:

² Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թ. մայիսի 05-ին, ուժի մեջ մտել՝ 2022 թ. հուլիսի 01-ին. <https://www.arlis.am/hy/acts/210019> (մուտք 16.12.2025)
Criminal Code of the Republic of Armenia, HO-199-N, adopted on May 5, 2021, entered into force on July 1, 2022. <https://www.arlis.am/hy/acts/210019> (access 16.12.2025)

Հիմնաբառեր – ահաբեկչություն, քրեական պատասխանատվություն, հանցակազմի տարրեր, հասարակական անվտանգություն, սպառնալիք, ահաբեկչական բնույթի հանցագործություններ, սահմանազատում:

Ներածություն

Սույն հոդվածի թեման ահաբեկչության համար քրեական պատասխանատվությունն է: Ահաբեկչությունը մեր ժամանակների ամենաարդիական և գլոբալ մարտահրավերներից մեկն է, որը ոչ միայն վտանգում է առանձին պետությունների ազգային անվտանգությունը, այլև հանդիսանում է համայն մարդկության գոյության և կայուն զարգացման դեմ ուղղված լուրջ սպառնալիք: Ժամանակակից աշխարհում ահաբեկչական գործունեության դրսևորումները բազմազան են և շարունակաբար վերափոխվում են՝ ներառելով քաղաքական, տնտեսական, կրոնական, սոցիալական և այլ շարժառիթներ: Արդյունքում՝ ահաբեկչությունը ձեռք է բերել համընդհանուր բնույթ և դարձել միջազգային հարաբերությունների, ներքին կայունության և իրավակարգի խախտման ամենավտանգավոր գործոններից մեկը:

Ահաբեկչությունը հակաիրավական, քրեորեն պատժելի արարք է, որի անվերահսկելիությունն ու անկանխատեսելիությունը մեծացնում են դրա համամարդկային վտանգավորությունը: Այդ իսկ պատճառով հույժ կարևոր է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հանցակազմի առանձնահատկությունների հետազոտությունը: Միաժամանակ, հաշվի առնելով ահաբեկչության անընդհատ զարգացող ու վերափոխվող բնույթը, ահաբեկչական գործունեության դրսևորման նոր մեթոդներն ու ձևերը, նոր գիտական հետազոտությունների անհրաժեշտություն է առաջանում:

Այսօր շատ հետազոտողներ կարծում են, թե աշխարհը սառը պատերազմից հետո թևակոխել է «հակաահաբեկչական պատերազմի» փուլ: Ահաբեկչության դեմ պայքարը գերակշռող աշխարհաքաղաքական նշանակություն է ձեռք բերել, ուստի ուսումնասիրություններն այս ոլորտում առավել քան արդիական են:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել և համակարգային վերլուծության ենթարկել ահաբեկչության համար քրեական պատասխանատվության ինստիտուտը ՀՀ օրենսդրության շրջանակներում և մշակել օրենսդրական կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Նշված նպատակին հասնելու համար սույն հոդվածի շրջանակներում առաջադրվել և հետևողականորեն իրենց լուծումն են գտել հետևյալ խնդիրները՝

- ա) ուսումնասիրել ահաբեկչության հայեցակարգը՝ պարզաբանելով առկա մոտեցումները և վեր հանելով առանձնահատկությունները,
- բ) վերլուծության ենթարկել ահաբեկչության հանցակազմի տարրերը՝ օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը, սուբյեկտիվ կողմը,
- գ) առանձնացնել ահաբեկչական բնույթի հանցագործությունները,

դ) իրականացնել սահմանազատում ահաբեկչության և հարակից այլ հանցակազմերի միջև:

1. Ահաբեկչության հայեցակարգը

Ահաբեկչությունը հասարակական անվտանգության դեմ ուղղված համընդհանուր սպառնալիք է: Այն բարդ և բազմաբնույթ երևույթ է, որը ոսնձգում է մարդկանց կենսագործունեության՝ օրենքով պաշտպանվող տարբեր ոլորտների դեմ: Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը 2018 թ. իր զեկույցում նշել է, որ «*վերջին երեք տասնամյակների ընթացքում ահաբեկչական գործողությունների թիվը, դրանց զոհերի թիվը և աշխարհագրական մասշտաբները արագորեն աճել են, և ահաբեկչությունը վերածվել է միջազգային խաղաղության, անվտանգության և զարգացման համար ամենախաղաղ սպառնալիքի: Բացի այդ, ավելացել են միջազգային և ներքին հսկամարտությունները, որոնք ոչնչացնում են հասարակությունը և սպակայունացնում տարածաշրջաններ: Այսօր ահաբեկչությունը մեր ժամանակի ամենաուրջ խնդիրներից մեկն է*»³:

Տնտեսագիտության և խաղաղության ինստիտուտը վիճակագրական տվյալներ է հրապարակել ահաբեկչության վերաբերյալ, ըստ որի՝ 2025 թվականին ահաբեկչության զոհ պետությունների թիվը 2024 թվականի համեմատ աճել է. 2024 թվականին դրանց թիվը եղել է 58, իսկ 2025 թվականին՝ 66: 2024 թվականին ահաբեկչության արդյունքում զոհերի թիվը հասել է 8352-ի, այսինքն՝ նախորդ տարվա համեմատ աճել է 22 տոկոսով⁴, ինչը լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Տնտեսագիտության և խաղաղության ինստիտուտի կողմից 2020 թ. հրապարակված ահաբեկչության գլոբալ ինդեքսով 135 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում էր 91-րդ հորիզոնականը⁵, իսկ 2024-2025 թվականներին՝ 79-րդ⁶:

Ահաբեկչություն հասկացության ճիշտ սահմանման մշակումն առանցքային նշանակություն ունի ահաբեկչության դեմ արդյունավետ պայքարի համար: «Ահաբեկչություն» հասկացությունը լատիներեն *terrorism* բառի հայերեն թարգմանությունն է: Լատիներեն *Terrere* նշանակում է սարսափ, վախ:

Ահաբեկչությունը՝ որպես երևույթ, մարդկությանը հայտնի է վաղ ժամանակներից, մարդկության քաղաքակրթության ձևավորումից սկսած, և այդ մասին

³ Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության Գլոբալ հակաահաբեկչական ռազմավարության իրականացման համակարգի գործունեության վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի զեկույց, 2018 թ. Report of the Secretary-General of the United Nations on the Activities of the United Nations System in the Implementation of the Global Counter-Terrorism Strategy, 2018

⁴ Տե՛ս Institute for Economics & Peace, Global Peace Index 2025: Identifying and Measuring the Factors that Drive Peace, Sydney, June 2025, p. 11.

⁵ Տե՛ս Կ. Խոջոյան, «Ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից ձևերը» ուսումնամեթոդական ձեռնարկ, ISBN 978-5-8084-2512-5, ԵՊՀ հրատ., Երևան, 2021 թ., էջ 85

K. Khojoyan, Modern Forms of Combating Terrorism, Educational and Methodological Manual, ISBN 978-5-8084-2512-5, YSU Publishing House, Yerevan, 2021, p. 85.

⁶ Տե՛ս Institute for Economics & Peace, Global Peace Index 2025: Identifying and Measuring the Factors that Drive Peace, Sydney, June 2025, p. 6.

խոսում էր դեռևս Արիստոտելը: Առաջին ահաբեկչական գործողությունները վերագրվում են I դարին, երբ առաջին հրեա-հռոմեական պատերազմի ժամանակ հրեա նախանձախնդիրները (զելոցացիներ) Երուսաղեմում սպանում էին հռոմեացիներին⁷:

Օքսֆորդի անգլերեն բառարանում նշված է, որ «*ահաբեկիչ*» բառն առաջին անգամ հայտնվել է 1794 թ. Ֆրանսիական հեղափոխության ժամանակ: Յակոբինների առաջնորդ Մաքսիմիլիեն Ռոբեսպիերը ասել է. «*Ահաբեկչությունը ոչ այլ ինչ է, քան արդարություն, դրդում, դաժանություն, անգիշտություն*»: Հայտնի է, որ բառը ժամանակին վիրավորական բնույթ էր կրում և իր մեջ չէր ամփոփում հստակ գործողություններ⁸:

Ահաբեկչության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների շրջանում միասնական մոտեցում գոյություն չունի՝ կապված ահաբեկչության հասկացության հետ: Հարյուրավոր սահմանումներ են տրվել գիտական գրականության մեջ, ինչպես նաև ներպետական և միջազգային իրավական ակտերում: Հասկացությունը խիստ ճկուն է և, հետևաբար, բաց է տարբեր սահմանումների և մեկնաբանությունների համար:

Գիտական գրականության մեջ առանձնացվում են ահաբեկչության ավելի քան 400 սահմանումներ: Օրինակ՝ Վ. Պ. Էմելյանովն առաջարկում է ահաբեկչության հետևյալ սահմանումը. «*Ահաբեկչությունը հրապարակային կատարված հանրախոսնազ գործողությունները կամ դրանց սպառնալիքն է, որոնք ուղղված են բնակչության կամ սոցիալական խմբերի ահաբեկմանը՝ ի շահ ահաբեկիչների որոշում կայացնելու կամ դրանից հրաժարվելու վրա ուղղակի կամ անուղղակի ազդելու նպատակով*»:

Ահաբեկչություն հասկացության սահմանումը տալու դժվարությունը պայմանավորված է նաև այն գաղափարով, որ որոշակի հանգամանքներում ուժի, բռնության կիրառումը կարող է արդարացված լինել, օրինակ, գաղութատիրական ճնշումից ազատվելու և ինքնորոշման իրավունք ձեռք բերելու համար: Մի շարք պետություններ նպատակահարմար չեն համարում նման գործալ երևույթի սահմանափակումը մեկ ընդհանուր սահմանման շրջանակներում, քանի որ այն կոնկրետ իրավիճակներում կարող է խոչընդոտել վերջիններիս կողմից համապատասխան գործողությունների իրականացումը:

Միջազգային փաստաթղթերում ահաբեկչության սահմանումը ամրագրելու առաջին փորձը կատարվել է Քրեական օրենսդրության ունիֆիկացման միջազգային երրորդ կոնֆերանսի ժամանակ 1930 թ. Բրյուսելում: Կոնֆերանսի

⁷ Տե՛ս Կ. Խոջոյան, «Ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից ձևերը» ուսումնամեթոդական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Երևան, 2021 թ., էջ 23

K. Khojoyan, Modern Forms of Combating Terrorism, Educational and Methodological Manual, ISBN 978-5-8084-2512-5, YSU Publishing House, Yerevan, 2021, p. 23.

⁸ Տե՛ս <https://lucygharibian.wordpress.com/2020/10/28/%D5%A1%D5%B0%D5%A1%D5%A2%D5%A5%D5%AF%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/> (access 16.12.2025)

արդյունքում ահաբեկչության վերաբերյալ ներկայացված արձանագրության նախագիծը չընդունվեց: 1931 թ. Փարիզում տեղի ունեցած IV կոնֆերանսում ահաբեկչության վերաբերյալ ընդունված արձանագրության մեջ տրվեց ահաբեկչության հետևյալ բնորոշումը. «...Ով բնակչությանն ահաբեկելու նպատակով մարդկանց կամ գույքի նկատմամբ կոգտագործի ռուսը, նոնականեր, պայթուցիկ, այրիչ նյութեր կամ սպիտիկ առարկաներ, կամ նա, ով կառաջացնի կամ կփորձի առաջացնել, տարածել համանախակ, էպիդեմիա կամ այլ աղետներ, ով կրնոհատի կամ կփորձի ընդհատել հասարակական սպասարկման հիմնարկների աշխատանքները, պատժվում է...»: Իսկ V կոնֆերանսի (Մադրիդ, 1933 թ.) արդյունքում ընդունված արձանագրությունում նշվում է. «Ով որևիցե սոցիալական կարգը կործանելու նպատակով որևէ ձևով ահաբեկում է բնակչությանը, պատժվում է...»: Փաստորեն, այս արձանագրությամբ ահաբեկչություն համարվեց ցանկացած գործողություն, որը նպատակ ունի կործանելու սոցիալական կարգը⁹:

«Ահաբեկչություն» հասկացության իրավաբանական սահմանումը Հայաստանի Հանրապետությունում ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքում: Գործող՝ 2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով ահաբեկչության հասկացությունը տրված է 308-րդ հոդվածի առաջին մասում, ըստ որի՝ **ահաբեկչությունը պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելը կամ դրա իրական սպառնալիքն է կամ շինություն կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելը կամ պահելը՝ գույքորդված քաղաքացիական անձին կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ ծանր հետևանք առաջացնելու վտանգով, որի նպատակն է բնակչությանը կամ դրա առանձին խմբին ահաբեկելը, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելը, հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում ծառայող անձին որևէ արարք կատարելուն կամ հանցավորի այլ պահանջը կատարելուն հարկադրելը, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ահաբեկչություն համարվող ցանկացած այլ արարք:**

Գործող ՀՀ քրեական օրենսգիրքը, ի համեմատություն 2003 թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (*այսուհետ՝ Նախկին քրեական օրենսգիրք*), ավելի համապարփակ կերպով է արտացոլում ահաբեկչության հանցակազմի էությունը: Ընդհանրությունների հետ միաժամանակ, նոր ձևակերպումը նաև արմատապես տարբերվում

⁹ Տե՛ս Ա. Հարությունյան, «Ահաբեկչության դեմ պայքարի քրեաիրավական և կրիմինոլոգիական հիմնախնդիրները» ատենախոսություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2006 թ.

A. Harutyunyan, Criminal-Legal and Criminological Issues of Combating Terrorism, Dissertation, YSU Publishing House, Yerevan, 2006.

է նախկին քրեական օրենսգրքում ամրագրված ձևակերպումից: Մասնավորաբար, եթե նախկին ձևակերպման դեպքում խոսքը գնում էր քաղաքացիական անձի կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձի բացառապես մահվան կամ առողջությանը ծանր մարմնական վնաս պատճառելու կամ դրա սպառնալիքի մասին, ապա գործող իրավակարգավորմամբ նախատեսվել է «քաղաքացիական անձին կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ ծանր հետևանք առաջացնելու վտանգով» ձևակերպումը, որը, փաստորեն, նախատեսում է հնարավոր հետևանքների ավելի մեծ շրջանակ, և որը, կարծում ենք, ավելի ընդունելի է, քանի որ արտացոլում է ահաբեկչության բազմաչափ բնույթը, ապահովում է վաղ փուլում կանխարգելում, բխում է միջազգային պարտավորություններից և բարձրացնում է հասարակական անվտանգության պաշտպանվածության մակարդակը: Ընդ որում, բավական է, որ արարքը զուգորդվի նման վնաս պատճառելու վտանգով, իսկ իրական վնաս պատճառելու դեպքում արարքը կորակվի հանցագործությունների համակցությամբ: Նոր ձևակերպմամբ նշված չէ նաև, որ պետք է բացակայեն պատանդ վերցնելու կամ պահելու հանցակազմի հատկանիշները, ինչը նշված էր նախկին օրենսգրքում: Նշված հանցակազմի առկայության դեպքում արարքը կորակվի հանցագործությունների համակցությամբ¹⁰:

Ներկայումս ՀՀ-ում ահաբեկչության համար նախատեսվում է քրեական պատասխանատվությունը *ազատագրվում 8-12 տարի ժամկետով*, իսկ ահաբեկչության որակյալ հանցակազմերի դեպքում՝ *ազատագրվում 10-15 տարի ժամկետով*, ինչն արդարացված է՝ պայմանավորված ներկայացրած վտանգով: Փաստորեն, այն առանձնապես ծանր հանցագործություն է:

Նոր իրավակարգավորմամբ ահաբեկչության հանցակազմի պարագայում վաղեմության ժամկետներ չեն կիրառվում, ինչը ևս արդարացված է: Բացի այդ, արգելվում է համաներում և ներում կիրառել ահաբեկչություն կատարած անձանց նկատմամբ, քանի որ դա «անհամատեղելի» է այդ հանցագործության դեմ պայքարի խնդիրների և նպատակների հետ¹¹:

Հավելենք նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսված միջազգային ահաբեկչության համար: Մասնավորա-

¹⁰ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս 2022 թ., էջ 375-376.

https://advocates.am/images/gradaran/2022/Qreakan_uxecuyc_2022.pdf (մուտք 16.12.2025)

Guidelines for the Interpretation of Conceptual Approaches and new institutions contained in the New Criminal Code of the Republic of Armenia, Council of Europe, July 2022, pp. 375-376.

https://advocates.am/images/gradaran/2022/Qreakan_uxecuyc_2022.pdf (access 16.12.2025)

¹¹ Տե՛ս Լ. Հակոբյան, «Ահաբեկչության դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորումը» ատենախոսություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2007 թ., էջ 7. Լ. Hakobyan, International legal regulation of the fight against terrorism, Dissertation, YSU Publishing House, Yerevan, 2007, p. 7.

պես, այդ օրենսգրքի 152-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային ահաբեկչությունը՝ միջազգային լարվածություն կամ պատերազմ հրահրելու կամ այլ պետության ներքին վիճակն ապակայունացնելու նպատակով այդ պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ դրա անունից հանդես եկող անձին առևանգելը, ազատությունից ապօրինի գրկելը, պատանդ վերցնելը կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելը կամ այդ պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչության տարածքում պայթյուն, հրկիզում կամ այլ հանրափառ աղբյուր կատարելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով: Նույն հոդվածի երկրորդ կետով նախատեսված է ծանրացնող հանգամանք. սույն հոդվածի առաջին մասով նախատեսված անձի սպանությունը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

Միջազգային ահաբեկչության առանձնահատկությունն այն է, որ այն առնչվում է մեկից ավելի պետությունների կամ միջազգային կազմակերպությունների շահերի¹²: Միջազգային ահաբեկչությունն ուղղված է խաղաղության ու անվտանգության դեմ, իսկ ահաբեկչությունը՝ հասարակական անվտանգության դեմ: Միջազգային ահաբեկչության դեպքում դրա ծավալները չեն սահմանափակվում միայն մեկ առանձին երկրի սահմաններով, այլ դուրս գալով մեկ երկրի սահմաններից՝ ի վիճակի են դառնում առաջ բերել միջազգային քաղաքական իրադրության լուրջ լարվածություն, առանձին պետությունների միջև հարաբերությունների վատթարացում:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում որոշակի տարածում են փորձում ստանալ ֆաշիստական, ազգայնամոլական, ծայրահեղական գաղափարախոսությունները, որոնք հիմնականում արմատավորվում են երիտասարդության շրջանում: Ահաբեկչության տարատեսակ հանդիսացող կիրեռահաբեկչության ոլորտում ՀՀ-ում առկա են սպառնալիքներ՝ ուղղված ՀՀ պետական քաղաքականության տեղեկատվական ապահովմանը, հայրենական տեղեկատվական միջոցների զարգացմանը, տեղեկատվական և հեռահաղորդակցական միջոցների և համակարգերի անվտանգությանը: Փաստվում է, որ վերջին շրջանում հայկական տեղեկատվական համակարգեր ներխուժելու և կայքերի աշխատանքները խափանելու փորձերը ցանցահեռների կողմից կրում են պարբերական բնույթ: Անօրինական մուտքերի ընթացքում ժամանակավորապես խափանվում են որոշ կայքերի բնականոն աշխատանքները¹³: Այս ամենը պահանջում է իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմների շարունակական կատարելագործում:

¹² Տե՛ս Ա. Հարությունյան, «Ահաբեկչության դեմ պայքարի քրեաիրավական և կրիմինոլոգիական հիմնախնդիրները» ատենախոսություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2006 թ. A. Harutyunyan, Criminal-Legal and Criminological Issues of Combating Terrorism, Dissertation, YSU Publishing House, Yerevan, 2006.

¹³ Տե՛ս ՀՀ Նախագահի կարգադրությունը «ՀՀ-ում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը հաստատելու մասին», ՆԿ-51-Ն, Երևան, 2012թ.

Decree of the President of the Republic of Armenia “On Approving the National Strategy for Combating Terrorism in the Republic of Armenia,” NK-51-N, Yerevan, 2012.

Հայաստանի Հանրապետության համար տեղեկատվական միջավայրի պաշտպանությունը և կիրեռանվտանգության ապահովումը ազգային անվտանգության համակարգի առաջնահերթ ուղղություններից են: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը, պետական կառավարման թվայնացումը և հանրային ծառայությունների առցանց մատչելիությունը միաժամանակ առաջ են բերում նոր ռիսկեր, որոնք կարող են օգտագործվել ոչ միայն կիրեռահանցագործների, այլև քաղաքական կամ ռազմական նպատակներով գործող խմբերի կողմից:

Կիրեռահաբեկչությունը՝ որպես ահաբեկչության ժամանակակից ձև, նպատակ ունի խափանել պետական կառավարման, տնտեսական, ֆինանսական և հասարակական ենթակառուցվածքների գործունեությունը: Այդպիսի գործողությունները կարող են ներառել տվյալների ապօրինի յուրացում կամ փոփոխություն, ռազմավարական նշանակություն ունեցող տեղեկատվության ոչնչացում կամ հրապարակում, ինչպես նաև ապատեղեկատվական քարոզչություն:

ՀՀ իրավական համակարգում առկա կարգավորումները դեռևս պահանջում են հատկացում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին: Հատուկ ուշադրություն է անհրաժեշտ դարձնել պետական և ռազմավարական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների պաշտպանությանը՝ ներառյալ էներգետիկ, տրանսպորտային, ֆինանսական և կապի համակարգերը:

Կիրեռահաբեկչության դեմ արդյունավետ պայքարը հնարավոր է միայն այն դեպքում, երբ ապահովվում է համակարգային մոտեցում, որը ներառում է օրենսդրական, տեխնոլոգիական, կազմակերպական և կրթական միջոցառումների համադրություն: Այս առումով առաջնային նշանակություն ունի հանրային իրազեկման բարձրացումը, մասնագիտացված կադրերի պատրաստումը և միջազգային համագործակցության ամրապնդումը:

2. Ահաբեկչություն հանցակազմի իրավական վերլուծությունը

2.1. Ահաբեկչություն հանցակազմի տարրերը. օբյեկտ, օբյեկտիվ կողմ

ՀՀ քրեական օրենսգրքով որպես հանցագործություն նախատեսված յուրաքանչյուր արարք ոտնձգում է որոշակի օբյեկտի դեմ, նրան էական վնաս է պատճառում կամ այդպիսի վնաս հասցնելու սպառնալիք է բովանդակում: Թեև ՀՀ քրեական օրենսգրքը հանցագործության օբյեկտի հասկացության բնորոշում չի պարունակում, սակայն առանձին հոդվածների բովանդակությունից, ինչպես նաև առկա տեսական գրականությունից և դոկտրինից կարելի է եզրակացություն անել դրա մասին: Հանցագործության օբյեկտը հանդես է գալիս որպես հիմնական հասարակական հարաբերությունների՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, իրավաբանական անձանց իրավունքների, սեփականության, շրջակա միջավայրի, հասարակական կարգի ու անվտանգության, սահմանադրական կարգի, խաղաղության և մարդկության անվտանգության հարաբերակցություն:

Ահաբեկչության հանցակազմի տարրերի ուսումնասիրությունը կատարենք ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի հիման վրա:

Նախ նշենք, որ այդ հոդվածի երկրորդ մասով սահմանված են ահաբեկչության հանցակազմի ծանրացնող հանգամանքները: Դրանց շրջանակը նախկինում գործող իրավակարգավորման համեմատ բավականին նեղացել է: Ներկայումս նախատեսված է երկու ծանրացնող հանգամանք. (1) *նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ* (2) *ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի վրա հարձակմամբ կամ միջուկային կամ ռադիոակտիվ նյութի կամ իոնացնող ճառագայթման այլ աղբյուրի կամ զանգվածային ոչնչացման զենքի, թունավոր, քիմիական կամ կենսաբանական նյութի օգտագործմամբ*:

Համեմատական իրավական վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք պետություններում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է նաև **մարդու մահ առաջացնելը**: Նման մոտեցումն արդարացված է, քանի որ այն ապահովում է հանցանքի վտանգավորության և պատժի խստության համաչափությունը: Կարծում ենք՝ Լեհաստանի, Ֆինլանդիայի, Ուկրաինայի և այլ երկրների օրինակով կարող ենք ծանրացնող հանգամանքները համարել՝ ավելացնելով «եթե առաջացրել է մարդու մահ»:

Բացի այդ, հիմնական հանցակազմում խոսվում է խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու վտանգի մասին, ուստի, որպես ծանրացնող հանգամանք, կարելի է սահմանել նաև «գուգորդվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու վտանգով»:

Անդրադառնալով հանցակազմի որակյալ տեսակներից հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «*ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի վրա հարձակմամբ կամ միջուկային կամ ռադիոակտիվ նյութի կամ իոնացնող ճառագայթման այլ աղբյուրի կամ զանգվածային ոչնչացման զենքի, թունավոր, քիմիական կամ կենսաբանական նյութի օգտագործմամբ*» ծանրացնող հանգամանքին՝ նշենք, որ ՀՀ-ում առկա է գործող ատոմային էլեկտրակայան, և միջուկային ահաբեկչության վտանգն առավել քան բարձր է: Իհարկե, սույն ծանրացնող հանգամանքի պարագայում խոսքը միայն միջուկային կամ ռադիոակտիվ ահաբեկչության մասին չէ, այլ դրա մի շարք վտանգավոր դրսևորումների, և այս համատեքստում քննարկվող ծանրացնող հանգամանքի նախատեսումն արդարացված է¹⁴:

Ինչպես տեսնում ենք, ահաբեկչությունը բազմաբնույթ և բազմօբյեկտ հանցագործություն է: Ահաբեկչության ընդհանուր, սեռային և տեսակային օբյեկտ-

¹⁴ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս 2022 թ., էջ 376 https://advocates.am/images/gradaran/2022/Qreakan_uxecuyc_2022.pdf (մուտք 16.12.2025)
Guidelines for the Interpretation of Conceptual Approaches and new institutions contained in the New Criminal Code of the Republic of Armenia, Council of Europe, July 2022, p. 376.
https://advocates.am/images/gradaran/2022/Qreakan_uxecuyc_2022.pdf (access 16.12.2025)

ները **հասարակական կարգն ու անվտանգությունն են**, իսկ անմիջական օբյեկտը **անձանց անորոշ շրջանակի, կազմակերպությունների և օբյեկտների կենսական շահերի պաշտպանվածությանն ուղղված հասարակական հարաբերություններն է, շինությունների, տրանսպորտի, կապի և հաղորդակցության միջոցների անվտանգությունն ու ամբողջականությունը**: Միևնույն ժամանակ, այն ունեցում է նաև **հանրային իշխանության մարմինների, հասարակական հաստատությունների և այլ սոցիալական ինստիտուտների բնականոն գործունեության, քաղաքացիների կյանքի և առողջության, նրանց գույքի** դեմ: Վերջիններս էլ հենց կազմում են ահաբեկչության լրացուցիչ օբյեկտը:

Ի տարբերություն օբյեկտի՝ որպես հանցակազմի պարտադիր հատկանիշի, հանցանքի առարկան ընտրովի հատկանիշ է, որը որոշ հանցագործություններում կարող է բացակայել: Սույն հոդվածում ահաբեկչության առարկան վերլուծության չենք ենթարկի, քանի որ այն խնդրահարույց է քննարկվող հանցակազմի պարագայում, և սրա վերաբերյալ առկա են տարաբնույթ մեկնաբանություններ:

Հանցակազմի հաջորդ պարտադիր և էական տարրը օբյեկտիվ կողմն է: Ահաբեկչության օբյեկտիվ կողմը դրսևորվում է պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելով կամ դրա իրական սպառնալիքով կամ շինություն կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելով կամ պահելով: Ահաբեկչության հանցակազմը ենթադրում է, որ դրանց արդյունքում առկա է քաղաքացիական անձին կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ ծանր հետևանք առաջացնելու անմիջական վտանգ:

Ինչպես տեսնում ենք, ահաբեկչության օբյեկտիվ կողմը բաղկացած է երկ-ընտրելի գործողություններից՝

- պայթյուն կատարել,
- հրկիզում կատարել,
- այլ հանրավտանգ արարք կատարել,
- պայթյունի, հրկիզման, այլ հանրավտանգ արարքի իրական սպառնալիք ներկայացնել,
- շինություն զավթել կամ պահել,
- տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց զավթել կամ պահել,
- այլ հաղորդակցության ուղի զավթել կամ պահել:

Ընդ որում, հանցակազմի առկայության համար բավական է նշված գործողություններից որևէ մեկի կատարումը: Իսկ եթե անձը կատարում է դրանցից մեկից ավելին, սպա արարքը համակցությամբ չի որակվում:

Պարզաբանենք ահաբեկչության հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշները:

Պայթյունը ուժգին ձայնով ուղեկցվող ինչ-որ բանի բռնկումն է նյութերի ակնթարթային քիմիական տարրալուծման և խիստ տաքացած ու բարձր ճնշում ունեցող գազերի առաջացման հետևանքով:

Հրկիզումը դիտարկվում է որպես հանցավոր դիտավորությամբ գույքը (ներառյալ՝ կառույցները և շենքերը, որտեղ կարող են մարդիկ լինել) կրակով ոչնչացնելու նպատակով հրդեհ առաջացնել, հրահրել: Հրկիզման արդյունքում վնաս է հասցվում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հասարակության ու պետության շահերին, ի հայտ են գալիս նյութական վնասներ:

Անդրադառնանք «այլ հանրավտանգ արարք» հասկացության բովանդակության բացահայտմանը: Տվյալ դեպքում **այլ հանրավտանգ արարք** կարող ենք համարվել այն արարքները, որոնք համեմատելի են պայթյունի և հրկիզման հետ, օրինակ՝ հողերի, ջրերի աղտոտումը, ջրապաշտպան կառույցների վնասումը, ինչը կարող է ջրհեղեղի հանգեցնել, տարածքի կենսաբանական, քիմիական, ռադիոակտիվ և այլ վարակը, կենսապահովման օբյեկտներում վթարների կազմակերպումը, հիվանդությունն առաջացնող մանրէների տարածումը, որոնք կարող են համաճարակ առաջացնել, խիտ բնակեցված վայրերի, հիվանդանոցների, ուսումնական հաստատությունների վրա զինված հարձակումները, գնդակոծությունները և այլ նմանատիպ արարքներ:

Պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելու իրական սպառնալիքը դրսևորվում է բնակչության, պաշտոնատար անձանց նկատմամբ հոգեբանական ներգործության տարբեր ձևերով (գրավոր, բանավոր): Մասնավորապես, այն կարող է արտահայտվել տարբեր եղանակներով՝ տպագիր հրապարակում, բանավոր հայտարարություն, տարածում հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ այլ լրատվամիջոցներով, տեղեկատվական հեռահաղորդակցման ցանցերով: Սակայն հանցակազմի առկայության համար բավարար չէ միայն սպառնալիքի առկայությունը, այն նաև պետք է լինի իրական, այսինքն՝ իրականում իրագործելի: Եթե սպառնալիքն իրական չէ, ապա, գործի հանգամանքների հետ կապված, արարքը կարող է որակվել որպես ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ տարածել:

Սրա հետ կապված՝ դատական պրակտիկայից բերենք օրինակ: Թիվ ԾԴ/0143/01/23¹⁵ քրեական գործով Ալբերտ Ջանոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *նա, սպօրինի ռազմամթերք պահելով և կրելով, 2023 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 17-ի սահմաններում, այցելել է Գյումրի քաղաքի Ծիրակացի 17 հասցեում գտնվող ՀՀ ոստիկանության Ծիրակի մարզային վարչության*

¹⁵ Տե՛ս «DataLex» հանրային տեղեկատվական համակարգ
https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=29554872554812711 (մուտք 16.12.2025 թ.)
 'DataLex' Public Information System
https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=29554872554812711 (access 16.12.2025)

Մուշի բաժնի վարչական շենք: Հիշյալ վայրում, գրպանից հանելով և ցուցադրաբար ի ցույց դնելով «Ֆ1» տեսակի մարտական նռնակը, պետական ծառայողներ հանդիսացող՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Մուշի բաժնի աշխատակիցներին **պայթյուն կատարելու իրական սպառնալիքներ հնչեցնելով**, այն է՝ «(...) ստդին կանչեք ստեղ, թե չէ էսի որ քաշեմ գիդեք չէ ինչ կեղնի, գիտես չէ՞ որ քաշի հենց հմի ինչ կեղնի», **հարկադրել է, որ** նախ իր մոտ գտնվող ոստիկանության ղեկավար կազմի անդամները, **սպա՝ պետական ծառայողները թույլատրեն իր ելքը Հայաստանի Հանրապետությունից՝** այդ կերպ իրականացնելով ահաբեկչություն, որպիսի պահանջը **ահաբեկել է տվյալ վայրում գտնվող բնակչության առանձին խմբին**, քանի որ այն **գուզորդվել է ինչպես իր, այնպես էլ այլ անձանց կյանքից գրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ ծանր հետևանք առաջացնելու վտանգով**: Արեւոտ Ջանոյանն իր հակաիրավական գործողությունները դադարեցրել է միայն ներկայացված պահանջը ոստիկանության ծառայողների կողմից կատարելուց հետո: Ինչպես տեսնում ենք, սույն դեպքում ահաբեկչություն է տեղի ունեցել, որի օբյեկտիվ կողմը դրսևորվել է պայթյուն կատարելու իրական սպառնալիքով:

Կարծում ենք՝ սպառնալիքը ահաբեկչության հանցակազմում չպետք է սահմանափակվի՝ միայն պայթյուն, հրկիզում կամ այլ հանրափտանգ արարք կատարելով: Առաջարկում ենք հանցակազմի սկզբնական հատվածը փոփոխել և ձևակերպել հետևյալ կերպ. «Պայթյուն, հրկիզում կամ այլ հանրափտանգ արարք կատարելը կամ շինություն կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելը կամ պահելը կամ դրանց իրական սպառնալիքը՝ գուզորդված (...)»։ Այս առաջարկը հիմնավորվում է այն վարկածով, որ հնարավոր է անձի կողմից ներկայացվի շինություն կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելու կամ պահելու սպառնալիք, ինչի պարագայում հարց է առաջանում, թե ինչպես պետք է որակվի անձի արարքը:

Շինություն, տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելը կամ պահելը ահաբեկչության հանցակազմի օբյեկտիվ կողմի նոր բաղադրիչներ են: Դրանք ահաբեկչության հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ ընդգրկվել են 2022 թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով, ինչը, ըստ մեզ, արդարացված է, քանի որ շինությունները, տրանսպորտային միջոցները, հաղորդակցության ու կապի միջոցները կենսական նշանակություն ունեն հանրային և ազգային անվտանգության համար: Դրանց թիրախավորումը խաթարում է հասարակության բնականոն կյանքը, հասարակական անվտանգությունը:

Չավթելը դրսևորվում է նրանով, որ հանցավորը բռնության կամ այլ ապօրինի եղանակով հսկողություն է սահմանում համապատասխան շինության, տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոցի նկատմամբ, կամ էլ

սահմանափակում է շինության, տրանսպորտային միջոցի ներսում գտնվող անձանց ազատությունը և հնարավորություն ստանում տնօրինել դրանք¹⁶: Իսկ շինություն, տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի պահելը դրսևորվում է գավթած օբյեկտների ազատումը բռնությամբ խոչընդոտելու ձևով¹⁷:

Հիմնականում ահաբեկչություններն իրականացվում են այնպիսի շինություններ գավթելով կամ պահելով, ինչպիսիք են՝ առևտրի կենտրոնները, գվարձանքի վայրերը, պետական նշանակության շենքերը:

Ահաբեկչության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր տարր է նաև այն, որ վերոնշյալ գործողությունները գուցորդված լինեն քաղաքացիական անձին կամ գինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ ծանր հետևանք առաջացնելու վտանգով: **Ընդ որում, բավական է միայն նման վտանգի առաջացումը, ինչը պետք է լինի իրական:** Վտանգի իրական լինելը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

Խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու վտանգը գնահատվում է այն նյութական օբյեկտների արժեքով և նշանակությամբ, որոնց ոչնչացման կամ վնասման սպառնալիք էր ստեղծված: ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 17-րդ կետում, ի թիվս այլնի, տրված է պատճառված **գույքային վնասի խոշոր չափը**, այն է՝ **հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը):**

Ահաբեկչական գործողությունները պետք է **գուցորդված լինեն նաև այլ ծանր հետևանքներ առաջացնելու վտանգով:** «Այլ ծանր հետևանք» հասկացությունը պարզաբանված է ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածում, այն է՝ *«սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածում, հոդվածի մասում կամ կետում թվարկված հետևանքներին համարժեք կամ համաբնույթ վտանգավորություն ներկայացնող հանգամանք»:* Քննարկվող հանցակազմի դեպքում այլ ծանր հետևանքների մեջ կարող են մտնել պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ապակազմակերպումը, բնապահպանական իրադրության էական վատթարացումը (ներքին և մակերևութային ջրերի, մթնոլորտի և շրջակա միջավայրի) և այլն¹⁸:

¹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, վեցերորդ հրատարակություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ., էջ 526. “Criminal Law of the Republic of Armenia, Special Part”, Sixth Edition, YSU Publishing House, Yerevan, 2012, p. 526.

¹⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, վեցերորդ հրատարակություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ., էջ 523. “Criminal Law of the Republic of Armenia, Special Part”, Sixth Edition, YSU Publishing House, Yerevan, 2012, p. 523.

¹⁸ Տե՛ս Шихов А. Л., Характеристика объективных признаков террористического акта. <https://cyberleninka.ru/article/n/harakteristika-obektivnyh-priznakov-terroristicheskogo-akta/viewer> (access 16.12.2025)

Ահաբեկչություն է համարվում նաև միջազգային պայմանագրերով ահաբեկչություն համարվող ցանկացած այլ արարք: Օրինակ՝ «Ահաբեկչության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» պայմանագրով սահմանված են ահաբեկչության օբյեկտիվ կողմի տարատեսակ դրսևորումներ:

Այժմ անդրադարձ կատարենք ահաբեկչության հանցակազմի որակյալ տեսակների օբյեկտիվ կողմին: Այստեղ վերլուծության չենք ենթարկի հանցակազմի որակյալ տեսակներից առաջինը («կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից»), քանի որ օբյեկտիվ կողմը նույնն է, պարզապես նախատեսված է հատուկ սուբյեկտ:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված է ահաբեկչության ծանրացնող հաջորդ հանգամանքը՝ *հողվածի առաջին մասում նախատեսված արարքը կատարվել է առումային էներգիայի օգտագործման օբյեկտի վրա հարձակմամբ կամ միջուկային կամ ռադիոակտիվ նյութի կամ իոնացնող ճառագայթման այլ աղբյուրի կամ զանգվածային ոչնչացման զենքի, թունավոր, քիմիական կամ կենսաբանական նյութի օգտագործմամբ*: Հաշվի առնելով ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ միջազգային կոնվենցիաները և փորձը՝ առաջարկում ենք այս ծանրացնող հանգամանքում ավելացնել նաև պլաստիկ պայթուցիկ նյութերը, քանի որ ահաբեկչական ակտերի իրականացման ժամանակ այդպիսիք բազմիցս օգտագործվում են:

Զանգվածային ոչնչացման զենքի, միջուկային կամ ռադիոակտիվ նյութի կամ իոնացնող ճառագայթման այլ աղբյուրի կամ թունավոր, քիմիական կամ կենսաբանական նյութի ամկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է փորձաքնության անցկացում:¹⁹

Հարկ է նշել նաև, որ **ահաբեկչության հանցակազմը ձևական է: Հանցագործությունն ավարտված համարելու համար բավական է հողվածում նշված գործողությունների կատարումը, պարտադիր չէ վտանգավոր հետևանքների առաջացումը**: Սակայն հողվածում նշված գործողությունները պետք է այդպիսի հետևանքներ առաջացնելու վտանգ ստեղծեն:

2.2. Ահաբեկչության հանցակազմի տարրերը.

սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ

Հանցագործությունն անհնար է առանց այն կատարող անձի: Այդ իսկ պատճառով քրեաիրավական դոգմատիկայում ընդունված է, որ հանցակազմի պարտադիր տարրերից է հանցագործության սուբյեկտը, առանց որի քրեական պատասխանատվությունը բացառվում է:

¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, վեցերորդ հրատարակություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ., էջ 515.

“Criminal Law of the Republic of Armenia, Special Part”, Sixth Edition, YSU Publishing House, Yerevan, 2012, p. 515.

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի առաջին կետով սահմանվում է, որ *քրեական պատասխանատվության ենթակա է մեղսունակ ֆիզիկական անձը, որի 16 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ինչպես նաև իրավաբանական անձը*: Նույն հոդվածի երկրորդ կետով ամրագրված են այն հանցանքները, որոնց համար քրեական պատասխանատվություն սահմանված է հանցանքը կատարելու պահին անձի 14 տարին լրանալու դեպքում: Այդ հանցանքների շարքում ահաբեկչությունն ամրագրված չէ: Այստեղ, ի դեպ, հավելենք, որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրքը 14 տարեկանից է պատասխանատվություն սահմանում ահաբեկչության համար²⁰, ինչը ռուսական գրականության մեջ բազմաթիվ քննադատությունների տեղիք է տալիս՝ որպես չափազանց խիստ և անչափահասների սոցիալական վերաինտեգրման հնարավորությունները սահմանափակող:

Իրավաբանական անձի՝ հանցագործության սուբյեկտ համարվելը նորոյթ է Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտում: Երկար տարիներ իրավաբանական անձը ՀՀ քրեական օրենսգրքով հանցագործության սուբյեկտ չի համարվել: Եվ միայն 2021 թ. ընդունված և 2022 թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով առաջին անգամ իրավաբանական անձը համարվում է հանցագործության սուբյեկտ:

Այսպիսով՝ *ահաբեկչության սուբյեկտ է համարվում ահաբեկչության կատարման պահին 16 տարին լրացած ցանկացած ֆիզիկական մեղսունակ, այսինքն՝ հանցանքի կատարման պահին իր արարքի հակաիրավականությունը գիտակցելու և այն ղեկավարելու ունակություն ունեցած անձ, ինչպես նաև ցանկացած իրավաբանական անձ*:

Ահաբեկչության որակյալ հանցակազմերից առաջինի դեպքում օրենքով նախատեսված է հատուկ սուբյեկտ, այն է՝ հանցավոր կազմակերպությունը: ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ *հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից*: Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծված կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը:

Այժմ վերլուծության ենթարկենք ահաբեկչության սուբյեկտիվ կողմը: Ահա-

²⁰ Տե՛ս Ա. Մարգարյան, «Տարիքը որպես քրեական պատասխանատվության անհրաժեշտ նախադրյալ» հոդված, Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 2019, № 2 (29), ԵՊՀ հրատ., 2019 թ. http://www.old.ysu.am/files/05A_Margaryan-1571915681-.pdf (մուտք 16.12.2025 թ.)

A. Margaryan, “Age as a Necessary Prerequisite for Criminal Liability” article, Bulletin of Yerevan University: Law, 2019, No. 2 (29), YSU Publishing House, 2019.

http://www.old.ysu.am/files/05A_Margaryan-1571915681-.pdf (access 16.12.2025)

բեկչության սուբյեկտիվ կողմը կարևորագույն նշանակություն ունի: Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածը՝ կարող ենք եզրակացնել, որ **սահաբեկչության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ:** Այսինքն՝ հանցավորը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, և այդ արարքը կատարելը նրա նպատակն է կամ նպատակին հասնելու միջոցը: Ահաբեկչություն կատարող անձը գիտակցում է, որ իր կատարած արարքը վտանգավոր է մեկ այլ անձի, պետության կամ հասարակության շահերի համար և հակասում է ընդհանուր թույլատրելի բոլոր նորմերին:

Ընդ որում, ներկայումս ուղղակի դիտավորությունը որպես սուբյեկտիվ կողմ է հանդես գալիս սահաբեկչության թե՛ հիմնական, թե՛ որակյալ հանցակազմերի պարագայում: Մինչդեռ, 2003 թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով սահաբեկչության առավել ծանրացնող հանգամանք հանդիսացող «մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ առաջացնելը» պարտադիր պետք է լիներ անգործությամբ, այսինքն՝ անձը կա՛մ պետք է նախատեսեր իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների՝ մարդու մահվան կամ այլ ծանր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս ունենար, որ դրանք կկանխվեն (հանցավոր ինքնավստահություն), կա՛մ չպետք է նախատեսեր իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների՝ մարդու մահվան կամ այլ ծանր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր լիներ և ի վիճակի լիներ նախատեսել դրանք (հանցավոր անվտանգություն): Այս ծանրացնող հանգամանքը գործող օրենսգրքով այլևս նախատեսված չէ:

Քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշն է նպատակը: Հոդվածում նշված գործողությունները կատարվում են բնակչությանը կամ դրա առանձին խմբին սահաբեկելու, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելու, հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում ծառայող անձին որևէ արարք կատարելուն կամ հանցավորի այլ պահանջը կատարելուն հարկադրելու նպատակով: Հանցակազմի ձևակերպումից բխում է, որ **նշված նպատակներից ցանկացածի առկայությունը բավարար է արարքը սահաբեկչություն որակելու համար:** Այս նպատակների բացակայությունը բացառում է սահաբեկչության հանցակազմի առկայությունը:

Կարծում ենք՝ օրենսդրի կողմից ճիշտ է «հանցավորի այլ պահանջը կատարելուն հարկադրելու» նպատակը հանցակազմում ընդգրկելը, քանզի այդպիսի ձևակերպումը բաց է և տարածական մեկնաբանության հիմք կարող է հանդիսանալ: Նպատակը չի սահմանափակվում միայն որոշակի արարք կատարելուն

հարկադրելով (օրինակ՝ կարող է այլ պահանջ լինել՝ որոշակի արարք չկատարելը): Սակայն կարծում ենք, որ կարելի էր ձևակերպումը տալ հետևյալ կերպ. «հանցավորի այլ անօրինական պահանջը կատարելուն հարադրելու նպատակով», քանի որ օրինական պահանջի դեպքում արդեն ինքնիրավչության հանցակազմի (ՀՀ քրեական օրենսգրքի 460-րդ հոդված) առկայություն կարող է լինել:

Մեր կողմից քննարկվող հանցակազմի պարագայում բնակչությանը կամ դրա առանձին խմբին ահաբեկելը դիտարկվում է որպես միջանկյալ, միջնորդավորված նպատակ²¹, քանի որ ծառայում է այլ նպատակների հասնելու միջոց: Ահաբեկումը արարքի հոգեբանական իմաստն է, որի միջոցով ահաբեկիչը ձգտում է հասնել այլ նպատակի: Այսինքն՝ ահաբեկումն ինքնանպատակ չէ²²:

Նշենք նաև, որ 2003 թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով որպես ահաբեկչության նպատակ նշվում էր հասարակական անվտանգությունը խախտելը, բնակչությանն ահաբեկելը կամ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման վրա ներգործելը կամ հանցավորի ապօրինի այլ պահանջը կատարելը: Համեմատական վերլուծության ենթարկելով ներկայիս կարգավորման հետ՝ կարող ենք եզրակացնել, որ հասարակական անվտանգությունը խախտելը այլևս ահաբեկչության պարտադիր նպատակ չի համարվում: Կարծում ենք՝ դա պայմանավորված է նրանով, որ հանցակազմն ընդգրկված է հենց հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների շարքում, և ահաբեկչություն կատարելով՝ հանցավորը այսպես թե այնպես ոտնձգում է հասարակական անվտանգության դեմ, խախտում է այն: Բացի այդ, նախկին կարգավորմամբ որպես նպատակ սահմանված էր միայն բնակչությանն ահաբեկելը, իսկ ներկայումս այդ սահմանումն իրավացիորեն ընդարձակվել է՝ դառնալով «բնակչությանը կամ դրա առանձին խմբին ահաբեկելը»:

Ահաբեկչության հանցակազմի դեպքում **շարժառիթներն ու հույզերը** սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ չեն, սակայն դրանք թույլ են տալիս ճիշտ որոշել արարքի հասարակական վտանգավորության աստիճանը, մեղքի ձևը և այլն²³: Դրանք կարող են հաշվի առնվել պատասխանատվության և պատժի անհատականացման համար: Ահաբեկչության շարժառիթները կարող են լինել քաղաքական, կրոնական, գաղափարական, վրեժխնդրական և այլ բնույթի:

²¹ Ст'у Кызродев К. Б., Субъективные признаки состава террористического акта и иных преступлений террористической направленности, Международный научный журнал «Вестник науки» № 11 (68) Том 1. ноябрь 2023 г.

<https://cyberleninka.ru/article/n/subektivnye-priznaki-sostava-terroristicheskogo-akta-i-inyh-prestupleniy-terroristicheskoy-napravlennosti/viewer> (access 16.12.2025)

²² Ст'у Ա. Հարությունյան, «Ահաբեկչության դեմ պայքարի քրեաիրավական և կրիմինոլոգիական հիմնախնդիրները» ատենախոսություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2006 թ.: А. Harutyunyan, *Criminal-Legal and Criminological Issues of Combating Terrorism*, Dissertation, YSU Publishing House, Yerevan, 2006.

²³ Ст'у Беляева М. Г., Анализ субъективной стороны преступления на примере состава преступления, предусмотренного ст. 205 УК РФ «Террористический акт», Современные инновации № 7(21) 2017. <https://cyberleninka.ru/article/n/analiz-subektivnoy-storony-prestupleniya-na-primere-sostava-prestupleniya-predusmotrennogo-st-205-uk-rf-terroristicheskoy-akt/viewer> (access 16.12.2025)

3. Ահաբեկչության հանցակազմի սահմանազատումը հարակից հանցակազմերից

Հանցավոր արարքի որակման գործընթացում հաճախ առաջանում է հարակից հանցագործությունների սահմանազատման խնդիր: Ահաբեկչության հանցակազմը, լինելով բազմաբնույթ և բազմաշերտ երևույթ, հաճախ իր օբյեկտիվ կողմով ու նպատակներով նմանվում է այլ հանցագործությունների: Սույն գլխում համեմատական վերլուծության կենթարկենք և կսահմանազատենք ահաբեկչության հանցակազմը այլ հանցագործություններից:

Ինչպես արդեն նախորդ գլխում նշեցինք, ահաբեկչության հանցակազմը ներառված է ՀՀ քրեական օրենսգրքի «Հասարակական անվտանգության դեմ ուղղված ընդհանուր բնույթի հանցագործությունների» գլխում: Նույն գլխում ընդգրկված են նաև ահաբեկչական բնույթի մի շարք այլ հանցագործություններ՝ «Ահաբեկչական գործունեությանը նպաստելը», «Ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելը», «Ահաբեկչական կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը», «Ահաբեկչական կազմակերպությանը մասնակցելը», «Ահաբեկչությունն արդարացնելը, քարոզելը կամ ահաբեկչություն կատարելու կոչերը, ինչպես նաև այդպիսի կոչեր պարունակող նյութեր կամ առարկաներ տարածելը», «Ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ տարածելը»: Այս հանցակազմերի մեծ մասը նորույթ է ՀՀ քրեական օրենսգրքում: Դրանց համար քրեական պատասխանատվություն նախատեսվել է 2021 թ. մայիսի 05-ի ՀՀ քրեական օրենսգրքում:

Այն դեպքերում, երբ անձը չի նախապատրաստվում կոնկրետ ահաբեկչության կամ հողվածում նշված այլ հանցանքների, այլ, ընդհանուր առմամբ, հավաքագրվում է հնարավոր ահաբեկչական բնույթի հանցագործություններ կատարելու համար կամ սովորում կամ սովորեցնում է հողվածում նշված հանցանքներ կատարելու հմտությունները, անցնում է պատրաստություն համապատասխան ճամբարներում կամ այդ նպատակով ճանապարհորդում է, ապա քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի ոչ թե ահաբեկչության, այլ **ահաբեկչական գործունեությանը նպաստելու** համար: Բավական է միայն, որ անձը կատարի հողվածում նշված արարքներից որևէ մեկը կամ մի քանիսը:

Քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև **ահաբեկչական կազմակերպություն ստեղծելու, ղեկավարելու, դրան մասնակցելու** համար: Այս հանցագործությունը, կարելի է ասել, ահաբեկչության նախապատրաստություն է իրենից ենթադրում: Եթե անձը ստեղծում կամ ղեկավարում է ահաբեկչական կազմակերպություն և միևնույն ժամանակ կատարում է ահաբեկչության հանցակազմում ընդգրկված գործողություններից որևէ մեկը, ապա այս դեպքում նա պատասխանատվության կենթարկվի ահաբեկչության և ահաբեկչական կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու համակցությամբ: Իսկ եթե այդպիսի կազմակերպության մասնակցի կողմից կատարվում է կոնկրետ ահաբեկչական

գործողություն, ապա արարքը որակվում է ահաբեկչության և ահաբեկչական կազմակերպությանը մասնակցելու համակցությամբ:

Կարծում ենք՝ ավելի ճիշտ կլիներ այս երկու հանցակազմերը միավորել մեկ հոդվածում՝ որպես «ահաբեկչական կազմակերպություններ ստեղծել կամ դեկավարել կամ դրանց մասնակցել»՝ հաշվի առնելով դրանց միանման բնույթը:

Եվ, վերջապես, քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև **ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ տարածելու** համար, ինչը ՀՀ դատական պրակտիկայում ամենից շատ հանդիպող հանցանքն է: Իրականությանը չհամապատասխանող կամ այն խեղաթուրող ահաբեկչության մասին տեղեկությունների տարածումը վտանգում է հասարակական անվտանգությունը: Նախորդ գլխում արդեն նշեցինք, որ ահաբեկչության հանցակազմի օբյեկտիվ կողմի մաս կազմող պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելու իրական սպառնալիքը կարող է արտահայտվել այդ մասին տեղեկություններ տարածելով: Սակայն ահաբեկչության հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ սպառնալիքը լինի իրական: Եվ միայն այն դեպքում, երբ սպառնալիքն իրական չէ, գործի հանգամանքներով պայմանավորված, արարքը կարող է որակվել որպես ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ տարածել:

Այժմ անդրադառնանք այլ՝ ոչ ահաբեկչական բնույթի հանցագործություններից ահաբեկչության հանցակազմի սահմանազատմանը:

Ահաբեկչության հանցակազմը իր օբյեկտիվ կողմով նման է **այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանությանը**: Այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակ կարող են լինել պայթյունը, հրկիզումը, մարդաշատ վայրերում կրակոցներ արձակելը, ջուր և սնունդ թունավորելը: Միևնույն ժամանակ ահաբեկչության հանցակազմի դիսպոզիցիայում նշվում են պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելը (...)՝ զուգորդված քաղաքացիական անձին կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու (...) վտանգով: Այսինքն՝ մարդու կյանքը ահաբեկչության հանցակազմում լրացուցիչ օբյեկտ է, իսկ սպանության հանցակազմում՝ հիմնական: Բացի այդ, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության հանցակազմի դեպքում պարտադիր հանցավոր հետևանքը մարդու մահն է: Մինչդեռ, ահաբեկչության հանցակազմում մարդու մահը որպես հետևանք նախատեսված չէ, այլ նախատեսված է համապատասխան անձին կյանքից զրկելու վտանգը: Եթե այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության դեպքում մահ չի առաջանում, ապա արարքը կարող է որակվել այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձ կամ նախապատրաստություն:

Այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության հանցակազմում նպատակը սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ չէ, մինչդեռ ահաբեկչության հանցակազմի պարտադիր հատկանիշներից է նպատակը: Այսինքն,

եթե պայթյունը հանգեցրել է մարդու մահվան, բայց չի հետապնդել ահաբեկչության հանցակազմում նշված նպատակները, ապա արարքը պետք է որակել որպես այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն: Իսկ եթե ահաբեկչության հանցակազմում ընդգրկված գործողություններից մեկի արդյունքում առաջանում է մարդու մահ, ապա արարքը կորակվի սպանության և ահաբեկչության համակցությամբ: Միևնույն ժամանակ, սպանության դեպքում հանցավոր անձի նպատակը կոնկրետ որևէ անձի մահվան առաջացումն է, իսկ ահաբեկչության դեպքում հանցավորը կոնկրետ որևէ անձին կյանքից զրկելու նպատակ և դիտավորություն չունի:

Համեմատական վերլուծության ենթարկենք ահաբեկչության հանցակազմը և **հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով գույքը ոչնչացնելու կամ վնասելու** հանցակազմը: Ահաբեկչության դիսպոզիցիայում սահմանված է պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելը (...)՝ գույքորդված (...) խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու վտանգով (...): Այս երկու հանցակազմերի միջև հիմնական տարբերությունն այն է, որ ահաբեկչության դեպքում առկա է խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու վտանգ, իսկ մյուս հանցակազմի առկայության համար այդ վնասը պարտադիր պետք է պատճառվի: Երկու հանցակազմերում էլ վնասի չափը խոշոր է: Ահաբեկչության հանցակազմում սեփականության շահերը հանդես են գալիս որպես լրացուցիչ օբյեկտ, իսկ հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով գույքը ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմում՝ հիմնական:

Ինչպես սպանության դեպքում նշեցինք, այնպես էլ այս երկու հանցակազմերի սահմանազատման հարցում էական նշանակություն ունի նպատակը, որը երկու հանցակազմերի դեպքում տարբեր է: Եթե խոշոր չափերի գույքային վնասը պատճառվում է խուլիգանական դրդումներով, ապա այն կորակվի հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով գույքը ոչնչացնել կամ վնասել, իսկ եթե այն պատճառվում է բնակչությանը կամ դրա առանձին խմբին ահաբեկելու, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելու, հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում ծառայող անձին որևէ արարք կատարելուն կամ հանցավորի այլ պահանջը կատարելուն հարկադրելու նպատակով՝ ահաբեկչություն:

Այժմ տարանջատենք ահաբեկչությունն ու **դիվերսիան**: Այս երկու հանցակազմերն ունեն բավականին շատ ընդհանրություններ, օրինակ՝ օբյեկտիվ կողմը և դրա եղանակը: Երկուսի դեպքում էլ կատարվում է պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք, և հանցագործությունն ավարտված է համարվում դրանք կատարելու պահից: Սակայն այս երկու հանցակազմերն ունեն նաև տարբերություններ: Եթե ահաբեկչության օբյեկտը հասարակական անվտանգությունն է, ապա դիվերսիայի օբյեկտը՝ սահմանադրական կարգի հիմունքներն ու

պետության անվտանգությունն են, այսինքն՝ դիվերսիայի օբյեկտն ավելի նեղ է: Բացի այդ, տարբեր են այս երկու հանցակազմերի նպատակները: Դիվերսիայի նպատակը պետությունը թուլացնելն է, իսկ ահաբեկչության նպատակի մասին արդեն խոսվել է վերևում: Դիվերսիան ուղղված է պետության դեմ, իսկ ահաբեկչությունը կարող է ուղղված լինել նաև միջազգային կազմակերպությունների դեմ: Գործնականում դիվերսիան հիմնականում գաղտնի է իրականացվում, իսկ ահաբեկչությունը՝ բացահայտ²⁴:

Ահաբեկչությունը ընդհանրություններ ունի նաև **պատանդ վերցնելու կամ պահելու** հանցակազմի հետ: Մասնագետների մի մասը նույնիսկ այն կարծիքին է, որ պատանդ վերցնելը կամ պահելը ահաբեկչության տեսակ է համարվում: Այս կապակցությամբ նշենք, որ մեր կատարած հետազոտության և վերլուծության արդյունքում եզրահանգում ենք, որ պատանդ վերցնելը կամ պահելը մտնում է ահաբեկչության հանցակազմի մեջ: Մասնավորապես, 2005 թ. մայիսի 16-ին ընդունված «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայում նշվում է. *«Սույն Կոնվենցիայի նպատակներով «ահաբեկչական հանցագործություն» նշանակում է՝ հավելվածում նշված պայմանագրերից որևէ մեկի շրջանակներում և այնտեղ բնորոշված ցանկացած հանցագործություն»*: Հավելվածում ընդգրկված պայմանագրերից մեկն էլ 1979 թ. դեկտեմբերի 18-ին ընդունված «Պատանդներ վերցնելու դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիան է, որտեղ պատանդ վերցնելն ու պահելը համարվում է հանցագործություն: Այսինքն՝ «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի իմաստով պատանդ վերցնելն ու պահելը ահաբեկչական հանցագործություն է դիտարկվում, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածում, ի թիվս այլնի, ահաբեկչություն է համարվում նաև միջազգային պայմանագրերով ահաբեկչություն համարվող ցանկացած այլ արարք: Ստացվում է, որ պատանդ վերցնելն ու պահելը ՀՀ քրեական օրենսգրքի ահաբեկչության հանցակազմի տարր է: Սակայն, եթե հաշվի առնենք, որ ահաբեկչությունն ընդհանուր նորմ է, իսկ պատանդ վերցնելը կամ պահելը՝ հատուկ, և ընդհանուր ու հատուկ նորմերի մրցակցության դեպքում գերակայում է հատուկ նորմը, ապա կարող ենք ասել, որ պատանդ վերցնելու կամ պահելու դեպքում արարքը կորակվի վերոնշյալ երկու հանցագործությունների համակցությամբ:

Նշենք, որ երկու հանցանքների օբյեկտն էլ հասարակական անվտանգությունն է: Սակայն պատանդ վերցնելու կամ պահելու հանցակազմի դեպքում բացակայում է անձանց անորոշ շրջանակի համար վտանգը: Հանցակազմերը տարբերվում են նաև նպատակներով: Պատանդ վերցնելը կամ պահելը կատարվում է պատանդին ազատելու պայմանով հանրային իշխանության ներկայա-

²⁴ St'u Мурин Н. В. , Разграничение террористического акта со смежными составами преступлений, Выпуск №6 (58), июнь 2021
<https://cyberleninka.ru/article/n/razgranichenie-terroristicheskogo-akta-so-smezhnymi-sostavami-prestupleniy/viewer> (access 16.12.2025)

ցուցին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում աշխատող անձին պաշտոնական կամ ծառայողական գործունեության հետ կապված արարք կատարելուն կամ այդպիսի արարք կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով, մինչդեռ, ահաբեկչության նպատակը առավելապես քաղաքական, կրոնական, գաղափարական բնույթ ունի: Պատանդ վերցնելու կամ պահելու հանցակազմում կա տուժող՝ պատանդը, ինչը ահաբեկչության հանցակազմում բացակայում է:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ ահաբեկչությունը այս և այլ հանցագործություններից հիմնականում տարբերվում, սահմանազատվում է նրանով, որ ահաբեկումը, սարսափեցումը, անձանց անորոշ շրջանակի մոտ վախի մթնոլորտ առաջացնելը չի հանդիսանում այլ հանցակազմերի հատկանիշ, սակայն կարող է առկա լինել անձանց գործողություններում: Այլ հանցագործությունները հիմնականում իրականացվում են ծածուկ, գաղտնի կերպով, մինչդեռ, ահաբեկչությանը բնորոշ է հրապարակայնությունը²⁵ և հանրային բնույթը: Բացի այդ, ահաբեկչությունը այլ հանցագործություններից տարբերակող էական հատկանիշ է նաև հանցագործության կատարման նպատակը:

Եզրակացություն

Ահաբեկչությունը ներկայումս համաշխարհային նշանակության ամենասուր ու հրատապ խնդիրներից մեկն է: Ահաբեկչության բազմաբնույթ և բազմաբովանդակ բնույթը այն դարձնում է իրավագիտության համար յուրահատուկ բարդություն ներկայացնող երևույթ: Այն ուղղված է ոչ միայն հանրությանը վախեցնելուն, այլև հանրային իշխանության ապակազմակերպմանը և դրանով իսկ հանրային մեծ վտանգավորություն ունի:

Ահաբեկչությունը հրապարակայնորեն կատարվող հանրորեն վտանգավոր արարք է կամ դրա կատարման սպառնալիք, որն ուղղված է բնակչության կամ նրա մի մասին վախեցնելուն, հանրային իշխանության և այլ մարմինների գործունեությունը կազմալուծելուն, ահաբեկիչների պահանջները կատարելուն հարկադրելուն:

Վերլուծելով ահաբեկչության հանցակազմի տարրերը՝ կարելի է եզրակացնել, որ այն բազմօբյեկտ հանցագործություն է: Դրա հիմնական օբյեկտը հասարակական անվտանգությունն է, իսկ լրացուցիչ օբյեկտներն են՝ կյանքը, առողջությունը, գույքային հարաբերությունները, հանրային իշխանության և այլ մարմինների բնականոն գործունեությունը:

Ահաբեկչության օբյեկտիվ կողմը դրսևորվում է՝ պայթյուն, հրկիզում կամ այլ

²⁵ Տե՛ս Ա. Հարությունյան, «Ահաբեկչության դեմ պայքարի քրեաիրավական և կրիմինոլոգիական հիմնախնդիրները» ատենախոսություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2006 թ.

A. Harutyunyan, *Criminal-Legal and Criminological Issues of Combating Terrorism*, Dissertation, YSU Publishing House, Yerevan, 2006.

հանրավտանգ արարք կատարելով կամ դրա իրական սպառնալիք ստեղծելով կամ շինություն կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելով կամ պահելով, որոնք պետք է գույքորդված լինեն քաղաքացիական անձին կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ ծանր հետևանք առաջացնելու վտանգով: Որակյալ հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է՝ նույն արարքը ստոմային էներգիայի օգտագործման օբյեկտի վրա հարձակմամբ կամ միջուկային կամ ռադիոակտիվ նյութի կամ իոնացնող ճառագայթման այլ աղբյուրի կամ զանգվածային ոչնչացման զենքի, թունավոր, քիմիական կամ կենսաբանական նյութի օգտագործմամբ կատարելով:

Ահաբեկչության հանցակազմը ձևական է և ավարտված է համարվում հանցակազմում նշված գործողություններից մեկը կամ մի քանիսը կատարելու պահից:

Քննարկվող հանցակազմի սուբյեկտը հանցանքի կատարման պահին 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձն է, ինչպես նաև իրավաբանական անձը: Որակյալ հանցակազմի դեպքում առկա է հատուկ սուբյեկտ՝ հանցավոր կազմակերպությունը:

Ահաբեկչության սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ: Բացի այդ, ահաբեկչության թերևս ամենահիմնական առանձնահատկությունը, սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից մեկն այն նպատակն է, որի համար կատարվում է այս հանցանքը. ահաբեկել բնակչությանը կամ դրա առանձին խմբին, կազմալուծել հանրային իշխանության մարմինների գործունեությունը, հարկադրել հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում ծառայող անձին որևէ արարք կատարել կամ հանցավորի այլ պահանջը կատարել:

Հանցավոր արարքի որակման գործընթացում հաճախ առաջանում է հարակից հանցագործությունների սահմանազատման խնդիր: Հաշվի առնելով ահաբեկչության՝ այլ հանցակազմներից սահմանազատելու հարցը՝ անհրաժեշտ է նշել, որ ահաբեկչության հանցակազմը այլ հանցակազմներից հիմնականում սահմանազատվում է օբյեկտով, օբյեկտիվ կողմով և սուբյեկտիվ կողմով, մասնավորապես՝ նպատակով:

Ներկայումս ՀՀ-ում ահաբեկչության համար նախատեսված է քրեական պատասխանատվություն՝ ազատազրկում՝ 8-12 տարի ժամկետով, իսկ ահաբեկչության որակյալ հանցակազմերի դեպքում՝ ազատազրկում՝ 10-15 տարի ժամկետով: Հետևաբար՝ այն առանձնապես ծանր հանցագործություն է:

Նոր իրավակարգավորմամբ ահաբեկչության հանցակազմի պարագայում վաղեմության ժամկետներ չեն կիրառվում, նաև արգելվում է համաներում և

ներում կիրառել ահաբեկչություն կատարած անձանց նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ ահաբեկչության օրենսդրական ձևակերպումը բարելավելու նպատակով կարող ենք ներկայացնել հետևյալ առաջարկությունները՝

1. ծանրացնող հանգամանքների շարքում ավելացնել «եթե առաջացրել է մարդու մահ»,
2. որպես ծանրացնող հանգամանք սահմանել նաև «գուգորդվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու վտանգով», քանի որ հիմնական հանցակազմում խոսվում է միայն խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու վտանգի մասին,
3. հանցակազմի սկզբնական հատվածը փոփոխել և ձևակերպել հետևյալ կերպ. «Պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելը կամ շինություն կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելը կամ պահելը կամ դրանց իրական սպառնալիքը՝ գուգորդված (...)», քանի որ հնարավոր է անձի կողմից ներկայացվի նաև շինություն կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելու կամ պահելու սպառնալիք,
4. հանցակազմի՝ «հանցավորի այլ պահանջը կատարելուն հարկադրելու» նպատակը փոխարինել «հանցավորի այլ անօրինական պահանջը կատարելուն հարկադրելու նպատակով», քանի որ օրինական պահանջի դեպքում ինքնիրավչության հանցակազմի (ՀՀ քրեական օրենսգրքի 460-րդ հոդված) առկայություն կարող է լինել:

Եզրակացնելով՝ ցավոք սրտի, պետք է փաստել, որ ահաբեկչությունը մարդկության հավերժ ուղեկիցն է, որը ոչ թե տեղային, այլ համամարդկային և վերագգային խնդիր է: Չնայած ՀՀ-ում ահաբեկչական հանցագործությունների սակավաթվությանը՝ այնուամենայնիվ այն վտանգի մեծ ներուժ ունի ՀՀ անվտանգության համար: Ուստի, պետք է կանխել դրա տարածումը և ժամանակին բացահայտել ահաբեկչության սպառնալիքը: Կարևոր է միավորել պետության ու հասարակության բոլոր ուժերն ու ջանքերը ահաբեկչության դեմ պայքարում, որը պետք է ընդգրկի ոչ միայն իրավական, այլև տնտեսական, քաղաքական, սոցիալական բնույթի միջոցառումներ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Ռուսաստանի Դաշնության 1996 թ. քրեական օրենսգիրք: Criminal Code of the Russian Federation, 1996.
2. Պատանդներ վերցնելու դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիա, ընդունված՝ 1979 թ., ուժի մեջ մտած՝ 2004 թ., Նյու Յորք: International Convention Against the Taking of Hostages, adopted in 1979, entered into force in 2004, New York.
3. Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիա, ընդունված՝ 1999 թ. դեկտեմբերի 9-ին՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 54/109 բա: International Convention for the Suppression of the Financing of Terrorism, adopted on 9 December 1999 by UN General Assembly Resolution 54/109, entered into force in 2004, New York.
4. «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2005 թ. Law of the Republic of Armenia “On Combating Terrorism”, adopted in 2005.
5. ՀՀ Նախագահի կարգադրությունը ՀՀ-ում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը հաստատելու մասին, ընդունված՝ 2012 թ., ք. Երևան Decree of the President of the Republic of Armenia on Approving the National Strategy for Combating Terrorism in the Republic of Armenia, adopted in 2012, Yerevan.
6. Ահաբեկչության կանխարգելման մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա, ընդունված՝ 2005 թ., ուժի մեջ մտած՝ 2016 թ., Վարշավա Council of Europe Convention on the Prevention of Terrorism, adopted in 2005, entered into force in 2016, Warsaw.
7. Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագիր, Մոսկվա, 2017 թ. Treaty on the Customs Code of the Eurasian Economic Union, Moscow, 2017.
8. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թ. մայիսի 05-ին, ուժի մեջ մտել՝ 2022 թ. հուլիսի 01-ին: Criminal Code of the Republic of Armenia, HO-199-N, adopted on May 5, 2021, entered into force on July 1, 2022.
9. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=29554872554812711
10. Չաքարյան Ա., Ահաբեկչության գիտական դասակարգման շուրջ, 21-րդ դար, 2005 թ. Zakaryan A., On the Scientific Classification of Terrorism, 21st Century, 2005.
11. Իրավաբանական տերմինների բառարան, ԻՐՏԵԿ Dictionary of Legal Terms, IRTEK.
12. Խոջոյան Կ., «Ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից ձևերը» ուսումնասնաթղթական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2021 թ. Khojoyan K., Modern Forms of Combating Terrorism, educational-methodical manual, Yerevan, YSU Publishing House, 2021.
- 1.3 Հակոբյան Լ., «Ահաբեկչության դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորումը» ատենախոսություն, ԵՊՀ, Երևան, 2007 թ. Hakobyan L., International Legal Regulation of Combating Terrorism, dissertation, YSU, Yerevan, 2007.
14. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ. Criminal law of the Republic of Armenia. Special part (sixth edition with amendments and additions), Yerevan State University, Yerevan. YSU Publishing House, 2012
15. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ.

- Criminal law of the Republic of Armenia. General part (sixth edition with amendments and additions), Yerevan State University, Yerevan. YSU Publishing House, 2012
16. Հարությունյան Ա., «Ահաբեկչության դեմ պայքարի քրեաիրավական և կրիմինոլոգիական հիմնախնդիրները» ատենախոսություն, ԵՊՀ, Երևան, 2006 թ.
Harutyunyan A., Criminal-Legal and Criminological Problems of Combating Terrorism, dissertation, YSU, Yerevan, 2006.
 17. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս 2022 թ.
Guide for the Interpretation of Conceptual Approaches and New Institutions in the New Criminal Code of the Republic of Armenia, Council of Europe, July 2022.
 18. Միավորված ազգերի կազմակերպության Գլոբալ հակաահաբեկչական ռազմավարության իրականացման համակարգի գործունեության վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի զեկույց, 2018 թ.
Report of the UN Secretary-General on the Activities of the UN Global Counter-Terrorism Coordination Compact, 2018.
 19. Քրեական իրավունք (ընդհանուր մաս), Երկրորդ լրացված վերահրատարակություն, Մ. Գրիգորյան, Երևան, 2007 թ., էջ 126-131
Criminal Law (General Part), second revised edition, M. Grigoryan, Yerevan, 2007, pp. 126–131.
 20. Беляева М. Г., Анализ субъективной стороны преступления на примере состава преступления, предусмотренного ст. 205 УК РФ «Террористический акт», Современные инновации № 7(21) 2017
 21. Борьба с терроризмом и защита прав человека, Руководство, с. 24-26
 22. Дмитриев А. И., Максимов А. В., Теоретические основы терроризма. Определение экономического ущерба при оценке эффективности общегосударственной системы противодействия терроризму, Вестник Прикамского социального института. 2017. № 1 (76). С. 13–18
 23. Кызродев К. Б., Субъективные признаки состава террористического акта и иных преступлений террористической направленности, Международный научный журнал «Вестник науки» № 11 (68) Том 1. ноябрь, 2023 г.
 24. Мурин Н. В., Разграничение террористического акта со смежными составами преступлений, Выпуск №6 (58), июнь 2021
 25. Шихов А. Л., Характеристика объективных признаков террористического акта
 26. Institute for Economics & Peace, Global Peace Index 2025: Identifying and Measuring the Factors that Drive Peace, Sydney, June 2025
 27. <https://lucygharibian.wordpress.com/2020/10/28/%D5%A1%D5%B0%D5%A1%D5%A2%D5%A5%D5%AF%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/>
 28. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B0%D5%A1%D5%A2%D5%A5%D5%AF%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6>
 29. https://sherloc.unodc.org/cld/uploads/res/document/fin/the-criminal-code-of-finland_html/Criminal_code_of_Finland.pdf, էջ 145
 30. https://chero.rk.gov.ru/uploads/txteditor/chero/attachments//d4/1d/8c/d98f00b204e9800998ecf8427e/phpck1eIN_7.pdf
 31. <https://www.visionofhumanity.org/wp-content/uploads/2025/03/Global-Terrorism-Index-2025.pdf>

Kristine Grigoryan

Assistant to the Prosecutor General of the Republic of Armenia

CRIMINAL LIABILITY FOR TERRORISM¹

Abstract

This article is devoted to the study of the legal framework of criminal liability for terrorism. Terrorism is one of the most dangerous crimes against public security, which is criminalised by the Criminal Code of the Republic of Armenia. This poses a serious threat to all of humanity, infringing public security, the right to life and health, property and other interests protected by law. Accordingly, the article analyses the features of the crime of terrorism.

The theoretical significance of this article lies in the fact that it is a comprehensive study of the crime of terrorism, the results of which can become the theoretical basis for other studies, and the applied significance lies in the fact that the proposals, approaches and conclusions presented in the work can be used to develop legislation, prepare literature, as well as for educational purposes.

The article reviews the concept of terrorism, including taking into account international experience, provides a detailed analysis of the elements of the crime of terrorism, related legal acts, and examines a comparative study of terrorism and other related crimes.

As a result of the study, a number of proposals were made regarding the effectiveness of criminal liability for terrorism, improvement and refinement of legislation.

Keywords: terrorism; criminal liability; elements of a crime; public safety; threat; crimes of a terrorist nature; delimitation:

¹ The article was presented on 16.12.2025 and was reviewed on 01.06.2026.

Кристине Григорян

Помощник Генерального прокурора Республики Армения

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ТЕРРОРИЗМ¹

Абстракт

Данная статья посвящена исследованию института уголовной ответственности за терроризм. Терроризм является одним из самых опасных преступлений против общественной безопасности, ответственность за которое предусмотрена Уголовным кодексом Республики Армения. Он представляет серьезную угрозу для всего человечества, посягая на общественную безопасность, жизнь и здоровье людей, имущество и иные охраняемые законом интересы. В связи с этим в статье анализируются особенности состава преступления терроризма.

Теоретическая значимость работы заключается в комплексном исследовании состава данного преступления, результаты которого могут стать теоретической основой для дальнейших изысканий. Прикладная значимость состоит в том, что представленные в работе предложения, подходы и выводы могут быть использованы при совершенствовании законодательства, подготовке учебной литературы, а также в образовательных целях.

В статье рассматривается понятие терроризма с учетом международной практики, детально анализируются элементы состава преступления и релевантные правовые акты, проводится сравнение терроризма со смежными составами. По результатам исследования сформулирован ряд предложений, касающихся повышения эффективности применения уголовной ответственности и совершенствования законодательства.

Ключевые слова: терроризм; уголовная ответственность; элементы состава преступления; общественная безопасность; угроза; преступления террористического характера; разграничение.

¹ Статья была представлена 16.12.2025 и прошла рецензирование 01.06.2026.

Անահիտ Բաբախանյան

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական

ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՄԱՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ¹

Համառոտագիր

Բանկային գաղտնիքի պաշտպանությունը ժամանակակից իրավական պետության կարևորագույն երաշխիքներից է, քանի որ այն անմիջականորեն առնչվում է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը:

Աշխատանքում ուսումնասիրության առարկա են դարձել բանկային և հարկային գաղտնիքների հասկացությունները, բանկային գաղտնիքի պաշտպանության երաշխիքները և սահմանափակումների մեխանիզմները, բանկային հաշիվների վերաբերյալ հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմնի ձեռքբերման իրավասությունը, բանկային գաղտնիք պարունակող տվյալների ձեռքբերման քրեադատավարական ընթացակարգային առանձնահատկությունները:

Կատարված հետազոտության արդյունքում հեղինակը առաջարկել է հարկային գաղտնիքի տրամադրման համար ևս սահմանել դատավարական սանկցիայի նախատեսման անհրաժեշտություն, արձանագրել են, որ առանց դատավարական սանկցիայի՝ հարկային մարմնին իրավասություն վերապահելը անխոչընդոտ ձեռք բերելու անձի բանկային հաշվի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը, հակասում է անձի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված երաշխիքներին:

Հիմնաբառեր - բանկային գաղտնիք, հարկային գաղտնիք, բանկային հաշվի ամփոփ տեղեկություն, սահմանափակման մեխանիզմներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշներ:

Ներածություն

Սահմանադրության² 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

¹ Հոդվածը ներկայացվել է 19.04.2026 թ., գրախոսվել է 02.06.2026 թ.:

² Տե՛ս Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ամրագրումը միտված է անձի համար և անձի շուրջը այնպիսի շրջանակի (տարածության) երաշխավորմանը, որում նա, զերծ մնալով պետության կամ հանրության կողմից որևէ ուղղորդումից կամ առավել ևս հարկադրանքից, կկարողանա ազատորեն դրսևորել և զարգացնել իր անհատականությունը՝ իր արժանապատվության և՛ ընդհանուր, և՛ հատուկ ազատությունների և իրավունքների՝ պետության, հանրության և այլ մասնավոր անձանց կողմից հարգանքի պայմաններում:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը ներառում է նաև բոլոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են այդ իրավունքը կրողի անձին, նրա անձնական տարածքին և դրանում պաշտպանվող՝ կենսական կամ անձի կողմից կարևորվող այլ շահերին, քանի որ այդպիսի տեղեկությունները թույլ են տալիս ներագդել անձի վարքագծի վրա կամ որևէ այլ կերպ ներգործել նրա անձնական կյանքի գաղտնիության վրա: Որևէ գաղտնիք, որը վերաբերվում է մասնավոր անձին, Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի ուժով արդեն իսկ պաշտպանված է, ուստի՝ այն պետք է լինի նաև օրենսդրորեն պաշտպանված՝ անկախ այն հանգամանքից, թե այդ գաղտնիքը վերաբերում է անձի նեղ անձնային հատկանիշների՞ն, ներքին ինքնորոշման այլ բաղադրիչների՞ն, թե՛ նրա՝ գաղտնիությամբ ապահովված հաղորդակցությանը պետության, հանրության կամ այլ մասնավոր անձանց հետ: Դա վերաբերում է ոչ միայն բանկային գաղտնիքին, այլև այլ գաղտնի տեղեկություններին³:

Գլոբալիզացիայի, թվայնացման և ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման պայմաններում բանկային համակարգերը դարձել են ոչ միայն տնտեսական հարաբերությունների իրականացման միջոց, այլև պետությունների համար կարևոր գործիք՝ ֆինանսական վերահսկողության, փողերի լվացման դեմ պայքարի, կոռուպցիայի բացահայտման և ֆինանսական հանցավորության կանխարգելման ոլորտներում: Այս իրավիճակը ձևավորում է բարդ իրավական հավասարակշռություն՝ մասնավոր կյանքի պաշտպանության և հանրային շահի պաշտպանության միջև, որտեղ բանկային գաղտնիքը այլևս չի կարող դիտարկվել որպես բացարձակ և անսահմանափակ իրավունք: Բանկային տվյալները ներկայումս անձի տնտեսական վարքագծի, գույքային դրության երի առավել ամբողջական արտացոլումներից մեկն են, ինչի հետևանքով դրանց պաշտպանությունը անմիջականորեն կապվում է մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնարար իրավունքի հետ:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում այն հարցը, թե ինչ երաշխիքների պայմաններում և ինչ սահմաններում կարող են պետական մարմինները ստանալ և օգտագործել բանկային տեղեկատվությունը՝ առանց խախտելու մարդու իրավունքների միջազգային չափանիշները: Հենց այդ պատճառով բանկային գաղտնիքի պաշտպանության իրավական ռեժիմի ուսում-

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2020 թ. հունիսի 18-ի թիվ 1546 որոշում:

նասիրությունը դարձել է արդիական ինչպես ներպետական օրենսդրության զարգացման, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ձևավորած չափանիշների համատեքստում:

Հետազոտական մաս

Բանկային գաղտնիքը և նրա պաշտպանությունը ներառում են հետևյալ կողմերը՝ իրավաբանական, կազմակերպական և տեխնիկական: Իրավաբանական կողմը ենթադրում է բուն բանկային գաղտնիքի, նրա սուբյեկտների շրջանակի, պարտականությունների և իրավունքների, բանկային գաղտնիքի պահպանման պահանջների խախտման համար պատասխանատվության սահմանումը⁴:

Բանկային գաղտնիքի վերաբերյալ հարցերը կարգավորվում են 1996 թ. հոկտեմբերի 14-ին ընդունված «Բանկային գաղտնիքի մասին» օրենքով⁵: Նշված օրենքը սահմանում է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, այդ տեղեկությունների հրապարակման, պահպանման և տրամադրման իրական հիմքերը և կարգը, բանկային գաղտնիքի շուրջ ծագող հարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվությունը վերը նշված օրենքի պահանջների խախտման համար:

Ավելին, կարևոր է արձանագրել, որ բանկային գաղտնիքի պաշտպանությունն ամրագրող երաշխիքներ սահմանված են նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով⁶ (այսուհետ նաև՝ Կոնվենցիա), որի 81-րդ հոդվածով: Ընդ որում, կարևոր է նշել, որ ներկայացված եզրահանգումն այն մասին, որ Կոնվենցիայի սույն հոդվածով սահմանված երաշխիքները ուղղված են բանկային գաղտնիքի պաշտպանությանը, հիմնավորվում է ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թ. սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշմամբ, որի համաձայն՝ ««Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում մեկնաբանելով «անձնական կյանք» եզրույթը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ այն լայն հասկացություն է և ենթակա չէ սպառիչ սահմանման: Եվրոպական դատարանը գտել է, որ անձնական կյանքի ոլորտն ընդգրկում է մարդու առողջությունը, ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը: Անձնական կյանքի իրավունքը ներառում է նաև անհատական զարգացումը, այլոց և ընդհանրապես արտաքին աշխարհի հետ հարաբերություններ հաստատելը և զարգացնելը⁷:

⁴ Տե՛ս Ս. Մուրադյան, Բանկային գաղտնիքի իրավական կարգավորման հիմնախնդիրները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու 2019 թ. էջ 27

⁵ Տե՛ս Բանկային գաղտնիքի մասին օրենք, ՀՀԱԺՏ 1996/19(1119) 15 հոկտեմբեր, հոդ. 230, Ընդունման ամսաթիվ՝ 07.10.1996 թ., Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 25.10.1996 թ.:

⁶ Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա, ՀՀԱԳՆԴՏ 2004.12.20/5(13), Ընդունման ամսաթիվ՝ 04.11.1950 թ.:

⁷ Տե՛ս Nada v Switzerland App no 10593/08 (12 September 2012) para 151.

«Բանկային գաղտնիքի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի և դրա վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սպասարկման կամ այլ գործառնությունների կապակցությամբ բանկի և անձի միջև հաստատված հարաբերությունները՝ որպես արտաքին աշխարհի հետ անձի հարաբերությունների տարատեսակ, հանդիսանում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ *մարդու անձնական կյանքի մաս*: Հետևաբար, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները՝ որպես մարդու անձնական կյանքի մաս, անձեռնմխելի են և դրանց ստացման վրա տարածվում են ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված սահմանափակումները»:

Այս համատեքստում անդրադառնանք բանկային գաղտնիքի հասկացությանը: Այսպես, Բանկային գաղտնիքի մասին օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական դիզայնի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

Ներկայացված կարգավորման կապակցությամբ կարևոր է նշել, որ հիշյալ դրույթում օրենսդիրն իրավացիորեն ընտրել է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների թվարկման գույակցումը մասնավոր անձի կողմից ցանկացած այլ տեղեկությունը գաղտնի պահելու մտադրության հետ, որի մասին բանկը տեղյակ էր կամ կարող էր տեղյակ լինել: Հետևապես, ակնհայտ է, որ այդ օրենքում բանկի և իր հաճախորդի միջև հաղորդակցության շրջանակներում գաղտնիության ռեժիմով պաշտպանվում է հաճախորդին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը գաղտնի պահելու մտադրություն ունի հաճախորդը, և որի այդ մտադրությունն ուղղակիորեն կամ անուղղակի հասու է բանկին:

Հիշյալ օրենքի այս ձևակերպումները վկայում են այն մասին, որ բանկային գաղտնիքը ներառում է որևէ բանկի հետ հաղորդակցվող մասնավոր անձին վե-

րաբերող ցանկացած տեղեկություն, որն այդ անձը վստահում է բանկին, և որն ինքն է անհրաժեշտ համարում գաղտնի պահել՝ անկախ բանկի գնահատականից, իսկ այդ մտադրության մասին բանկի ողջամիտ տեղեկացվածությունը բավարար է պետության կողմից դրա անձեռնմխելիության ապահովման և պաշտպանության համար:

Նշալի կապակցությամբ հատկանշական է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան կամ ՄԻԵԴ) դիրքորոշումը, որի համաձայն՝ «բանկային փաստաթղթերից վերցված տեղեկատվությունն անկասկած հանդիսանում է անհատին վերաբերող անձնական տվյալներ՝ անկախ նրանից՝ դրանք զգայուն տեղեկատվություն են, թե ոչ: Ավելին, նման տեղեկատվությունը կարող է վերաբերել նաև մասնագիտական գործարքներին, և չկա սկզբունքային պատճառ՝ արդարացնելու մասնագիտական կամ գործարար բնույթի գործունեության բացառումը «անձնական կյանք» հասկացությունից»⁸:

ՄԻԵԴ-ը նաև արձանագրել է, որ «մասնավոր կյանքի իրավունքին միջամտելու ձևերը կարող են ներառել պետական մարմիններին վերագրվող այնպիսի գործողություններ, ինչպիսիք են իշխանությունների կողմից բանկային տվյալներ պարունակող փաստաթղթերի պատճենումը և հետագա պահպանումը»⁹:

Ավելին, Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը ներառում է նաև բանկային գաղտնիքը: Ընդամին՝ բանկային գաղտնիքը պաշտպանվում է պետության կողմից, ի դեմս մասնավորի, Կենտրոնական բանկի՝ իր հաճախորդ բանկերի կողմից տրամադրված տեղեկությունների մասով, և հենց այդ բանկերի կողմից¹⁰: Հետևապես, կարելի է եզրակացնել, որ բանկային գաղտնիք պարունակող ցանկացած տեղեկատվություն ինքնին դիտարկվում է որպես տվյալ անհատին վերաբերող անձնական տվյալ և գտնվում է Կոնվենցիայի պաշտպանության ներքո:

Ընդգծելով բանկային գաղտնիքի պաշտպանության երաշխիքները՝ կարևոր է անդրադառնալ բանկային գաղտնիքի պաշտպանվածության երաշխիքների սահմանափակմանը:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով: Սահմանափակման հիմքերի թվին են դասվում նաև հանցագործությունների կանխումը և բացահայտումը: Հետևապես՝ այդ նպատակներով օրենսդիրը սահմանափակել է նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքից ածանցվող՝ բանկային գաղտնիք կազմող և այլ գաղտնի տեղեկությունների անձեռնմխելիությունը:

Բանկային գաղտնիքի մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

⁸ St' u Amann v Switzerland [GC] App no 27798/95, para 65 (European Court of Human Rights, 2000) Reports of Judgments and Decisions 2000-II.

⁹ St' u M. N. And Others v. San Marino, 07.07.2015, app. no. 28005/12, § 51, 55

¹⁰ St' u Սահմանադրական դատարանի 2020 թ. հունիսի 18-ի թիվ 1546 որոշում:

բանկերը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝ սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան:

Վերոգրյալից բխում է, որ ՀՀ բանկերը երաշխավորում են իրենց հաճախորդների և թղթակցող բանկերի ավանդների, հաշիվների և գործառնությունների գաղտնիությունը, և բանկային գաղտնիքը սույն մարմիններին որևէ կերպ հայտնի դարձնելը առանց դատարանի սանկցիայի առաջացնում է ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված պատասխանատվություն: Այդ իսկ պատճառով քրեական հետապնդման մարմիններին բանկային գաղտնիքը տրամադրելու համար օրենքը իմպերատիվ կերպով պարտադիր է դիտարկել դատարանի սանկցիայի առկայությունը:

Անդրադառնանք բանկային գաղտնիքի կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի¹¹ (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) կարգավորումներին:

Օրենսգրքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարույթի ընթացքում անձին վերաբերող և բժշկական (բացառությամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ այն ստանալու մասին տվյալի), նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող տեղեկությունները կարող են հավաքվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 57-րդ կետի համաձայն՝ բանկային կամ հարակից գաղտնիք է դիտարկվում օրենքով սահմանված իմաստով՝ բանկային գաղտնիքը, ապահովագրական գաղտնիքը, արժեթղթերի շուկայի ոլորտի ծառայողական գաղտնիքը, կենսաթոշակային գաղտնիքը, ինչպես նաև վարկային տեղեկատվությունը և վարկային պատմությունը:

Վերոգրյալից ակնհայտ է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, բացի բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվությունից, բացառապես դատավարական սանկցիայի առկայությամբ է պայմանավորել նաև հարակից գաղտնիքի տրամադրման գործընթացը:

Այս համատեքստում հատկանշական է, որ մասնագիտական գրականությամբ քննարկման առարկա է դարձել նաև հարկային գաղտնիքի տրամադրման համար դատավարական սանկցիայի նախատեսման հարցը¹²:

Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 63-րդ կետի համաձայն՝ հարկային գաղտնիք է համարվում հարկ վճարողի, հարկ վճարողի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝

¹¹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Միասնական կայք 2021.07.26-2021.08.08, Պաշտոնական հրապարակման օրը՝ 28.07.2021 թ., Ընդունման ամսաթիվ՝ 30.06.2021 թ.

¹² Տե՛ս М. А. Ефремова, Уголовно-правовая охрана сведений, составляющих коммерческую, банковскую и налоговую тайны, УДК 343.45 DOI: 10.17072/1995-4190-2015-1-124-132.

ա. հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,

բ. հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,
(...)

Վերոգրյալ կարգավորումից բխում է, որ հարկային գաղտնիքը ևս ենթադրում է այնպիսի չհրապարակված տվյալների առկայություն, որոնք պաշտպանված լինելու երաշխիքներ պետք է ունենան, հակառակ պարագայում դրանք ուղղակիորեն հրապարակված կլինեին հարկ վճարողի կողմից:

Ընդ որում, կարևոր է նշել, որ հարկային գաղտնիք պարունակող տեղեկատվության պաշտպանվածության երաշխիքները ամրագրված են ներպետական օրենսդրությամբ: Մասնավորապես, ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմինը պարտավոր է պահպանել հարկային գաղտնիքը, հարկային գաղտնիք համարվող տեղեկատվությունը օրենքով սահմանված դեպքերում ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին:

Կառավարության 2002 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1584-Ն որոշմամբ կարգավորվում են հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին Պետական եկամուտների կոմիտեի կողմից հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրման հարաբերությունները: Մասնավորապես, սույն որոշման Հավելվածի 7-րդ կետով սահմանվում է, որ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն քրեական վարույթ իրականացնող մարմիններին տեղեկություն տրամադրում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հիման վրա:

Մինչդեռ, կարևոր է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կարգավորումներ չի նախատեսում հարկային գաղտնիք պարունակող տեղեկությունների տրամադրման կապակցությամբ: Այսինքն՝ սույն դեպքում առկա է որոշակի անհամապատասխանություն քննարկվող հարաբերությունների կապակցությամբ, այն պայմաններում, երբ Կառավարության սույն որոշմամբ հարկային գաղտնիքի տրամադրման հարաբերությունների համատեքստում հղում է տրվում քրեական դատավարության օրենսգրքին:

Ավելին, հարկային գաղտնիքի պաշտպանվածության երաշխիքները ամրագրված են նաև ՀՀ քրեական օրենսգրքով¹³, որի 278-279-րդ հոդվածները քրեական պատասխանատվություն են նախատեսում ոչ միայն բանկային գաղտնիքի, այլև հարկային գաղտնիքի ապօրինի օգտագործման և հրապարակման համար:

Այս կապակցությամբ հատկանշական են Եվրոպական դատարանի դիրքո-

¹³ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ.:

րոշումները: Մասնավորապես, «Funke v. France» գործով ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ «մաքսային մարմինները ապահովել են պարոն Ֆունկեի դատապարտումը՝ որոշակի փաստաթղթեր ձեռք բերելու նպատակով, որոնք, նրանց կարծիքով, պետք է գոյություն ունենային, թեև դրանում համոզված չէին: Չկարողանալով կամ չցանկանալով դրանք ձեռք բերել այլ միջոցներով՝ նրանք փորձել են հարկադրել հենց դիմումատուին ապացույցներ տրամադրել իր կողմից ենթադրաբար կատարված հանցագործությունների վերաբերյալ: Մաքսային օրենսդրության առանձնահատկությունները (տե՛ս վերևում՝ 30-31-րդ պարբերությունները) չեն կարող արդարացնել 6-րդ հոդվածի (հոդ. 6) ինքնավար իմաստով «քրեական հանցագործության մեջ մեղադրվող» ցանկացած անձի՝ լռելու և իրեն մեղադրելուն չնպաստելու իրավունքի նման խախտումը (44-րդ կետ)»:

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ «դատական հրամանի պահանջի բացակայության պայմաններում օրենքով նախատեսված սահմանափակումները և պայմանները, որոնք ընդգծվել են Կառավարության կողմից (տե՛ս 54-րդ պարբերությունը), թվում են չափազանց թույլ և լի բացթողումներով, որպեսզի դիմումատուի իրավունքներին միջամտությունները լինեին խստորեն համաչափ հետապնդվող օրինական նպատակին (57-րդ կետ)»:

Անդրադառնալով կատարված գործողությունների օրինական լինելու չափանիշին՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ «Կառավարությունը և Հանձնաժողովը գտնում էին, որ քննարկվող միջամտությունները բխում էին «երկրի տնտեսական բարեկեցության» և «հանցագործությունների կանխման» շահերից: Չնայած դիմումատուի հակառակ փաստարկներին՝ Դատարանը գտնում է, որ միջամտությունները հետապնդում էին առնվազն առաջին օրինական նպատակը:

«Անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» չափանիշի կապակցությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դրանց շրջանակն անսահմանափակ էր և դուրս էին գալիս հանրային շահի համար անհրաժեշտ սահմաններից, քանի որ չէին ենթարկվում դատական վերահսկողության. ավելին, դրանք ոչ միայն տեղի էին ունեցել հանցանքի բացակայության հանգամանքային ապացույցների կամ ենթադրության բացակայության պայմաններում, այլև իրականացվել էին ոչ պատշաճ կերպով»:

Ամբողջացնելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ հարկադիր կերպով հարկային բնույթի փաստաթղթեր ներկայացնելը՝ առանց բավարար դատական երաշխիքների, կարող է խախտել մարդու իրավունքները՝ հատկապես կապված արդար դատաքննության և լռելու իրավունքի դրսևորման հետ: Այսինքն՝ սույն որոշմամբ արժարժվում էր նաև հարկային գաղտնիք պարունակող տվյալների պաշտպանության հարցը՝ արձանագրելով, որ մաքսային մարմնի կողմից անձից հարկային փաստաթղթեր պահանջելու համար դատարանի վերահսկողության ոչ պարտադիր լինելը թույլ հանգամանք է, որպեսզի դիմումատուի իրավունքներին միջամտությունները լինեին խստորեն համաչափ հետապնդվող օրինական նպատակին:

Հետևաբար, վերոգրյալի համատեքստում հարկային գաղտնիքի տրամադրման կապակցությամբ դատավարական սանկցիա չնախատեսելը անտրամաբանական է, այն պայմաններում, երբ.

- հարկային գաղտնիքը պարունակում է հարկ վճարողի վերաբերյալ անձնական տվյալներ, որոնք վերջինիս կողմից հրապարկված չեն,
- հարկային մարմնի վրա դրված է պարտականություն՝ պահպանելու հարկային գաղտնիքը, և այն օրենքով սահմանված դեպքերում ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին, այդ թվում՝ քրեական հետապնդման մարմիններին,
- Կառավարության 2002 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1584-Ն որոշմամբ¹⁴ սահմանված է, որ հարկային գաղտնիքի տրամադրումն իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, այն պարագայում, երբ այդպիսի կարգավորում նախատեսված չէ:

Վերոշարադրյալի հաշվառմամբ կարևորում ենք հարկային գաղտնիքի տրամադրման համար դատավարական սանկցիայի նախատեսման անհրաժեշտությունը:

Կարևոր է քննարկման առարկա դարձնել նաև այն հիմնահարցը, թե արդյո՞ք արդարացված է հարկային մարմնին իրավասություն վերապահելը որոշ դեպքերում անձի բանկային հաշվի վերաբերյալ տվյալներ ձեռք բերել առանց դատարանի որոշման:

Այսպես, «Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թ. փետրվարի 28-ին ընդունված օրենքով հարկային մարմնին հասանելի դարձվեց բանկային գաղտնիք կազմող որոշակի տեղեկություններ, որոնք զգալի բնույթ չեն կրում՝ ըստ օրենքի նախագծի տրամաբանության:

Մասնավորապես, ՀՀ հարկային օրենսգրքի¹⁵ 350.1 հոդվածով նախատեսվեց կարգավորում, որով բացառապես դատարանի որոշման առկայությամբ է պայմանավորվում բանկային հաշվի քաղվածքի ձեռքբերումը, այն պարագայում, երբ սահմանված ժամկետում անձը այդ քաղվածքը չի տրամադրում: Մինչդեռ, հարկ վճարողի յուրաքանչյուր բանկային հաշվի ամփոփ տեղեկություն հարկային մարմինը ձեռք է բերում առանց որևէ խոչընդոտի: Այսինքն՝ սույն տեղեկատվության ձեռք բերման համար չի պահանջվում դատարանի որոշումը կամ տվյալ անձի համաձայնությունը:

Այս կապակցությամբ հատկանշական է, որ «բանկային հաշվի ամփոփ տեղեկությունը» նույնպես բանկային գաղտնիք կազմող տեղեկություն է: Թեկուզև

¹⁴ Տե՛ս Կառավարության 2002 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1584-Ն որոշում, ՀՀԳՏ 2002.10.30/46(221) Հոդ. 1069, Ընդունման ամսաթիվ՝ 03.10.2002 թ.:

¹⁵ Տե՛ս ՀՀ հարկային օրենսգրքը, ՀՀԳՏ 2016.11.04/79(1259) Հոդ. 1038, Ընդունման ամսաթիվ՝ 04.10.2016 թ.:

ծավալները տարբերվում են քաղվածքից՝ այստեղ հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվի վրա առկա մնացորդն է, մուտք և ելք եղած գումարների համագումարը, այնուամենայնիվ, այս տեղեկությունները նույնպես շարունակում են ունենալ բանկային գաղտնիքի կարգավիճակ¹⁶:

Թերևս, այս հարցի կապակցությամբ կարծիքները տարբեր են¹⁷: Սակայն, կարևոր է ընդգծել, որ Հարկային օրենսգիրքը, ամրագրելով բանկային գաղտնիքի հասկացությունը, չի սահմանում, որ այդպիսին է դիտարկվում միայն բանկային հաշվի քաղվածքը, որից ուղղակիորեն բխում է, որ անձի բանկային հաշվի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, թեկուզև ոչ զգալի, կարող է դիտարկվել բանկային գաղտնիքի սահմանների ներքո: Հետևաբար, բանկային հաշվի մնացորդը ևս բանկային գաղտնիք է, և այսպիսի տեղեկատվության ձեռքբերումը անխոչընդոտ դարձնելն ինքնին խնդիր է, որովհետև ստացվում է, որ նույն կարգավիճակն ունեցող տեղեկատվության ձեռքբերման համար օրենսդիրը սահմանել է երկու տարբեր գործիքակազմ, այն պայմաններում, երբ բանկային հաշվի քաղվածքում և հաշվի ամփոփ տեղեկատվությամբ ներկայացվող տվյալները նույն կարգավիճակն ունեն և համարվում են բանկային գաղտնիք պարունակող:

Ավելին, անդրադառնալով այն հանգամանքին, որ նման տարբերակումը պայմանավորված է նրանով, որ առանց դատարանի որոշման կամ անձի համաձայնությամբ ձեռքբերվող տվյալները զգալի բնույթ չունեն, կարևոր է ևս մեկ անգամ շեշտադրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը, որի համաձայն՝ «բանկային փաստաթղթերից վերցված տեղեկատվությունն անկասկած հանդիսանում է անհատին վերաբերող անձնական տվյալներ՝ անկախ նրանից, դրանք զգայուն տեղեկատվություն են, թե ոչ: Ավելին, նման տեղեկատվությունը կարող է վերաբերել նաև մասնագիտական գործարքներին, և չկա սկզբունքային պատճառ՝ արդարացնելու մասնագիտական կամ գործարար բնույթի գործունեության բացառումը «անձնական կյանք» հասկացությունից (տե՛ս Ամանն ընդդեմ Շվեյցարիայի [ՄԴ], թիվ 27798/95, § 65, ՄԻԵԴ 2000 II)»:

Ստացվում է, որ բանկային փաստաթղթից վերցված ցանկացած տեղեկատվություն, անկախ դրա ոչ զգայուն լինելու հանգամանքից, հանդիսանում է անհատին վերաբերող անձնական տվյալ և գտնվում է Կոնվենցիայի պաշտպանության ներքո:

Միաժամանակ, կարևոր է նշել, որ անձի մասնավոր տարածության անձեռնմխելիությունը՝ այլ հիմնական իրավունքների և ազատությունների համակցության մեջ, հնարավորություն է տալիս ապահովելու թե՛ մարդու անհատական

¹⁶ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.azatutyun.am/a/haytaragrmamb-chi-khakhtvum-bankayin-gaghtniqy-pordzageti-ev-pek-nakhagahi-kartsiqnery-tarbervum-en/33307854.html>: Վերջին մուտք՝ 08.04.2026 թ.

¹⁷ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.azatutyun.am/a/haytaragrmamb-chi-khakhtvum-bankayin-gaghtniqy-pordzageti-ev-pek-nakhagahi-kartsiqnery-tarbervum-en/33307854.html>: Վերջին մուտք՝ 08.04.2026 թ.

ներքին ինքնորոշումը՝ իր կենսական շահերին համապատասխան, թե՛ այլ մասնավոր անձանց հետ նրա մասնավոր-կենսական կապերի գաղտնիությունը՝ պետությունից, հասարակությունից և երրորդ անձանցից, և այդ իմաստով է Սահմանադրությունը երաշխավորում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը:

Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մասնավոր կյանքը մեկնաբանում է նաև որպես անձի՝ անցանկալի ուշադրությունից զերծ ապրելու իրավունք¹⁸:

Ինչպես արդեն իսկ նշվեց, մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի մասնավոր դրսևորումներ են բնակարանի անձեռնմխելիությունը, հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանությունը, որոնք Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրության մակարդակով կառուցակարգվել են որպես առանձին հիմնական իրավունք կամ ազատություն (համապատասխանաբար՝ Սահմանադրության 32-34-րդ հոդվածներ):

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի պաշտպանությունը ներառում է ոչ միայն պետության կողմից մասնավոր կյանքին միջամտելուց ձեռնպահ մնալը, այլև պետության պոզիտիվ պարտականությունը՝ անհրաժեշտ և արդյունավետ օրենսդրական և իրավակիրառ միջոցներով երաշխավորելու և ապահովելու այն: Հետևապես, պետությունը, նախ՝ ինքը չպետք է միջամտի այս հիմնական իրավունքին, բացառությամբ՝ Սահմանադրությամբ թույլատրված դեպքերի, ինչպես նաև պարտավոր է սահմանել ոչ միայն իր, այլև երրորդ անձանց կողմից այս հիմնական իրավունքի խախտումների դեպքում դրանցից արդյունավետ պաշտպանվելու համար անհրաժեշտ ընթացակարգեր և կառուցակարգեր, և, վերջապես, պարտավոր է նաև գործնականում ապահովել այս հիմնական իրավունքի պաշտպանությունը երրորդ անձանցից:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը ներառում է նաև բոլոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են այդ իրավունքը կրողի անձին, նրա անձնական տարածքին և դրանում պաշտպանվող՝ կենսական կամ անձի կողմից կարևորվող այլ շահերին: Որևէ գաղտնիք, որը վերաբերում է մասնավոր անձին, Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի ուժով արդեն իսկ պաշտպանված է, ուստի՝ այն պետք լինի նաև օրենսդրորեն պաշտպանված՝ անկախ այն հանգամանքից, թե այդ գաղտնիքը վերաբերում է անձի նեղ անձնային հատկանիշների՞ն, ներքին ինքնորոշման այլ բաղադրիչների՞ն, թե՛ նրա՝ գաղտնիությամբ ապահովված հաղորդակցությանը պետության, հանրության կամ այլ մասնավոր անձանց հետ:

Հետևաբար, ողջ վերոշարադրյալի հաշվառմամբ՝ կարելի է արձանագրել, որ

¹⁸ St' u Smirnova v Russia App nos 46133/99 and 48183/99 (European Court of Human Rights, 24 July 2003) para 95.

հարկային մարմնին նման իրավասություն վերապահելը ուղղակիորեն հակասում է բանկային գաղտնիքի պաշտպանությանն ուղղված օրենսդրությամբ ամրագրված երաշխիքներին և խախտում պետության պարտականությունը՝ ձեռնպահ մնալու անձի մասնավոր կյանքին միջամտելուց: Ավելին, սույն կարգավորումը հակասում է նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին և ՄԻԵԴ դիրքորոշումներին, հետևյալ պատճառաբանությամբ.

1. Այսպես, «M. N. and Others v. San Marino»¹⁹ գործով ՄԻԵԴ-ը ևս մեկ անգամ արձանագրեց, որ բանկային փաստաթղթերից վերցված տեղեկատվությունն անկասկած հանդիսանում է անհատին վերաբերող անձնական տվյալներ՝ անկախ նրանից, դրանք զգայուն տեղեկատվություն են, թե ոչ: Ավելին, նման տեղեկատվությունը կարող է վերաբերել նաև մասնագիտական գործարքներին, և չկա սկզբունքային պատճառ՝ արդարացնելու մասնագիտական կամ գործարար բնույթի գործունեության բացառումը «անձնական կյանք» հասկացությունից (տե՛ս Ամանն ընդդեմ Շվեյցարիայի [ՄԴ], թիվ 27798/95, § 65, ՄԻԵԴ 2000 II):

Դատարանը նշում է, որ 8-րդ հոդվածի կիրառելիությունը «անձնական կյանք» հասկացության ներքո մասնագիտական փաստաթղթերի և անձնական տվյալների առգրավման դեպքերում շարունակում է վերահաստատվել²⁰: Անհատի «անձնական կյանքին» վերաբերող տվյալների պահպանումը 8-րդ հոդվածի նպատակներով միջամտություն է՝ անկախ նրանից, թե ով է այն միջոցի սեփականատերը, որի վրա պահվում է տեղեկատվությունը²¹: Մասնավորապես, անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության պահպանումը և տարածումը՝ զուգակցված այն հերքելու հնարավորություն չտրամադրելու հետ, 8-րդ հոդվածի ներքո միջամտություն է²²:

Դատարանը արձանագրել է նաև, որ այն փաստը, որ Սան Մարինոյի օրենսդրության համաձայն, «առգրավում» տերմինը կարող է վերաբերել տվյալների պարզ պատճենահանմանը, չի փոխում այս եզրակացությունը: Անվիճելի է, որ պատճենահանումը տվյալներ ձեռք բերելու և, հետևաբար, առգրավելու միջոց է՝ անկախ այն փաստից, որ բնօրինակ կրիչը կարող էր մնալ տեղում: Ավելին, սույն գործում պատճենահանումն առաջացրել է իշխանությունների կողմից խնդրո առարկա տվյալների անհապաղ և անկախ պահպանում:

Եզրակացնելով՝ սույն գործում բանկային տվյալների (ստացված բանկային քաղվածքներից, չեկերից, ֆիդուցիար կարգադրություններից և էլեկտրոնային նամակներից) պատճենման իմաստով առգրավումը, որը Դատարանը համարում է թե՛ «անձնական կյանքի», թե՛ «նամակագրության» հասկացությունների ներքո

¹⁹ St' u M. N. and Others v San Marino App no 28005/12 (European Court of Human Rights, 7 July 2015).

²⁰ St' u Niemietz v Germany (16 December 1992) Series A no 251-B.

Crémieux v France App no 11471/85 (25 February 1993).

Grooten v Netherlands (dec) App no 40045/98 (19 March 2002).

Bernh Larsen Holding AS and Others v Norway App no 24117/08 (14 March 2013).

²¹ St' u, mutatis mutandis, Lambert v France (24 August 1998) para 21, Reports of Judgments and Decisions 1998-V; and Valentino Acatrinei v Romania App no 18540/04, para 53 (25 June 2013).

²² St' u Leander v Sweden (26 March 1987) para 48, Series A no 116; see also I v Finland.

ընկնող, և այդպիսի տվյալների հետագա պահպանումն իշխանությունների կողմից, 8-րդ հոդվածի նպատակներով միջամտություն է:

Միևնույն ժամանակ, Դատարանը սահմանեց, որ միջամտությունը խախտում է 8-րդ հոդվածը, եթե այն «օրինական չէ», չի հետապնդում 2-րդ կետում նշված օրինական նպատակներից գոնե մեկը և, բացի այդ, «անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակության համար»՝ այդ նպատակներին հասնելու համար (տե՛ս Ամանն, նշված վերևում, § 71):

Դատարանը ուշադրություն է հրավիրում իր հաստատած իրավական պրակտիկային, համաձայն որի՝ «օրենքին համապատասխան» արտահայտությունը նշանակում է ոչ միայն, որ վիճարկվող միջոցը պետք է ունենա ներքին օրենսդրության հիմք, այլ նաև վերաբերում է տվյալ օրենքի որակին՝ պահանջելով, որ այն հասանելի լինի տվյալ անձի համար և կանխատեսելի իր հետևանքներով (տե՛ս Ամանն, նշված վերևում, § 50):

Դատարանը շարունակաբար պնդել է, որ Պայմանավորվող պետություններն ունեն որոշակի հայեցողություն միջամտության անհրաժեշտության գնահատման հարցում, սակայն այն ուղեկցվում է վերահսկողությամբ: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսված բացառությունները պետք է սերտ կերպով մեկնաբանվեն, և դրանց անհրաժեշտությունը կոնկրետ դեպքում պետք է հիմնավոր կերպով ապացուցված լինի (տե՛ս Crémieux, նշված վերևում, § 38 և Xavier Da Silveira, նշված վերևում, § 34): Բացի այդ, միջամտության անհրաժեշտությունը գնահատելիս, Դատարանը պետք է վստահ լինի, որ առկա էին բավարար և համապատասխան երաշխիքներ՝ կամայականությունից զերծ մնալու համար (նույն տեղում, և Matheron ընդդեմ Ֆրանսիայի, no. 57752/00, § 35, 29 մարտի, 2005), ներառյալ միջոցի նկատմամբ արդյունավետ վերահսկողության հնարավորություն (տե՛ս mutatis mutandis, Lambert, նշված վերևում, § 34, Xavier Da Silveira, նշված վերևում, § 43 և Klass և ուրիշներ ընդդեմ Գերմանիայի, 6 սեպտեմբերի, 1978, §§ 50, 54 և 55, Series A no. 28):

Ավելին, «K. S. and M. S. v. Germany» (2022) գործով ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ համաձայն Դատարանի կայուն նախադեպային իրավունքի՝ «անհրաժեշտության» հասկացությունը ենթադրում է, որ միջամտությունը համապատասխանում է հրատապ սոցիալական կարիքի և, մասնավորապես, համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակին: Որոշելով, թե արդյոք միջամտությունը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»՝ Դատարանը հաշվի կառնի, որ Պայմանավորվող պետություններին թողնված է հայեցողության շրջանակ²³: Այնուամենայնիվ, 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված բացառությունները պետք է մեկնաբանվեն սահմանափակ, և տվյալ գործում դրանց անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատված լինի (տե՛ս Mastepan v. Russia, թիվ 3708/03, § 40, 2010 թ. հունվարի 14, հետագա հղումներով, Smirnov v. Russia, թիվ 71362/01,

²³ Տե՛ս Keegan v. the United Kingdom, թիվ 28867/03, § 31, ECHR 2006-X:

§ 43, 2007 թ. հունիսի 7, և *Miaillhe v. France* (թիվ 1), 1993 թ. փետրվարի 25, § 36, Series A թիվ 256-C):

Ինչ վերաբերում է վերջին կետին, Դատարանը նախ պետք է ապահովի, որ համապատասխան օրենսդրությունը և պրակտիկան անհատներին տրամադրեն համարժեք և արդյունավետ երաշխիքներ չարաշահումների դեմ²⁴: Երկրորդ՝ Դատարանը պետք է դիտարկի յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքները՝ որոշելու համար, թե արդյո՞ք տվյալ գործով քննարկվող միջամտությունը համաչափ էր հետապնդվող նպատակին: Չափանիշները, որոնք Դատարանը հաշվի է առել այս վերջին հարցը որոշելիս, այլոց թվում են՝ այն հանցագործության ծանրությունը, որի հետ կապված խուզարկությունն ու առգրավումը իրականացվել են, կարգադրությունը տալու եղանակն ու հանգամանքները, մասնավորապես, թե արդյո՞ք այդ պահին առկա էին լրացուցիչ ապացույցներ, կարգադրության բովանդակությունն ու շրջանակը՝ հատուկ ուշադրություն դարձնելով խուզարկվող տարածքների բնույթին և միջոցառման ազդեցությունը ողջամիտ սահմաններում պահելու համար ներդրված երաշխիքներին, և խուզարկության ազդեցության ենթարկված անձի համբավի վրա հնարավոր հետևանքների ծավալը²⁵:

Այսպիսով, ՄԻԵԴ-ի սույն գործերով արտահայտած դիրքորոշումներից բխում է, որ բանկային գաղտնիքի միջամտությանն ուղղված գործողությունները պետք է ունենան օրենսդրորեն հստակ կանոնակարգում, հասկանալի և կանխատեսելի լինեն, անհրաժեշտ ժողովրդավարական հասարակության համար և պետք է ապահովված լինեն՝

- արդար դատաբնության իրավունքները (հիմնվելով նաև 6-րդ հոդվածի վրա),
- հասանելի իրավական միջոցներ՝ տվյալների օգտագործման դեմ բողոքարկելու համար,
- անկախ և օբյեկտիվ վերահսկողության գործիքակազմեր:

Վերոգրյալի հաշվառմամբ կարևոր է արձանագրել, որ բանկային հաշվի ամփոփ տեղեկության ձեռքբերման հարաբերությունները պետք է դիտարկել վերը ներկայացված չափանիշների համատեքստում, այսինքն՝ այն պետք է լինի օրենքին համապատասխան, հետապնդի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված նպատակները և լինի անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

Օրենքի համապատասխանության կապակցությամբ կարևոր է արձանագրել, որ այն ունի երկու կոմպոնենտ, մասնավորապես՝

- վիճարկվող միջոցը պետք է ունենա ներքին օրենսդրության հիմք, որը սույն դեպքում առկա է,

²⁴ *Stéu Société Colas Est and Others v. France*, թիվ 37971/97, § 48, ECHR 2002-III, և *Funke v. France*, 1993 թ. փետրվարի 25, § 56, Series A թիվ 256-A:

²⁵ *Stéu Buck v. Germany*, թիվ 41604/98, § 45, ECHR 2005-IV:

- օրենքի որակին ներկայացվող պահանջներ. այն պետք է հասանելի լինի տվյալ անձի համար և կանխատեսելի իր հետևանքներով:

Սույն դեպքում օրենքի որակին ներկայացվող պահանջի կապակցությամբ առկա է անորոշություն, մասնավորապես այն կապակցությամբ, որ կարգավորումից պարզ չէ նման տեղեկության ձեռքբերման անհրաժեշտության դեպքերը, որից էլ ինքնաբերաբար կախված է այդպիսի տեղեկության ձեռքբերումից հետո առաջացող հետևանքների կանխատեսելիության բացակայությունը:

Այսինքն՝ սույն դեպքում օրենսդրի կողմից չմատնանշելը այդպիսի գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը և վրա հասնող հետևանքները, խախտում է օրենքի համապատասխանության չափանիշի երկրորդ կոմպոնենտը:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված նպատակները հետապնդելու առումով կարևոր է նշել, որ այն թողնված է յուրաքանչյուր պետության հայեցողությանը: Բայց այս համատեքստում քննարկման ենթակա է այն հիմնահարցը, թե արդյո՞ք արդարացված է այդպիսի տվյալների ձեռքբերման՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված նպատակներին հետապնդելու հանգամանքը գնահատելու լիազորությունը վերապահել հարկային մարմնին:

Նման մոտեցումը կարող է կամայականության ռիսկեր առաջացնել այն կապակցությամբ, որ հարկային մարմնի կողմից այդպիսի տվյալների ձեռքբերումն արդեն իսկ կանխակալ վերաբերմունք է ձևավորում վերջիններիս կողմից ձեռնարկված գործողությունների իրավաչափության վերաբերյալ և Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ նպատակներին հետապնդելու հանգամանքի գնահատումը վերջիններիս կողմից մեկնաբանվելու է ի շահ իրենց կողմից կատարված գործողության իրավաչափության:

Բացի այդ, կարևոր է ընդգծել, որ օրենսդիրը քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից բանկային գաղտնիք պարունակող տվյալների ձեռքբերման գնահատման իրավազորությունը վերապահել է բացառապես դատարանին, մինչդեռ նույն կարգավիճակ ունեցող տվյալները՝ բանկային հաշվի ամփոփ տեղեկատվությունը, հարկային մարմնի կողմից ձեռք բերվելու դեպքում դրա համապատասխանությունը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված նպատակներին որոշվում է հարկային մարմնի կողմից: Նշյալն անտրամաբանական մոտեցում է, քանի որ օրենսդիրը կշեռքի երկու նժարին է դրել մի դեպքում՝ քրեական հանցագործությունների, մյուս դեպքում՝ հարկային իրավախախտումների բացահայտումը և առավել պարզեցված ընթացակարգ սահմանել հարկային իրավախախտման բացահայտման նպատակով կիրառվող միջոցի նկատմամբ, այն պայմաններում, երբ վերջինս իր հանրային վտանգավորությամբ զիջում է քրեական հանցագործություններին:

Ինչ վերաբերում է ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտությանը, ապա կարևոր է նշել, որ քննարկվող տվյալները առանց դատարանի սանկցիայի ձեռքբերելը որևէ կերպ չի արդարացվում, քանի որ կարգավորման

շրջանակն անսահմանափակ է և հնարավոր է դուրս գա հանրային շահի համար անհրաժեշտ սահմաններից, հատկապես, երբ այն իրականացվի հանցանքի կամ զանցանքի բացակայության դեպքում:

Ավելին, դատական սանկցիայի նախատեսումը ճնշող ազդեցություն ունի և որոշ դեպքերում դատարանը, գնահատելով ձեռնարկվելիք գործողությունների իրավաչափության հարցը, կարող է արգելել նման տվյալների ձեռքբերումը, ինչը սույն օրենսդրական կարգավորման պայմաններում նպատակահարմար չի գտնվել: Այսինքն՝ բացառված չէ, որ նման կարգավորման նախատեսման պայմաններում իրականացվի ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող բանկային հաշիվների ամփոփ տեղեկատվության քողարկված վերահսկողություն:

Ողջ վերոշարադրյալի հաշվառմամբ կարող ենք արձանագրել, որ քննարկվող կարգավորման նախատեսումը չի համապատասխանում անձնական տվյալների պաշտպանությանը միտված ՄԻԵԴ դիրքորոշումներով արձանագրված չափանիշներին:

Բացի այդ կարևոր է նշել, որ բանկային հաշվի ամփոփ տեղեկատվության ձեռքբերումը, առանց դատավարական սանկցիայի, ինքնին խնդրահարույց է նաև համակարգային առումով ձեռք բերելու տեսանկյունից:

Այսպես, ՄԻԵԴ-ը «Ռոտառուն ընդդեմ Ռումինիայի» ([ՄՊ], § 44) գործով արձանագրել է, որ ինչ վերաբերում է պետական գործակալների կողմից հսկողության ու անձնական տվյալների հավաքագրմանը, ապա Դատարանը համարել է, որ նման տեղեկությունները համակարգային եղանակով պետական գործակալների կողմից հավաքելն ու ֆայլի տեսքով պահելը վերաբերում են «անձնական կյանքին»՝ Կոմվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով²⁶:

Համադրելով նշյալ դիրքորոշումը սույնով քննարկվող կարգավորման իրավաչափությանը՝ կարող ենք արձանագրել, որ բանկային հաշվի ամփոփ տեղեկատվության ձեռքբերումը ենթադրում է համակարգված և շարունակաբար իրականացվող գործողությունների շղթա, որի արդյունքում տարբեր մարմիններ-

²⁶ Դատարանը մանրամասնել է, որ հաշվի են առնվում մի շարք տարրեր, երբ խոսքը գնում է այն հարցը որոշելու մասին, թե արդյո՞ք որևէ անձի անձնական կյանքը տուժել է նրա բնակարանից կամ անձնական տարածքից դուրս ձեռնարկված միջոցառումների պատճառով: Քանի որ որոշ առիթներով մարդիկ գիտակցաբար կամ միտումնավոր զբաղվում են այնպիսի գործունեությամբ, որը գրանցվում կամ հրապարակավ լուսաբանվում է, կամ կարող է գրանցվել կամ հրապարակավ լուսաբանվել, և այն, ինչ անհատը ողջամտորեն իրավասու է ակնկալել իր անձնական կյանքի նկատմամբ հարգանքի առումով, կարող է հանդիսանալ նշանակալի, սակայն ոչ անհրաժեշտաբար վճռական գործոն: Փողոցում քայլող մարդը պարտադիր տեսանելի կլինի նույնպես այնտեղ գտնվող ցանկացած անձի համար: Տեխնիկական միջոցներով այս հանրային տեսարանը դիտելու հանգամանքը (օրինակ՝ գաղտնի տեսանկյարահանման համակարգի միջոցով հսկողություն իրականացնող անվտանգության գործակալի կողմից) ունի նմանատիպ բնույթ: Փոխարենը՝ հանրային տիրույթին պատկանող նման տարրերի համակարգված և շարունակական գրանցում ստեղծելը կարող է անձնական կյանքի հետ կապված նկատառումների տեղիք տալ: Ահա, թե ինչու անվտանգության ծառայությունների կողմից անհատի վերաբերյալ հավաքագրված գործերն առանձնապես վերաբերում են 8-րդ հոդվածին, նույնիսկ երբ այդ տեղեկատվությունները չեն հավաքվել ագրեսիվ կամ քողարկված մեթոդներով («Ռոտառուն ընդդեմ Ռումինիայի», § 57):

րից հավաքվում են համապատասխան տվյալներ և պահպանվում: Ընդ որում, տվյալների հավաքման և պահպանման գործընթացը ուղղակիորեն համարվում է անձի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի խմաստով «անձնական կյանքին» ուղղված միջամտություն: Հետևաբար, նշյալի տեսանկյունից ևս մեծ է անձի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների սահմանափակման և խախտման հավանականությունը:

Ողջ վերոշարադրյալի հաշվառմամբ արձանագրում ենք, որ առանց դատավարական սանկցիայի՝ հարկային մարմինն իրավասություն վերապահելը՝ անխոչընդոտ ձեռք բերելու անձի բանկային հաշվի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, հակասում է անձի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված երաշխիքներին: Քննարկվող միջոցը անհամաչափ է, քանի որ հնարավորություն է տալիս անսահմանափակ մուտք գործել անձի անձնական տվյալներ՝ չնախատեսելով ընթացակարգային երաշխիքներ, այն պայմաններում, երբ Կոնվենցիայի ներքո անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի արդյունավետ պաշտպանությունը ապահովելու կապակցությամբ պետությունը ստանձնել է այն պաշտպանելու դրական պարտավորությունը:

Անդրադառնալով քրեական դատավարության օրենսգրքով բանկային գաղտնիքի ձեռքբերման առանձնահատկություններին:

Օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանվում է, որ վարույթի ընթացքում անձին վերաբերող բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող տեղեկությունները կարող են հավաքվել միայն դատարանի որոշմամբ: Ընդ որում, համապատասխան բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների՝ հասանելիության անհրաժեշտություն պահանջող ժամանակահատվածը կարող է որոշ դեպքերում չհամընկնել առաջադրված մեղադրանքի օբյեկտիվ կողմի գործողությունների կատարման ժամանակահատվածի հետ: Այսինքն՝ կոնկրետ հանցակազմով քննության առանձնահատկությամբ պայմանավորված՝ անձի ֆինանսական հոսքերի պատմության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման և քննության արդյունավետ իրականացման համար մեղադրանքի շրջանակի և հայցվող բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության ծավալային հարաբերակցության տարբերությունը կարող է համարվել արդարացված²⁷:

Այս համատեքստում հատկանշական է 1998 թ. սեպտեմբերի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով բանկային գաղտնիք պարունակող տեղեկության ձեռքբերման կարգավորումները: Մասնավորապես, ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի համաձայն՝ «քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, (...) կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա»:

²⁷ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2026 թ. ապրիլի 30-ի թիվ ԵԴ/0403/07/19 որոշում:

Միաժամանակ, ուշագրավ է, որ 2020 թ. հունվարի 22-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել էր «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով հնարավորություն էր նախատեսվում որոշակի հանցագործությունների դեպքում դատական սանկցիայի առկայության դեպքում բանկային գաղտնիք պարունակող տվյալներ ձեռք բերել նաև որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց վերաբերյալ:

Սահմանադրական դատարանը 2020 թ. հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1546 որոշմամբ վերը ներկայացված նախագծով առաջարկվող կարգավորումը ճանաչեց Սահմանադրության 79-րդ հոդվածում ամրագրված որոշակիության սկզբունքին, իսկ դրանով նաև Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքին՝ օրենսդրորեն ընտրված միջոցի պիտանիության մասով Սահմանադրությանը հակասող՝ արձանագրելով, որ «քրեական վարույթում որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձ կարող են լինել ոչ միայն Օրենսգրքի 6-րդ հոդվածի 32-րդ կետի իմաստով քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք, այլև ընդհանրապես Հայաստանի Հանրապետության իրավագործության ներքո գտնվող բոլոր այն անձինք, որոնք որևէ գործով չունեն կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ: Քանի որ քրեական դատավարությունում կարգավիճակ չունենալը կանոն է, իսկ կարգավիճակ ունենալը՝ խիստ սակավ հանդիպող բացառություն, պարզ չէ, թե օրենսդիրը կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունենալը ինչպե՞ս է դիտարկել որպես կարգավիճակ կամ տարբերակող հատկանիշ, որը, ի թիվս այլնի, հիմք է մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը սահմանափակելու համար»:

Վերոնշյալի կապակցությամբ կարևոր է նշել, որ գործող քրեական դատավարության օրենսգրքով հաղթահարված է Սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշմամբ արձանագրված խնդիրը: Մասնավորապես, Օրենսգրքի 239-րդ հոդվածի 4-րդ մասով հստակ սահմանվում են այն դեպքերը և անձանց շրջանակը, որոնց կապակցությամբ կարող են առգրավվել բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող տեղեկություններ:

Այսինքն՝ կարող ենք պնդել, որ այն անձանց շրջանակը, որոնց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել, գործող օրենսդրությամբ հստակեցվել է, որն էլ բացառում է այնպիսի հնարավոր իրավիճակների առկայությունը, երբ անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող տվյալ ձեռքբերվի՝ անկախ որևէ հանցագործության հետ վերջիններիս ենթադրյալ կամ իրական, ուղղակի կամ անուղղակի առնչակցությունից, անկախ ենթադրյալ հանցագործության փաստի հետ որևէ կապից:

Մինևույն ժամանակ, Օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձը, որից վարույթն իրականացնող մարմինը պահանջում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել բժշկական, նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող տեղեկություններ, իրավունք ունի հրա-

ժարվելու այդ պահանջը կատարելուց՝ վկայակոչելով համապատասխան գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը:

Ստացվում է, որ Օրենսգիրքը, երաշխավորելով օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանությունը, այս խումբ տեղեկությունների համար սահմանել է պաշտպանության ավելի բարձր մակարդակ: Մասնավորապես՝ անձը, որից վարույթն իրականացնող մարմինը պահանջում է հաղորդել բժշկական, նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող տեղեկություններ, իրավունք ունի հրաժարվելու այդ պահանջը կատարելուց՝ վկայակոչելով համապատասխան գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, կարևոր է արձանագրել, որ այս նորմը գործնականում կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ քրեական վարույթ իրականացնող մարմինը ապացուցողական գործողությունների ընթացքում շրջանցի բանկային գաղտնիք պարունակող տեղեկության ստացման համար դատարանի որոշում ունենալու պարտադիր պահանջը:

Քննարկվող կարգավորումը նախատեսվել է՝ սահմանելու քրեական վարույթի մասնավոր մասնակցի իրավունքը մերժելու վարույթն իրականացնող մարմնի՝ բանկային գաղտնիք պարունակող տեղեկության տրամադրման պահանջը, սակայն առաջին հայացքից՝ անձին իրավունք վերապահող նորմը կարող է օգտագործվել ի վնաս նրանց, մասնավորապես հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ վերջիններս, առանց իրազեկ լինելու բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշտպանվածության երաշխիքներին, տրամադրեն այդպիսի տեղեկություններ, որպիսի պարագայում մեծ է հետագայում ապացույցի թույլատրելիության վիճարկման ռիսկը: Որպես օրինակ՝ ապացույցի թույլատրելիության առնչությամբ խնդիր չի կարող առաջանալ այն դեպքում, երբ դատավարական սանկցիայի բացակայության պայմաններում վարույթն իրականացնող մարմինը ապացուցողական գործողության ընթացքում վարույթի մասնավոր մասնակցի նախաձեռնությամբ ստանա բանկային գաղտնիք պարունակող տեղեկություն՝ վերջինիս կողմից բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշտպանվածության երաշխիքներին իրազեկված լինելու պայմաններում:

Ամբողջացնելով ողջ վերոշարադրյալը և համադրելով ՄԻԵԴ-ի դիրքորոշումների հետ՝ կարող ենք արձանագրել, որ բանկային փաստաթղթերից վերցված տեղեկությունն անկասկած հանդիսանում է անհատին վերաբերող անձնական տվյալներ՝ անկախ նրանից, դրանք զգայուն տեղեկատվություն են, թե ոչ:

Որպեսզի բանկային գաղտնիք պարունակող տվյալների ձեռքբերմանն ուղղված գործողությունները չխախտեն Կոմվենցիայի 8-րդ հոդվածը, դրանք պետք է լինեն «օրինական», հետապնդեն 2-րդ կետում նշված օրինական նպատակներից գոնե մեկը և, բացի այդ, «անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության համար»՝ այդ նպատակներին հասնելու համար:

«Օրենքին համապատասխան» արտահայտությունը նշանակում է ոչ միայն,

որ վիճարկվող միջոցը պետք է ունենա ներքին օրենսդրության հիմք, այլ նաև վերաբերում է տվյալ օրենքի որակին՝ պահանջելով, որ այն հասանելի լինի տվյալ անձի համար և կանխատեսելի իր հետևանքներով:

Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսված բացառություններին, որոնց դեպքում միջամտությունը դիտվում է օրինական, պետք է սերտ կերպով մեկնաբանվեն, և դրանց անհրաժեշտությունը կոնկրետ դեպքում պետք է հիմնավոր կերպով ապացուցված լինի: Բացի այդ, միջամտության անհրաժեշտությունը գնահատելիս Դատարանի կողմից սահմանվել են որոշակի չափանիշներ, մասնավորապես, պետք է դատարանը վստահ լինի, որ առկա էին բավարար և համապատասխան երաշխիքներ՝ կամայականությունից զերծ մնալու համար, ներառյալ միջոցի նկատմամբ արդյունավետ վերահսկողության հնարավորություն ապահովելու համար:

Անդրադառնալով «անհրաժեշտություն» չափանիշին՝ այն ենթադրում է, որ միջամտությունը համապատասխանում է հրատապ սոցիալական կարիքին և, մասնավորապես, համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակին: Որոշելով, թե արդյոք միջամտությունը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»՝ Դատարանը հաշվի է առել այն, որ Պայմանավորվող պետություններին թողնված է հայեցողության շրջանակ: Այնուամենայնիվ, 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված բացառությունները պետք է մեկնաբանվեն սահմանափակ, և տվյալ գործում դրանց անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատված լինի:

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից՝ բանկային գաղտնիքի պաշտպանության երաշխիքներին առնչվող իրավական ակտերի բարելավման և կատարելագործման նպատակով ներկայացնում ենք հետևյալ եզրահանգումները՝

1. հարկային գաղտնիքի տրամադրման կապակցությամբ դատավարական սանկցիա չնախատեսելը անտրամաբանական է, այն պայմաններում, երբ հարկային գաղտնիքը պարունակում է հարկ վճարողի վերաբերյալ անձնական տվյալներ, որոնք վերջինիս կողմից հրապարկված չեն, հարկային մարմնի վրա դրված է պարտականություն պահպանելու հարկային գաղտնիքը և այն օրենքով սահմանված դեպքերում ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին, որի պայմաններում կարևորում ենք հարկային գաղտնիքի տրամադրման համար դատավարական սանկցիայի նախատեսման անհրաժեշտությունը:

2. Առանց դատավարական սանկցիայի՝ հարկային մարմնին իրավասություն վերապահելը անխոչընդոտ ձեռք բերելու անձի բանկային հաշվի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, հակասում է անձի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված երաշխիքներին:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118:
RA Constitution, adopted on 06.12.2015, entered into force on 22.12.2015. RA Official Bulletin 2015.12.21/Special Issue Art. 1118:
2. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13), Ընդունման ամսաթիվ՝ 04.11.1950 թ.: European Convention on Human Rights, Official Gazette of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia 2004.12.20/5(13), Date of adoption: 04.11.1950.
3. ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ.:
Criminal Code of the Republic of Armenia, Unified Website 2021.05.17–2021.05.30, adopted on 05.05.2021, entered into force on 01.07.2022.
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Միասնական կայք 2021.07.26-2021.08.08 թ.: Պաշտոնական հրապարակման օրը՝ 28.07.2021 թ., Ընդունման ամսաթիվ՝ 30.06.2021 թ.:
Criminal Procedure Code of the Republic of Armenia**, Unified Website 2021.07.26–2021.08.08, Official publication date: 28.07.2021, Date of adoption: 30.06.2021.
5. Բանկային գաղտնիքի մասին օրենք, ՀՀԱԺՏ 1996/19(1119) 15 հոկտեմբեր, հոդ. 230, Ընդունման ամսաթիվ՝ 07.10.1996 թ., Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 25.10.1996 թ.:
Law of the Republic of Armenia on Bank Secrecy, Official Gazette of the National Assembly of the Republic of Armenia 1996/19(1119), October 15, Article 230, Date of adoption: 07.10.1996, Date of entry into force: 25.10.1996.
6. ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ. 1038, Ընդունման ամսաթիվ՝ 04.10.2016 թ.:
Tax Code of the Republic of Armenia, Official Gazette of the Republic of Armenia 2016.11.04/79(1259), Article 1038, Date of adoption: 04.10.2016.
7. Proceeds of Crime Act 2002, Commonwealth of Australia, 2002.
8. Proceeds of Crime Act 2002, United Kingdom, 2002.
9. Կառավարության 2002 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1584-Ն որոշում, ՀՀՊՏ 2002.10.30/46(221), Հոդ.՝ 1069, Ընդունման ամսաթիվ՝ 03.10.2002 թ.:
Decision No. 1584-N of the Government of the Republic of Armenia of 3 October 2002, Official Gazette of the Republic of Armenia 2002.10.30/46(221), Article 1069, Date of adoption: 03.10.2002.
10. Սահմանադրական դատարանի 2020 թ. հունիսի 18-ի թիվ 1546 որոշում:
Decision No. 1546 of the Constitutional Court of the Republic of Armenia of 18 June 2020.
11. Սահմանադրական դատարանի 2025 թ. ապրիլի 16-ի թիվ ՍԴՈ-1776 որոշում, Միասնական կայք 2025.04.14-2025.04.27 թ., Պաշտոնական հրապարակման օրը՝ 22.04.2025 թ., 179-րդ կետ:
Decision No. SDO-1776 of the Constitutional Court of the Republic of Armenia of 16 April 2025, Unified Website 2025.04.14–2025.04.27, Official publication date: 22.04.2025, para. 179.
12. ՀՀ վճռաբեկ դատարանի 2026 թ. ապրիլի 30-ի թիվ ԵԴ/0403/07/19 որոշում:
Decision No. ED/0403/07/19 of the Court of Cassation of the Republic of Armenia of 30 April 2026.
13. Smirnova v Russia App nos 46133/99 and 48183/99 (European Court of Human Rights,

- 24 July 2003) para 95.
14. M.N. and Others v San Marino App no 28005/12 (European Court of Human Rights, 7 July 2015).
 15. Niemietz v Germany (16 December 1992) Series A no 251-B.
 16. Crémieux v France App no 11471/85 (25 February 1993).
 17. Grooten v Netherlands (dec) App no 40045/98 (19 March 2002).
 18. Bernh Larsen Holding AS and Others v Norway App no 24117/08 (14 March 2013).
 19. Lambert v France (24 August 1998) para 21, Reports of Judgments and Decisions 1998-V; and Valentino Acatrinei v Romania App no 18540/04, para 53 (25 June 2013).
 20. Leander v Sweden (26 March 1987) para 48, Series A no 116; see also I v Finland.
 21. Nada v Switzerland App no 10593/08 (12 September 2012) para 151. Keegan v. the United Kingdom, թիվ 28867/03, § 31, ECHR 2006-X:
 22. Société Colas Est and Others v. France, 37971/97, ECHR 2002-III.
 23. Amann v Switzerland [GC] App no 27798/95, para 65 (European Court of Human Rights, 2000) Reports of Judgments and Decisions 2000-II.
 24. M. N. And Others v. San Marino, 07.07.2015, app. no. 28005/12, § 51, 55
 25. Buck v. Germany, թիվ 41604/98, § 45, ECHR 2005-IV:
 26. Ս. Մուրադյան, Բանկային գաղտնիքի իրավական կարգավորման հիմնախնդիրները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 2019 թ.
S. Muradyan, Legal Issues of the Regulation of Bank Secrecy (Proceedings of the Conference of the Faculty of Law, Yerevan State University, 2019).
 27. М. А. Ефремова, Уголовно-правовая охрана сведений, составляющих коммерческую, банковскую и налоговую тайны, УДК 343.45 DOI: 10.17072/1995-4190-2015-1-124-13.
M. A. Efremova, Criminal-Law Protection of Information Constituting Commercial, Bank, and Tax Secrets, UDC 343.45, DOI: 10.17072/1995-4190-2015-1-124-13.
 28. <https://www.azatutyun.am/a/haytararagrmamb-chi-khakhtvum-bankayin-gaghtniqypordzageti-ev-pek-nakhagahi-kartsignery-tarbervum-en/33307854.html>: Վերջին մուտք՝ 08.04.2026 թ. (accessed՝ 08.04.2026).

Anahit Babakhanyan

Assistant to the Deputy Prosecutor General of the Republic of Armenia

**SAFEGUARDS FOR THE PROTECTION OF BANKING
SECRECY UNDER NATIONAL LEGISLATION AND THE CASE
LAW OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS¹**

Abstract

The protection of banking secrecy is one of the most important guarantees of a modern rule-of-law state, as it is directly related to the inviolability of an individual’s private life.

This study examines the concepts of banking and tax secrecy, the guarantees for the protection of banking secrecy and the mechanisms of its limitation, the powers of tax authorities to obtain information on bank accounts within the framework of tax control, and the procedural particularities of obtaining data containing banking secrecy in criminal proceedings.

As a result of the research, the author proposes introducing a requirement for procedural authorisation also in relation to the disclosure of tax secrecy, noting that granting tax authorities the power to obtain summary information on an individual’s bank accounts without procedural authorisation is incompatible with the guarantees provided under Article 8 of the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms.

Keywords: banking secrecy, tax secrecy, summary bank account information, limitation mechanisms, standards of the European Court of Human Rights.

¹ The article was presented on 19.04.2026 and was reviewed on 02.06.2026.

Анаит Бабаханян

Помощник заместителя Генерального прокурора Республики Армения

ГАРАНТИИ ЗАЩИТЫ БАНКОВСКОЙ ТАЙНЫ В НАЦИОНАЛЬНОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ И В ПРЕЦЕДЕНТНОМ ПРАВЕ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКАА¹

Абстракт

Защита банковской тайны является одной из важнейших гарантий современного правового государства, поскольку она непосредственно связана с неприкосновенностью частной жизни личности.

В работе предметом исследования стали понятия банковской и налоговой тайны, гарантии защиты банковской тайны и механизмы ограничений, полномочия налоговых органов в рамках налогового контроля по получению информации о банковских счетах, процессуальные особенности получения данных, содержащих банковскую тайну, в уголовно-процессуальном порядке.

По результатам проведённого исследования автор предложил установить необходимость процессуальной санкции также для предоставления налоговой тайны, указав, что наделение налогового органа полномочием беспрепятственного получения обобщённой информации о банковских счетах лица без процессуальной санкции противоречит гарантиям, предусмотренным статьёй 8 Конвенции о защите прав человека и основных свобод.

Ключевые слова: банковская тайна, налоговая тайна, обобщённая информация о банковском счёте, механизмы ограничения, стандарты Европейского суда по правам человека.

¹ Статья была представлена 19.04.2026 и прошла рецензирование 02.06.2026.

Ալիսա Ամիրխանյան

*ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և
իրավական ապահովման վարչության ավագ դատախազ,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՆԱԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝

Համառոտագիր

Ներկայիս քրեաիրավական համակարգում ապօրինի հարստացման հանցակազմը առանձնանում է իր կառուցվածքային և բովանդակային յուրահատկությամբ, որը պայմանավորում է դրա հարաբերակցության բարդությունը հարակից հանցակազմերի հետ:

Հատկապես արդիական է դրա սահմանազատումը ինչպես կոռուպցիոն բնույթի նախորդող հանցանքներից, այնպես էլ ապօրինի գույքի քողարկմանը կամ օրինականացմանը միտված արարքներից:

Հոդվածում փորձ է արվել անդրադառնալ ապօրինի հարստացման հանցակազմի հարաբերակցությանը սահմանակից հանցանքների հետ, բացահայտել դրանց տարբերակիչ հատկանիշները և առաջարկել համակցության ու քրեաիրավական նորմերի մրցակցության լուծման մոտեցումներ՝ նպաստելով քրեաիրավական միասնական և հիմնավորված պրակտիկայի ձևավորմանը:

Հիմնաբառեր - ապօրինի հարստանալ, ապօրինի հարստանալու հարաբերակցությունը սահմանակից հանցանքների հետ, կոռուպցիոն բնույթի հանցանքներ, փողերի լվացում, կրկնակի դատապարտման անթույլատրելիություն:

Ներածություն

Ներկայիս քրեաիրավական համակարգում ապօրինի հարստացման հանցակազմը առանձնանում է իր կառուցվածքային և բովանդակային յուրահատկությամբ, որը պայմանավորում է դրա հարաբերակցության բարդությունը հարակից հանցակազմերի հետ: Հատկապես արդիական է դրա սահմանազատումը ինչպես կոռուպցիոն բնույթի նախորդող հանցանքներից, այնպես էլ ապօրինի գույքի քողարկմանը կամ օրինականացմանը միտված արարքներից:

Հոդվածի նպատակն է վերլուծել ապօրինի հարստացման հանցակազմի հարաբերակցությունը սահմանակից հանցանքների հետ, բացահայտել դրանց տարբերակիչ հատկանիշները և առաջարկել համակցության ու քրեաիրավական

¹ Հոդվածը ներկայացվել է 16.04.2026 թ., գրախոսվել է 25.05.2026 թ.:

նորմերի մրցակցության լուծման մոտեցումներ՝ նպաստելով քրեաիրավական միասնական և հիմնավորված պրակտիկայի ձևավորմանը:

Ապօրինի հարստանալու սահմանազատումը հարակից հանցագործություններից

Ապօրինի հարստանալու հանցակազմի դիսպոզիցիան իր ձևակերպման յուրահատկությամբ էականորեն տարբերվում է ՀՀ քրեական օրենսգրքի մյուս հոդվածներում նկարագրված հանցակազմերից: Այնուամենայնիվ, ապօրինի հարստանալը որոշակի նմանություններ ունի հանրային ծառայության շահերի դեմ ուղղված այլ, ինչպես նաև սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության դեմ ուղղված որոշ հանցագործությունների հետ, որոնցից վերջինիս սահմանազատումը կարևոր գործնական նշանակություն ունի:

Ապօրինի հարստացման սահմանակից հանցանքները պայմանականորեն կարելի է դասակարգել երեք հիմնական խմբերի՝

- 1. ապօրինի հարստացման աղբյուր հանդիսացող հանցանքներ,**
- 2. ապօրինի հարստացումը բողարկող հանցանքներ,**
- 3. ապօրինի գույքի լեգիտիմացմանն ու շրջանառությանն ուղղված հանցանքներ:**

Առաջին խումբ հանցանքների մեջ են մտնում հանրային ծառայության շահերի դեմ ուղղված այլ հանցանքները՝ կաշառք ստանալը, կաշառքի միջնորդությանը, պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը և համանման այլ հանցանքները, ինչպես նաև իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված սեփականության դեմ ուղղված հանցանքները՝ խարդախությունը, վստահված գույքի հափշտակությունը, համակարգչային հափշտակությունը: Ապօրինի հարստացման և հիշյալ հանցանքների հարաբերակցության առումով պետք է նկատի ունենալ, որ ապօրինի հարստացման հետևանքը՝ անձի օրինական եկամուտները էականորեն գերազանցող և դրանով ողջամտորեն չհիմնավորվող գույքը, հիմնականում հենց հիշյալ կոռուպցիոն բնույթի հանցանքների արդյունքն է լինում: Նման պայմաններում առաջնային նշանակություն ունի կատարված քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններին և կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքին համահունչ քրեաիրավական գնահատականի արժանացնելը: Այս առումով պետք է նկատի ունենալ, որ ապօրինի հարստացման հանցակազմի դիսպոզիցիայում ուղղակիորեն նշվում է, որ ապօրինի հարստացման հանցանքն առկա է, եթե **ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցանքի հատկանիշները բացակայում են:**

Սա նշանակում է, որ եթե անձի արարքում հիմնավորվում է, օրինակ, կա-

շառք ստանալու հանցակազմը, և կաշառքի առարկան, ըստ էության, նույնանում է ապօրինի հարստացման առարկայի հետ, արարքը քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններին համահունչ ենթակա է որակման միայն կաշառք ստանալու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով: Այս առումով տեղին է Դ. Գ. Միխայլենկոյի այն դիտարկումը, որ ««Անօրինական հարստացման մասին» կարգավորումը կոռուպցիայի դեմ իրավական հակազդեցության վերջնական սահմանի գործիք է»²: Իսկ Բազելի ինստիտուտի ակտիվների վերականգնման միջազգային կենտրոնի (ICAR) քաղաքականության և հետազոտությունների ղեկավար Ա. Դորնբիերերը, վերլուծության ենթարկելով ապօրինի հարստանալու իրավական կարգավորումները Պերուի օրենսդրության մեջ և այն համադրելով Պերուում առկա լայնածավալ կոռուպցիոն սխեմաների հետ, նշում է. «Այս պայմաններում հատկապես դժվար է ապացուցել, որ կատարվել են ավելի կոնկրետ կոռուպցիոն հանցագործություններ, ինչպիսիք են՝ ծանրացված հանգամանքներում կատարված հանցավոր համաձայնությունը (aggravated collusion), յուրացումը, կաշառակերությունը և այլն: Հետևաբար, ապօրինի հարստացման հանցակազմը նախատեսված է որպես հանրային կառավարման դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի վերջին միջոց (last resort) և սուբսիդիար գործիք: Այն քրեական քաղաքականության այնպիսի միջոց է, որը որոշակիորեն շեղվում է քրեական իրավունքի դասական հայեցակարգերից և նպատակ ունի հակազդել կոռուպցիոն այնպիսի դրսևորումներին, որոնք ոչ ֆորմալ հարաբերությունների և այլ խոչընդոտների պայմաններում դժվար են ենթարկվում քրեական հետապնդման»³:

Սակայն, չնայած ապօրինի հարստացման սուբսիդիար բնույթին, հնարավոր է նաև, որ վերոնշյալ կոռուպցիոն բնույթի հանցանքները և ապօրինի հարստացումը համակցվեն: Այսպես, օրինակ, երբ անձի արարքում հիմնավորվում է, օրինակ, կաշառք ստանալու և պաշտոնական լիազորությունները չարաշահելու հանցանքների առկայությունը, սակայն ապօրինի հարստացման առարկան շատ ավելի ընդգրկուն է, քան հիշյալ հանցանքների կատարման արդյունքում ստացված անօրինական եկամուտը, կամ, այլ կերպ ասած, կաշառք ստանալն ու պաշտոնական լիազորությունները չարաշահելը չեն սպառում ապօրինի հարստացման ողջ բովանդակությունը, ապա առկա է հանցանքների համակցություն:

Հետևաբար, ապօրինի հարստանալը և վերոնշյալ կոռուպցիոն բնույթի հանցանքները կարող են հանդես գալ համակցությամբ, երբ պաշտոնատար անձի վարքագիծը միաժամանակ պարունակում է երկու հանցակազմերի ինքնուրույն հատկանիշներ և դրանցից յուրաքանչյուրն ունի առանձին իրավական նշանակություն:

² St'iu Bohdan Bezginskyi "Objective Side of the Composition of the Criminal Offence of Unlawful Enrichment". Law Journal of the National Academy of Internal Affairs, 11(1), p. 56.

³ St'iu Illicit enrichment; A guide to Laws targeting unexplained wealth; Andrew Dornbierer; 2021 Basel Institute on Governance. p. 164-165.

Ինչ վերաբերում է ապօրինի հարստացումը քողարկող հանցանքների հետ վերջինիս հարաբերակցությանը, ապա ապօրինի հարստացումը սահմանակից է ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ և 445-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներին: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում **Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելու, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու կամ հայտարարագիր չներկայացնելու համար:**

ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ և 444-րդ հոդվածներում նախատեսված հանցանքների նմանությունն այն է, որ երկուսն էլ ոտնձգում են հանրային ծառայության շահերի դեմ: Բացի հանցանքի օբյեկտի նմանությունից, երկու հանցանքները նման են նաև սուբյեկտիվ կողմի հատկանիշներով. այսպես՝ երկու հանցանքների սուբյեկտն էլ հատուկ է՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը, իսկ սուբյեկտիվ կողմին բնորոշ է դիտավորությունը:

Քննարկվող երկու հանցանքները միմյանցից սահմանազատվում են օբյեկտիվ կողմի տարբերությամբ: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցանքը օբյեկտիվ կողմից կարող է դրսևորվել երեք ձևով՝

1. հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելով կամ
2. հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելով կամ
3. հայտարարագիրը օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, չներկայացնելով:

Ի տարբերություն 444-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցանքի՝ նույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված հանցակազմը նյութական է. ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսվում հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի կամ ծախսի չհայտարարագրմանը:

Ակնհայտ է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածով նախատեսված հանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է կոնկրետ, որոշակի արարքների կատարմամբ, այնինչ ապօրինի հարստացումը հետևանքային հանցանք է և այս դեպքում էական չէ, թե կոնկրետ ինչ անօրինական արարքի կատարման արդյունքում է ձեռք բերվել ապօրինի հարստությունը: Այլ կերպ ասած՝ ապօրինի հարստացման հանցակազմը վերաբերում է գույքի անօրինական ծագմանը, իսկ կեղծ հայտարարագրումը՝ գույքի վերաբերյալ իրական տվյալները կեղծելուն կամ թաքցնելուն: Այդ պատճառով քննարկվող երկու հանցակազմերը կարող են **համակցվել, բայց չեն կլանվում**, այսինքն՝ հնարավոր է անձը պատասխանատվու-

թյան ենթարկվի **երկու հանցանքների համար միաժամանակ**: Ընդ որում, հատկանշական է, որ գործնականում էլ այս երկու հանցանքները շատ հաճախ որակվում են համակցությամբ, այսինքն՝ օրենքով հայտարարագրման պարտականություն ունեցող անձը և՛ ապօրինի հարստանում է, և՛ հայտարարագրում կեղծ տվյալ է ներկայացնում կամ առհասարակ չի հայտարարագրում հայտարարագրման ենթակա տվյալը՝ նպատակ ունենալով թաքցնել կամ խեղաթյուրել իր գույքային դրության վերաբերյալ իրական տվյալները:

Սակայն պետք է նաև նկատի ունենալ, որ ոչ բոլոր դեպքերում է, որ հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը վկայում են այն մասին, որ գործ ունենք ապօրինի հարստացած անձի հետ և հակառակը:

Այս առումով, նախ՝ պետք է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական օրենքի 443-րդ հոդվածում խոսքն անձի օրինական եկամուտներն **էականորեն** գերազանցող և դրանով ողջամտորեն չհիմնավորվող գույքի ավելացման, պարտավորությունների նվազման և (կամ) ծախսի մասին է: **Իսկ հոդվածի իմաստով էական է համարվում 3 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը)**: Այնինչ, ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը ձևական է, իսկ 2-րդ մասում նախատեսված հանցանքի պարագայում **առանձնապես խոշոր չափերով** գույքի կամ եկամտի կամ ծախսի չհայտարարագրումը առկա կլինի, եթե խոսքը **1 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարի կամ արժեքի մասին է**: Ըստ այդմ, եթե անձը, դիցուք, հայտարարագրում թաքցրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող կամ իր կողմից փաստացի տնօրինվող այնպիսի գույք, որի արժեքը չի գերազանցում 3 միլիոն ՀՀ դրամը, նրան չի կարող մեղսագրվել ապօրինի հարստանալու հանցանքը: Մյուս կողմից, եթե անձը ճշտորեն հայտարարագրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող կամ իր կողմից փաստացի տնօրինվող գույքը, սակայն չի կարողանում իր օրինական եկամուտներով հիմնավորել այդ գույքի ավելացումը, կամ, օրինակ, երբ անձը կատարել է իր օրինական եկամուտներն էականորեն գերազանցող ծախս, սակայն դեռևս տվյալ ժամանակահատվածի համար հայտարարագիր չի ներկայացրել, նրա արարքում առկա կլինի ապօրինի հարստանալու հանցանքը, սակայն նրան չի կարող մեղսագրվել հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու հանցանքը:

Ելնելով վերոգրյալից՝ ակնհայտ է, որ քննարկվող երկու հանցանքները, չնայած ունեցած նմանություններին և երբեմն առկա փոխկապակցվածությանը, տարբեր խնդիրներ են լուծում և կարող են հանդես գալ ինչպես համակցությամբ, այնպես էլ առանձին:

Ապօրինի հարստանալու հանցանքը կարող է հարաբերակցվել ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածում նախատեսված հանցանքին, այնպես էլ

ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածում նախատեսված պաշտոնական կեղծիքին, որը, ըստ էության, հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու հանցանքի ընդհանուր բնույթի քրեաիրավական նորմն է: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում *Պաշտոնատար անձի կողմից պաշտոնական շրջանառության մեջ գտնվող կամ շրջանառության ենթակա փաստաթղթի բովանդակությունը աղավաղելու, դրա մեջ կեղծ տեղեկություն մտցնելու, փաստաթուղթն այլ եղանակով կեղծելու, կեղծ փաստաթուղթ կազմելու կամ տրամադրելու կամ փաստաթղթերի գրանցման տեղեկատվական համակարգում կեղծ տեղեկություն մուտքագրելու համար:*

Պաշտոնական կեղծիքը ոսնձգություն է պետական ապարատի կոնկրետ օղակի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ: Օբյեկտիվ կողմից կարող է դրսևորվել հոդվածում մատնանշված կոնկրետ, որոշակի գործողությունների կատարմամբ: Պաշտոնական կեղծիքի սուբյեկտը պաշտոնատար անձն է, որի բովանդակությունը բացահայտվում է ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածում, իսկ սուբյեկտիվ կողմին բնորոշ է ուղղակի դիտավորությունը:

Պաշտոնական կեղծիքն ու ապօրինի հարստացումն ունեն որոշակի ընդհանրություններ, քանի որ երկուսն էլ ոսնձգություն են հանրային ծառայության շահերի դեմ, երկու հանցանքներին էլ բնորոշ է ուղղակի դիտավորությունը, պաշտոնական կեղծիքի սուբյեկտ է հանդիսանում պաշտոնատար անձը, որն օրենքի իմաստով հանդիսանում է հայտարարագրման պարտականություն ունեցող:

Ինչպես բխում է պաշտոնական կեղծիքի օբյեկտիվ կողմի տարրերի վերլուծությունից, այն կարող է հանդես գալ որպես ապօրինի հարստացմանը նախորդող հանցանք կամ ապօրինի հարստացումը քողարկելու միջոց: Այսպես, օրինակ, պետական մարմնի ղեկավարը կազմում է որոշ աշխատակիցների՝ բարձր պարգևավճարներ տրամադրելու վերաբերյալ կեղծ հրամաններ, սակայն փաստացի գումարները կանխիկացվում են և վերադարձվում նրան: Ժամանակի ընթացքում նրա ունեցվածքը էապես գերազանցում է օրինական եկամուտները: Բերված օրինակում պաշտոնական կեղծիքը, ըստ էության, հանդիսանում է ապօրինի հարստացմանը նախորդող հանցանք: Կամ պաշտոնատար անձը տարիների ընթացքում կուտակել է դրամական միջոցներ, որոնք չեն համապատասխանում իր օրինական եկամուտներին: Հետագայում սկսվում է ծառայողական ստուգում: Նա կազմում է գույքագրման կեղծ արձանագրություն, որտեղ նշում է, թե տվյալ դրամական միջոցները հանդիսանում են հիմնարկի ժամանակավոր հաշկշռային գումարներ կամ երրորդ անձի միջոցներ: Բերված օրինակում պաշտոնական կեղծիքը կատարվել է ապօրինի հարստացումը քողարկելու նպատակով:

Վերոնշյալ երկրորդ դեպքում, երբ ապօրինի հարստացման և պաշտոնական կեղծիքի միջև առկա է ժամանակային խզում և, ըստ էության, կատարված հանցանքները տարբեր նպատակներ են հետապնդում, հանցանքները համակցու-

թյամբ որակելու հարցը կասկած չի հարուցում: Մի փոքր այլ է իրավիճակն այնդեպքում, երբ պաշտոնական կեղծիքը հանդես է գալիս որպես ապօրինի հարստացման միջոց: Այս դեպքում հանցավորի դիտավորությունը, ըստ էության, ապօրինաբար հարստանալուն է միտված և պաշտոնական կեղծիքը կատարվում է հենց այդ նպատակով: Արարքի որակումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե արդյո՞ք պաշտոնական կեղծիքն է հանդիսացել հանցավոր գույքն առաջացրած հանցանքը: Այսինքն՝ եթե հստակորեն հիմնավորվում է, որ պաշտոնական կեղծիքի կատարման արդյունքում է ուղղակիորեն առաջացել հանցավոր գույքը, հնարավոր է քննարկման առարկա դարձնել արարքը միայն պաշտոնական կեղծիք որակելու հարցը՝ առանց ապօրինի հարստացման: Սակայն պետք է նկատի ունենալ, որ գործնականում դժվար է գտնել այնպիսի իրավիճակ, երբ պաշտոնական կեղծիքն ինքնին հանդես գա որպես հանցավոր գույք առաջացրած հանցանք: Հիմնականում այն ուղեկցվում է վստահված գույքի հափշտակությամբ, խարդախությամբ կամ հանցավոր գույք առաջացնող այլ հանցանքներով, իսկ պաշտոնական կեղծիքը հանցավոր մեխանիզմում հանդես է գալիս, ըստ էության, որպես հանցանքի կատաման միջոց:

Հետևաբար, ապօրինի հարստացման և պաշտոնական կեղծիքի հարաբերակցության հարցում նպատակային միասնությունը չի վերացնում հանցակազմային ինքնուրույնությունը, քանի որ յուրաքանչյուր հանցակազմ պաշտպանում է տարբեր իրավական բարիք և ունի կառուցվածքային անկախություն: Ուստի, երբ պաշտոնական կեղծիքը հանգեցնում է անհամաչափ գույքային աճի և միաժամանակ հնարավոր չէ հիմնավորել հանցավոր գույք առաջացրած նախորդող հանցանքը, ձևավորվում է ապօրինի հարստացման և պաշտոնական կեղծիքի համակցություն:

Ապօրինի հարստանալու հարակից հանցակազմների շարքում առավել բարդ և գործնական նշանակություն ունեցող հարաբերակցությունը ձևավորվում է **փողերի լվացման հանցանքի հետ**, քանի որ երկու հանցակազմերն էլ առնչվում են հանցավոր ծագում ունեցող գույքին և գործնականում հաճախ հանդես են գալիս համակցությամբ: Այդ հանգամանքով պայմանավորված՝ գտնում ենք՝ առկա է անհրաժեշտություն սույն հոդվածում հանգամանալից կերպով անդրադառնալու նախ՝ փողերի լվացման հանցանքի հատկանիշներին, ապա դրա սահմանազատմանը ապօրինի հարստանալու հանցանքի հետ:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում փողերի լվացման համար, որը օրենսդրորեն սահմանվում է. «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական

բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)»:

Հոդվածի 3-րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում փողերի լվացման համար, որը կատարվել է **իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, որը կոռուպցիոն բնույթի հանցանք է:**

Փողերի լվացման հիմնական անմիջական օբյեկտը բնականոն տնտեսական գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Փողերի լվացման դեմ պայքարի նպատակն է՝ ապահովել պետության ֆինանսական համակարգի օրինական գործունեությունը, կանխարգելել հանցավոր գործունեությունից ստացված դրամական միջոցների և այլ գույքի ներդրումը օրինական տնտեսական շրջանառության մեջ:

Փողերի լվացումն ունի այլընտրանքային օբյեկտիվ կողմ. կարող է դրսևորվել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածում թվարկված արարքներից որևէ մեկի կատարմամբ՝

1. հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկմամբ (կոնվերտացումը) կամ փոխանցմամբ,
2. գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելով կամ խեղաթյուրելով,
3. գույք ձեռք բերելով կամ տիրապետելով կամ պահելով կամ օգտագործելով կամ տնօրինելով:

Ինչ վերաբերում է փողերի լվացման հանցակազմի սուբյեկտիվ կողմին, ապա այն դրսևորվում է **ուղղակի դիտավորությամբ:** Ընդ որում, փողերի լվացման դեպքում անձը պետք է գիտակցի, որ **գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում և իր արարքներով նպատակ ունենա թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից:**

Այսինքն՝ հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում նպատակը, առանց որի փողերի լվացման հանցակազմի մասին խոսք լինել չի կարող:

Ընդ որում, ինչպես երևում է փողերի լվացման օրենսդրական ձևակերպումից, նախկին քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի դիսպոզիցիայի նման, գործող քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածում ևս գույք ձեռք բերելու կամ տի-

րապետելու կամ պահելու կամ օգտագործելու կամ տնօրինելու ձևով դրսևորվող փողերի լվացման դեպքում հանցանքի օրենսդրական ձևակերպման մեջ չի նշվում նպատակը, որը կարող է տարակարծիք մեկնաբանությունների և անհատականությունների պատճառ հանդիսանալ:

Սրա հետ կապված՝ Վճռաբեկ դատարանը, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական նորմը գնահատելով, դեռևս 2011 թ. փետրվարի 24-ին կայացված որոշման մեջ արձանագրում է, որ «(...) **դրա ոչ հստակ ձևակերպումը որոշ դեպքերում կարող է դժվարություններ առաջացնել հանցակազմի կիրառման, ինչպես նաև հարակից հանցակազմերից սահմանազատման առումով:**

Խոսքը մասնավորապես վերաբերում է հետևյալ ձևակերպմանը. «(...) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)», որի տառացի մեկնաբանության արդյունքում ստացվում է, որ եթե անձը հանցագործության արդյունքում ստացված միջոցները ձեռք է բերում և օգտագործում է իր անձնական կարիքները բավարարելու համար, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի վերոնշյալ պայմանի ուժով մեխանիկորեն դառնում է քննարկվող հանցագործության սուբյեկտ: Մյուս մոտեցումը չի համապատասխանում գույքի օրինականացման էությանը, քանի որ տվյալ պարագայում բացակայում է այն «լվանալուն» ուղղված դիտավորությունը: Այլ կերպ՝ անձը դիտավորություն չի ունեցել օրինական շրջանառության մեջ դնել հանցավոր ճանապարհով ստացված միջոցները, այլ ընդամենը ցանկացել է օգտվել դրանցից, քանի որ ի վերջո հանցագործությունը կատարվել է հենց այդ միջոցները ձեռք բերելու և դրանցից օգտվելու նպատակով:

Այս դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի դիսպոզիցիան օբյեկտիվ կողմից կարող է համընկնել հանցագործության օժանդակության հետ, եթե գույքի ձեռքբերումը եղել է նախապես խոստացված, կամ ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի դիսպոզիցիայի հետ, եթե գույքի ձեռքբերումը նախապես խոստացված չի եղել:

Մինչդեռ տվյալ դեպքում անձը հանցավոր գործունեության արդյունքում ստացված գույքի հետ կապված բոլոր գործողությունները կատարում է մեկ դիտավորությամբ, այն է՝ համապատասխան միջոցների ծագման իրական աղբյուրը քողարկել կամ խեղաթյուրել և դրանց հաղորդել օրինական տեսք:

Հիմք ընդունելով որոշման նախորդ կետում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածում լիարժեք հստակեցված չէ այս հանցագործության սուբյեկտիվ կողմի գլխավոր, էական հատկանիշը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նկարագրված գործողությունների արդյունքում համապատասխան միջոցների ծագման իրական աղբյուրի քողարկման կամ խեղաթյուրման նպատակը:

Հետևաբար, **ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի գործնական կի-**

րառումը պետք է կառուցվի այն եզրահանգման վրա, որ քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը պարունակում է հատուկ նպատակ՝ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների իրական աղբյուրները քողարկել, թաքցնել և այդ միջոցներն օրինական շրջանառության մեջ ներգրավել: Այդպիսի նպատակի բացակայությունը բացառում է այս հանցագործության հանցակազմի առկայությունը⁴:

Ընդ որում, անձին փողերի լվացման հանցանք մեղսագրելու համար չի պահանջվում փողերի լվացմանը նախորդող հանցանքի ապացուցում կամ հաստատում, այլ բավարար է, որպեսզի վարույթն իրականացնող մարմինը ցույց տա, որ առկա է ողջամիտ կասկած առ այն, որ գույքը, որը լվացվել է, ունեցել է հանցավոր բնույթ: Այս առումով բավականին հարուստ նախադեպային իրավունք է ձևավորել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ), որը քննարկման առարկա դարձնելով փողերի լվացման դեպքում նախորդող հանցանքի ապացուցման պարտականության հարցը՝ 13.04.2017 թ. կայացված «Պողեսկին ընդդեմ Սան Մարինոյի» գործով վճռում արձանագրել է. *«Դատարանը նշում է, որ ինչպես պարզաբանել են ներպետական դատարանները, միջոցների հանցավոր ծագումը հաստատված լինելը անհրաժեշտ չէ փողերի լվացման կասկածի համար, բավարար էր ունենալ փաստական հանգամանքների ամբողջություն, որը վկայում է հնարավոր հանցանքի մասին, որից ծագել են եկամուտները: Տվյալ դեպքում, ի թիվս այլնի, գործի այդպիսի փաստական հանգամանք է մասնավորապես դիմումատուի կողմից ստացվող և տնօրինվող էական ծավալի գումարների շարժը, որը չի համապատասխանում վերջինիս օրինական եկամուտներին»:*

Ինչպես ցույց է տալիս ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան, փողերի լվացման դեպքում չի պահանջվում նաև դրան նախորդող հանցանքի հստակեցման պարտականություն: Այսպես, «Տիմմերմանսն ընդդեմ Բելգիայի» գործով 02.05.2017 թ. կայացված վճռում դատարանը արձանագրել է. *«Դատարանը, քննարկելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավունքների խախտման հարցը, արձանագրել է, որ մեղադրանքից արդյունավետ պաշտպանվելու համար բավարար էր այն գործարքների նկարագրությունը, որոնք հիմք էին հանդիսացել փողերի լվացման դեպքի առկայությունը հաստատելու համար: Կոնվենցիայից չի կարող բխել փողերի լվացման առարկա հանցավոր եկամուտների ծագման համար հիմք հանդիսացած բոլոր հանցանքների հստակեցման պահանջը: Այդ արարքները փողերի լվացման համար առաջադրված մեղադրանքի մաս չեն» (պ. 41-44):*

«Զիյուսիսենն ընդդեմ Բելգիայի» գործով 02.05.2017 թ. կայացված վճռում ՄԻԵԴ-ը անդրադարձ է կատարել նաև միջոցների ծագման աղբյուրների վերա-

⁴ Տե՛ս ԵԿԴ/0090/01/09 գործով Վճռաբեկ դատարանի 2011 թ. փետրվարի 24-ին կայացրած որոշման 15-16-րդ կետերը:

բերյալ տեղեկություններ ներկայացնելուց անձի հրաժարվելու կամ լռելու իրավունքին փողերի լվացման համար ներկայացված մեղադրանքի համատեքստում: Այսպես, հիշյալ վճռի 29-րդ պարագրաֆում Դատարանն արձանագրել է. «Ներպետական դատարանները արձանագրել էին, որ փողերի լվացման առարկա հանդիսացող միջոցների հանցավոր ծագումը հաստատելու համար անհրաժեշտ չէ նախորդող հանցանքի հստակեցումը, փոխարենը բավարար է բացառել միջոցների ծագման բոլոր հնարավոր օրինական աղբյուրները: Միջոցների հանցավոր ծագումը հաստատելու համար ներպետական դատարանները հղում են արել, ի թիվս այլնի, հետևյալ հանգամանքներին՝ դիմումատուին չի ներկայացրել միջոցների ծագման վերաբերյալ բացատրություններ, նա նախկինում կատարել է թմրանյութների հետ կապված իրավախախտումներ, նա չի ունեցել որևէ հայտնի եկամտի աղբյուր, որոշ դեպքերում բանկային հաշիվ միջոցները մուտք են արել անհայտ անձի՞ք, մինչդեռ դիմումատուն սպասել է դրսում, հաշվին մուտք արվող կանխիկ թղթադրամները եղել են համեմատաբար փոքր արժեքներով, ինչը հատուկ է թմրանյութների իրացմանը:

Դատարանը, քննարկելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավունքների խախտման հարցը, արձանագրել է, որ այն հանգամանքը, որ ներպետական դատարանները եկամուտների հանցավոր ծագումը հաստատելու համար հաշվի են առել բացատրություններ ներկայացնելուց անձի հրաժարվելը, չի խախտում անձի լռելու իրավունքը: Կոնվենցիան չի արգելում հաշվի առնել անձի լռությունը՝ նրան դատապարտելու համար, քանի դեռ դատապարտումը բացառապես կամ առավելապես հիմնված չէ անձի լռելու փաստի վրա: Տվյալ դեպքում ներպետական դատարանները հաստատելու համար անձի մեղավորությունը հիմք են ընդունել մի շարք փաստերի համակցություն, իսկ անձի լռությունը, այն պայմաններում, երբ իրավիճակից ենթադրվում էր հավելյալ պարզաբանումների անհրաժեշտություն, միայն ամրապնդել է արված եզրահանգումները:

Դատարանը եկել է եզրահանգման, որ հետևությունները, որոնք արվել են՝ հիմք ընդունելով միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելուց անձի հրաժարվելու հանգամանքը, տրամաբանական են և չեն կարող որակվել որպես անարդար կամ ոչ ողջամիտ»⁵:

Փողերի լվացման հանցակազմի ինքնավար բնույթին անդրադարձ է կատարել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ ԵԷԴ/0054/01/15 քրեական գործով 2021 թ. ապրիլի 14-ին կայացված որոշման 22-րդ կետում՝ արձանագրելով. «(...) նախորդող հանցագործության համար դատապարտման բացակայությունը չի կարող մեխանիկորեն բացառել փողերի լվացման համար դատապարտումը, և դատարանը

⁵ Տե՛ս Փողերի լվացման գործերի քննության ուղեցույց՝ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թ. մարտի 2-ի նիստում, էջեր 8-10:

պետք է առանձին վերլուծության ենթարկի նշված հանցակազմի առկայության հարցը:

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով միջազգային և ներպետական ակտերը, մասնավորապես նշել է. « (...) փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի հանցավոր ծագումը հաստատելու համար անհրաժեշտ չէ ոչ միայն նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայություն, այլև տվյալ գույքի հանցավոր ծագման փաստը կարող է հաստատվել՝ անկախ նախորդող հանցագործության՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված լինելու պայմանից: Տվյալ դեպքում բավարար է գործի փաստերից բխող որոշակի տվյալների, այդ թվում՝ անուղղակի ապացույցների համադրման արդյունքում գալու ողջամիտ եզրահանգման առ այն, որ խնդրո առարկա գույքն ունի հանցավոր ծագում: Այլ կերպ՝ պահանջվում է միայն այնպիսի փաստական տվյալների ներկայացում, որոնք ողջամտորեն կվկայեն փողերի լվացմանը նախորդող արարքի հանցավոր լինելու մասին: (...) Ընդ որում, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր չէ ճշգրիտ կերպով վկայակոչել և նկարագրել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այն կոնկրետ հանցակազմը, որի արդյունքում ստացվել է ապօրինի գույքը, այլ բավարար է տալ միայն որևէ հանցավոր արարքի ընդհանրական նկարագրությունը (օրինակ՝ գույքը ստացվել է հափշտակությունների, թրաֆիքինգի, թմրամիջոցների կամ զենքի ապօրինի շրջանառության, կազմակերպված հանցավորության այս կամ այն դրսևորման կամ այլ հանցագործության արդյունքում)»:

Ինչ վերաբերում է փողերի լվացման հանցանքի սուբյեկտին, ապա այն ընդհանուր է՝ 16 տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում նախատեսված հանցանքի սուբյեկտը հատուկ է՝ այն անձը, որն ունակ է օգտագործել իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը:

Կարևոր է նաև նշել, որ փողերի լվացման համար պատասխանատվության կարող է ենթարկվել ինչպես այն անձը, որը կատարել է նախորդող հանցանքը և այնուհետև օրինականացրել է իր իսկ կատարած հանցանքի արդյունքում ձևավորված հանցավոր գույքը, այնպես էլ անձը, որը չի կատարել նախորդող հանցանք և օրինականացրել է այլ անձի կատարած հանցանքի արդյունքում ձևավորված հանցավոր գույքը:

Փողերի լվացման համար քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել նաև իրավաբանական անձը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ բաժնում նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում:

Հաշվի առնելով փողերի լվացման հանցանքի այն հիմնական բնութագրական առանձնահատկությունները, որոնք ներկայացվել են վերևում, ինչպես նաև ապօրինի հարստանալու հանցանքի քրեաիրավական էությունը՝ կարելի է փաստել, որ **ապօրինի հարստանալու հանցանքը կարող է հարաբերակցվել փո-**

ղերի լվացման հանցանքին՝ հանդես գալով որպես վերջինիս նախորդող հանցանք:

Այսպես, օրինակ, անձը ձեռք է բերում գույք, որն էականորեն գերազանցում է նրա օրինական եկամուտները, այդ գույքը գրանցում է իր հարազատի անունով, այնուհետև տնօրինում այն վաճառելու եղանակով՝ նպատակ ունենալով թաքցնել այդ գույքի հանցավոր ծագումը:

Բերված օրինակում ապօրինի հարստանալու հանցակազմն ավարտված կհամարվի անձի հաշվեկշռում նրա օրինական եկամուտներն էականորեն գերազանցող գույքի ավելացման պահից, իսկ փողերի լվացման հանցակազմը ավարտված կհամարվի, երբ անձը կատարի այդ գույքի հանցավոր բնույթը թաքցնելուն կամ խեղաթյուրելուն ուղղված որևէ գործողություն՝ բերված օրինակում՝ այն գրանցի իր հարազատի անունով և (կամ) վաճառի այլ անձի: Կամ պաշտոնյան չհիմնավորված եկամուտներով ձեռք է բերում ավտոմեքենա, վաճառում է այն և գումարը ներդնում բիզնեսում: Բերված օրինակում ապօրինի հարստանալու հանցանքն ավարտված կհամարվի օրինական եկամուտներով չհիմնավորվող ավտոմեքենան անձի գույքային հաշվեկշռում ավելանալու պահից, իսկ փողերի լվացումը՝ մեքենան վաճառելու և գումարը բիզնեսում ներդնելու պահից:

Ինչպես երևում է բերված օրինակներում, ապօրինի հարստանալու և փողերի լվացման հանցանքները երբեմն կարող են հանդես գալ խիստ փոխկապակցված, ունենալ պատճառահետևանքային ամուր կապ, սակայն դրանք չեն կլանվում և հանդես են գալիս համակցությամբ:

Այս առումով հատկանշական է, որ ՄԻԵԴ-ը փողերի լվացման մեղադրանքին առնչվող զանգատների քննության ժամանակ երբեմն անդրադարձ է կատարում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում սահմանված՝ կրկին անգամ չդատվելու և չպատժվելու իրավունքին: ՄԻԵԴ-ի ընդհանուր մոտեցումը ինչպես կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքին առհասարակ, այնպես էլ, մասնավորապես, փողերի լվացման հանցանքի համատեքստում, հանգում է նրան, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքի խախտում առկա չէ, երբ միևնույն դատարանի կողմից արարքների համար միաժամանակյա դատապարտումը չի վերաբերում նույն փաստերին կամ այնպիսի փաստերի, որոնք բովանդակային առումով կարող են դիտարկվել որպես նույնական⁶:

Այսպիսով, չնայած ապօրինի հարստանալու և փողերի լվացման հանցանքների փոխկապակցվածությանը և այն հանգամանքին, որ գործնականում այս երկու հանցանքները հիմնականում հանդես են գալիս համակցությամբ՝ դրանցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն քրեաիրավական էությունը, ուղղվածությունը և անհրաժեշտ է հստակորեն տարանջատել դրանք:

⁶ Տե՛ս «Ալվես դե Օլիվեյրան ընդդեմ Ֆրանսիայի» գործով 25.11.2021 թվականի վճիռ, պ. 26:

Այսպես.

1. տարբեր են ապօրինի հարստանալու և փողերի լվացման հանցանքների օբյեկտները,
2. ի տարբերություն ապօրինի հարստանալու՝ փողերի լվացման հանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է կոնկրետ, որոշակի արարքների կատարմամբ,
3. ապօրինի հարստանալու դեպքում չի պահանջվում ավելացված գույքը, կատարված պարտավորությունը կամ ծախսը թաքցնելուն կամ խեղությունն ուղղված որևէ գործողության կատարում,
4. ի տարբերություն ապօրինի հարստանալուն՝ փողերի լվացման հանցանքի հասարակ տեսակի սուբյեկտը ընդհանուր է,
5. ի տարբերություն ապօրինի հարստանալուն՝ փողերի լվացման հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է նպատակը:

Այսպիսով, ապօրինի հարստանալու հանցանքը կարող է հանդիսանալ փողերի լվացման հանցանքի նախորդող հանցանք, քանի որ այն ապահովում է անօրինական ծագմամբ գույքի առկայությունը, որը կարող է լինել օրինականացման կամ հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով կատարվող գործողությունների առարկա: Միաժամանակ, երկու հանցանքներն ունեն ինքնուրույն քրեաիրավական էություն, ուստի կարող են հանդես գալ համակցությամբ: Այս առումով, մեր կարծիքով, փողերի լվացման և ապօրինի հարստացման հանցակազմերի հարաբերակցության հարցում առանձնահատուկ զգուշություն է պահանջվում այն դեպքերում, երբ նախորդող հանցանքի վերաբերյալ առկա չէ բավարար ապացուցողական բազա: Թեև միջազգային և ներպետական դատական պրակտիկան ընդունում է, որ փողերի լվացման համար պարտադիր չէ նախորդող հանցանքի ճշգրիտ նույնականացումը, այնուամենայնիվ նման մոտեցումը չպետք է հանգեցնի ապօրինի հարստացման և փողերի լվացման հանցակազմերի միջև սահմանների լրգման: Հակառակ դեպքում կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ նույն փաստական հանգամանքները միաժամանակ օգտագործվեն երկու տարբեր հանցակազմերի հիմնավորման համար՝ վտանգելով իրավական որոշակիության սկզբունքը:

Եզրակացություն

Հոդվածում իրականացված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հարակից հանցակազմերի հետ ապօրինի հարստանալու հանցակազմի հարաբերակցությունը չի կարող սահմանափակվել միայն դրանց արտաքին նմանությունների կամ առանձին հատկանիշների համադրմամբ, այլ դրանց սահմանազատման առանցքային չափանիշ պետք է համարել հանցակազմերի կառուցվածքային տրամաբանությունն ու նպատակային ուղղվածությունը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ձևավորել միասնական չափանիշներ՝ քրեաիրավա-

կան նորմերի մրցակցության և հանցանքների համակցության խնդիրների լուծման համար՝ բացառելով ինչպես ապօրինի հարստացման անհիմն կիրառումը, այնպես էլ դրա չկիրառման ռիսկերը այն դեպքերում, երբ առկա է անհամաչափ գույքային աճ:

Միաժամանակ հիմնավորվում է, որ ապօրինի հարստացման հանցակազմը պետք է դիտարկել որպես ինքնուրույն քրեաիրավական ինստիտուտ՝ օժտված երկակի ֆունկցիոնալ նշանակությամբ: Մի կողմից՝ համապատասխան նորմը հանդես է գալիս որպես սուբսիդիար քրեական պատասխանատվության միջոց այն դեպքերում, երբ հնարավոր չէ նույնականացնել գույքի առաջացման հիմքում ընկած կոնկրետ հանցանքը, իսկ մյուս կողմից՝ որպես ինքնուրույն հանցակազմ՝ ապահովելով անհամաչափ գույքային աճի նկատմամբ քրեաիրավական արձագանքը:

Ֆրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ քրեական օրենսգիրք (05.05.2021 թ., ՀՕ-199-Ն). (Criminal Code of the Republic of Armenia (05.05.2021 No. 199-N))
2. «Ալվես դե Օլիվեյրան ընդդեմ Ֆրանսիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 25.11.2021 թվականի վճիռ, գանգատ թիվ 23612/20.
The decision of the European Court of Human Rights in the case of Alves de
3. «Պոդեսկին ընդդեմ Սան Մարինոյի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 13.04.2017 թվականի վճիռ, գանգատ թիվ 66357/14.
The decision of the European Court of Human Rights in the case of Podeschi vs San Marino on April 13, 2017, application no 66357/14.
4. «Տիմմերմանսն ընդդեմ Բելգիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 02.05.2017 թվականի վճիռ, գանգատ թիվ 12162/07.
The decision of the European Court of Human Rights in the case of Timmermans vs Belgium on May 2, 2017, application no 12162/07.
5. «Զիյուսխենն ընդդեմ Բելգիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 02.05.2017 թվականի վճիռ, գանգատ թիվ 23572/07. The decision of the European Court of Human Rights in the case of Zschüschen v. Belgium on May 2, 2017, application no 23572/07.
6. ՀՀ վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0090/01/09 քրեական գործով 2011 թվականի փետրվարի 24-ին կայացված որոշում.
7. ՀՀ վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0054/01/15 քրեական գործով 2021 թվականի ապրիլի 14-ին կայացված
8. Bohdan Bezginskyi “Objective Side of the Composition of the Criminal Offence of Unlawful Enrichment”. Law Journal of the National Academy of Internal Affairs.
9. Փողերի լվացման գործերի քննության ուղեցույց՝ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2023թ. մարտի 2-ի նիստում.
Guidelines for the Investigation of Money Laundering Cases, adopted by the Interagency Commission on Combating Money Laundering, Terrorist Financing and Financing of the Proliferation of Weapons of Mass Destruction, Republic of Armenia, 2 March 2023.10.
10. Illicit enrichment; A guide to Laws targeting unexplained wealth; Andrew Dornbierer; 2021 Basel Institute on Governance.

Alisa Amirkhanyan

Senior prosecutor at the Department of Organization, Supervision and Legal Assistance of The Prosecutor General’s Office of the Republic of Armenia, Degree applicant of the Department of Criminal Law, Faculty of Law, Yerevan State University

**THE DEMARCATION OF ILLICIT ENRICHMENT FROM
RELATED OFFENCES¹**

Abstract

In the current criminal law system, the crime of illicit enrichment is characterised by its structural and substantive particularities, which determine the complexity of its relationship with related offences.

In this context, its demarcation from both corruption-related predicate offences and acts aimed at concealing or legalising illicitly obtained assets is of particular importance.

This article examines the relationship between illicit enrichment and related offences, identifies their distinguishing features, and proposes approaches to resolving issues of concurrence and competition of criminal law norms, thereby contributing to the development of a coherent and well-reasoned criminal law practice.

Keywords: illicit enrichment; the relationship between illicit enrichment and related offences; corruption-related offences; money laundering; the prohibition of double jeopardy.

¹ The article was presented on 16.04.2026 and was reviewed on 25.05.2026.

Алиса Амирханян

Старший прокурор управления по организации, контролю и правовому обеспечению Генеральной прокуратуры Республики Армения, соискатель кафедры уголовного права юридического факультета Ереванского государственного университета

РАЗГРАНИЧЕНИЕ НЕЗАКОННОГО ОБОГАЩЕНИЯ ОТ СМЕЖНЫХ ПРЕСТУПЛЕНИЙ¹

Абстракт

В современной системе уголовного права состав преступления «незаконное обогащение» отличается структурной и содержательной спецификой, что определяет сложность его соотношения со смежными преступлениями.

Особенно актуально его разграничение как с предшествующими преступлениями коррупционного характера, так и с деяниями, направленными на сокрытие

В статье предпринята попытка рассмотреть взаимосвязь состава преступления «незаконное обогащение» со смежными преступлениями, выявить их отличительные черты и предложить подходы к сочетанию и разрешению конкуренции уголовно-правовых норм, способствуя формированию единой и обоснованной уголовно-правовой практики.

Ключевые слова: незаконное обогащение; соотношение незаконного обогащения со смежными преступлениями; преступления коррупционного характера; отмывание денег; недопустимость повторного осуждения.

¹ Статья была представлена 16.04.2026 и прошла рецензирование 25.05.2026.

Աննա Հարությունյան

ՀՀ գլխավոր դատախազության սպորիինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՌԵԺԻՄՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ¹

Համառոտագիր

Կառավարման հատուկ ռեժիմների հետազոտությունն այսօր առավել քան երբևէ արդիական է՝ պայմանավորված գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում աճող ճգնաժամային իրավիճակներով՝ պատերազմներ, համաճարակներ, բնապահպանական աղետներ և այլ սպառնալիքներ: Այս ռեժիմները ներկայացնում են իրավակարգավորումների համալիր, որը ժամանակավորապես ընդլայնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները՝ նպատակ ունենալով արդյունավետ հաղթահարել արտակարգ իրավիճակները: Մյուս կողմից՝ լիազորությունների ընդլայնման դրսևորումները հանգեցնում են գործադիր իշխանության կողմից դրանք չարաշահելու ռիսկերի, որոնց չեզոքացման համար առնվազն անհրաժեշտ են սահմանադրական վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ: Կառավարման հատուկ ռեժիմների կիրառումը՝ որպես սահմանադրական ինստիտուտ, պահանջում է իրավական հստակեցում և գործնական կիրառման միատեսակ չափանիշներ՝ իրավական անվտանգության ապահովման նպատակով: Սույն հոդվածում վերլուծվել են իրավական հատուկ ռեժիմների պատմական զարգացումն ու էությունը, անդրադարձ է կատարվել ռեժիմների տեսակներին, արտակարգ իրավիճակների համարժեք գնահատման և դրանց համարժեք իրավական ռեժիմների ընտրության խնդրին: Աշխատանքում նաև առաջարկվում է կառավարման հատուկ ռեժիմի սահմանում՝ հիմնված իրավական և գործնական վերլուծության վրա: Այսպես, կառավարման ռեժիմները հոդվածում բնորոշվել են որպես ճգնաժամային իրավիճակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պաշտոնատար անձանց ժամանակավոր արտակարգ լիազորություններով օժտող իրավակարգավորումների ամբողջություն, որոնց գործողության ընթացքում հնարավոր է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների որոշ բացառությունների պահպանմամբ կասեցում կամ սահմանափակում:

¹ Հոդվածը ներկայացվել է 07.05.2025 թ., գրախոսվել է 17.06.2025 թ.:

Հիմնաբառեր – կառավարման հատուկ ռեժիմ, արտակարգ իրավիճակ, արտակարգ լիազորություն, արտակարգ օրենսդրություն, ռազմական դրություն:

Ներածություն

Երբ պետությունը բախվում է ճգնաժամային իրավիճակների, առաջնային հարց է ծագում, թե ի՞նչ միջոցներ պետք է ձեռնարկվեն դրանց առավել արագ և արդյունավետ հաղթահարման նպատակով: Արտակարգ իրավիճակների ի հայտ գալու հավանականությունը պատմության տարբեր շրջափուլերում մշտապես ուղեկից է եղել մարդկությանը: Առայսօր նման իրավիճակները ուրույն փորձություն են, այդ թվում՝ յուրահատուկ ցուցիչ են ճգնաժամային իրավիճակներում պետության դիմակայելու ունակությունը պարզելու հարցում, որն իրականացվում է՝ գնահատելով պետական իշխանության գրեթե բոլոր ճյուղերի (հատկապես գործադիր իշխանության) և ինստիտուտների գործողությունների արդյունավետությունը: Արտակարգ իրավիճակներում անհատ-հասարակություն-պետություն եռյակում առաջատար դերն անկասկած պետությանն է, և կախված իրավիճակի բնույթից՝ եռյակի բոլոր մասնակիցները կարող են միասնաբար գործել, և դա զգալիորեն կրարձրացնի գործադրվող ջանքերի արդյունավետությունը²: Սակայն հազվադեպ չեն դեպքերը, երբ իրավիճակն ինքնին ստեղծվում է նշված եռյակի օղակների միջև առկա հակասությունների սրման արդյունքում, և որպես հետևանք՝ հակամարտող բոլոր կողմերը ճգնաժամից դուրս են գալիս մեծ կորուստներով³:

Արտակարգ իրավիճակներում պետության առավել տարածված ու արդյունավետ գործունեության ձևը վարչաիրավականն է, որը նախատեսում է պետական կառավարման այնպիսի համակարգի ձևավորում, որը համարժեք կարձագանքի առաջ եկած սպառնալիքներին որպես ամբողջություն, ինչպես նաև իր բաղկացուցիչ մասը կազմող առանձին ենթահամակարգերի մակարդակում: Առհասարակ պետական կառավարման հատուկ ձևերի և մեթոդների կիրառումը պայմանավորված է առաջացած սպառնալիքներին ճիշտ ժամանակին արձագանքելու անհրաժեշտությամբ: Ճգնաժամային իրավիճակներում փոխվում է պետական կառավարման կազմակերպումը, գործադիր իշխանության կառուցվածքն ու համակարգը: Այդ ժամանակահատվածում պետական մարմինները սկսում են կիրառել նախապես մշակված օրենսդրական ակտերի հատուկ համակարգը՝ այսպես կոչված «արտակարգ օրենսդրությունը»⁴, որի հիման վրա պետական մարմինները օժտվում են արտակարգ լիազորություններով: Նման արտակարգ լիազորությունների կիրառման հնարավորություն նախատեսող հատուկ ռեժիմների ընտրությունը պետք է կատարվի՝ հաշվի առնելով իրավիճակի

² Ст'у Мелехин А. В. Административное право Российской Федерации: Курс лекций. М., 2009, էջ 195:

³ Ст'у նույն տեղում:

⁴ Ст'у Мелехин А. В., նշված աշխատությունը, 195-196-րդ էջեր:

դիսկայնության աստիճանը՝ բացառելով առավել մեղմ ռեժիմի արդյունավետ կիրառման հնարավորության դեպքում առավել խիստ գործիքակազմով օժտված ռեժիմի ընտրությունը:

Ինչպես պետությունների ձևավորման վաղ շրջանում, այնպես էլ ժամանակակից աշխարհում տարատեսակ արտակարգ իրավիճակների առաջացումը շարունակում է մարտահրավեր հանդիսանալ պետությունների համար՝ երբեմն նույնիսկ վերածվելով միջպետական խնդրի (ինչպիսին էր, օրինակ, 2020 թ. բռնկված կորոնավիրուսային համավարակը): Ուստի արտակարգ իրավիճակների հաղթահարման նպատակով կիրառվող կառավարման հատուկ ռեժիմների էության բացահայտումը շարունակում է առայսօր արդիական հանդիսանալ: Սույն հոդվածի **նպատակն է** ճգնաժամի հաղթահարման նպատակով կիրառվող հատուկ իրավական ռեժիմների էության վերլուծությունը, որը կարևոր է մի կողմից արտակարգ լիազորությունների կիրառման, մյուս կողմից մարդու հիմնական իրավունքների և ազատությունների, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների պաշտպանության հավասարակշռությունը հասկանալու համար: Հատուկ իրավական ռեժիմի հասկացության և դրա տեսակների վերլուծությունը կարևոր է նաև պրակտիկ տեսանկյունից դրանց ճիշտ կիրառման ապահովման համար: Հոդվածի նպատակը պայմանավորել է դրա շրջանակներում քննարկվող **խնդիրները**, այն է՝ ուսումնասիրել կառավարման հատուկ ռեժիմի գոյության անհրաժեշտությունը (այդ թվում՝ պատմական զարգացման համատեքստում), առաջարկել «կառավարման հատուկ ռեժիմ» եզրույթի միասնական սահմանումը և ըստ տեսակների դասակարգումը:

Կառավարման հատուկ ռեժիմների ձևավորման պատմական ակունքները

Կարծում ենք, որ կառավարման հատուկ ռեժիմների էությունն ու անհրաժեշտությունը բացահայտելու համար նախևառաջ հարկ է ուսումնասիրել դրանց առաջացման պատմական ակունքները և պատմության շրջափուլերում արտակարգ օրենսդրության ու արտակարգ լիազորությունների հայեցակարգի ձևավորման ընթացքը:

Այսպես, ճգնաժամային իրավիճակներում կառավարման հատուկ ռեժիմների հայտարարման դեպքերն արձանագրվել են դեռևս Հին Հռոմում, որտեղ պետության անվտանգությանը և կայունությանը սպառնացող լուրջ ճգնաժամներին արձագանքելու ձևը ողջ իշխանությունը մեկ անձին՝ դիկտատորին, հանձնելն էր: Հռոմեական դիկտատորայի մոդելը համարվում է ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող իրավական հատուկ ռեժիմների նախատիպը⁵: Առաջին հայտնի դիկտատորը, ըստ հասանելի աղբյուրների, Տ. Լարցիուս Ֆլավիուսն էր

⁵ St' u Fionnuala Ní Aoláin, Oren Gross, Law in Times of Crisis: Emergency powers in theory and practice, Cambridge University Press, 2006, DOI: <https://doi.org/10.1017/CBO9780511493997>, <http://ndl.ethernet.edu.et/bitstream/123456789/7465/1/68.pdf> 04.05.2025 թվականի դրությամբ, էջ 17:

Թ. ա. 501 թ. (ըստ հեղինակների՝ այս տարեթիվը կարող է ճշգրիտ չլինել)⁶: Հատկանշական է, որ դիկտատուրան կարող էր օգտագործվել նաև ներքին ճգնաժամերին դիմակայելու համար, սակայն այն կիրառվել է վաղ ժամանակահատվածում՝ պատմությանը հայտնի, այսպես կոչված «հրամանների պայքարի» ընթացքում, երբ պատրիկների և պլեբեյների միջև հանուն պաշտոնների և իշխանության ծավալվում էր պայքար⁷: Հռոմեական Հանրապետության ժամանակաշրջանում բոլոր դեպքերում, երբ Սենատի կարծիքով հանրապետությունը այնպիսի լուրջ վտանգի առաջ էր, որ վարչական պաշտոններ զբաղեցնող անձանց սովորական ենթակայական համակարգը բավարար չէր անվտանգության ապահովման համար, այն կարող էր առաջարկել, որ կոնսուլները նշանակեին դիկտատոր: Ընդ որում, կոնսուլները ևս օժտված էին նման նախաձեռնության իրավունքով, սակայն նման դեպքերում Սենատի հաստատումը պարտադիր էր: Նշանակման լիազորությունը երկու կոնսուլների սահմանադրական լիազորությունն է եղել, սակայն հնարավոր էր նշանակումը նաև մեծամասնության կողմից ընտրված կոնսուլի կողմից: Դիկտատորի ընտրությունն ուղեկցվում էր կոնսուլի կողմից իրականացվող պարտադիր հոգևոր ծեսերով: Սա, ըստ հռոմեացիների, կանխում էր դիկտատորի հակասահմանադրական նշանակումը և ընդգծում պետության պաշտպանության կրոնական նշանակությունը⁸: Դիկտատորի պաշտոնավարման ժամկետը սահմանափակվում էր վեց ամսով կամ իրեն նշանակած առավել երկար պաշտոնավարած կոնսուլի լիազորությունների ժամկետով, որը ենթակա չէր երկարաձգման⁹: Ճգնաժամի հաղթահարումից հետո դիկտատորը պարտավոր էր վայր դնել լիազորությունները: Պատմության մեջ արձանագրվել է դեպք, երբ դիկտատորը փորձել է պահպանել պաշտոնը ճգնաժամի լուծումից հետո, սակայն տրիբունները բավականին արագ ստիպել են վերջինիս հեռանալ¹⁰:

Հին աշխարհում արտակարգ իրավիճակների կառավարման փորձեր են արձանագրվել նաև Հին Եգիպտոսում, որտեղ սննդի պակասը, կլիմայի փոփոխությունը, պատերազմները, տնտեսական և դիվանագիտական տարատեսակ այլ պատճառները հանգեցնում էին պարենային ճգնաժամի առաջ գալուն: Ճգնաժամների բնույթը տատանվում էր սննդի պակասությունից մինչև մեծ սովի տարածում: Որոշ հնագետների կարծիքով՝ Հին Թագավորության փլուզումը պայմանա-

⁶ St'au Golden GK. Crisis Management during the Roman Republic: The Role of Political Institutions in Emergencies. Cambridge University Press; 2013, DOI: <https://doi.org/10.1017/CBO9781139507462>, էջ 11:

⁷ St'au Golden GK., նշված աշխատությունը, էջ 22:

⁸ Bruce Ackerman, The Emergency Constitution, 2020 J.Const.L.9(2020), էջ 24: St'au նաև Crisis Government in the Modern Democracies, Clinton Rossier, With a new introduction by William J.Quirk, Sixth Printing 2009, էջ 20, <https://books.google.am/books?id=rsWXgBcTmbwC&printsec=frontcover#v=onepage&q&f=false> 09.11.2024 դրությամբ:

⁹ St'au Fionnuala Ní Aoláin, Oren Gross, նշված աշխատությունը, էջ 21:

¹⁰ St'au նույն տեղում, էջ 22: St'au նաև Heitland, William E., The Roman Republic (3 vols., Holmes Beach, FL: Gaunt, 1969) Hekman, Susan J., Weber, the Ideal Type, and Contemporary Social Theory (South Bend, IN: University of Notre Dame Press, 1983), էջ 148, 150:

վորված է եղել կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած պարենային ճգնաժամով¹¹: Փարավոնյան ժամանակաշրջանին վերաբերող նյութերում սակավ են կենտրոնական իշխանության կողմից սննդի ճգնաժամի կառավարմանն ուղղված գործողությունների կատարման վերաբերյալ ապացույցները, իսկ կառավարումը տեղական իշխանությունների հայեցողությունն է եղել: Ջրհեղեղների արդյունքում պատճառված վնասների հաղթահարման նպատակով մեծ ջանքեր են պահանջվել ամբարտակների կառուցման համար: Համապետական մակարդակի կառավարման բացառություն է արձանագրվել Հին Թագավորությունում, որտեղ կառուցվել է Սադ էլ-Քաֆարա ամբարտակը: Ծինարարական փորձը, ըստ երևույթին, անհաջող էր դիտարկվել, քանի որ փլուզումից հետո դրա վերակառուցման փորձեր չեն արձանագրվել: Հատկանշական է, որ պարենային ճգնաժամը նկարագրող գրություններից որևէ մեկում չի հիշատակվում որևէ արքայի անուն, բացառությամբ ուշ շրջանի: Ջրհեղեղների հետևանքները մեծապես կախված են եղել համապետական կամ տեղական մակարդակի վարչական պաշտոններ զբաղեցնող անձանց՝ պարենային ճգնաժամը կառավարելու կարողություններից: Սննդի պաշարների կուտակումը և ճիշտ վերաբաշխումը կարևոր գործոն են հանդիսացել, իսկ սովի տարածումը ակնհայտորեն վկայել է պետական կառավարման անարդյունավետության մասին: Եգիպտագետների մեծ մասը Հին Թագավորության անկումը փորձում է բացատրել արքայի ուժի և հարստության անկմամբ և տեղական ազնվականության իշխանության ու անկախության ուժեղացմամբ¹²: Հատկանշական է, որ Եգիպտոսում արձանագրվել է ճգնաժամային իրավիճակում ներքին պաշարների կառավարման փորձ: Այսպես, դեռևս Ք. ա. 332 թ. Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Եգիպտոսի կառավարիչ նշանակված Կլեոմենես Նաուկրատիսը հացահատիկի սակավության ժամանակաշրջանում արգելել է դրա արտահանումը և իր ձեռքում կենտրոնացրել հացահատիկի ներպետական առկա պաշարները: Իհարկե, Կլեոմենես Նաուկրատիսը, ըստ պատմիչների, ղեկավարվել է սեփական շարժառիթներով, այն է՝ նպատակ է ունեցել շահույթ ստանալու նպատակով վերավաճառել հացահատիկը: Սակայն Եգիպտոսի պատմության մեջ նման օրինակի առկայությունը վկայում է ճգնաժամին դիմագրավելու քաղաքականության ձևավորման և նույնիսկ դրանից շահույթ ստանալու փորձերի մասին¹³:

Հետաքրքրական է նաև Հին Հնդկաստանի փորձը: Այսպես, Մաուրիների կայսրության արքա Աշոկա Մեծի (Ք. ա. 273 - Ք. ա. 232 թթ.) օրոք արձանագրվել են պարենային ճգնաժամների կառավարման փորձեր: Մասնավորապես, յուրաքանչյուր քաղաքում պաշտոնավարել է տեսուչը, որը սովի տարածման դեպքում

¹¹ Stéu Tarneem Farag Bayoumy, Wessam Fekry Ibrahim, Food Crises Management in the Pharaonic and the Ptolemaic Periods, Journal of Tourism, Hotels and Heritage (JTHH), Vol. 3 No. 1, (2021) pp 1-20, էջ 1:

¹² Stéu Tarneem Farag Bayoumy, Wessam Fekry Ibrahim, նշված աշխատությունը, էջ 11:

¹³ Տե՛ս առավել մանրամասն Tarneem Farag Bayoumy, Wessam Fekry Ibrahim, նշված աշխատությունը, էջ 6:

պատասխանատու է եղել պահեստից հացահատիկի բաշխման համար¹⁴:

Համավարակի հետևանքով առաջ եկած ճգնաժամի կառավարման փորձերից առավել ակնառու օրինակ են պատմականորեն «Սև մահ» անունը ստացած և 1346-1353 թթ. ընթացքում Եվրոպայի բնակչության մեկ երրորդի կյանքը խլած¹⁵ ժանտախտի ընթացքում հիվանդության տարածման կանխման նպատակով կիրառված միջոցները, քանի որ հենց այս պատմական իրադարձության հետ է մեծապես կապված կարանտինի՝ որպես կանխարգելիչ միջոցի գաղափարի ձևավորումը: Այսպես, ըստ սիցիլիացի պատմիչ Միքայել դե Պիացայի՝ ժանտախտի վարակակիրները առաջին անգամ եվրոպական ափ ոտք են դրել 1347 թ. հոկտեմբերին: Նրանք ժամանել են Մեսինայի ափ և մահացու հիվանդությամբ վարակել իրենց հետ նույնիսկ մի քանի խոսք փոխանակած յուրաքանչյուր անձի¹⁶: Վարակը սկսել է տարածվել կայծակնային արագությամբ և շատ շուտով գոյատևման մարտահրավեր դարձել ողջ Եվրասիա մայրցամաքի համար¹⁷: Ներկայումս լայնորեն կիրառվող կանխարգելիչ կարանտինի ակունքները ուղղակիորեն կապված են հենց այս համավարակի հետ, երբ 1377 թ. Ռագուսա քաղաքի (ներկայումս՝ Դուբրովնիկ) ծովային նավահանգստի ռեկտորը կիրառեց, այսպես կոչված, «տրենտինան» (արմատը՝ տրենտա, որը իտալերենից թարգմանաբար նշանակում է երեսուն)՝ երեսնօրյա մեկուսացման պահանջը: Կարանտինի էությունն այն էր, որ վարակված կամ ենթադրաբար վարակված վայրերից ժամանած նավերը նախքան նավահանգիստ ժամանելը պետք է խարսխված մնային և մեկուսանային երեսուն օրվա ընթացքում: Ցամաքային ճանապարհորդների համար այս ժամանակահատվածը դարձավ քառասուն օր՝ հավանաբար այն պատճառով, որ ավելի կարճ ժամանակահատվածը բավարար չէր համարվում հիվանդության տարածումը կանխելու համար, և հենց իտալերեն քառասուն թվից («կարանտա») առաջացավ կարանտին տերմինը¹⁸: Ավելին, Ռագուսա քաղաքի

¹⁴ Տե՛ս Romila Thapar, *Asoka and the Decline of the Mauryas*, 1958, Published by ProQuest LLC (2017), Էջ 403-404:

¹⁵ Տե՛ս առավել մանրամասն Andrew Noymer, Review: Contesting the Cause and Severity of the Black Death: A Review Essay, Reviewed Work: *The Black Death, 1346-1353: The Complete History* by Ole J. Benedictow, *Population and Development Review*, Vol. 33, No. 3 (Sep., 2007), pp. 616-627 (12 pages), <https://www.jstor.org/stable/25434639> 01.01.2025 դրությամբ, էջ 616:

¹⁶ Տե՛ս Michele da Piazza, Cronaca, ed. Antonino Giuffrida (Palermo: ILA Palma, 1980), 82: Տե՛ս նաև Aberth, J. (2005). Introduction: The Black Death in History. In: *The Black Death. The Bedford Series in History and Culture*. Palgrave Macmillan, New York. https://doi.org/10.1007/978-1-137-10349-9_1, էջ 1:

¹⁷ Տե՛ս առավել մանրամասն Andrew Noymer, Review: Contesting the Cause and Severity of the Black Death: A Review Essay, Reviewed Work: *The Black Death, 1346-1353: The Complete History* by Ole J. Benedictow, *Population and Development Review*, Vol. 33, No. 3 (Sep., 2007), pp. 616-627 (12 pages), <https://www.jstor.org/stable/25434639> 01.01.2025 դրությամբ:

¹⁸ Տե՛ս Gian Franco Gensini, Magdi H. Yacouba, Andrea A. Contia, The concept of quarantine in history: from plague to SARS Gensini, *Journal of Infection*, Volume 49, 2004, Issue 4, 257 – 261, էջ 258, <https://pmc.ncbi.nlm.nih.gov/articles/PMC7133622/#:~:text=The%20imposition%20to%20remain%2030,protected%20from%20the%20Black%20Death>: Առավել մանրամասն տե՛ս նաև Stuard SM. A state of deference: Ragusa/Dubrovnik in the medieval centuries. Philadelphia: University of Pennsylvania Press; 1992.

գլխավոր բժիշկը խորհուրդ տվեց քաղաքի պարիսպներից դուրս հիմնել վարակված կամ որպես վարակակիր կասկածվող քաղաքացիների բուժման մեկուսացված հաստատություն¹⁹: Մեկուսարանում 30-40 օր անցկացնելու պահանջը պայմանավորված էր ոչ միայն առողջապահական նկատառումներով, այլև տնտեսական անհրաժեշտությամբ, քանի որ առևտրային ցանցի որակն ու անվտանգությունը կարևոր էր պաշտպանել «Սև մահ» ժանտախտից: Ռազուսա քաղաքի իշխանությունների ուշադրության սևեռումը ժանտախտի կանխարգելմանը հանգեցրեց առաջին, այսպես կոչված, «պաշտոնական» կարանտինի գաղափարի ձևավորմանը, որն ընդգրկում էր առանձին իրավական համակարգ՝ ուղղված առողջապահական և տնտեսական ոլորտների պաշտպանությանը²⁰: Ռազուսա քաղաքում 1377 թ. ընդունված հիմնական օրենքները արգելում էին վարակված տարածքների քաղաքացիներին մտնել քաղաք նախքան մեկամյա մեկուսացման ժամկետի լրանալը, օրենքը խախտող անձինք տուգանվում էին և հարկադիր մեկուսացվում, իսկ Ռազուսայում ապրող անձանց արգելված էր այցելել մեկուսավայր, մատակարարել նրանց սնունդ, բացառությամբ այն անձանց, որոնց քաղաքի Մեծ խորհրդի որոշմամբ հանձնարարվել էր հոգ տանել մեկուսացված անձանց մասին: 1423 թ. Վենետիկում ստեղծվեց առաջին կարանտինային կենտրոնը՝ այսպես կոչված «լագարեթ»-ը, որը գտնվում էր քաղաքին մոտ տեղակայված կղզում: Որպես հետևանք՝ վենետիկյան համակարգը օրինակելի դարձավ եվրոպական այլ երկրների համար²¹: Հաջորդ 100 տարիների ընթացքում նմանատիպ օրենքներ ընդունվեցին ինչպես իտալական (Պիզա), այնպես էլ ֆրանսիական նավահանգիստներում (Մարսել), ընդ որում, դրանք սկսեցին իմպլեմենտացվել ըստ Միջին դարերի առանձնահատկությունների²²: Հատկանշական է, որ արդեն 18-րդ դարում կարանտինային որոշ միջոցներ մեկնաբանվում էին որպես իրականում քաղաքական ենթատեքստ ունեցողներ: Այսպես, որոշ դեպքերում կատարվում էր նամակագրության ախտահանում, որը պատրվակ էր քաղաքական լրտեսության իրականացման համար²³:

Վերոգրյալ օրինակները վկայում են, որ ճգնաժամային իրավիճակները կառավարելու փորձերը արձանագրվել են դեռևս վաղնջական ժամանակներից: Դրանք աստիճանաբար զարգացել են, կատարելագործվել և ի վերջո հանգեցրել

¹⁹ Տե՛ս նույն տեղում: Առավել մանրամասն տե՛ս նաև Cosmacini G. *L'arte lunga. Storia della medicina dall'antichità a oggi*. Bari: Editori Laterza; 2001:

²⁰ Տե՛ս նույն տեղում: Առավել մանրամասն տե՛ս նաև Frati P. Quarantine, trade and health policies in RagusaDubrovnik until the age of George Armmenius-Baglivì. *Med Secoli* 2000;12:103—27:

²¹ Տե՛ս Gian Franco Gensinia, Magdi H. Yacouba, Andrea A. Contia, նշված աշխատությունը, էջ 258-259: Առավել մանրամասն տե՛ս նաև Sehdev PS. The origin of quarantine. *Clin Infect Dis* 2002;35: 1071-2:

²² Տե՛ս Gian Franco Gensinia, Magdi H. Yacouba, Andrea A. Contia, նշված աշխատությունը, էջ 259: Առավել մանրամասն տե՛ս նաև Mafart B, Perret JL. History of the concept of quarantine. *Med Trop* 1998;58:14—20:

²³ Տե՛ս նույն տեղում: Առավել մանրամասն տե՛ս նաև Knowelden J. Quarantine and isolation. 15th ed. The new Encyclopaedia Britannica, Chicago: Helen Hemingway Benton; 1979

Ժամանակակից աշխարհում կիրառվող հատուկ ռեժիմների ձևավորմանը: Ինչպես նշվեց, ձևավորված և ներկայումս կիրառվող նման ռեժիմի օրինակ է կարանտինը, իսկ պատերազմի ընթացքում ռազմական դրության ռեժիմին բնորոշ տարրեր նկատվում են դեռևս Հին Հռոմում: Իհարկե ռազմական իրավական ռեժիմի հայտարարման առավել ցայտուն օրինակներ արձանագրվել են ավելի ուշ շրջանում, օրինակ՝ անգլիական քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում (1642-1651 թթ.)²⁴: Սկզբնապես «ռազմական դրություն» (marital law) եզրույթը կիրառվել է այսօր հայտնի ռազմական իրավունքի բնորոշման համար, որի նպատակն է եղել գործի կարգապահության և զինվորականների ղեկավարման ապահովումը²⁵: Պատմական համատեքստի տեսանկյունից դիտարկելիս կարևոր է նկատի ունենալ, որ Անգլիայում ռազմական իրավական ռեժիմի (marital law) կիրառումը ներառում էր այնպիսի միջոցներ, ինչպիսիք էին՝ հատուկ ենթակայությամբ ռազմական տրիբունալների ստեղծումը, դրանց կողմից գործերի արագ քննությունը՝ առանց երդվյալ ատենակալների մասնակցության և, իհարկե, զինվորականների նկատմամբ խիստ պատժատեսակների կիրառումը: Այսպես, ի սկզբանե ռազմական դրությունը չէր ընկալվում որպես քաղաքացիական բնակչության նկատմամբ ներգործող ռազմական ղեկավարում: Այն ընդգրկում էր միջոցների և ընթացակարգերի համագումար, որոնց բնույթը պայմանավորված էր այն ժամանակաշրջանով և վայրով, որտեղ արքայական պաշտոնյաների որոշմամբ ռազմական դրությունը կիրառվում էր: Սակայն, որպես կանոն, 17-րդ դարի կեսերին Անգլիայում ռազմական իրավական ռեժիմը անձանց կյանքին և առողջությանը սպառնացող դեպքերում դատարաններին օժտում էր գրավոր բողոքների և վկայությունների հիման վրա գործեր հարուցելու և մեղադրյալներին ռազմական խորհրդի և ոչ երդվյալ ատենակալների ներկայությամբ դատապարտելու իրավասությամբ: Ռազմական դատարանը դատական ակտը կայացնում էր ձայների մեծամասնությամբ, սակայն նախագահողն օժտված էր երկու ձայնի իրավունքով, իսկ ձայների հավասարության դեպքում վերջինիս ձայնը վճռորոշ էր²⁶: Ռազմական դատարանները պարզեցված ընթացակարգով էին գործում, որն անգլիական իրավունքում հայտնի դարձավ որպես «տրիբունալ», որը խուսափում էր ընդհանուր իրավունքի ձևական պահանջներից, մասնավորապես՝ մեծ և փոքր խմբերի երդվյալ ատենակալների ինստիտուտի կիրառումից: Ռազմական դատարանները, անկասկած, իրավասու էին գործելու նման ընթացակարգով²⁷: Անգլիայում ի սկզբանե ռազմական իրավական ռեժիմի կիրառման առավելությունը երկուսն էր: Առաջին՝ արքայական իրա-

²⁴ Stéu Collins, J. M. (2014). Hidden in Plain Sight: Martial Law and the Making of the High Courts of Justice, 1642–60. *Journal of British Studies*, 53(04), 859–884. doi:10.1017/jbr.2014.113, էջ 862

²⁵ Stéu Fionnuala Ní Aoláin, Oren Gross, նշված աշխատությունը, էջ 31:

²⁶ Stéu Collins, J. M. (2014). Hidden in Plain Sight: Martial Law and the Making of the High Courts of Justice, 1642–60. *Journal of British Studies*, 53(04), 859–884. doi:10.1017/jbr.2014.113, էջ 862:

²⁷ Stéu նույն տեղում:

վարանները խուսափում էին երդվյալ ատենակալների ինստիտուտի կիրառումից: Անկարգությունների տարածման շրջաններում, որտեղ երդվյալ ատենակալները կարող էին չեղարկել դատական ակտը, ռազմական դրությունը կիրառվում էր որպես ընդհանուր իրավակարգավորումների կիրառման այլընտրանք: Երկրորդ՝ բանակի հրամանատարները գնահատում էին ռազմական դրությունը որպես գործիք, որի կիրառմամբ դատավարությունն ընթանում էր առավել արագ և առավել կոշտ: Եթե զինվորը մեղադրվում էր գողության կամ դասալքության մեջ, ապա մեղավոր ճանաչվելու պարագայում վերջինս արագ էր դատապարտվում մահվան²⁸: Սակայն նման միջոցների կիրառումը դժգոհություններ և դրա անօրինականության վերաբերյալ բողոքներ առաջացրեց կիրառություն ստացած շրջաններում: Ռազմական իրավական ռեժիմի վերաբերյալ ամենանշանակալից քննարկումներն ու վեճերը տեղի են ունեցել 1628 թ. և ազդեցություն են ունեցել ռազմական դրության ռեժիմի ներկայիս մոդելի ձևավորման վրա: Այսպես, պառլամենտի անդամները սկսեցին քննել 1624-1628 թթ. ընթացքում Ջեյմս Առաջինի և Կարլ Առաջինի կարգադրությունները, որոնց նպատակն էր ուժեղացնել Անգլիայի հարավում տեղակայված զորքերի կարգապահությունը: Այս վեճերն ի վերջո հանգեցրին Իրավունքի մասին հանրագրի ընդունմանը²⁹: Մասնավորապես, 1629 թ. պառլամենտը հարկադրեց արքային ստորագրել Իրավունքի մասին հանրագիրը, որով փաստացի արգելվում էր երբևիցե ռազմական իրավական ռեժիմի կիրառումը քաղաքացիական բնակչության, ինչպես նաև զինվորականների նկատմամբ, բացառությամբ պատերազմների ժամանակ: Այդ պահից սկսած գրեթե չեն արձանագրվել դեպքեր, երբ ռազմական իրավական ռեժիմը կիրառվեր Անգլիայի քաղաքացիական բնակչության նկատմամբ, և կարելի է եզրակացնել, որ անգլիացի իրավաբանները այն կարծիքին էին, որ քաղաքացիական բնակչության նկատմամբ այս ռեժիմը կիրառելի չէ³⁰: Հատկանշական է, որ այս իրավակարգավորումը չտարածվեց անգլիական գաղութների վրա: Հեղինակների գնահատմամբ՝ Ամերիկայի Մասաչուսեթս նահանգում ռազմական դրության կիրառումը այն կայծերից մեկն էր, որը հեղափոխության բռնկման պատճառ դարձավ: Ռազմական դրության ընթացքում կիրառվող բռնությունը հանգեցրեց գրեթե բոլոր նահանգների հիմնական օրենքներում այնպիսի դրույթների ամրագրման, որոնց համաձայն՝ ռազմական իշխանությունը պետք է ենթակա լիներ քաղաքացիական իշխանությանը: Այս դրույթը ամրագրվեց բոլոր նահանգների Սահմանադրություններում, բացառությամբ Նյու Յորքի³¹: Հատկանշական է, որ

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 863:

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 864:

³⁰ Տե՛ս William H. Rehnquist, *Martial law and its effect upon the soldier's liability to the civilian*, Harvard University Press, 1942, էջ 383, https://scholarship.law.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=8059&context=penn_law_review 14.01.2025 դրությամբ:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 383-384:

Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ որպես նորաստեղծ պետության պատմության վաղ տարիներին ռազմական իրավական ռեժիմը չի կիրառվել: Նախագահ Վաշինգտոնը, ուղարկելով զորքերին Փենսիլվանիա նահանգում սկսված անհնազանդությունը զսպելու, տվել է հստակ ցուցումներ, որ զորքերը պետք է ենթարկվեն քաղաքացիական իշխանությանը, իսկ զինվորականները չպետք է կատարեն այնպիսի գործողություններ, որոնք դուրս կգային սովորական ոստիկանական իրավասության շրջանակներից³²: Հետաքրքրական է, որ ԱՄՆ պատմության վաղ տարիներին արդեն իսկ արձանագրվել են դեպքեր, երբ նախագահը փորձել է ռազմական իրավական ռեժիմի հայտարարման միջոցով սահմանափակել կոնկրետ անձի իրավունքները, սակայն օրենսդիր մարմինն ընդդիմացել է: Այսպես, նախագահ Ջեֆերսոնը Բուրի հետ հակամարտության ժամանակ փորձել է օգտագործել ռեժիմը ձերբակալությունների արգելքի (Habeas Corpus) օրդերի գործողության կասեցման համար, սակայն Կոնգրեսը ընդդիմացել է³³: Ավելին, արձանագրվել է դեպք, երբ դատարանը տուգանել է քաղաքում ռազմական իրավական ռեժիմի հայտարարած գներալին: Այսպես, Գներալ Ջեքսոնը ռազմական ռեժիմ է հայտարարել Նյու Ջերսի քաղաքում և կասեցրել օրդերի գործողությունը: Սակայն դրա անհրաժեշտության վերացումից հետո վերջինս ընդունել է դրա աննպատակահարմարությունը և վճարել դատական կարգով նշանակված տուգանքը³⁴:

Վերոգրյալ պատմական իրադարձությունները կառավարման հատուկ ռեժիմների ձևավորման պատմության, անշուշտ, ընդամենը մի քանի օրինակն են, սակայն թույլ են տալիս եզրակացնել, որ հատուկ ռեժիմների ձևավորումը և զարգացումը սերտորեն կապված են պետությունների ձևավորման պատմության հետ ու պայմանավորված են եղել պատերազմների, բնական աղետների և տարատեսակ այլ ճգնաժամերի հաղթահարման անխուսափելի անհրաժեշտությամբ: Կարծում ենք, որ ճգնաժամի ծագումը և սովորական կառավարման ռեժիմի պայմաններում իրացվող միջոցների ոչ բավարար լինելու փաստի՝ իշխանությունների կողմից գիտակցումն է, որն ընկած է հատուկ ռեժիմների ձևավորման ակունքում և առայսօր էլ շարունակում է մնալ էական գործոն:

2. Կառավարման հատուկ ռեժիմի բնորոշման հիմնախնդիրը

Հաշվի առնելով վարչաիրավական հատուկ ռեժիմի կիրառման համար կարևոր նախապայմանի, այն է՝ արտակարգ իրավիճակի առաջացման պարտադիրությունը՝ անհրաժեշտ ենք համարում սույն հոդվածում նախ անդրադառնալ եզրույթի հասկացությանը:

Տարբեր պետությունների իրավական ակտերում «արտակարգ իրավիճակ»

³² Տե՛ս նույն տեղում, էջ 384: Առավել մանրամասն տե՛ս նաև Robinson. J., in State v. Brown, 71 W. Va. 519, 544. 77 S. 1. 243 (1912):

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 384:

³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 384:

եզրույթը տարբեր կերպ է բնորոշվում: Գրականությունում լայն իմաստով եզրույթը վերաբերում է բոլոր այնպիսի իրավիճակներին, երբ բնականոն սոցիալական կյանքը վտանգվում է, իսկ իրավապահ համակարգը բախվում է որոշակի դժվարությունների իր սովորական լիազորությունների շրջանակում ճգնաժամը հաղթահարելու հարցում, ներառյալ՝ պատերազմները, ապստամբությունները, քաղաքական անկարգությունները, տարերային և տեխնաժին աղետները, համավարակները և ծանր հանցագործությունների կատարումը³⁵: Հատկանշական է, որ ներպետական օրենսդրությունում արտակարգ իրավիճակ եզրույթը հենց այս իմաստով է օգտագործվում: Մասնավորապես, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 1-ին հոդվածում արտակարգ իրավիճակը բնորոշվում է որպես որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնաժին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջության ու շրջակա միջավայրի զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման³⁶: Նեղ առումով «արտակարգ իրավիճակ» եզրույթը վերաբերում է այնպիսի վտանգավոր իրադարձությունների, ինչպիսիք կարող են վերահսկվել պետական իշխանության կողմից և լուծվել առանց արտակարգ լիազորությունների իրացման³⁷: Այս տարբերակումը կարևոր է գործադիր իշխանության կողմից յուրաքանչյուր դեպքում կիրառվող ռեժիմի ճիշտ ընտրության և կիրառման համար: Որպես օրինակ՝ իրավիճակի լրջության աստիճանի ճիշտ գնահատումը ուղիղ համեմատական է արտակարգ դրություն կամ արտակարգ իրավիճակ ռեժիմի ճիշտ ընտրությանը: Չնայած այս երկու ռեժիմները հանրային ընկալմամբ երբեմն նույնանում են, սակայն տարբեր են դրանց իրավական հիմքերը և նշանակությունը: Այս համատեքստում կարծում ենք, որ կարևոր է վարչաիրավական հատուկ ռեժիմի հասկացության բնորոշումը և դրա տեսակների առանձնացումը:

Այսպես, գրականությունում առկա չէ վարչաիրավական հատուկ ռեժիմի միասնական բնորոշում: Հաճախ օգտագործվում է «արտակարգ ռեժիմ» (emergency regime) եզրույթը, որը հեղինակները բնորոշում են երեք հատկանիշով: Առաջինը այն է, որ հատուկ ռեժիմների հիմքում ընկած է սահմանադրական ար-

³⁵ Տե՛ս Jiang Bixin, «Emergent situation and rule of administrative law», Higher Education Press and Springer-Verlag 2007, Front. Law China 2007, 2(2): 167–197, DOI 10.1007/s11463-007-0009-x, էջ 168:

³⁶ Տե՛ս «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-265, ընդունվել է՝ 02.12.1998թ., ուժի մեջ է մտել՝ 10.01.1999թ.:

³⁷ Տե՛ս Jiang Bixin, «Emergent situation and rule of administrative law», Higher Education Press and Springer-Verlag 2007, Front. Law China 2007, 2(2): 167–197, DOI 10.1007/s11463-007-0009-x, էջ 168:

տակարգ լիազորությունների իրացումը³⁸: Այլ կերպ ասած՝ արտակարգ ռեժիմները ժողովրդավարական կառավարման ձևի շրջանակներում սահմանադրական լիազորությունների իրացման արդյունք են: Չնայած այն հանգամանքին, որ հատուկ ռեժիմները խարսխված են սահմանադրական կարգավորումների վրա՝ դրանք տարբերվում են սահմանադրական դիկտատուրայից երկու էական բնութագրիչով. արտակարգ լիազորությունների գործողությունը պետք է խիստ ժամանակավոր բնույթ կրի, դրա գործողությունը պետք է չտարածվի ճգնաժամի հաղթահարման ժամանակաշրջանից դուրս, բացի այդ, դրան պետք է հաջորդի վերադարձ նախքան ճգնաժամը գործող ժողովրդավարական սահմանադրական համակարգին³⁹: Ըստ հեղինակների՝ այս երկու բնութագրիչները արտակարգ ռեժիմները բնութագրող երկրորդ և երրորդ հատկանիշներն են⁴⁰: Սկզբունքորեն չառարկելով հատուկ ռեժիմները բնութագրող այս երեք հատկանիշները՝ կարծում ենք, որ դրանք առավելապես բնորոշ են դրա տեսակներից միայն մեկին՝ արտակարգ դրություն իրավական ռեժիմին: Մինչդեռ հատուկ ռեժիմը, մեր համոզմամբ, շատ ավելի լայն կատեգորիա է, որն ընդգրկում է ոչ միայն արտակարգ դրության, այլև ռազմական դրության և արտակարգ իրավիճակի ռեժիմները, որոնց կիրառման իրավական հիմքերը, նպատակն ու նշանակությունը տարբեր են: Երբ պետությունը բախվում է որևէ ճգնաժամի՝ առաջին հերթին պետական պաշտոն գրադեցնող անձինք պետք է կողմնորոշվեն կիրառման ենթակա այնպիսի միջոցների ընտրության հարցում, որոնք հնարավորություն կտան հաղթահարել իրավիճակը: Այն պետություններում, որտեղ պետական իշխանությունը խարսխված է իրավունքի գերակայության սկզբունքի վրա, նման իրավիճակներում անխուսափելիորեն ծագում են իրավական հարցեր, թե կիրառվելիք միջոցները որքանով են կարգավորվում գործող իրավական ակտերով, և թե արդյո՞ք որոշ լիազորությունների իրացումը պետք է զուգորդվի վերահսկողության և լեգիտիմացիայի մեխանիզմների կիրառմամբ, որպեսզի դրանք համահունչ լինեն իրավունքի գերակայության սկզբունքին: Երբ ներպետական սահմանադրաիրավական կարգավորումները նախատեսում են և հնարավորություն են տալիս իրացնելու արտակարգ լիազորություններ, զուգահեռաբար առաջ են գալիս որոշակի բարդություններ՝ կապված մյուս սահմանադրական սկզբունքների ստորադասման վտանգի հետ: Հարցեր են առաջանում նաև արտակարգ լիազորությունների իրացման մեխանիզմների կարգավորման հետ, հատկապես օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների դերի և փոխհարաբերությունների համատեքստում: Մյուս կողմից, նման արտակարգ լիազորությունների իրացման

³⁸ Stéu Lijphart, A. (1978). Emergency Powers and Emergency Regimes: A Commentary. Asian Survey, 18(4), 401–407. doi:10.2307/2643402 էջ 402:

³⁹ Stéu Frederick M. Watkins, “The Problem of Constitutional Dictatorship,” in Carl J. Friedrich and Edward S. Mason, eds., Public Policy: A Yearbook of the Graduate School of Public Administration, Harvard University, 1940 (Cambridge, Mass.: Harvard University Press, 1940), էջ 329:

⁴⁰ Stéu Lijphart, նշված աշխատությունը, էջ 402:

և դրանց վերահսկողության վերաբերյալ սահմանադրաիրավական նորմերի բացակայությունը վտանգավոր է ճգնաժամի ընթացքում իրավական համակարգից և լեգիտիմացնող վերահսկողությունից դուրս արտակարգ լիազորությունների իրացման տեսանկյունից: Բացի այդ, արտակարգ իրավիճակները քաղաքական գործիչների առաջ արժարժում են ևս մի կարևոր հարց, այն է՝ կիրառվող միջոցները պետք է համապատասխանեն պետության ստանձնած միջազգային պարտավորություններին, հատկապես մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի կարգավորումների լույսի ներքո: Բացի այդ, լուծման ենթակա կարևոր հարցադրում է նաև ստեղծված իրավիճակի բարդության աստիճանի գնահատումը, օրինակ՝ հակամարտության բնութագրումը՝ որպես արտակարգ իրավիճակ կամ միջպետական կամ ներպետական ռազմական հակամարտություն, որի պարագայում պահպանման են ենթակա նաև միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը⁴¹: Շատ պետությունների սահմանադրություններում առանձնացվում են արտակարգ իրավիճակների մի քանի տեսակներ, որոնց տարբերակման հիման վրա կոնկրետ հատուկ ռեժիմի տեսակի հայտարարումը սահմանադրորեն թույլատրելի է: Նման տարբերակումը վերաբերում է ոչ միայն հատուկ ռեժիմի հայտարարման ձևին և գործողության ժամկետին, այլև կառավարության կողմից իրացման ենթակա արտակարգ լիազորությունների բնույթին, շրջանակին և ոլորտին, որոշակի սահմանադրական իրավունքների և երաշխիքների սահմանափակման հնարավորությանը⁴²: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ պետությունների սահմանադրություններում վարչաիրավական հատուկ ռեժիմների վերաբերյալ կարգավորումները տարբերվում են, և հաճախ դրանք ուղղակիորեն չեն բնորոշվում որպես հատուկ ռեժիմ: Փոխարենը, կարող են սահմանվել գործադիր իշխանությանը որոշակի ժամանակավոր արտակարգ լիազորություններով շնորհման սահմանադրական նորմեր: Օրինակ՝ Ավստրիայի Սահմանադրությունը մի քանի կարգավորում է պարունակում ճգնաժամի հաղթահարման վերաբերյալ, ընդ որում՝ դրանք մեծամասամբ վերաբերում են ոչ թե այնպիսի իրավիճակներին, երբ ազգի գոյությունը վտանգված է, այլ այնպիսի դեպքերին, երբ պառլամենտը որոշակի պատճառներով պայմանավորված հնարավորություն չունի գործելու: Մասնավորապես, Սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված է օրենսդիր իշխանության փոխանցման հնարավորություն, եթե պառլամենտի հրավիրմանը կամ գործունեությանը խոչընդոտող հանգամանքներ են առկա և միաժամանակ անհրաժեշտ է կանխել հասարակությանը ակնհայտ և անուղղելի վնասով սպառնացող վտանգը: Նման դեպքերում նախատեսված է դաշնային կա-

⁴¹ Stéu Hunt, Adrian, Review of Law in Times of Crisis: Emergency Powers in Theory and Practice, by O. Gross & F. N. Aoláin, Journal of Law and Society, vol. 34, no. 4, 2007, pp. 639–47. JSTOR, <http://www.jstor.org/stable/20109771> 04.09.2025թ. դրությամբ, էջ 639:

⁴² Stéu Fionnuala Ní Aoláin, Oren Gross, Law in Times of Crisis: Emergency powers in theory and practice, Cambridge University Press, 2006, DOI: <https://doi.org/10.1017/CBO9780511493997>, էջ 41:

ռավարության առաջարկով դաշնային նախագահի կողմից իր և կառավարության պատասխանատվությամբ օրենքում ժամանակավոր փոփոխություններ կատարելու հնարավորություն: Ավստրիայի Սահմանադրությունը պարունակում է ճգնաժամի ժամանակահատվածում գործող ևս մեկ իրավական հատուկ ռեժիմի հիշատակում: Մասնավորապես, Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված են այն պայմանները, երբ դաշնային զինված ուժերը կարող են գործել սեփական նախաձեռնությամբ պետության ռազմական պաշտպանության, սահմանադրական ինստիտուտների պաշտպանության, կարգի և պաշտպանության ապահովման կամ տարատեսակ աղետների ժամանակ օգնության ցուցաբերման նպատակով: Հատկանշական է, որ կորոնավիրուսային համավարակի ընթացքում Սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված գործիքակազմը չի կիրառվել: Փոխարենը, ճգնաժամի սկզբում հրավիրվել է պառլամենտի հատուկ նիստ՝ «ԲՈՎԻԴ-19-ի մասին» օրենքի ընդունման նպատակով⁴³: Ի տարբերություն Ավստրիայի Սահմանադրության, որտեղ հատուկ իրավական ռեժիմները ուղղակիորեն տարանջատված չեն (չնայած կարգավորումներից կարելի է եզրակացնել արտակարգ և ռազմական դրության ռեժիմների գոյության մասին)՝ Հունգարիայի Սահմանադրության 48-54-րդ հոդվածներով ուղղակիորեն նախատեսված է վեց ռեժիմ՝ ազգային ճգնաժամի ռեժիմ (պառլամենտը հայտարարում է պատերազմի կամ նման վտանգի դեպքում), արտակարգ դրություն (պառլամենտը հայտարարում է սահմանադրական կարգի տապալման, իշխանության միանձնյա պահպանման, անձանց կյանքին կամ սեփականությանը սպառնացող զինված զանգվածային բռնության կիրառմանն ուղղված գործողությունների դեպքում), կանխարգելիչ պաշտպանության ռեժիմ (պառլամենտը հայտարարում է արտաքին ռազմական հարձակման վտանգի առկայության կամ ռազմական դաշինքի առաջ ունեցած պարտավորությունների կատարման նպատակով), ահաբեկչական վտանգի դրություն (պառլամենտը հայտարարում է ահաբեկչական հարձակման կամ նման վտանգի առկայության դեպքում), անսպասելի հարձակման դրություն (այս ռեժիմի պարագայում կառավարությունը պարտավոր է անմիջապես արձագանքել և պաշտպանել Հունգարիայի պետական տարածքը անսպասելի արտաքին ռազմական հարձակումից) և վտանգի դրություն (վտանգի դրությունը հայտարարվում է կառավարության կողմից անձանց կյանքին և սեփականությանը սպառնացող բնական կամ տեխնածին աղետների ի հայտ գալու դեպքում): Հատկանշական է, որ Հունգարիայում ևս կորոնավիրուսային համավարակի ընթացքում չի հայտարարվել արտակարգ դրություն: Փոխարենը, 2020 թ. մարտին Հունգարիայի կառավարության կողմից հայտարարվել է սահմանադրորեն ամրագրված վտանգի դրության ռեժիմը: Կառավարության որոշ-

⁴³ Տե՛ս Venice Commission - Observatory on emergency situations, <https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory//T03-E.htm> 04.05.2025թ. դրությամբ: Տե՛ս նաև Venice Commission - Observatory on emergency situations: Austria, <https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory/AUT-E.htm> 04.05.2025թ. դրությամբ:

ման գործողությունը սահմանվել էր անորոշ ժամկետով՝ մինչև վտանգի վերացումը, սակայն պառլամենտի կողմից ընդունված և նույն թվականի հունիսին ուժի մեջ մտած ակտով պառլամենտը կոչ է արել կառավարությանը դադարեցնել ռեժիմի գործողությունը, ինչին հաջորդել է կառավարության կողմից վտանգավոր դրության ռեժիմի դադարեցման ակտի ընդունումը: Նույն օրը կառավարությունը հայտարարել է առողջապահական ճգնաժամի և համավարակային պատրաստվածության մասին⁴⁴: Հետաքրքիր է նաև Ֆրանսիայի փորձի ուսումնասիրությունը, որտեղ արտակարգ դրության ռեժիմը ինքնին նախատեսված չէ Սահմանադրությամբ, իսկ Սահմանադրական խորհուրդը երկու անգամ արձանագրել է, որ օրենսդիր իշխանությունը իրավասու է նախատեսել արտակարգ դրության ռեժիմ: Ֆրանսիայի Սահմանադրությամբ նախատեսված է միայն երկու հատուկ իրավական ռեժիմ: Մասնավորապես, Սահմանադրության 16-րդ հոդվածով նախագահին վերապահվում են բացառիկ լիազորություններ բոլոր այն դեպքերում, երբ պետության ինստիտուտները, ազգի անկախությունը, տարածքային ամբողջականությունը կամ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը հայտնվում են լուրջ և անմիջական վտանգի ներքո, և խախտվում է պետական իշխանության սահմանադրական ինստիտուտների բնականոն գործունեությունը: Մյուս՝ սահմանադրորեն ամրագրված ռեժիմը 36-րդ հոդվածով ամրագրված, այսպես կոչված, պաշարման ռեժիմն է, որը կիրառվել է միայն մեկ անգամ՝ 1961 թ. Ալժիրում տեղի ունեցած հեղաշրջման փորձից հետո: Այլ պետությունների հետ համեմատության համատեքստում նշենք, որ Ֆրանսիայում կորոնավիրուսային համավարակի ընթացքում հայտարարվել է արտակարգ դրություն, սակայն, ինչպես նշվեց, այդ ռեժիմը սահմանադրորեն ամրագրվածների շարքին չի դասվում և հայտարարվել է առողջապահության նախարարի կողմից Հանրային առողջապահության օրենսգրքի դրույթների հիման վրա: Հիմնական սահմանափակումները վերաբերել են ազատ տեղաշարժի և հավաքների ազատության սահմանափակմանը⁴⁵: Մեկ այլ հետաքրքիր օրինակ է Շվեյցարիան, որի Սահմանադրությունում առհասարակ նախատեսված չէ արտակարգ դրության ռեժիմը, սակայն դոկտրինալ մակարդակով ընդունված է արտակարգ դրություն հայտարարելու հնարավորությունը, եթե պետության կամ բնակչության ֆիզիկական գոյությունը վտանգված է, օրինակ, պատերազմի կամ բնական աղետի հետևանքով: Սահմանադրորեն ամրագրված են մի քանի նորմեր գոյության վտանգի սահմանը չանցնող արտասովոր իրավիճակների վերաբերյալ, որոնց պարագայում գործադիր իշխանությունը Սահմանադրության

⁴⁴ St'u Venice Commission - Observatory on emergency situations,

<https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory//T03-E.htm> 04.09.2025 թ. դրությամբ:

St'u նաև Venice Commission - Observatory on emergency situations: Hungary,

<https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory/HUN-E.htm> 04.09.2025 թ. դրությամբ:

⁴⁵ St'u Venice Commission - Observatory on emergency situations: France,

<https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory/FRA-E.htm> 04.09.2025թ. դրությամբ:

հիման վրա իրավասու է անմիջականորեն որոշակի ակտեր ընդունել: Մասնավորապես, 185-րդ հոդվածի համաձայն՝ դաշնային կառավարությունը հասարակական կարգին, ներպետական կամ արտաքին անվտանգությանը սպառնացող կամ իրականացվող լուրջ խախտումների չեզոքացման նպատակով իրավասու է սահմանափակ գործողության ժամկետով ակտեր ընդունել: Կորոնավիրուսային համավարակի ժամանակ, հաշվի առնելով նման ռեժիմի բացակայությունը, արտակարգ դրություն չի հայտարարվել: Իրավիճակը Սահմանադրության 185-րդ հոդվածի և «Համաճարակների մասին» օրենքի համատեքստում դիտարկվել է արտասովոր, իսկ դաշնային կառավարության ունեցած լիազորությունները բավարար են դիտարկվել⁴⁶:

Միջազգային փորձի վերլուծության համատեքստում ուսումնասիրելով ներպետական սահմանադրաիրավական կարգավորումները՝ կարող ենք եզրակացնել, որ Սահմանադրության 119-րդ և 120-րդ հոդվածներով նախատեսված են երկու հատուկ իրավական ռեժիմներ՝ արտակարգ դրության և ռազմական դրության իրավական ռեժիմները, որոնց գործողության պարագայում Սահմանադրության 76-րդ հոդվածով նախատեսված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները որոշակի բացառություններով կասեցնելու կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու հնարավորություն, ինչը նշանակում է, որ այս երկու ռեժիմները օժտված են իրավական ներգործության առավել խիստ գործիքակազմով և ըստ այդմ՝ գործադիր իշխանության կողմից պետք է կիրառվեն խիստ զգուշությամբ, իսկ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմը պետք է գործի իր սահմանադրական նշանակությանը համապատասխան: Բացի այս երկու ռեժիմներից, ներպետական օրենսդրությամբ ամրագրված է ևս մեկ իրավական ռեժիմ, այն է՝ արտակարգ իրավիճակի ռեժիմը, որն իր բնույթով առավել մեղմ է և հաճախ հանրային ընկալման տիրույթում շփոթի արդյունքում նույնանում է արտակարգ դրության ռեժիմի հետ: Ընդ որում, Սահմանադրությամբ արտակարգ իրավիճակի ռեժիմը հիշատակվում է միայն մեկ անգամ, այն է՝ 57-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում, որով սահմանված է, որ պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է բնակչության կյանքին կամ բարօրությանը սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ: Արտակարգ իրավիճակի կարգավորմանն ուղղված իրավական նորմերը նախատեսված են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում սահմանված է ճգնաժամի հաղթահարման երեք ռեժիմ, որոնք են՝ արտակարգ դրության, ռազմական դրության և արտակարգ իրավիճակի ռեժիմները, որոնցից երկուսը Սահմանադրությամբ ուղղակիորեն նախատեսված են: Ընդ որում, բոլոր երեքը 2020 թ. ընթացքում պրակտիկ կիրառություն են ունեցել:

⁴⁶ St'u Venice Commission - Observatory on emergency situations: Switzerland, <https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory/SUI-E.htm> 04.09.2025թ. դրությամբ:

Ամփոփելով սույն հոդվածում կատարված վերլուծությունը՝ կարևոր ենք համարում արձանագրել, որ ճգնաժամի հաղթահարմանն ուղղված հատուկ իրավական ռեժիմների վերաբերյալ սահմանադրաիրավական կարգավորումները պետություններում տարբեր են, բացակայում է նաև դրանց միասնական դասակարգումը ըստ տեսակների, ինչը օրինաչափ է, քանի որ յուրաքանչյուր դեպքում էական ազդեցություն ունեն պետության ձևավորման և զարգացման պատմական նախապատմությունը, կայացման ուղին և այն ուղեկցող աշխարհաքաղաքական գործոնները: Սակայն միանշանակ է, որ նման ռեժիմների գոյությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է՝ պայմանավորված պետությանը և ազգին սպառնացող լուրջ վտանգների առաջ գալու հավանականությամբ: Կորոնավիրուսային համավարակի տարածումը առավել ընդգծեց այս անհրաժեշտությունը՝ միաժամանակ ակնառու դարձնելով ռեժիմների վերաբերյալ հստակ սահմանադրական ու օրենսդրական կարգավորումների ամփոփության անհրաժեշտությունը, քանի որ դրանց գործողությունը անխուսափելիորեն հանգեցնում է գործադիր իշխանությանը որոշակի արտակարգ լիազորություններով օժտման: Ընդ որում, կարծում ենք, որ խիստ կարևոր է գործադիր իշխանության կողմից իրավիճակի վտանգավորության աստիճանի ճիշտ գնահատումը, քանի որ դրանից է կախված իրավական ռեժիմի ճիշտ ընտրությունը: Բոլոր դեպքերում, երբ ճգնաժամը հնարավոր է հաղթահարել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները առավել նվազ սահմանափակող իրավական ռեժիմի կիրառմամբ, պետք է բացառվի առավել խիստ ռեժիմի ընտրությունը:

Այսպիսով, կատարված վերլուծության հիման վրա կարծում ենք, որ կառավարման հատուկ ռեժիմը կարող է բնորոշվել որպես ճգնաժամային իրավիճակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պաշտոնատար անձանց ժամանակավոր արտակարգ լիազորություններով օժտող իրավակարգավորումների ամբողջություն, որոնց գործողության ընթացքում հնարավոր է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների որոշ բացառությունների պահպանմամբ կասեցում կամ սահմանափակում:

Եզրակացություն

Ամփոփելով կառավարման հատուկ ռեժիմների էության, էվոլյուցիայի և անհրաժեշտության վերաբերյալ կատարված վերլուծությունը՝ կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնական եզրահանգումները.

- Կառավարման հատուկ ռեժիմը ազգային իրավական մշակույթով ուղղորդված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պաշտոնատար անձանց ժամանակավոր արտակարգ լիազորություններով օժտող իրավակարգավորումների ամբողջություն է, որը կիրառվում է տարաբնույթ արտակարգ իրավիճակների հաղթահարման նպատակով և կարող է դրսևորվել՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները որոշակի բացառություններով

կասեցնելով կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելով, ինչպես նաև ճգնաժամային միջոցների և միջոցառումների կիրառմամբ:

- Պատմական զարգացման տեսանկյունից ակնհայտ է այդպիսի ռեժիմների գոյության օրյեկտիվ անհրաժեշտությունը՝ նկատի ունենալով դրանց ուրվագծումը պետությունների ձևավորման դեռևս վաղ ժամանակաշրջանում: Միաժամանակ, արտակարգ լիազորությունների չարաշահման վտանգն է, որ նպաստել է դրանց նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ձևավորմանը: Ընդ որում, խնդիրը արդիական է առայսօր: Կառավարման հատուկ իրավական ռեժիմն ինքնին բովանդակում է խիստ իրարամերժ ներքին խթաններ, մի կողմից՝ այն նպաստում է բնածին, տեխնածին ու հասարակական բնույթի աղետների դեմ պայքարին, մյուս կողմից՝ անխուսափելիորեն ներառում է չնախատեսված մեծ ծավալով ձեռք բերված իշխանության լծակները չարաշահելու գրավչություն:
- Իրավական դոկտրինում բացակայում է կառավարման հատուկ ռեժիմների տեսակների դասակարգման միասնական մոտեցումը, սակայն դրանք մեծամասամբ բնութագրվում են գործադիր իշխանությանը արտակարգ լիազորություններով օժտելով: Այդպիսի ռեժիմներն ընդգրկվում են սահմանադրական կարգավորման դաշտում, քանի որ նրանք սահմանափակում են մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, ինչը պահանջում է խիստ վերահսկողություն՝ գործադիր իշխանության կողմից հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով: Ըստ էության, չի էլ կարելի լիարժեք ակնկալել կառավարման հատուկ ռեժիմների միասնական տեսաիրավական չափանիշներ, քանզի դրանք ուղղակիորեն առնչվում են ոչ միայն մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակմանը (այս կտրվածքով միջազգային իրավական չափանիշները երաշխավորում են անհրաժեշտ միասնականություն), այլև կառավարման լայն հայեցողությանը, ինչը բացառապես ազգային օրենսդրության տիրույթում է:
- Իրավիճակի լրջության աստիճանի ճիշտ գնահատումը ուղիղ համեմատական է կառավարման հատուկ ռեժիմի ճիշտ ընտրությանը: Այս հավասարակշռության խախտումը պարունակում է սահմանադրական սկզբունքների խախտման և որպես հետևանք՝ ժողովրդավարական կառավարման ձևի էության խաթարման ուղիղ վտանգ: Որպեսզի հնարավորինս բացառվեն կառավարման հատուկ ռեժիմների դեպքում չարաշահման հիմքերը, հարկ է արմատապես վերանայել այդ ռեժիմների ողջ համակարգն ու իրավական հիմքերը: Մասնավորապես անհրաժեշտ է ոչ թե այդպիսի ռեժիմների ծագման դեպքում միայն դիմել արտակարգ կառավարման համակարգի, այլ նախապես հնարավորինս ձևավորել դրանց համարժեք արձագանքելու համալիր:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-265, ընդունվել է՝ 02.12.1998 թ., ուժի մեջ է մտել՝ 10.01.1999 թ., The Law of the Republic of Armenia “On the Protection of the Population in Emergency Situations”, HO-265, adopted on 02.12.1998, entered into force on 10.01.1999.
2. Мелехин А.В. Административное право Российской Федерации: Курс лекций. — М., 2009,
Melekhin A.V. Administrative Law of the Russian Federation: A Course of Lectures. — Moscow, 2009.
3. Fionnuala Ní Aoláin, Oren Gross, Law in Times of Crisis: Emergency powers in theory and practice, Cambridge University Press, 2006, DOI:
<https://doi.org/10.1017/CBO9780511493997>,
<http://ndl.ethernet.edu.et/bitstream/123456789/7465/1/68.pdf> 04.05.2025 թ. դրությամբ,
4. Golden GK. Crisis Management during the Roman Republic: The Role of Political Institutions in Emergencies. Cambridge University Press; 2013, DOI:
<https://doi.org/10.1017/CBO9781139507462>,
5. Bruce Ackerman, The Emergency Constitution, 2020 J.Const.L.9(2020)
6. Crisis Government in the Modern Democracies, Clinton Rossier, With a new introduction by William J.Quirk, Sixth Printing 2009, արքյուր՝
<https://books.google.am/books?id=rsWXgBcTmbwC&printsec=frontcover#v=onepage&q&f=false> 09.11.2024 դրությամբ,
7. Heitland, William E., The Roman Republic (3 vols., Holmes Beach, FL: Gaunt, 1969) Hekman, Susan J., Weber, the Ideal Type, and Contemporary Social Theory (South Bend, IN: University of Notre Dame Press, 1983),
8. Tarneem Farag Bayoumy, Wessam Fekry Ibrahim, Food Crises Management in the Pharaonic and the Ptolemaic Periods, Journal of Tourism, Hotels and Heritage (JTHH), Vol. 3 No. 1, (2021) pp 1-20,
9. Romila Thapar, Asoka and the Decline of the Mauryas, 1958, Published by ProQuest LLC (2017),
10. Andrew Noymer, Review: Contesting the Cause and Severity of the Black Death: A Review Essay, Reviewed Work: The Black Death, 1346-1353: The Complete History by Ole J. Benedictow, Population and Development Review, Vol. 33, No. 3 (Sep., 2007), pp. 616-627 (12 pages), <https://www.jstor.org/stable/25434639> 01.01.2025 դրությամբ,
11. Michele da Piazza, Cronaca, ed. Antonino Giuffrida (Palermo: ILA Palma, 1980), 82: Տե՛ս նաև Aberth, J. (2005). Introduction: The Black Death in History. In: The Black Death. The Bedford Series in History and Culture. Palgrave Macmillan, New York.
https://doi.org/10.1007/978-1-137-10349-9_1,
12. Andrew Noymer, Review: Contesting the Cause and Severity of the Black Death: A Review Essay, Reviewed Work: The Black Death, 1346-1353: The Complete History by Ole J. Benedictow, Population and Development Review, Vol. 33, No. 3 (Sep., 2007), pp. 616-627 (12 pages), <https://www.jstor.org/stable/25434639> 01.01.2025 դրությամբ,
13. Gian Franco Gensinia, Magdi H. Yacouba, Andrea A. Contia, The concept of quarantine in history: from plague to SARS Gensini, Journal of Infection, Volume 49, 2004, Issue 4, 257 – 261, արքյուր՝
<https://pmc.ncbi.nlm.nih.gov/articles/PMC7133622/#:~:text=The%20imposition%20to%20remain%2030,protected%20from%20the%20Black%20Death> 05.05.2025թ. դրությամբ:

14. Stuard SM. A state of deference: Ragusa/Dubrovnik in the medieval centuries. Philadelphia: University of Pennsylvania Press; 1992,
15. Cosmacini G. L'arte lunga. Storia della medicina dall'antichità a oggi. Bari: Editori Laterza; 2001,
16. Frati P. Quarantine, trade and health policies in Ragusa/Dubrovnik until the age of George Armmenius-Baglivì. *Med Secoli* 2000;12:103-27,
17. Sehdev PS. The origin of quarantine. *Clin Infect Dis* 2002;35: 1071-2,
18. Mafart B, Perret JL. History of the concept of quarantine. *Med Trop* 1998;58:14-20,
19. Knowelden J. Quarantine and isolation. 15th ed. The new Encyclopaedia Britannica, Chicago: Helen Hemingway Benton; 1979,
20. Collins, J. M. (2014). Hidden in Plain Sight: Martial Law and the Making of the High Courts of Justice, 1642–60. *Journal of British Studies*, 53(04), 859–884. doi:10.1017/jbr.2014.113,
21. William H. Rehnquist, Martial law and its effect upon the soldier's liability to the civilian, Harvard University Press, 1942, անթիվ՝
https://scholarship.law.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=8059&context=penn_law_review 14.01.2025 դրությամբ,
22. Robinson. J., in *State v. Brown*, 71 W. Va. 519, 544. 77 S. 1. 243 (1912),
23. Jiang Bixin, «Emergent situation and rule of administrative law», Higher Education Press and Springer-Verlag 2007, *Front. Law China* 2007, 2(2): 167–197, DOI 10.1007/s11463-007-0009-x,
24. Lijphart, A. (1978). Emergency Powers and Emergency Regimes: A Commentary. *Asian Survey*, 18(4), 401–407. doi:10.2307/2643402,
25. Frederick M. Watkins, “The Problem of Constitutional Dictatorship,” in Carl J. Friedrich and Edward S. Mason, eds., *Public Policy: A Yearbook of the Graduate School of Public Administration*, Harvard University, 1940 (Cambridge, Mass.: Harvard University Press, 1940),
26. Hunt, Adrian, Review of Law in Times of Crisis: Emergency Powers in Theory and Practice, by O. Gross & F. N. Aoláin, *Journal of Law and Society*, vol. 34, no. 4, 2007, pp. 639–47. JSTOR, <http://www.jstor.org/stable/20109771> 04.09.2025թ. դրությամբ,
27. Fionnuala Ní Aoláin, Oren Gross, *Law in Times of Crisis: Emergency powers in theory and practice*, Cambridge University Press, 2006, DOI:
<https://doi.org/10.1017/CBO9780511493997>,
28. Venice Commission - Observatory on emergency situations, անթիվ՝
<https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory/T03-E.htm> 04.05.2025թ. դրությամբ,
29. Venice Commission - Observatory on emergency situations: Austria, անթիվ՝
<https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory/AUT-E.htm> 04.05.2025թ. դրությամբ,
30. Venice Commission - Observatory on emergency situations: Hungary, անթիվ՝
<https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory/HUN-E.htm> 04.09.2025թ. դրությամբ,
31. Venice Commission - Observatory on emergency situations: France, անթիվ՝
<https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory/FRA-E.htm> 04.09.2025թ. դրությամբ,
32. Venice Commission - Observatory on emergency situations: Switzerland, անթիվ՝
<https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory/SUI-E.htm> 04.09.2025թ. դրությամբ:

Anna Harutyunyan

Prosecutor at the Department for Confiscation of Property of Illicit Origin of the Prosecutor General's Office of the Republic of Armenia, PhD. Student at the Constitutional Law Chair, Faculty of Law, Yerevan State University

THE ESSENCE, EVOLUTION, AND PREREQUISITES OF SPECIAL GOVERNANCE REGIMES¹

Abstract

The study of special governance regimes is more relevant today than ever before, due to the increasing number of crisis situations at both global and regional levels—wars, pandemics, environmental disasters, and other threats. These regimes represent a set of legal regulations that temporarily expand the powers of state and local self-government bodies, as well as public officials, with the goal of effectively managing emergency situations. However, such an expansion of powers carries the risk of abuse by the executive authority, which necessitates the existence of effective constitutional oversight mechanisms. The application of special governance regimes, as a constitutional institution, requires legal clarity and uniform standards for practical implementation in order to ensure legal security. This article analyzes the historical development and essence of legal special regimes, examines their types, the issue of properly assessing emergency situations, and selecting the appropriate legal regime. It also proposes a definition of special governance regimes, based on legal and practical analysis. Accordingly, these regimes are characterized as a system of legal regulations that temporarily grant extraordinary powers to state and local self-government bodies and officials during crises, under which the suspension or restriction of fundamental human and civil rights and freedoms may be permitted with certain exceptions.

Keywords: special governance regime; emergency situation; emergency powers; emergency legislation; martial law.

¹ The article was presented on 07.05.2025 and was reviewed on 17.06.2025.

Анна Арутюнян

*Прокурор управления по взысканию имущества незаконного происхождения
Генеральной прокуратуры Республики Армения, аспирант кафедры
конституционного права юридического факультета Ереванского
государственного университета*

СУЩНОСТЬ, ЭВОЛЮЦИЯ И ПРЕДПОСЫЛКИ СПЕЦИАЛЬНЫХ РЕЖИМОВ УПРАВЛЕНИЯ¹

Абстракт

Изучение специальных режимов управления в настоящее время актуально как никогда прежде, что обусловлено растущими кризисными ситуациями на глобальном и региональном уровнях: войны, эпидемии, экологические катастрофы и другие угрозы. Эти режимы представляют собой комплекс правовых норм, который временно расширяет полномочия государственных и местных органов самоуправления, а также должностных лиц с целью эффективного преодоления чрезвычайных ситуаций. Однако такое расширение полномочий влечёт риски злоупотребления исполнительной властью, для нейтрализации которых необходимы эффективные конституционные механизмы контроля. Применение специальных режимов управления как конституционного института требует правовой ясности и единообразных критериев практического применения для обеспечения правовой безопасности. В данной статье исследованы историческое развитие и сущность юридических специальных режимов, рассмотрены их виды, вопросы адекватной оценки чрезвычайных ситуаций и выбора соответствующих правовых режимов. Также в работе предложено определение специального режима управления, основанное на правовом и практическом анализе. Таким образом, режимы управления в статье охарактеризованы как комплекс правовых норм, наделяющих государственные и местные органы самоуправления, а также должностных лиц временными чрезвычайными полномочиями в условиях кризисных ситуаций, в ходе которых возможно приостановление или ограничение основных прав и свобод человека и гражданина с учётом некоторых исключений.

Ключевые слова: специальный режим управления; чрезвычайная ситуация; чрезвычайные полномочия; чрезвычайное законодательство; военное положение.

¹ Статья была представлена 07.05.2025 и прошла рецензирование 17.06.2025.

<https://doi.org/10.59821/18294219-2026.1-vkn10>

Քրիստինե Մանուկյան

*ՀՀ գլխավոր դատախազության սպորտինի ծագում ունեցող գույքի
բռնագանձման գործերով վարչության դատախազ*

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ՀԻՄՆՎԱԾ ԳՈՐԾՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՎՐԱ¹

Համառոտագիր

Հանրային ծառայողների վարքագծի կանոնների պահպանումը հանդիսանում է պետական կառավարման արդյունավետության և հանրային վստահության ամրապնդման առանցքային պայման: Ժամանակակից պետական կառավարման պայմաններում, երբ հանրային սպասումները շարունակաբար աճում են, վարքագծի կանոնները ձեռք են բերում առանձնահատուկ կարևորություն:

Հոդվածի նպատակն է վերլուծել հանրային ծառայողների վարքագծի կանոնների իրավական և էթիկական հիմքերը, դրանց կիրառման ընթացակարգերը՝ համադրելով ՀՀ օրենսդրական դաշտը, պետական մարմինների փորձը և միջազգային պրակտիկան:

Հետազոտության արդյունքում հիմնավորվել է, որ վարքագծի կանոնների արդյունքում կիրառված կարգապահական տույժերի անհամաչափությունը, իսկ երբեմն՝ կանխարգելիչ մեխանիզմների թուլությունը խաթարում են պետական կառավարման արդյունավետությունը և հանրային վստահությունը: Ապացուցվել է, որ համաչափության, կանխատեսելիության և միատեսակության ապահովումը պահանջում է նորմատիվ բազայի հստակեցում, միասնական կիրառման չափորոշիչների ընդունում, ինչպես նաև՝ պարտադիր կանխարգելիչ և վերապատրաստման մեխանիզմների ներդրում:

Ստացված արդյունքները տեսական առումով զարգացնում են հանրային ծառայության ոլորտում վարքագծի կանոնների կիրառման վերաբերյալ իրավական գիտելիքները, իսկ գործնական առումով կարող են օգտագործվել օրենսդրական բարեփոխումների, մեթոդական ուղեցույցների և վերապատրաստման ծրագրերի մշակման ընթացքում:

Հիմնաբառեր – հանրային ծառայող, վարքագծի կանոններ, կարգապահական պատասխանատվություն, համաչափություն, կանխատեսելիություն, հանրային վստահություն, ծառայողական էթիկա, իրավական կարգավորում, կանխարգելիչ մեխանիզմներ, բարեփոխումներ:

¹ Հոդվածը ներկայացվել է 18.08.2025 թ., գրախոսվել է 16.09.2025 թ.:

1. Ներածություն

Պետական կառավարման համակարգի արդյունավետությունը պայմանավորված է, ի թիվս այլնի, հանրային ծառայողների կողմից դրսևորված վարքագծով: Հանրային ծառայողների վարքագիծը՝ որպես ծառայողական էթիկայի, կարգապահության արտահայտություն, ազդում է պետական համակարգի նկատմամբ հանրային ընկալման և վստահության մակարդակի վրա՝ այդպիսով ձևավորելով պետության՝ որպես իրավական և ժողովրդավարական ինստիտուտի հեղինակությունը: Սահմանված վարքագծային կանոնների խախտումը հանրային ծառայողի կողմից կարող է հանգեցնել ոչ միայն իրավական հետևանքների՝ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման ձևով², այլև խաթարել տվյալ մարմնի ինստիտուցիոնալ հեղինակությունը և ստվեր գցել ողջ պետական ծառայության վրա և հասարակության մոտ առաջացնել վերջինիս նկատմամբ վստահության նվազեցում:

Ժամանակակից հանրային կառավարման զարգացման փուլում ծառայողական էթիկայի և վարքագծի կանոնների պահպանումը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն: Կոռուպցիոն ռիսկերի առկայությունը, սոցիալական ցանցերում և հանրային միջավայրում հանրային ծառայողների վարքագծի թափանցիկ դիտարկումը, ինչպես նաև հանրային սպասումների բարձրացումը պահանջում են հստակ և համաչափ մեխանիզմներ՝ վարքագծի վերահսկման և խախտումների կանխարգելման համար: Վերջին տարիների կարգապահական վարույթների վիճակագրությունը, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի զեկույցները փաստում են, որ վարքագծի կանոնների խախտումները շարունակում են մնալ համակարգային խնդիր՝ ազդեցություն ունենալով պետական կառավարման արդյունավետության և հանրային վստահության վրա:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել և վերլուծել հանրային ծառայողների վարքագծի կանոնների նորմատիվ հիմքերը և դրանց գործնական կիրառման առանձնահատկությունները առանցքային պետական մարմինների փորձի օրինակով:

1.1. Հանրային ծառայողների վարքագծի կանոնների ընդունման նպատակը, նշանակությունը և իրավական հիմքերը

Հանրային ծառայողների վարքագծի կանոնները կազմում են հանրային ծառայության իրավական կարգավորման հիմնարար բաղադրիչը: Դրանք հիմնված են ոչ միայն Սահմանադրության դրույթների, այլև ոլորտային օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի և պետական մարմինների ներքին կարգապահա-

² Բացառություն են կազմում քաղաքական պաշտոնները, քանի որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ նախադասության համաձայն՝ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:

կան կանոնակարգերի վրա: Նշված կանոնների նպատակը հանրային ծառայողի վարքագծի իրավական և էթիկական ստանդարտի ձևավորումն է, որի պահպանումը պարտադիր է բոլոր պաշտոնատար անձանց համար:

Հանրային ծառայության ոլորտի հիմնական կարգավորող ակտը «Հանրային ծառայության մասին» օրենքն (այսուհետ նաև՝ **Օրենք**³) է, որն ամրագրում է հանրային ծառայության հետ կապված իրավահարաբերությունների հիմնական շրջանակը:

Օրենքի 5-րդ գլուխը կարգավորում է բարեվարքության համակարգը՝ ներառելով ինչպես հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները, այնպես էլ այդ սկզբունքներից բխող վարքագծի կանոնները:

Ըստ Օրենքի՝ հանրային ծառայողը պարտավոր է պահպանել սահմանված սկզբունքներն ու կանոնները, իսկ դրանց խախտումը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության⁴:

ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի «Բարեվարքություն» կրթական մոդուլում⁵ շեշտվում է, որ **վարքագծի կանոնների հիմնական նպատակներից է կանխել կոռուպցիան, բարձրացնել պետական ծառայողի էթիկական վարքագիծը և խթանել պետական կառույցների նկատմամբ հանրային վստահությունը**:

«Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ նաև՝ **ՄԻՊ**) 2024 թ. տարեկան հաղորդման 4-րդ գլխում արտահայտվել է հետևյալ միտքը.

«Նույն հարցի կապակցությամբ Քննչական կոմիտեից ստացված տեղեկության համաձայն՝ Կոմիտեն հետևողական է Կոմիտեի նախագահի հրամանով սահմանված վարքագծի կանոնները պահպանելու, համաձայն որոնց քննիչը պետք է լինի հարգալից, գերծ մնա վիրավորական, հեզմական արտահայտություններից, ժեստիկուլյացիայից և այլն: (...)

Միևնույն ժամանակ, ըստ Ներքին գործերի նախարարությունից ստացված պարզաբանման՝ ներկայումս մշակվում է «Ոստիկանության կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագիծը (...). Ոստիկանության կարգապահական նոր կանոնագիրքը հստակ ակնկալիքներ է սահմանելու ծառայողների վարքագծի և գործողությունների վերաբերյալ, այն ապահովելու է, որպեսզի անցկացվի որակյալ ծառայողական քննություն, ծառայողներն իրենց հակաիրավական արարքների համար ենթարկվեն պատասխանատվության (...):»:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնա-**

³ <https://www.arlis.am/hy/acts/203925>, ՀՕ-206-Ն, ընդունվել է 2018 թ. մարտի 23-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից, ուժի մեջ է մտել 2018 թ. ապրիլի 9-ից (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.):

⁴ «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մաս:

⁵ Ձեռնարկը ստեղծվել է «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակներում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով:

ժողով) կողմից ընդունված «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» թիվ 01-Ն որոշմամբ⁶ (այսուհետ նաև՝ **Որոշում**) հաստատվել են հանրային ծառայողների համար ընդհանուր կիրառելի վարքագծի կանոններ:

Հանձնաժողովը «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները հաստատելու մասին» որոշման ընդունման հիմնավորմամբ⁷ (այսուհետ նաև՝ **Հիմնավորում**) շեշտել է, որ վարքագծի կանոնները նպաստում են հանրային ծառայողի բարեվարք կերպարի ձևավորմանը, թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

Հանրային ծառայողների վարքագծի կանոնները տարածվում են ոչ միայն ծառայողական գործունեության, այլև մասնավոր կյանքի վրա՝ նպատակ ունենալով խթանել բարձր էթիկական ստանդարտների պահպանումը ոչ միայն որպես մասնագիտական պարտավորություն, այլ նաև որպես կենսակերպի դրսևորում: Սա բխում է այն սկզբունքից, որ հանրային ծառայողը ներկայացնում է պետության շահը և հանրության վստահության կրողն է՝ **անկախ աշխատանքային ժամերից կամ ծառայողական իրավիճակից: Վարքագծի կանոնների տարածումը մասնավոր ոլորտի վրա միտված է ապահովելու հանրային ծառայողի՝ նաև հասարակական հարաբերություններում ազնվության, զսպվածության, բարեկրթության և պատասխանատվության դրսևորումն ու ցուցաբերումը, քանի որ նրա վարքագիծը կարող է անդրադառնալ պետական կառույցների նկատմամբ հասարակության ընկալման և վստահության մակարդակի վրա:** Այս համատեքստում, բարձր էթիկական ստանդարտների պահպանումը դիտարկվում է որպես հանրային ծառայողի սոցիալական և բարոյական պարտավորություն՝ ամրապնդելու իրավական պետության և արդարության սկզբունքները ոչ միայն աշխատանքային միջավայրում՝ մասնավորապես, այլև հանրային կյանքում ընդհանրապես:

Բացի Օրենքից, հանրային ծառայությունը կարգավորվում է նաև ոլորտային այլ օրենքներով՝ «Քաղաքացիական ծառայության մասին»⁸, «Մաքսային ծառայության մասին»⁹, «Դիվանագիտական ծառայության մասին»¹⁰, «Հարկային ծառայության մասին»¹¹ և այլ օրենքներով, որոնք սահմանում են համապատասխան ոլորտներին հատուկ կարգավորումներ:

Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավոր-

⁶ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=164523> (վերջին մուտք՝ 08.08.2025թ.), ընդունվել է 2022 թ. հունիսի 17-ին:

⁷ <https://www.e-draft.am/projects/4098/justification> (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.)

⁸ <https://www.arlis.am/hy/acts/120807> (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.), ՀՕ-205-Ն, ընդունվել է 2018 թ. մարտի 23-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից, ուժի մեջ է մտել 2018 թ. հուլիսի 1-ից:

⁹ <https://www.arlis.am/hy/acts/191173> (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.), ընդունվել է 2002 թ. հուլիսի 3-ին:

¹⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187778> (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.), ընդունվել է 2001 թ. հոկտեմբերի 24-ին:

¹¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=201754> (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.), ընդունվել է 2002 թ. հուլիսի 3-ին:

րությունում (այսուհետ նաև՝ **Մեծ Բրիտանիա**) հանրային ծառայողների կարգապահական պատասխանատվության հիմքերը սահմանվում են մի շարք իրավական փաստաթղթերով, այդ թվում՝ «Քաղաքացիական ծառայության վարքագիծ» օրենքով (Civil Service Code¹²), որտեղ ամրագրվում են նաև պետական ծառայողների պարտականություններն ու վարքագծի հիմնական սկզբունքները: Ծառայողները, ի թիվս այլնի, պարտավոր են պահպանել օրենքը, գործել ազնվորեն և անաչառ ("As a civil servant, you are appointed on merit on the basis of fair and open competition and are expected to carry out your role with dedication and a commitment to the Civil Service and its core values: integrity, honesty, objectivity and impartiality."):

Մեծ Բրիտանիայում գործում է նաև «Քաղաքացիական ծառայության կարգապահական կանոնակարգ» օրենքը (Civil Service Management Code¹³, որի 4.1 գլուխը (4.1 Conduct: General Principles and Rules) ներկայացնում է հանրային ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և սահմանված կարգապահական պատասխանատվության ձևերը:

«Քաղաքացիական ծառայության կարգավիճակի մասին» օրենքի (Constitutional Reform and Governance Act 2010¹⁴), որը ևս գործում է Մեծ Բրիտանիայում, 5-րդ մասով ամրագրվում է հանրային ծառայողների վարքագծի կանոնադրքի պահպանման պարտականությունը¹⁵: Այս օրենսդրական բազան հնարավորություն է տալիս Մեծ Բրիտանիայի հանրային ծառայության համակարգին պահպանել վարքագծի բարձր չափանիշներ՝ ապահովելով կիրառված պատասխանատվության համաչափություն կատարված խախտման բնույթին և հանրային ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների արդյունավետ կիրառում:

Իսկ, օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հանրային ծառայողների կարգապահական պատասխանատվությունն ամրագրված է «**Դաշնային կարգապահական օրենքով**» (Bundesdisziplargesetz¹⁶): Նշված օրենքը նախատեսում է կարգապահական պատժամիջոցներ՝ նկատողությունից մինչև պաշտոնի իջեցում կամ ազատում: Սահմանված իրավակարգավորումներով կարևոր է, որ յուրաքանչյուր վարույթ ընթանա սահմանված ընթացակարգով՝ ծառայողի իրավունքների պահպանմամբ:

Ֆրանսիայի Հանրապետությունում (այսուհետ նաև՝ **Ֆրանսիա**) կարգապահական պատասխանատվության հիմքերը ամրագրված են «Հանրային ծառայության ընդհանուր կանոնակարգ» օրենքով (Statut general de la fonction

¹² <https://www.gov.uk/government/publications/civil-service-code/the-civil-service-code> (accessed 08.08.2025)

¹³ <https://www.gov.uk/government/publications/civil-servants-terms-and-conditions> (accessed 08.08.2025)

¹⁴ <https://www.legislation.gov.uk/ukpga/2010/25/contents> (accessed 08.08.2025)

¹⁵ <https://www.legislation.gov.uk/ukpga/2010/25/part/1/chapter/1/crossheading/codes-of-conduct> (accessed 08.08.2025)

¹⁶ <https://www.buzer.de/BDG.htm> (accessed 08.08.2025)

publique¹⁷): Այն նախատեսում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների լայն շրջանակ՝ սկսած պարզ նկատողությունից մինչև պաշտոնից ազատում: Կարգապահական վարույթները սովորաբար ընթանում են հատուկ հանձնաժողովների ներգրավմամբ՝ գործընթացի թափանցիկությունն ու արդարությունն ապահովելու նպատակով:

Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ կարելի է ընդգծել, որ **հանրային ծառայողների վարքագծի կանոնների կիրառման հիմնական նպատակն է՝ բարձրացնել հանրային ծառայության բարեվարքության մակարդակը, կանխել հնարավոր հակաիրավական դրսևորումները և ամրապնդել հանրային վստահությունը պետական կառույցների նկատմամբ:**

Բացի հանրային ծառայողների վարքագծի կանոնների իրավական հիմքերից, անհրաժեշտ է անդրադառնալ նաև վերջիններիս էթիկական հիմքերին:

1.2. Հանրային ծառայողների վարքագծի կանոնների էթիկական հիմքերը

Հանրային ծառայողը գործառույթ է իրականացնում ոչ թե անձնական, այլ հանրային շահի սպասարկման նպատակով՝ առաջնորդվելով հասարակությանը ծառայելու գիտակցմամբ, անաչառությամբ, ազնվությամբ, հաշվետվողականությամբ, բարեխղճությամբ և բարձր էթիկական չափանիշներով:

Այս համատեքստում առանցքային է դեոնտոլոգիական¹⁸ էթիկայի դերը, որն ընդգծում է ոչ թե արարքների նպատակահարմարությունը, այլ դրանց բարոյական որակը: Դեոնտոլոգիական մոտեցման համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է ոչ թե առաջնորդվել նպատակով արդարացված միջոցներով, այլ խստորեն հետևել էթիկական և մասնագիտական պարտականություններին՝ անկախ հանգամանքներից կամ ակնկալվող արդյունքից: Այս տեսանկյունից հանրային ծառայողի վարքագծի հիմքում պետք է լինի պարտքի կատարումը՝ ազնվություն, արդարություն, հաշվետվողականություն և ծառայություն հանուն հանրային շահի: Ըստ այդմ՝ բարեվարքությունը հանրային ծառայողի համար ոչ միայն սահմանում է վարքագծի նորմեր, այլ նաև հաստատում է նրա պարտականության բարոյական հիմքերը, որոնք մնում են անփոփոխ՝ անկախ իրավիճակից:

Բարեվարքության համակարգի էթիկական հիմքերը ներառում են նաև փի-

¹⁷ <https://www.fonction-publique.gouv.fr/droit-de-la-fonction-publique/le-code-general-de-la-fonction-publique-cgfp> (accessed 08.08.2025).

¹⁸ Տերմինը ներմուծել է Ջերեմի Բենթեմը իր «Դեոնտոլոգիա» կամ «Բարոյականության գիտություն» աշխատության մեջ՝ «բարոյականության տեսություն»-ը որպես «բարոյականության գիտություն» համարելու նպատակով: «Դեոնտոլոգիական» տերմինն իր ներկայիս իմաստով առաջին անգամ օգտագործել է Չարլի Դանբար Բրոուը իր «Էթիկական տեսության հինգ տեսակները» գրքում, որը հրատարակվել է 1930 թ.:

<https://ru.wikipedia.org/wiki/%D0%94%D0%B5%D0%BE%D0%BD%D1%82%D0%BE%D0%BB%D0%BE%D0%B3%D0%B8%D1%8F> (accessed 08.08.2025)

լիստփայական մակարդակում դիտարկումներ: Այն իրենից ներկայացնում է վարքագծի կանոնների, արժեքների ու նորմերի համադրություն, որոնք ձևավորում են այն սահմանները, որոնց ներսում անհատներն ու խմբերը կարող են գործել՝ առանց հասարակության վստահությունն ու կայունությունը խաթարելու:

Այս գաղափարը սերտորեն առնչվում է սոցիալական պայմանագրի տեսության մոդելի հետ: Տարբեր մտածողներ՝ Թոմաս Հոբսը, Ջոն Լոկը, Ժան-ժակ Ռուսոն, պատկերացնում էին սոցիալական պայմանագիրը որպես անտեսանելի համաձայնություն, որով մարդիկ, հրաժարվելով որոշ ազատություններից, իշխանություն են պատվիրակում պետությանը կամ իշխանության մարմիններին՝ իրենց պաշտպանելու ու հասարակական կարգ ապահովելու ակնկալիքով: Հանրային ծառայողները, այդ իմաստով, դառնում են պայմանագրի գործառնական մարմինները: Հանրությունն ակնկալում է, որ գործեն ոչ թե առաջնորդվելով անձնական շահերով, այլ հանրային բարեկեցության և արդարության սկզբունքներով: Երբ այդ սպասումները խախտվում են, քայքայվում է հանրային վստահությունը, և փաստացիորեն խախտվում է նաև սոցիալական պայմանագիրը: Այստեղ կարևոր է ընդգծել վստահության դերը՝ որպես պետության լեգիտիմության և սոցիալական համաձայնության առանցքային տարր: Եթե հանրությունը կորցնում է վստահությունը պետական համակարգի և հանրային ծառայողների նկատմամբ, ապա սոցիալական պայմանագրի հիմքերը սասանվում են, իսկ համակարգը դառնում է անկայուն:

Արիստոտելյան փիլիսոփայությունը լրացնում է այս պատկերացումը՝ առաջարկելով, որ առաքինությունը ոչ միայն արտաքին գործառնություն է, այլև ներքին բնավորություն և սովորություն: Նրա ըմբռնմամբ՝ **առաքինությունն աճում է գործողությունների միջոցով. մարդը չի դառնում արդար կամ բարեխիղճ՝ պարզապես ցանկանալով դա, այլ այդպիսի մարդ է դառնում՝ կատարելով արդար ու բարեխիղճ գործողություններ, անգամ իր առօրյայում և մասնավոր կյանքում:**

«Առաքինությունը սովորություն է, և մենք դառնում ենք արդար՝ արդար գործելով»¹⁹:

Նիկոմաքոսյան էթիկա, Արիստոտել, Ք. ա. 4-րդ դար

¹⁹ Aristotle-Nicomachean Ethics, book 2

<https://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=Perseus%3Atext%3A1999.01.0054%3Abook%3D2> (accessed 08.08.2025) - It is correct therefore to say that a man becomes just by doing just actions and temperate by doing temperate actions; and no one can have the remotest chance of becoming good without doing them - «Առաքինությունները մեզանում առաջանում են սովորության շնորհիվ. մենք ստանում ենք դրանք գործելով այնպես, ինչպես քաղաքներում գործում են օրենքները: Արդար գործելով՝ մենք դառնում ենք արդար, չափավոր գործելով՝ չափավոր, քաջ գործելով՝ քաջ», Νικομάχεια Ἠθικά, II գիրք, 1-ին և 2-րդ գլուխներ:

2. ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

2.1. Կարգապահական պատասխանատվության մեխանիզմները

Վարքագծի կանոնների խախտման դեպքում Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են իրավական պատասխանատվության տարբեր մեխանիզմներ՝ կախված խախտման բնույթից, ծանրությունից և ազդեցության շրջանակից: Օրենսդրորեն վարքագծի կանոնների խախտումը դիտարկվում է նաև կարգապահական խախտում, որի համար նախատեսվում են տարբեր կարգապահական տույժեր՝ սկսած նախազգուշացումից մինչև պաշտոնից ազատում:

Հանրային ծառայողների վարքագծի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է միաժամանակ ինչպես համապատասխան պետական մարմինների ներքին վերահսկողական ստորաբաժանումների, դրա համար հատուկ սահմանված մարմինների, անձանց, այնպես էլ անկախ վերահսկող մարմինների՝ մասնավորապես՝ Հանձնաժողովի կողմից:

Օրինակ՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի համաձայն՝ ծառայողական քննության միջոցով ուսումնասիրվում են ոչ միայն ծառայողական պարտականությունների, այլև բարեվարքության խախտման դեպքերը: Նույն օրենքով սահմանվում է կարգապահական պատասխանատվության տեսակների դասակարգում. որպես թեթև տույժեր՝ սահմանված են նախազգուշացումը և նկատողությունը, իսկ խիստ տույժեր՝ խիստ նկատողությունը, հիմնական աշխատավարձի նվազեցումը՝ մինչև 20%-ով (բայց ոչ ավելի, քան բազային աշխատավարձի չափը), ինչպես նաև՝ ծառայության դադարեցումը: Այս միջոցները կիրառվում են անձի նկատմամբ բացառապես ծառայողական քննության արդյունքներով:

Նմանատիպ կարգավորումները պարունակում են ոլորտային այլ օրենսդրական ակտեր ևս: Օրինակ՝ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքով նախատեսվում է էթիկայի հանձնաժողովի ձևավորում՝ վարքագծի կանոնների խախտումները ուսումնասիրելու համար, իսկ նման կանոնի խախտումը կարող է հանդիսանալ դիվանագիտական ծառայությունից ազատման հիմք: «Հարկային ծառայության մասին» և «Մաքսային ծառայության մասին» օրենքներում ևս ամրագրված են ծառայողական քննության իրավական հիմքերը, որոնք կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքին համաձայն: Եթե վարքագծի խախտումը դուրս է գալիս կարգապահական պատասխանատվության շրջանակներից և պարունակում է հանցագործության կամ վարչական զանցանքի տարրեր, օրինակ՝ կոռուպցիոն բնույթի գործողություններ, լիազորությունների չարաշահում և այլն, ապա հարցը տեղափոխվում է **նաև** քրեական կամ վարչական պատասխանատվության դաշտ՝ դառնալով իրավասու մարմինների քննության առարկա: ՀՀ աշխատանքային օրենսգրքի²⁰ 222-րդ հոդվածով հստակ սահման-

²⁰ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=199957> (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.), ՀՕ-124-Ն, ընդունվել է 2004 թ. նոյեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից, ուժի մեջ է մտել 2005 թ. հունիսի 21-ից:

վում է, որ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն կարգապահությունը խախտած աշխատողը:

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված է, որ կարգապահական վարույթը պետք է ընթանա հատուկ ընթացակարգով, դրա ընթացքում ապահովվի ծառայողի՝ բացատրություն տալու իրավունքը, պահպանվեն սահմանված ժամկետները, իսկ ընդունված որոշումը պետք է լինի գրավոր, հիմնավորված և պատճառաբանված:

Ի դեպ, յուրաքանչյուր դեպքում քաղաքացիական ծառայողի նկատմամբ տույժ կիրառելիս պետք է հաշվի առնվեն, մասնավորապես, խախտման բնույթը, բովանդակությունը, այն հանգամանքները, որի պարագայում կատարվել է խախտումը, խախտման հետևանքները, նախկինում քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառված լինելու և (կամ) խախտումներ կատարած լինելու հանգամանքները: Ըստ այդմ, կարելի է պնդել, որ կարգապահական խախտման մեջ մեղադրվող քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու ուղեգծում կարգապահական տույժ նշանակողը ունի որոշակի հայեցողական լիազորություն՝ ընտրելու այս կամ այն կարգապահական տույժ՝ կախված վերը թվարկված հանգամանքներից: Հետևապես, կարգապահական տույժ կիրառելիս առանձնակի կարևորություն է տրվում տույժի նշանակման անհրաժեշտությունը հիմնավորելու պարտականությանը՝ պայմանավորված թույլ տրված արարքի և կիրառված պատասխանատվության միջոցի միջև ողջամիտ հավասարակշռությամբ:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով²¹ արտահայտված դիրքորոշումը հստակեցնում է, որ վարչական ակտի ընթացակարգային թերությունները որոշ դեպքերում չեն հանգեցնում դրա անվավերության, եթե դրանք չեն խաթարում ակտի նյութական իրավաչափությունը և անձի արդյունավետ պաշտպանության իրավունքը: Այս մոտեցումը կարևոր է, քանի որ հավասարակշռում է ընթացակարգային և նյութական իրավունքի բաղադրիչները: Միևնույն ժամանակ, այն նաև վտանգ է պարունակում՝ թույլ տալով որոշակի ընթացակարգային թերությունների հանդուրժում, ինչը կարող է նվազեցնել վարչարարության թափանցիկության չափանիշները:

2.2. Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության և կարգապահական ընթացակարգերի իրականացումը՝ առանցքային մարմինների օրինակով

«Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» ՄԻՊ-ի 2024 թ. տարեկան հաղորդմամբ արձանագրվել է, որ 2024 թ. ընթացքում ՄԻՊ-ի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ ստուգում-

²¹ <https://www.arlis.am/documentView.aspx?docID=97974> (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.)

ների ընթացքում պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդիրը շարունակում է մնալ արդիական: ՄԻՊ-ի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան՝ Պետական եկամուտների կոմիտեից պարզաբանել են, որ 2024 թ. ընթացքում ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության ծառայողական քննությունների և վարքագծի (էթիկայի) կանոնների բաժնի կողմից անցկացվել են թվով 7 ծառայողական քննություններ, որոնց արդյունքում մեկ ծառայող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Միաժամանակ, մեկ այլ ծառայող ենթակա է եղել կարգապահական պատասխանատվության, սակայն հաշվի առնելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգապահական տույժ կիրառելու համար սահմանված ժամկետները՝ ծառայողական քննությունը դադարեցվել է: Կոմիտեի պարզաբանումների համաձայն՝ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից կայացված եզրակացությունների արդյունքում հայտնաբերված խախտումները հետազայում բացառելու նպատակով ՊԵԿ նախագահի կողմից տրվել են համապատասխան հանձնարարականներ: Ըստ ՊԵԿ-ի տրամադրած տեղեկատվության՝ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության աշխատակիցների կողմից իրականացված շրջայցերի ընթացքում, անձնակազմի հետ տարվող աշխատանքներում ծառայողներին հանձնարարել են պահպանել «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների և ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները և անշեղորեն առաջնորդվել ՊԵԿ նախագահի համապատասխան հրամաններով և հանձնարարականներով, ինչպես նաև խստագույնս պահպանել հարկային և մաքսային ծառայողների վարքագծի կանոնները՝ համակարգում բացառելով հարկ վճարողների շահերի ոտնահարման, նրանց գործունեության խոչընդոտման, անհարկի միջամտության, ճնշումների գործադրման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերը²²:

Քննչական կոմիտեի 2024 թ. գործունեության մասին հաղորդման²³ համաձայն՝ Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը 2024 թ. ընթացքում հարուցել է 53 կարգապահական վարույթ՝ 73 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, որոնցից 60-ի արարքներում հաստատվել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը և նրանց մեղավորությունը: Արդյունքում՝ միջնորդություններ են ստացվել 1 հոգու նկատմամբ՝ «պաշտոնի իջեցում

²² <https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf> տե՛ս էջեր 778-779, (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.)

²³ <https://www.investigative.am/storage/files/haghvordvoun-2024.pdf> տե՛ս էջեր 35-36, (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.)

մեկ աստիճանով», 4-ի նկատմամբ՝ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժեր կիրառելու հնարավորության հարցը քննարկելու վերաբերյալ, 7-ի արարքներում հաստատվել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը, սակայն բացակայել է վերջիններիս մեղավորությունը:

ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ 2024 թ. հաղորդման²⁴ համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 43 ուսումնասիրություն 49 դատախազի նկատմամբ: Ուսումնասիրություն իրականացնելու համար հիմք է հանդիսացել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում թույլ տրված առերևույթ թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, **դատախազի վարքագծի կանոնների առերևույթ խախտումները**: Վերոհիշյալ ուսումնասիրություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել քաղաքացիների դիմում-բողոքները, ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված գեկուցագրերը: **Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով 7 դեպքով 8 դատախազի կողմից թույլ տրված վարքագծի կանոնների և ծառայողական պարտականությունների խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի կամ ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում, 28 դեպքով 30 դատախազի նկատմամբ ծառայողական քննության արդյունքներով ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել: 2 դեպքով 2 դատախազի նկատմամբ ծառայողական քննությունը դադարեցվել է, քանի որ վերջիններս ազատվել են զբաղեցրած պաշտոնից՝ սեփական դիմումի համաձայն: 1 դեպքով 1 դատախազի նկատմամբ ծառայողական քննության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել չհարուցել կարգապահական վարույթ: 1 դեպքով 2 դատախազի նկատմամբ իրականացվող ուսումնասիրությունը 2025 թ. հունվարի 1-ի դրությամբ դեռևս ավարտված չի եղել: 5 դեպքով 6 դատախազի նկատմամբ ուսումնասիրության արդյունքում հարուցվել են կարգապահական վարույթներ, իսկ 3 դեպքով 3 դատախազի նկատմամբ, առանց ուսումնասիրության, հարուցվել են կարգապահական վարույթներ: Իրականացվել է 8 կարգապահական վարույթ 9 դատախազի նկատմամբ (1 կարգապահական վարույթ իրականացվել է 2 դատախազի նկատմամբ): **Իրականացված կարգապահական վարույթների արդյունքներով 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի տույժ, 4 դատախազ ազատվել են կարգապահական տույժից, 1 դատախազի կողմից թույլ տրված խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհր-****

²⁴ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.)

դակցությունում: 3 կարգապահական վարույթ 2025 թ. հունվարի 1-ի դրությամբ դեռևս ավարտված չի եղել:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի²⁵ 23-րդ հոդվածով սահմանվում են Հանձնաժողովի գործառնությունները, որոնցից են, ի թիվս այլնի, հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող **անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների պահպանման միասնականությունն ապահովելը:**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման²⁶ համաձայն՝ Հանձնաժողովը *ողջունում է այն հանգամանքը, որ Տիպային կանոններին համահունչ արդեն իսկ ընդունվել են մաքսային, հարկային, փրկարար, զինվորական, ազգային անվտանգության մարմիններում, հակակոռուպցիոն, հարկադիր կատարման ծառայողների վարքագծի կանոնները: (...) Այսպես, դեռևս չեն ընդունվել ոստիկանության, էկոպարեկային, դատական կարգադրիչների, քրեակատարողական ծառայողների, ինչպես նաև համայնքային վարչական և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները: Բացի այդ, դիվանագետի էթիկայի կանոնները, քաղաքացիական ծառայողների, պրոբացիայի ծառայողների վարքագծի կանոնները էականորեն տարբերվում և որոշ դեպքերում անգամ հակասում են Տիպային կանոններին ինչպես կառուցվածքի, այնպես էլ բովանդակության տեսանկյունից: (...) Ուսումնասիրությունների արդյունքներով հաշվետու ժամանակաշրջանում հարուցվել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ 5 վարույթ: Մեկ դեպքում Հանձնաժողովը որոշում է կայացրել նախաձեռնել վարույթ, որը, սակայն, հարուցվել է 2025 թ.: 11 դեպքում Հանձնաժողովը եզրահանգել է, որ բացակայում են վարույթի հարուցման հիմքերը, որոնցից 4 դեպքում՝ պայմանավորված առերևույթ խախտման բացակայությամբ, 4 դեպքում՝ ելնելով այն հանգամանքից, որ դիմումը վերաբերել է Վարքագծի կանոնագրքի սուբյեկտ չհանդիսացող պաշտոնատար անձի, և 3 դեպքում՝ նկատի ունենալով, որ դիմումը ներկայացվել է մինչև Վարքագծի կանոնագրքի ուժի մեջ մտնելը: Հարուցված վարույթներից 1-ը վերաբերել է պետական քաղաքական և վարչական պաշտոն զբաղեցնող անձի (ՆԳ նախարարի տեղակալ-ոստիկանության պետի), մեկը՝ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձի (պատգամավորի օգնականի), իսկ 3-ը՝ համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց (համայնքի ղեկավարների և համայնքի ղեկավարի տեղակալի): Հարուցված 5 վարույթներից 3-ը կասեցվել են՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նույն դեպքի վերաբերյալ նախաձեռնվել է քրեական վարույթ: 2024 թ. ավարտվել է 2 վարույթ, որոնց արդյունքներով Հանձնաժողովն ընդունել է վարքագծի կանոնի խախտման*

²⁵ <https://www.arlis.am/hy/acts/204201> (վերջին մուտք՝ 08.08.2025թ.), ընդունվել է 2017 թ. հունիսի 9-ին:

²⁶ <https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/05/%D4%B1%D4%BA-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-2024%D5%A9-1.pdf> (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.).

վերաբերյալ 2 եզրակացություն՝ Երևանի քաղաքապետի և ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ-նախկինապետի վերաբերյալ: Երկու վարույթի արդյունքում էլ արձանագրվել է Վարքազի կանոնագրի 36-րդ և 37-րդ կետերի խախտում, որոնք վերաբերում են բարենկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն ցուցաբերելու, անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականություններին: Ընդ որում՝ երկու վարույթով էլ արձանագրված խախտումը վերաբերել է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից զսպվածություն ցուցաբերելու պահանջը չկատարելուն և անձանց արժանապատվությունը վիրավորելուն, մի դեպքում՝ ավագանու անդամի, մյուս դեպքում՝ հավաքի մասնակիցների»:

Այսպիսով, հանրային ծառայության ոլորտում պատասխանատվության մեխանիզմների արդյունավետ կիրառումը մի կողմից նպաստում է բարեվարքության ամրապնդմանը և իրավաչափության մշակույթի ձևավորմանը, մյուս կողմից՝ ապահովում է հանրային վերահսկողության իրավական գործիքակազմի կենսունակությունն ու կանխարգելման մեխանիզմների գործունակությունը: Նշված մեխանիզմների իրագործման գործում մեծ կարևորություն է տրվում Հանձնաժողովին, որը մեծապես վերահսկող-կարգավորիչ գործառույթ է իրականացնում:

Օրինակ՝ համանման հարաբերությունները Ամերիկայի Միացյալ Նահանգներում կարգավորվում են «Զաղաքացիական ծառայության բարեփոխումների ակտ» օրենքով (Civil Service Reform Act²⁷): Օրենքը նախատեսում է պատժամիջոցների լայն շրջանակ, իսկ բողոքարկման գործառույթը վերապահված է Մերիտ համակարգի պաշտպանության խորհրդին (Merit Systems Protection Board²⁸)՝ որպես անկախ կառույց՝ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

3. ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԶԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Դատական պրակտիկան հանդիսանում է առանցքային գործիք հանրային ծառայության ոլորտում վարքազմի կանոնների խախտման դեպքում նշանակվելիք կարգապահական պատասխանատվության միջոցների իրավաչափության և արդարացիության վերահսկման հարցում:

Դատարանների կողմից կայացվող ակտերը ոչ միայն հանդիսանում են կոնկրետ վեճերի լուծման միջոց, այլև ձևավորում են համապատասխան պրակտիկա՝ վերաժվելով կիրառական նախադեպերի, որոնք էական նշանակություն ունեն առկա պրակտիկայի կայունացման և իրավունքի կանխատեսելիության ապահովման համար:

Հանրային ծառայողները, վիճարկելով իրենց նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցները, գերակշռող մասով հղում են

²⁷ <https://www.eeoc.gov/history/civil-service-reform-act-1978> (accessed 08.08.2025).

²⁸ <https://www.mspb.gov/> (accessed 08.08.2025).

կատարում դրանց՝ իրավական հիմնավորումների բացակայությանը, ապացուցողական բազայի բավարար չլինելուն, ընթացակարգային խախտումներին, ինչպես նաև խիստ անհամաչափությանը՝ նկատի ունենալով կատարված խախտման բնույթը և դրա ծանրությունը:

Դատարանները, իրականացնելով գործերի բազմակողմանի ուսումնասիրություն, կարևորում են ոչ միայն յուրաքանչյուր առանձին դատական գործով քննության արդյունքում վրա հասնող ելքը, այլև բուն կարգապահական վարույթի ընթացքում ձևավորված ընթացակարգի պահպանումը, ինչպես նաև դրա օրինականությունը: Ըստ այդմ՝ կենտրոնական դեր է վերապահվում վարքագծի խախտման արդյունքում վրա հասած կարգապահական պատասխանատվության գործընթացի արդյունքում ընդունված ակտերի հիմնավորվածությանը:

Վճռաբեկ դատարանը իր արտահայտած իրավական դիրքորոշումներում²⁹ բազմիցս ընդգծել է, որ վարչական ակտի հիմնավորվածությունը դրա օրինականության հիմնական բաղադրիչն է, քանի որ սպահովում է անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրագործումը³⁰: Հանրային ծառայողի վերաբերյալ՝ վերջինիս կողմից վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման վերաբերյալ ընդունվող ակտի **հիմնավորման բացակայությունը** կարող է լրջորեն խաթարել իրավական կանխատեսելիության և վստահության սկզբունքները:

Դատարանները, մշտապես անդրադառնալով համաչափության սկզբունքին, հաստատում են, որ պատասխանատվության միջոցը չի կարող գործել պատժիչ մեխանիզմի տրամաբանության շրջանակներում: Այն պետք է ծառայի բացառապես հանրային շահի պաշտպանությանը, ծառայողական էթիկայի և պետական կառավարման արդյունավետության ապահովմանը: Նպատակը պետք է հանդիսանա ոչ թե ամեն գնով կատարած անձին պատժելը, այլ վտանգի տակ գտնվող հանրային շահի պաշտպանությունը, ծառայողական էթիկայի և պետական կառավարման արդյունավետությունը:

Նշված վերլուծությունից բխում է, որ եթե վարչական մարմինը վարչական ակտ կայացնելիս ունի հայեցողական լիազորություն, ապա վարչական ակտի հիմնավորումներից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց վրա հիմնվելով՝ վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը, այլ ոչ թե մեկ ուրիշը:

Դատարանների կողմից կայացվող դատական ակտերը՝ վճիռներն ու որոշումները, ոչ միայն վերականգնում են ծառայողի խախտված իրավունքները, այլև հանդիսանում են իրավական ուղենիշներ հանրային ծառայության համակարգում կարգապահական վարույթի իրականացման համար:

²⁹ Տե՛ս «Ինելկոբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թ. որոշումը:

³⁰ Տե՛ս Գիթա Հեղարքիմարանջեհն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թ. որոշումը:

Ըստ վիճակագրության՝ հանրային ծառայողների բողոքների մեծ մասը վերաբերում է օրենքով սահմանված ընթացակարգերին՝ իրականացված կարգապահական վարույթի և դրա արդյունքում կայացված որոշումների անհամապատասխանությանը: Հիմնականում նշվում է, որ խախտվել են կարգապահական վարույթի իրականացման ձևական և բովանդակային պահանջները՝ մասնավորապես ծառայողին պատշաճ ծանուցելու, նրա դիրքորոշումը և բացատրությունները լսելու, ինչպես նաև անաչառ և բազմակողմանի քննության ապահովման պարտականությունները: Որպես օրինակ կարելի է հիշատակել թիվ ՎԴ/9941/05/20 վարչական գործը³¹, որով Վարչական դատարանը անվավեր ճանաչեց կարգապահական տույժ նշանակելու մասին հրամանը, քանի որ ծառայողը գրկված էր եղել իր լաված լինելու իրավունքից: Այս որոշումը փաստացի ամրապնդում է «լաված լինելու իրավունքի» առանցքային դերը կարգապահական վարույթում՝ հաստատելով, որ ընթացակարգային իրավունքների խախտումը ինքնին կարող է հիմք հանդիսանալ պատասխանատվության միջոցը վերացնելու համար՝ անկախ խախտման ծանրությունից:

Մյուս կողմից, թիվ ՎԴ/0929/05/20 վարչական գործով³² Հայցվորը վիճարկել է իր վերաբերյալ ընդունված հրամանը, որով կարգապահական կոպիտ խախտման՝ թմրամիջոցներ օգտագործելու համար համապատասխան պաշտոնատար անձը ազատվել է ՀՀ ոստիկանությունում ծառայությունից: Տվյալ դեպքում Հայցվորը հրամանի վիճարկման հիմքում դրել էր այն հանգամանքը, որ թույլ չի տվել կարգապահական կոպիտ խախտում, ինչպես նաև՝ պետական մարմինը, որտեղ աշխատել է Հայցվորը, չի իրականացրել պատշաճ վարչարարություն, այն է՝ հրամանն ընդունել է բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննության ապահովման սկզբունքի խախտմամբ: Վարչական դատարանը կրկին բավարարել է ներկայացված հայցը՝ հիմնվելով այն փաստի վրա, որ գործատուն չի ապահովել բազմակողմանի և օբյեկտիվ քննություն: Այս մոտեցումը փաստում է, որ անաչառության սկզբունքի խախտումը դատական վերահսկողության պայմաններում անընդունելի է և հանգեցնում է պատասխանատվության միջոցների վերացման:

Հանրային ծառայողները, դիմելով դատական պաշտպանության, նաև նշում են, որ կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցը հիմնավորված և իրավաչափ չի եղել: Վերջիններս շեշտադրում են, որ պատասխանատվության միջոցը կիրառվել է անհիմն, առանց բավարար ապացույցների, կամ որ այն խիստ անհամաչափ է թույլ տված ենթադրյալ խախտման ծանրության նկատմամբ: Հաճախ նշվում է, որ պատժի խստությունը չի բխել հանրային ծառայողի գործողություններից կամ պատճառած հետևանքներից: Ներկայացված պահանջների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ բազմաթիվ դեպքերում հանրային ծառայողները պնդում են, թե կարգապահական վարույթը

³¹ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809953030 (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.).

³² https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809943124 (վերջին մուտք՝ 08.08.2025 թ.).

նախաձեռնել և իրականացրել են անձնական հակակրանքի կամ շահադիտական նկատառումներով, իսկ որոշումները կայացվել են կողմնակալ և անաչառությամբ գուրկ մոտեցմամբ:

Հանրային ծառայողները հաճախ ուշադրություն են հրավիրում կարգապահական վարույթների և ծառայողական քննությունների ընթացքում օրենքով սահմանված ժամկետների խախտումների վրա: Նշվում է, որ վարույթը իրականացվել և ընթացել է օրենքով կամ ներքին կարգավորող ակտերով սահմանված ժամկետներից ուշ, ինչը հիմք է հանդիսացել կասկածի տակ առնելու իրականացված կարգապահական վարույթի օրինականությունը:

Պետական մարմինների տեսանկյունից՝ վարքագծի կանոնների խախտման արդյունքում իրականացվելիք կարգապահական վարույթները և դրանց արդյունքում պատասխանատվության միջոցների կիրառումը հիմնված են հանրային ծառայության կարգապահության համակարգի պահպանման, պետական կառավարման արդյունավետության բարձրացման և հանրային վստահության ապահովման առաջնահերթ նպատակների վրա:

Պետական մարմինները կարգապահական վարույթներ իրականացնելիս առաջնորդվում են հանրային ծառայողի ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման և վարքագծի կանոնների անշեղ պահպանման անհրաժեշտությամբ: Երբ հանրային ծառայողների մոտ արձանագրվում են խախտումներ, դրանք դիտարկվում են ոչ միայն որպես անհատական վարքագծային խնդիրներ, այլև որպես համակարգային ռիսկեր, որոնք կարող են վնասել հանրային կառավարման արդյունավետությանը և պետական մարմնի հեղինակությանը: Այդ պատճառով կարգապահական վարույթների իրականացումն ու պատասխանատվության միջոցների կիրառումը ծառայում են որպես կանխարգելիչ միջոց՝ վարքագծի կանոնների խախտման դրսևորումները վերահսկելու և ապօրինի կամ անբարեխիղճ գործունեությունը բացառելու համար:

Կարգապահական վարույթների նպատակն է ոչ թե անձի նկատմամբ պատժիչ միջոցների դրսևորումը, այլ հանրային շահի պաշտպանումը և պետական մարմնի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովումը:

Այսպիսով, ղեկավարվելով ողջ վերոշարադրյալով, կարելի է նշել, որ դատական պրակտիկան կարևոր դեր ունի հանրային ծառայության ոլորտում կարգապահական պատասխանատվության միջոցների իրավաչափության և համաչափության վերահսկման գործում: Ուսումնասիրված դատական գործերից պարզ է դառնում, որ դատարանները հատկապես մեծ ուշադրություն են դարձնում ընթացակարգային երաշխիքներին՝ լսվելու իրավունք, անաչառ քննություն, պատշաճ ծանուցում, ժամկետների պահպանում: Սա համահունչ է հողվածի հիպոթեզին այն մասով, որ վարքագծի կանոնների արդյունավետ կիրառումը կախված է ոչ միայն նորմերի բովանդակությունից, այլև դրանց կիրառման ընթացակարգի թափանցիկությունից և կանխատեսելիությունից: Դատական ակ-

տերով ոչ միայն վերականգնվում են խախտված իրավունքները, այլև ձևավորում է իրավակիրառ պրակտիկա՝ նպաստելով հանրային ծառայության ոլորտում կարգապահության, կանխատեսելիության և արդարության ամրապնդմանը:

4. ԱՌԿԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հանրային ծառայությունում կարգապահական պատասխանատվության իրավակարգավորման և դրա գործնական կիրառման ընթացակարգում առկա են մի շարք հիմնարար խնդիրներ, որոնք հանգեցնում են համակարգի արդյունավետության նվազման և իրավունքի կանխատեսելիության թուլացման: Այս պարագայում անհրաժեշտ է կատարել իրավական և գործնական բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան ամրապնդել կարգապահական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների համաչափությունն ու արդարությունը՝ ապահովելով պետական ծառայության բարեխիղճ և արդյունավետ գործունեության շարունակականություն:

- 1. Կանոնների և չափորոշիչների միատեսակեցման բացակայություն:** Տարբեր պետական մարմիններում գործող վարքագծի կանոնները և դրանց խախտման համար սահմանված պատասխանատվության չափորոշիչները զգալիորեն տարբերվում են: Որոշ մարմիններում վարքագծի կանոնները դեռևս չեն ընդունվել, ինչի հետևանքով առաջանում է իրավական անորոշություն: Որպես լուծման տարբերակ՝ առաջարկվում է Օրենսդրորեն ամրագրել միասնական **«Վարքագծի կանոնների կիրառման կարգ»**, որը պարտադիր կլինի **բոլոր** պետական մարմինների համար՝ թույլ տալով միայն նեղ մասնագիտացված ոլորտներում սահմանել լրացուցիչ խստացված կամ տարբերվող պահանջներ:
- 2. Կանխարգելիչ մեխանիզմների թուլություն:** Գործող համակարգը հիմնականում արձագանքում է արդեն տեղի ունեցած խախտումներին՝ սահմանափակվելով տույժերի կիրառմամբ: Միջանկյալ վերահսկողության, ռիսկերի վաղ հայտնաբերման և կանխարգելման գործիքակազմը բացակայում է: Որպես լուծման տարբերակ՝ առաջարկվում է մշակել պարտադիր կանխարգելիչ վերահսկողության ծրագիր, որը կներառի ծառայողների վարքագծի վերաբերյալ մոնիթորինգի իրականացում:
- 3. Վերապատրաստման և մեթոդական ուղեցույցների բացակայություն:** Ծառայողները հաճախ չունեն հստակ գործնական չափորոշիչներ վարքագծի պահանջների կատարման համար: Վերապատրաստման ծրագրերը հիմնականում մեկնազամյա են և չեն ապահովում գիտելիքների շարունակական թափմացում: Որպես լուծման տարբերակ՝ առաջարկվում է մշակել և ներդնել պարտադիր տարեկան վերապատրաստման համակարգ՝ ծառայողական էթիկայի, վարքագծի կանոնների

և դրանց խախտման հետևանքների վերաբերյալ: Հաստատել մեթոդական ուղեցույցներ յուրաքանչյուր պետական մարմնի համար՝ պարզաբանելով վարքագծի կանոնների կիրառման պրակտիկ օրինակներ:

4. Առկա իրավական դաշտում նկատվում են որոշակի բացեր, որոնք նպաստում են իրավական անորոշության և անընդհատ վեճերի առաջացմանը: Օրինակ՝ որոշ պետական մարմիններ դեռևս չեն ընդունել իրենց տիպային վարքագծային կանոնների ուղենիշները, ինչը հանդիսանում է լուրջ խնդիր:

Որպես խնդիր կարելի է դիտարկել նաև տարբեր պետական մարմինների միջև կարգապահական պատասխանատվության կիրառման **միատեսակ մոտեցումների բացակայությունը**, ինչը թուլացնում է օրենսդրական պահանջների միատարրությունը և ընդհանրապես պետական ծառայության միասնականության սկզբունքը: Այս առումով առաջնային է ընդունել միատարր իրավակարգավորումներ և մշակել մասնագիտական ուղեցույցներ, որոնք կհստակեցնեն համաչափության և կանխատեսելիության չափանիշները, ինչպես նաև կնպաստեն միասնական պրակտիկայի ձևավորմանը:

Այսպիսով, առաջարկվող բարեփոխումներն ուղղված են պետական ծառայության արդիականացմանն ու պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը, ինչն առանցքային նշանակություն ունի հանրային վստահության ամրապնդման և արդյունավետ, արդար կառավարման հաստատման գործում: Նույնիսկ իրավական տեսանկյունից՝ կարգապահական պատասխանատվության գործիքակազմի բարելավումը կոյուրացնի պետական մարմինների և դատական համակարգի աշխատանքը:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վարքագծի կանոնների և կարգապահական պատասխանատվության արդյունավետ համակարգի ստեղծումը պահանջում է ոչ միայն նորմատիվ բազայի առկայություն, այլև գործնական, կանխատեսելի և միատեսակ կիրառման մեխանիզմներ:

Ներկայացված հետազոտության արդյունքները, որոնք հիմնված են նորմատիվ կարգավորումների, դատական պրակտիկայի և գործնական կիրառության համադրական վերլուծության վրա, թույլ են տալիս արձանագրել, որ վերլուծված վիճակագրական և փաստական տվյալները ցույց են տալիս, որ վարքագծի կանոնների պահպանման մակարդակը էականորեն տարբերվում է տարբեր պետական մարմիններում:

Հանրային ծառայության ոլորտում կարգապահական պատասխանատվության համակարգի իրավաչափության և արդարության ապահովումը հանդիսանում է պետության կառավարման օրինականության և հասարակական վստահության ամրապնդման առանցքային գործոն: Միջազգային փորձի, ինչ-

պես նաև Հայաստանի Հանրապետության ներպետական փորձի, ներառյալ՝ դատական պրակտիկայի վերլուծությունը փաստում է, որ կարգապահական պատասխանատվության մեխանիզմները պետք է հստակ արտահայտված լինեն իրավական կարգավորման մեջ, իսկ դրանց կիրառման գործընթացը զուգորդված լինի թափանցիկության, կանխատեսելիության և համաչափության սկզբունքներով:

Դատարանների գործառնությունը սահմանափակված չէ միայն կարգապահական միջոցների իրավաչափության վերանայմամբ, այլ ընդգրկում է նաև վարչարարական գործընթացների օրինականության և հիմնավորվածության գործընթացում վերահսկողությունը, ինչը ապահովում է հանրային ծառայողների հիմնավոր պաշտպանություն և օրինական շահերի հավասարակշռություն:

Հարկ է հավելել, որ հանրային ծառայողների վարքագծի կանոնների սահմանումը և կիրառումը իրավական կարգավորման համակարգում հանդես չեն գալիս որպես ձևական պահանջներ. դրանք խորապես էթիկական ու բարոյական հիմքեր ունեցող հրամայականներ են: **Ժամանակակից պետական կառավարման արդյունավետության և հանրային վստահության ամրապնդման կարևորագույն գործոններից է հանրային ծառայողների՝ բարձր գիտակցական մակարդակի դրսևորումը, որը հիմնված է ներքին բարեվարքության, պատասխանատվության և ինքնակառավարման կարողության վրա:** Էթիկական վարքագծի կանոնները կոչված են ոչ միայն կարգավորելու արտաքին գործեակերպը, այլև ձևավորելու հանրային ծառայողի՝ իր դերի, պարտականությունների ու հասարակության հանդեպ ունեցած ծառայողական պատասխանատվության խոր գիտակցումը: **Երբ պետական ծառայողը ընկալում է իր գործողությունների ազդեցությունը հանրային կյանքում և գիտակցում դրանց բարոյական հետևանքները, ձևավորվում է իրական վստահություն, իսկ պետությունն առավել ամուր հիմքերով ծառայում է ժողովրդին:** Հետևաբար, հանրային ծառայության բարեվարքության համակարգը պետք է դիտարկել ոչ միայն իրավական, այլ նաև էթիկական և փիլիսոփայական տեսանկյունից՝ նպաստելով համապատասխան արժեհամակարգի ձևավորմանը, որտեղ բարոյականությունը, ազնվությունը և ինքնազարգացումը ծառայության անբաժան բաղադրիչներն են: Միայն այս դեպքում հնարավոր կլինի կոռուպցիայի դեմ պայքարը դարձնել ոչ թե վերահսկողական միջոց, այլ գիտակցված ու կայուն վարքագծի արդյունք:

Գրականության ցանկ (Reference list, Список литературы)

1. «Դիվանագիտական ծառայության մասին» օրենք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թ. նոյեմբերի 21-ին, ուժի մեջ է մտել նույն թվականի դեկտեմբերի 12-ին
2. «Ինտեկտուալ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թ. որոշում. <https://www.arlis.am/hy/acts/93594> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
3. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. հունիսի 28-ին, ուժի մեջ է մտել 2019 թ. նոյեմբերի 20-ին. <https://www.arlis.am/hy/acts/208572> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
4. «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները հաստատելու մասին» որոշման ընդունման հիմնավորում. <https://www.e-draft.am/projects/4098/justification> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
5. «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» թիվ 01-Ն որոշում, ընդունվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2022 թ. հունիսի 17-ին, ուժի մեջ է մտել նույն թվականի հունիսի 23-ին. <https://www.arlis.am/hy/acts/164523> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
6. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018 թ. մարտի 23-ին, ուժի մեջ է մտել նույն թվականի ապրիլի 9-ին. <https://www.arlis.am/hy/acts/208569> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
7. «Հարկային ծառայության մասին» օրենք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թ. օգոստոսի 2-ին, ուժի մեջ է մտել նույն թվականի նոյեմբերի 12-ին. <https://www.arlis.am/hy/acts/201754> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
8. «Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» 2024 թ. տարեկան հաղորդում. <https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
9. «Մաքսային ծառայության մասին» օրենք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թ. հուլիսի 3-ին, ուժի մեջ է մտել նույն թվականի հոկտեմբերի 8-ին. <https://www.arlis.am/hy/acts/191173> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
10. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենք, ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թ. փետրվարի 18-ին, ուժի մեջ է մտել 2004 թ. դեկտեմբերի 31-ին. <https://www.arlis.am/hy/acts/194274> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
11. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018 թ. մարտի 23-ին, ուժի մեջ է մտել նույն թվականի հուլիսի 1-ին. <https://www.arlis.am/hy/acts/204205> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
12. Աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թ. նոյեմբերի 14-ին, ուժի մեջ է մտել նույն թվականի հունիսի 21-ին. <https://www.arlis.am/hy/acts/210471> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
13. Գլխավոր օրենսդրական ակտերի ընդդեմ ՀՀ ռազմականության անձնագրային և վիզաների վարչության թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թ. որոշում. <https://www.arlis.am/en/acts/97974> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
14. Թիվ ՎԴ/0929/05/20 վարչական գործ. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809943124 (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
15. Թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 2015 թ. ապրիլի 30-ին կայացրած որոշում.

- https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809638453 (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
16. Թիվ ՎԴ/9941/05/20 վարչական գործ.
https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809953030 (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
 17. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում.
<https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/05/%D4%B1%D4%BA-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-2024%D5%A9-1.pdf> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
 18. ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ 2024 թ. հաղորդում. https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
 19. ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի «Բարեվարքություն» կրթական մոդուլ, ձեռնարկը ստեղծվել է «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակներում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՉԳ) միջոցով.
<https://www.google.com/url?sa=i&url=https%3A%2F%2Fcsso.gov.am%2Ftraining-programs%2F20%2Fdownload-attachment&psig=AOvVaw08uKrwg3P4YgG0hy50bHBm&ust=1755583262730000&source=images&cd=vfe&opi=89978449&ved=0CAYQrpoMahcKEwiQury315OPAxUAAAAAHQAAAAQBA> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
 20. Մարդու իրավունքների պաշտպանի 2023 թ. տարեկան զեկույց.
<https://www.ombuds.am/images/files/c633369afec7fa8d34d985ee99c2aeaa.pdf> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
 21. Մարդու իրավունքների պաշտպանի 2024 թ. տարեկան զեկույց.
<https://www.ombuds.am/images/files/d5710fc4f92bfa5d09747c30bdf3c41.pdf> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
 22. Քննչական կոմիտեի 2024 թ. գործունեության մասին հաղորդում.
<https://www.investigative.am/storage/files/haghvordvoun-2024.pdf> (վերջին մուտք՝ 18.08.2025 թ.)
 23. Aristotle-Nicomachean Ethics, book 2.
<https://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=Perseus%3Atext%3A1999.01.0054%3Abook%3D2> <https://www.buzer.de/BDG.htm> (accessed 08.08.2025), with an English translation by H. Rackham, M. A., Cambridge Massachusetts, Harvard University Press London, William Heinemann LTD, MCMLVI (the official source:
<https://archive.org/details/in.ernet.dli.2015.183333/page/n1/mode/2up>), page 86 {5}. (accessed 18.08.2025)
 24. Bundesdisziplinargesetz. <https://www.buzer.de/BDG.htm> (accessed 18.08.2025)
 25. Civil Service Reform Act of the United States. <https://www.eeoc.gov/history/civil-service-reform-act-1978>, 13 October, 1978 PL 95-454 (S 2640) (accessed 18.08.2025)
 26. Constitutional Reform and Governance Act of United Kingdom.
<https://www.legislation.gov.uk/ukpga/2010/25/contents> (accessed 18.08.2025)
 27. Statut g  n  ral de la fonction publique.
<https://www.fonction-publique.gouv.fr/droit-de-la-fonction-publique/le-code-general-de-la-fonction-publique-cgfp> published 47 Septeber, 2022, updated 29 July 2025. (accessed 18.08.2025)

28. The Civil Service code of United Kingdom.
<https://www.gov.uk/government/publications/civil-service-code/the-civil-service-code> (accessed 18.08.2025)
29. The Civil Service Management code of United Kingdom.
<https://www.gov.uk/government/publications/civil-servants-terms-and-conditions> From Civil Service and The Rt Hon Lord Maude of Horsham, published 1 July 2013, last updated 9 November 2016 (accessed 18.08.2025)

Kristine Manukyan

*Prosecutor at the Department for Confiscation of Property of Illicit Origin of the
Prosecutor General's Office of the Republic of Armenia*

**NORMATIVE AND PRACTICAL MANIFESTATIONS OF
CODES OF CONDUCT IN PUBLIC SERVICE: BASED ON
EXISTING REGULATIONS AND THE EXPERIENCE OF
INDIVIDUAL INSTITUTIONS¹**

Abstract

Compliance with codes of conduct for public servants is a key condition for ensuring the efficiency of public administration and strengthening public trust. In the modern context of governance, where public expectations are continuously increasing, the lawful and proportionate application of conduct rules acquires particular importance. The relevance of this study lies not only in analysing the normative foundations of such rules but also in examining their practical implementation, identifying existing problems, and outlining directions for reform. The relevance of the chosen topic is evidenced by the increase in crimes committed against minors, the absence of a unified practice on the issue in question, as well as the inconsistency of doctrinal sources.

The purpose of this article is to analyse the legal and ethical bases of codes of conduct for public servants and the procedures for their application, by comparing the legislation of the Republic of Armenia, the practice of state bodies, and international experience.

The study establishes that disproportionate disciplinary sanctions, and in some cases the weakness of preventive mechanisms, undermine the efficiency of public administration and public trust. It is demonstrated that ensuring proportionality, predictability, and uniformity requires clarifying the legal framework, adopting unified application standards, and introducing mandatory preventive and training mechanisms. The results have theoretical significance in developing legal knowledge on the application of codes of conduct in public service and practical value for legislative reforms, the development of methodological guidelines, and the creation of training programs.

Keywords: public servant; code of conduct; disciplinary responsibility; proportionality; predictability; public trust; professional ethics; legal regulation; preventive mechanisms; reforms.

¹ The article was presented on 18.08.2025 and was reviewed on 16.09.2025.

Кристине Манукян

*Прокурор управления по взысканию имущества незаконного происхождения
Генеральной прокуратуры Республики Армения*

НОРМАТИВНЫЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ПРАВИЛ ПОВЕДЕНИЯ НА ГОСУДАРСТВЕННОЙ СЛУЖБЕ: НА ОСНОВЕ ДЕЙСТВУЮЩЕГО РЕГУЛИРОВАНИЯ И ОПЫТА ОТДЕЛЬНЫХ ОРГАНОВ¹

Абстракт

Соблюдение правил поведения государственных служащих является ключевым условием эффективности государственного управления и укрепления общественного доверия. В современных условиях, когда общественные ожидания постоянно возрастают, правомерное и соразмерное применение правил поведения приобретает особую значимость. Актуальность исследования обусловлена не только анализом нормативных основ данных правил, но и изучением их практического применения, выявлением существующих проблем и направлений реформирования.

Цель статьи – проанализировать правовые и этические основы правил поведения государственных служащих, порядок их применения, сопоставив законодательство Республики Армения, практику государственных органов и международный опыт.

В результате исследования установлено, что несоразмерность применяемых дисциплинарных взысканий, а в ряде случаев и слабость профилактических механизмов подрывают эффективность государственного управления и уровень общественного доверия. Доказано, что обеспечение соразмерности, предсказуемости и единообразия требует уточнения нормативной базы, принятия единых стандартов применения, а также внедрения обязательных профилактических и образовательных механизмов. Полученные результаты имеют теоретическое значение для развития правовых знаний о применении правил поведения в сфере государственной службы и практическое значение для законодательных реформ, разработки методических руководств и программ повышения квалификации.

Ключевые слова: государственный служащий; правила поведения; дисциплинарная ответственность; соразмерность; предсказуемость; общественное доверие; служебная этика; правовое регулирование; профилактические механизмы; реформы

¹ Статья была представлена в 18.08.2025 и прошла рецензирование в 16.09.2025

Արթուր Ղամբարյան

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ կառավարման ակադեմիայի իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտազործնական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ *IN REM* ԵՎ *IN PERSONAM* ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՈՒ ԴՐԱՆՔ ԽԱԽՏԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ¹

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվում է նախաքննության՝ *in rem* (ըստ փաստի) և *in personam* (ըստ անձի) սահմանների տեսությունը, դրանց օրենսդրական կարգավորումը և գործնական կիրառման հիմնախնդիրները: Հեղինակն առանձնացնում է նախաքննության *in rem* հորիզոնական և ուղղահայաց սահմանները: Հիմնականում կենտրոնացնելով ՀՀ ՔրԴՕ 178-րդ հոդվածի վրա՝ հեղինակը վերլուծում է նախաքննության *in rem* հորիզոնական սահմանի էությունը, որն արգելում է նույն վարույթի շրջանակում անմիջականորեն քննել քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում նկարագրված դեպքից տարանջատված «նոր դեպքերը»:

Հոդվածում նշվում է, որ օրենքով ուղղակիորեն նախատեսված չէ նախաքննության *in rem* հորիզոնական սահմանի խախտման դեպքում այդ մասով վարույթի «ճակատագիրը» ինչպես պետք է լուծվի: Այդ նպատակով առաջարկվում է խնդիրը լուծելու երեք հնարավոր մոտեցումներ (ստրատեգիա): Հեղինակի կարծիքով, քրեադատավարական մտածողությանն առավել համահունչ մոտեցումը *in rem* հորիզոնական սահմանի խախտմամբ ստացված ապացույցները անթույլատրելի ճանաչելն է:

Հեղինակը եզրակացնում է, որ նախաքննության *in rem* հորիզոնական սահմանը քննիչի իրավասության կարևոր պատնեշն է, որն ապահովում է վարույթի օրինականությունն ու նպատակասլացությունը: Այդ սահմանը խախտելու տրամաբանական հետևանքը (անկախ ընտրված ստրատեգիայից) պետք է լինի այդ սահմանը խախտած վարույթի «փակումը»:

Հիմնաբառեր - քրեական դատավարություն, նախաքննություն, նախաքննության սահմաններ, *in rem*, *in personam*, քրեական վարույթ նախաձեռնել, անթույլատրելի ապացույցներ:

¹ Հոդվածը ներկայացվել է 26.01.2026 թ., գրախոսվել է 25.05.2026 թ.:

1. Ընդհանուր դրույթներ

Ցանկացած իրավաբանական վարույթ, այդ թվում՝ մինչդատական քրեական վարույթը, իրականացվում է որոշակի սահմանում: Ընդհանուր առմամբ՝ մինչդատական վարույթի սահմանը որոշվում է երկու չափանիշով՝ ըստ փաստի, դրվագների շրջանակի (*in rem*) և ըստ անձանց շրջանակի (*in personam*)²: Օրինակ՝ Մ. Ս. Ստրոգովիչը, տարանջատելով «քրեական գործ հարուցել» և «քրեական հետապնդում հարուցել» հասկացությունները, նշում էր, որ քրեական հետապնդումը հարուցվում է կոնկրետ անձի նկատմամբ (*in personam*), իսկ քրեական գործը հարուցվում է փաստի, հանցագործության դեպքի կապակցությամբ (*in rem*)³:

Քրեական դատավարության ոլորտում *in rem* նշանակում է որոշակի փաստ կամ հանցագործության դրվագ, որի կապակցությամբ հարուցվում և իրականացվում է քրեական վարույթ, իսկ *in personam* նշանակում է որոշակի անձ կամ անձանց շրջանակ, որոնց նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդումը: *In personam* սահմանում իրականացվող քրեական վարույթի դեպքում պետք է առկա լինի արարքի քրեաիրավական գնահատականը: Գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ *in rem* դատավարական կատեգորիայի իրավաբանական էությունը և նշանակությունը որոշելու համար սկզբունքային է այն, որ *in rem* կատեգորիան ընդգրկում է բացառապես հանցագործության իրադարձային կողմը և կապված չէ քրեաիրավական որակման հետ⁴, սակայն ՀՀ պոզիտիվ իրավունքում այս հարցն այլ կերպ է կարգավորվում: Այսպես՝ ՀՀ ՔրԴՕ 178-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության մեջ նշվում են քրեական օրենսգրքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որի հատկանիշներով սկսվում է վարույթը:

Փոքր-ինչ շեղվելով բուն թեմայից, քննարկենք գործնականում հետաքրքրություն ներկայացնող՝ քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում տրված նախնական և հետագա իրավական գնահատականների իդենտիկության հարցը:

Նախկինում նշել ենք, որ դատախազը ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունն իրականացնում է անհապաղ, երբ ստանալով քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրությունը և կից նյութերը (պատճենը)՝ գտնում է, որ արձանագրության մեջ թույլ է տրվել սխալ, ուստի անհրաժեշտ է այն շտկել⁵:

² Walter Wheeler Cook The Powers of Courts of Equity. I. "In Rem" and "In Personam" // Columbia Law Review, 1915, Vol. 15, № 1, pp. 37-54.

³ Строгович М. С. Уголовное преследование в советском уголовном процессе. М.: Изд-во Академии наук СССР, 1951. С. 65.

⁴ Жидкова Е. И., Формирование пределов производства по делу в досудебных стадиях уголовного процесса: автореф. дис. ...канд. юрид. наук. М., 2007. С. 12.

⁵ Ղամբարյան Ա., Քրեական վարույթ նախաձեռնելը (գիտագործական մեկնաբանություններ): Երևան, Տիգրան Մեծ, 2022, էջ 76-79:

Այս հարցի վերաբերյալ որոշ մասնագետներ ունեն հակառակ կարծիքը: Նրանք նշում են.

«Օրենսգիրքը հաղորդման մեջ նշված փաստերին տրվելիք իրավական գնահատականը, այն է՝ քրեական օրենսգրքի որոշակի հոդվածը, դրա մասը կամ կետը ընտրելը, համարում է նախնական, քանզի ողջամտորեն հավանական է, որ նախաքննության ընթացքում ստացված տեղեկությունների հիման վրա այն կարող է ճշգրտվել կամ փոփոխվել: Ի ապահովումն վերջինիս՝ Օրենսգիրքը նախատեսում է, որ հսկող դատախազի հանձնարարությամբ քննիչն իրավասու է փոփոխություն կատարել քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրության մեջ, եթե առկա է ենթադրյալ հանցանքի փաստական նկարագրությունը կամ դրան տրված իրավական գնահատականը շտկելու անհրաժեշտություն»⁶:

Գործնականում առանձին դատախազներ քննիչներին հանձնարարում են քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում կատարել շտկում ոչ թե անհապաղ (այսինքն՝ հաղորդման և կից նյութերը ստանալիս), այլ նաև նախաքննության ընթացքում, այսինքն՝ քրեական վարույթ նախաձեռնելուց ամիսներ անց, երբ նախաքննության ընթացքում ձեռք բերված տվյալների հիման վրա քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ տրված արարքի նկարագրությունը կամ իրավական գնահատականը փաստացի տարբերվում են քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության մեջ ենթադրյալ հանցանքի փաստական նկարագրությունից կամ դրան տված իրավական գնահատականից: Ըստ էության՝ նրանք առաջադրում են նախնական և հետագա իրավական գնահատականների իդենտիկության պահանջ:

Նախ՝ նախաքննության ընթացքում ձեռք բերված տվյալների հիման վրա քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում փոփոխություն կատարելու դատախազի հանձնարարությունը իրականում որևէ կապ չունի ենթադրյալ հանցանքի փաստական նկարագրությունը կամ դրան տրված իրավական գնահատականը շտկելու նպատակի հետ: Ակնհայտ է, որ եթե քրեական վարույթ նախաձեռնելու պահին հանցագործության մասին հաղորդման և դրան կից նյութերի հիման վրա տրված արարքի նկարագրությունը կամ իրավական գնահատականը եղել է ճիշտ, ապա այն շտկելու անհրաժեշտությունը բացակայում է. այդ գնահատականները պատմական տվյալ ժամանակաշրջանում եղել են ճիշտ: Անթույլատրելի է նախնական գնահատականը համարել սխալ, եթե հետագայում ձեռք բերված տվյալների հիման վրա փոխվում է երևույթի պատկերը:

Քրեական վարույթի նախաձեռնելու պահին առկա տվյալների հիման վրա

⁶ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 270-271:

տրված արարքի նկարագրությունը և իրավական գնահատականը չեն կարող համարվել սխալ զուտ այն պատճառով, որ նախաքննության ընթացքում ձեռք բերված տվյալներով արարքի փաստացի նկարագրությունը կամ իրավական գնահատականը տարբերվում է քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության նախնական նկարագրությունից կամ նախնական իրավական գնահատականից:

Երկրորդ՝ ՀՀ ՔրԴՕ 173-րդ հոդվածում քրեական վարույթ նախաձեռնելու առիթների (հաղորդման մասին) կապակցությամբ հետևողականորեն գործավում է «նախնական իրավական գնահատական» ձևակերպումը: Իրավական գնահատականը կարող է համարվել նախնական, եթե հնարավոր է հետագա իրավական գնահատական, որը տարբերվում է նախնական գնահատականից: Եթե քրեական վարույթի շրջանակում քրեական վարույթի նախաձեռնելու արձանագրության իրավական գնահատականը պետք է անընդմեջ փոփոխվի և համապատասխանեցվի, օրինակ, քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ տրված իրավական գնահատականների հետ, ապա քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության մեջ նշված իրավաբանական գնահատականը երբեք չի կարող համարվել նախնական: Այդ գնահատականը հետադարձ կարգով փոփոխվելու արդյունքում մշտապես կլինի արդիական:

Չարմանալին այն է, որ վերը մեջբերման հեղինակները նախաքննության տվյալների հիման վրա քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում տրված իրավական գնահատականը փոփոխելու իրենց մոտեցումը հիմնավորում են այդ գնահատականի *նախնական* լինելու հանգամանքով: Կրկին նշենք, որ իրավական գնահատականը երբեք չի կարող լինել նախնական, եթե այն պետք է ընթացիկ տվյալների հիման վրա հետադարձ կարգով փոփոխվի և համապատասխանեցվի նախաքննության ընթացքում տրված իրավական գնահատականին:

Երրորդ՝ քրեական վարույթի նախաձեռնելու արձանագրությունում տրված իրավական գնահատականի և նախաքննության ընթացքում քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ տրված իրավական գնահատականի իդենտիկության մասին դատողությունները հակասում են քրեական դատավարության՝ որպես դինամիկ գործընթացի էությանը: Քրեական դատավարությունում անընդմեջ ձեռք են բերվում նոր տվյալներ: Նախնական և հետագա իրավական գնահատականների իդենտիկության մասին պնդողները չեն կարողանում հստակ պատասխանել այն հարցին, թե ռետրոսպեկտիվ (հետադարձ) կարգով քրեական վարույթի նախաձեռնելու արձանագրությունը նախաքննության տվյալներով փոփոխելը քրեական վարույթի մինչև ո՞ր պահին է թույլատրելի: Երբեմն նշվում է, որ այդ փոփոխությունն արվում է մեկ անգամ՝ քրեական հետապնդում հարուցելիս, եթե քրեական հետապնդման հարուցման գնահատականը տարբերվում է նախնական իրավական գնահատականից:

Այն հարցին, թե քրեական հետապնդման հարուցման իրավական գնահա-

տականը հետագայում փոփոխելու (մեղադրանքը փոփոխելու) դեպքում արդյո՞ք պետք է կրկին փոխել նաև քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունը, հատակ պատասխան չի հնչում:

Նրանք չեն կարողանում ցույց տալ, թե ինչ դատավարական եղանակով է հնարավոր ապահովել նախնական և հետագա իրավական գնահատականների իդենտիկությունը, եթե մեղադրական եզրակացության և վարույթի նյութերն ստանալուց հետո հսկող դատախազը որոշում է մեղադրական եզրակացությունը վերակազմելու մասին, եթե քրեական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզում է, որ անհրաժեշտ է մեղադրանքից հանել առանձին փաստեր կամ ի շահ մեղադրյալի փոխել նրան վերագրվող արարքի իրավական գնահատականը՝ առանց սկզբնական փաստերն էապես փոխելու (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մաս):

Չորրորդ՝ դժվար է հասկանալ, թե նախնական և հետագա իրավական գնահատականների իդենտիկության մասին պահանջ առաջ քաշողները դրանով քրեադատավարական ի՞նչ նպատակ են հետապնդում կամ այդ պահանջով ի՞նչ դատավարական արժեք են փորձում պաշտպանել: Սա ամենից կարևոր հարցն է:

Քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում առկա ենթադրյալ հանցանքի փաստական նկարագրությունը կամ նախնական իրավական գնահատականը վարույթի հետագա ընթացքում ձևավորված փաստական և իրավական գնահատականներին համապատասխանեցնելու պահանջը կոչված չէ ապահովելու մարդու որևէ հիմնական իրավունք, քանի որ անձը վարույթի ընթացքում պաշտպանվում է ոչ թե քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության մեջ ենթադրյալ հանցանքի փաստական նկարագրությունից և (կամ) դրան տված իրավական գնահատականից, այլ վարույթի հետագա ընթացքում ներկայացված արարքի նկարագրությունից և տրված իրավական գնահատականից: Օրինակ՝ ձերբակալված անձի պաշտպանության իրավունքն ապահովելու համար ձերբակալման արձանագրության մեջ նշվում են անձին ազատությունից փաստացի զրկելու տարին, ամիսը, օրը, ժամը, ընթացքը, փայրը, պայմանները, պատճառները և հիմքերը, իսկ ձերբակալման որոշման մեջ նշվում են ձերբակալվածին վերագրվող արարքի փաստական հանգամանքները, ձերբակալման հիմքը (ՀՀ ՔրԴՕ 109-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասեր), իսկ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ նշվում են մեղադրանքի փաստական հիմքը և արարքի իրավական գնահատականը (ՀՀ ՔրԴՕ 189-րդ հոդվածի 4-րդ մաս): Քանի որ այս ձերբակալման արձանագրության և որոշման, քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ ներկայացված արարքի նկարագրությունը և տրված իրավական գնահատականը անձի պաշտպանության իրավունքի համար ունեն կարևոր նշանակություն, ուստի այս փաստաթղթերի պատճենները օրենքի պահանջով հանձնվում են անձին, մինչդեռ քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունը շահագրգիռ մասնավոր անձանց հանձնելու պահանջ նախատեսված չէ:

Նախնական և հետագա իրավական գնահատականների իդենտիկության պահանջի թերևս միակ քիչ թե շատ տրամաբանություն ունեցող նպատակը կարող է լինել այն, որ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներով նախնական իրավական գնահատականը փոփոխելու և այն ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներով իրավական գնահատականին համապատասխանեցնելու միջոցով հնարավոր է ճանապարհի հարթել գաղտնի քննչական գործողություններ կատարելու համար: Բանն այն է, որ գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել ծանր կամ առանձնապես ծանր, ինչպես նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթներով (ՀՀ ՔրԴՕ 242-րդ հոդվածի 3-րդ մաս): Առաջին հայացքից թվում է, որ եթե քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում տրված է միջին ծանրության հանցանքի իրավական գնահատական, և չկա քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում, ապա այդ վարույթներով գաղտնի քննչական գործողություններ կատարելու հնարավորությունը ստանալու միակ ճանապարհը քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության մեջ տրված նախնական իրավական գնահատականը դատախազի հանձնարարությամբ փոփոխելն է: Նախ՝ գաղտնի քննչական գործողություններ կատարելու համար ճանապարհի հարթելու նպատակով նախնական իրավական գնահատականը փոփոխելը որևէ առնչություն չունի ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված դատախազի լիազորության նպատակի հետ:

Բացի այդ, եթե նախաքննության ընթացքում ձեռք են բերվում տվյալներ, որոնք ակնհայտորեն վկայում են այն մասին, որ կատարվել է ոչ թե քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում նկարագրված միջին ծանրության հանցագործություն, այլ ծանր հանցագործություն, ապա քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում տրված միջին ծանրության հանցանքի վերաբերյալ նախնական իրավական գնահատականը որևէ կերպ չի խոչընդոտում, որպեսզի քննիչը գաղտնի քննչական գործողություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունում ներկայացնի ծանր հանցագործության մասին վկայող փաստական տվյալները: Այս պահանջը բխում է ՀՀ ՔրԴՕ 292-րդ հոդվածի 2-րդ մասից, ըստ որի՝ քննիչի միջնորդությունը պարունակում է (...) այն փաստարկները, որոնք հիմնավորում են անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը և համաչափությունը: Համաչափության սահմանադրական սկզբունքի «անհրաժեշտության» թեստը ապահովելու համար քննիչը միջնորդության մեջ պետք է հիմնավորի ենթադրյալ հանցավոր արարքի ծանրությունը՝ ըստ այդ պահին առկա տվյալների: Քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում տրված նախնական իրավական գնահատականը նպատակ չունի իր ազդեցությունը տարածել նախաքննության հետագա ընթացքի վրա, մասնավորապես՝ գաղտնի քննչական գործողություն կատարելու միջնորդությունում տրվող արարքի իրավական գնահատականի

վրա: Այս հարցում քրեական վարույթի նախաձեռնելու արձանագրությունը չունի սահմանադիր նշանակություն:

Ի դեպ, դատարան ներկայացվող միջնորդությունում արարքի որակման մասին ոչ իշխանական բնույթի իրավական գնահատական տալն ունի էմպիրիկ հիմքեր, օրինակ՝ մինչև քրեական վարույթ սկսվելը, եթե կատարվում է օպերատիվ-հետախուզական գործունեություն, ապա հանցանքի ծանրության մասին գնահատականները տրվում են օպերատիվ-հետախուզական միջոցառում կատարելու համար թույլտվություն ստանալու միջնորդության մեջ:

Այսպիսով քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում ներկայացված արարքի նախնական նկարագրությունը և արարքին տրված նախնական իրավական գնահատականը նախաքննության տվյալների հիման վրա փոփոխելու պահանջը որևէ առնչություն չունի ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված դատախազի՝ արձանագրությունում շտկում կատարելու նպատակ հետապնդող լիազորության հետ: Նախնական և հետագա իրավական գնահատականների իդենտիկության մասին դատողությունը չունի ոչ միայն պոզիտիվ իրավական հիմք, այլև նպատակաբանական հիմք: Նման պահանջը չի լուծում դատավարական որևէ խնդիր և կոչված չէ ապահովելու որևէ դատավարական արժեք:

Մինչդատական վարույթի *in rem* (ըստ փաստերի, դրվագների շրջանակի) և *in personam* (ըստ անձանց շրջանակի) սահմանները կարող են ընդլայնվել կամ կրճատվել: Այս հարցերը պետք է քննարկել մինչդատական վարույթի յուրաքանչյուր փուլի համար առանձին:

2. Վարույթի սահմանները նախաքննության փուլում

2.1. Ընդհանուր դրույթներ

Ի տարբերություն դատաքննության սահմանի, որի կապակցությամբ օրենսդրությամբ հստակ նշվել է առաջին ատյանի դատարանում վարույթի *in rem* և *in personam* սահմանները որոշելու չափանիշները (վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ և միայն նրան ներկայացված մեղադրանքով)՝ նախաքննության *in rem* սահմանն օրենսդրությամբ էքսպլիցիտ որոշված չէ:

Խորհրդային քրեական դատավարության գիտության մեջ ևս քննարկվել է նախաքննության սահմանների հարցը, սակայն այն ներկայացվել է որպես նախաքննության անհատականացման սկզբունք: Այսպես, «Նախաքննությունը խորհրդային քրեական դատավարությունում» հայտնի աշխատանքում հեղինակները նախաքննության ընդհանուր պայմանների համակարգում առանձնացրել են նախաքննության անհատականացման սկզբունքը, որի էությունն այն է, որ յուրաքանչյուր առանձին հանցագործություն քննվում է ինքնուրույն, այսինքն՝ մեկ գործով կարող են քննվել միայն որոշակի հանցավոր արարքներ, որոնք տարանջատված են այլ հանցագործություններից՝ ըստ օբյեկտիվ և սուբյեկտիվ հատ-

կանիշների: Միայն հանցագործությունների իդեալական համակցության դեպքում պարտադիր է մեկ միասնական քննության իրականացումը, քանի որ դրանք ձևավորվում են մեկ ընդհանուր ապօրինի արարքով և կազմում են մեկ բարդ մեղադրանք: Իսկ երբ խոսքը հանցագործությունների իրական համակցության մասին է, ապա յուրաքանչյուրի հանցանքի կապակցությամբ քննչական վարույթը պետք է լինի խստիվ անհատականացված⁷: Նրանց կարծիքով նախաքննության անհատականացման (առանձնացման) սկզբունքն ունի կարևոր դատավարական նշանակություն: Մի քանի հանցագործությունների միավորումը մեկ քննչական վարույթի մեջ, որոնք միմյանց հետ ոչ մի կապ չունեն, զգալիորեն բարդացնում է քննիչի աշխատանքը և խանգարում ապացուցման առարկայի մեջ մտնող փաստերն ու հանգամանքներն ամբողջական ուսումնասիրելուն: Քննության հստակ անհատականացումը, ընդհակառակը, հեշտացնում է քննության ուղղության ճիշտ որոշումը, բացառում գործի քննության ծավալի չափազանց և անհիմն ընդլայնման հնարավորությունը, ապահովում է քննության նպատակասլացությունը, արագությունն ու ամբողջականությունը, և դրանով իսկ՝ օբյեկտիվ ճշմարտության հաստատումը: Հեղինակները միևնույն ժամանակ հաստատում էին, որ դատավարական միջոցների տնտեսման և մեղադրյալի անձը բնութագրող տվյալներն առավելագույնս հաշվի առնելու նպատակով, նրա արածի համար պատասխանատվության հարցը լուծելիս օրենքը թույլատրում է մի քանի մեղադրանքների միավորում մեկ քննչական վարույթի մեջ⁸:

Նախաքննության անհատականացման սկզբունքը խորհրդային և հետխորհրդային քրեական դատավարության գիտության մեջ լայն ճանաչում չի ստացել, նախաքննության պայմանների համակարգում այն չի առանձնացվում, նախաքննության ընդհանուր պայմանների համակարգում նշվում է զուտ վարույթների միացումը և անջատումը⁹:

ՀՀ ԶԻՂ-Օ-ում նախատեսված մի շարք կարգավորումներ վկայում են այն մասին, որ ՀՀ քրեադատավարական իրավունքում իմպլիցիտ ճանաչվում է նախաքննության *in rem* սահմանների գաղափարը կամ նախաքննության անհատականացման սկզբունքը, սակայն դրա իրավական նշանակությունը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է տարանջատել «նախաքննության *in rem* հորիզոնական սահման» և «նախաքննության *in rem* ուղղահայաց սահման» հասկացությունները:

⁷ Жогин Н. В., Фаткуллин Ф. Н., Предварительное следствие в советском уголовном процессе. М.: Юридическая литература, 1965. С. 87.

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 87-88:

⁹ Соловьев А. Б., Токарева М. Е., Власова Н. А., Общие условия предварительного расследования. М.: Юрлитинформ, 2005, Клешина Е. Н., Крылова Д. С., Общие условия предварительного расследования: критический анализ системы и содержания, перспективы развития: монография. М.: Юрлитинформ, 2025. С. 154-155.

2.2. Նախաքննության *in rem* հորիզոնական և ուղղահայաց սահմանները

Նախաքննության *in rem* հորիզոնական սահմանով որոշվում է այն հարցը, թե նույն վարույթի շրջանակում արդյոք կարո՞ղ են անմիջականորեն քննվել միմյանց հետ ակնհայտ կապ չունեցող տարբեր դեպքեր: Նախաքննության *in rem* ուղղահայաց սահմանով որոշվում է նույն վարույթի շրջանակում նույն դեպքին առնչվող տարբեր դրվագների (նույն դեպքի տարբեր իրադարձային կողմերի) քննության խորությունը:

Նախաքննության *in rem* սահմանի գործնական նշանակությունն այն է, որ այս կոնստրուկցիայով որոշվում է, թե քննիչը երբ և ինչ պայմաններում է իրավասու ընդլայնել նախաքննության *in rem* հորիզոնական և ուղղահայաց սահմանները: Ենթադրենք, քրեական վարույթը նախաձեռնվել է միևնույն օբյեկտի դեմ ուղղված «A» և «B» առարկաների գողության (շարունակվող հանցագործություն) կապակցությամբ: Մակայն նախաքննության ընթացքում բացահայտվում է, առաջին՝ նույն օբյեկտի դեմ ուղղված «C» առարկայի գողության դեպք, և երկրորդ՝ գողություն կատարողի կողմից հարկային հանցագործություն կատարելու դեպք: Նախաքննության *in rem* հորիզոնական սահմանով որոշվում է, թե քննիչն արդյո՞ք իրավասու է նույն վարույթի շրջանակում անմիջականորեն քննել գողության դեպքի հետ որևէ առնչություն չունեցող հարկային հանցագործությունը, իսկ նախաքննության *in rem* ուղղահայաց սահմանով որոշվում է, թե քննիչն արդյո՞ք իրավասու է նույն վարույթի շրջանակում անմիջականորեն քննել շարունակվող գողության դեպքի մաս կազմող «C» առարկայի գողության դրվագը:

Նախաքննության *in rem* հորիզոնական և *in rem* ուղղահայաց սահմանների որոշման ելման կետն ընդհանուր է. այն քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում ներկայացված առերևույթ հանցանքի փաստական նկարագրությունն է, որի հետ համեմատվում է նախաքննության ընթացքում բացահայտված նոր դրվագները (դեպքերը) և գնահատվում է դրանց միջև կապը: Այլ կերպ ասած՝ քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում ներկայացված առերևույթ հանցանքի փաստական նկարագրությունն ուրվագծում է նախաքննության *in rem* ընդհանուր սահմանը:

Նախաքննության համակողմանիության պահանջից բխում է, որ քննիչը իրավասու է (պարտավոր է) անմիջականորեն ընդլայնել նախաքննության *in rem* ուղղահայաց սահմանը, այսինքն՝ նա պարտավոր է նույն վարույթի շրջանակում քննել և բացահայտել կոնկրետ դեպքի բոլոր դրսևորումները (դրվագները)՝ առանց նոր քրեական վարույթ նախաձեռնելու: Նույնը չի կարելի ասել նախաքննության *in rem* հորիզոնական սահմանի անմիջականորեն ընդլայնելու մասին:

Օրենսդիրն անուղղակիորեն կարգավորել է նախաքննության *in rem* հորիզոնական սահմանի հարցը: Այսպես, ՀՀ ՔրԴՕ 178-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր նոր դեպքի կապակցությամբ կազմվում է քրեական վարույթ

նախաձեռնելու մասին արձանագրություն¹⁰ (...), իսկ ՀՀ ՔրԴՕ 178-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն.

«Նախաքննության ընթացքում **այլ ենթադրյալ հանցանք** կատարելու փաստի հայտնաբերման յուրաքանչյուր դեպքում նոր քրեական վարույթ է նախաձեռնվում, որի արձանագրությանը կցվում են համապատասխան փաստը հաստատող վարույթի նյութերը» (ընդգծումը՝ մերը):

Նախ՝ նախաքննության ընթացքում բացահայտված դեպքը համարվում է նոր, կամ ենթադրյալ հանցանքը համարվում է *այլ հանցանք* (որի կապակցությամբ պետք է նախաձեռնել նոր վարույթ), եթե այդ արարքն ակնհայտորեն *in rem* կապ չունի այն դեպքի (արարքի) հետ, որի վերաբերյալ կատարվում է նախաքննություն, ավելի կոնկրետ՝ նոր դեպքը (ենթադրյալ այլ հանցանքը) ակնհայտորեն կապ չունի քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում նշված առերևույթ հանցանքի փաստական նկարագրության հետ¹¹:

Վերը նշված նորմերն անուղղակի կանխորոշում են նախաքննության *in rem* *հորիզոնական* սահմանը և քննիչին իմպլիցիտ արգելում են նույն վարույթի շրջանակում անմիջականորեն քննել քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում նկարագրված արարքի հետ ակնհայտ առնչություն չունեցող նոր դեպքերը:

Երկրորդ՝ վերը նշված երկու նորմերում «նոր դեպք» կամ «այլ ենթադրյալ հանցանք կատարելու փաստ» հասկացությունների գործածությունից պարզ է, որ խոսքը նախաքննության *in rem* սահմանի մասին է: Այս կարգավորումների ձևակերպումները վարույթի *in personam* սահմանի նկատմամբ չեզոք են:

Եթե նախաքննության ընթացքում բացահայտվում է մեղադրյալի (հետապնդվող անձի) կողմից ենթադրյալ այլ հանցանք կատարելու նոր դեպք, որն *in rem* չափանիշով ակնհայտորեն առնչություն չունի քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության նկարագրված դեպքի հետ, ապա քննիչն իրավասու չէ *անմիջականորեն* ընդլայնել նախաքննության *in rem* *հորիզոնական* սահմանը և, հետևաբար, նույն վարույթի շրջանակում քննել մեղադրյալի (հետապնդվող անձի) կողմից այլ արարք կատարելու հանգամանքները: Բանն այն է, որ, ի տարբերություն 1998 թ. ՀՀ ՔրԴՕ, որը հնարավորություն էր տալիս նույն քրեական գործի նախաքննության ընթացքում նույն անձի կողմից այլ հանցագործություններ կատարելու փաստերի հայտնաբերման դեպքում նոր քրեական գործ չհարուցել (1998 թ. ՔրԴՕ 27-րդ հոդվածի 2-րդ մաս), նոր օրենսդրությամբ նման կարգավորում

¹⁰ Կարծում ենք, որ նախաքննություն կատարելիս՝ այլ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելիս քննիչը պետք է ղեկավարվի քրեական վարույթ նախաձեռնելու ընդհանուր կարգը սահմանող նորմերով և ներկայացնի հանցագործության մասին հաղորդում:

¹¹ Նախաքննության *in rem* հորիզոնական սահմանը որոշելու համար սկզբունքային նշանակություն ունի այն, թե իրավակիրառողը «հանցավոր արարք» հասկացությունը ի՞նչ իմաստով է ընկալում քրեաիրավական, թե՛ դատավարական:

նախատեսված չէ: Ուստի, ընդհանուր կանոնն այն է, որ մեղադրյալի (հետապնդվող անձի) կողմից *ենթադրյալ այլ հանցանք* բացահայտելու դեպքի հանգամանքները քննելու համար պետք է նախաձեռնել նոր քրեական վարույթ: Նոր դեպքի հանգամանքները չեն կարող քննվել արդեն նախաձեռնված վարույթի սահմանում: Սակայն, նկատի ունենալով, որ այդ վարույթները *in personam* չափանիշով փոխկապված են, ուստի դրանք հետագայում կարող են միացվել: Այսպես, ՀՀ ՔրԴՕ 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մեկ վարույթում կարող են միացվել նույն անձի կողմից մեկից ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու վերաբերյալ վարույթները: Սա նշանակում է, որ եթե միևնույն անձը կատարել է տարբեր արարքներ, և դրանց վերաբերյալ նախաձեռնվել են տարբեր վարույթներ, ապա այդ վարույթները հետագայում միացվում են: Այդ վարույթները իրար հետ փոխկապված են ոչ թե արարքներով, այլ կատարող անձով, այսինքն՝ *in personam* (ՀՀ ՔրԴՕ 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), սակայն այս հիմքով քրեական վարույթները միացնելու դեպքում նախաքննության *in rem հորիզոնական* սահմանն ընդլայնվում է միջնորդավորված (այս մասին՝ հաջորդիվ):

Վերը նշվածից պարզ է դառնում, որ ՀՀ ՔրԴՕ 178-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերում անուղղակի սահմանված են նախաքննության *in rem հորիզոնական* սահմանը որոշելու օրենսդրական չափանիշը: Այդպիսին է համարվում «նոր դեպքը» կամ «այլ հանցանքը», այսինքն՝ այն դեպքը (արարքը), որն ակնհայտորեն կապ չունի քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում նկարագրված դեպքի (արարքի) հետ: Շարունակվող գողության օրինակով նախաքննության *in rem հորիզոնական* սահմանը քննիչին արգելում է շարունակվող գողության կապակցությամբ իրականացվող վարույթի շրջանակում քննել հարկային հանցագործությանը վերաբերող դեպքի հանգամանքները: Դրա համար անհրաժեշտ է նախաձեռնել նոր քրեական վարույթ:

Այսպիսով, նախաքննության *in rem հորիզոնական* սահմանի դեպքում գործում է «առանձին հանցավոր դեպք – առանձին քրեական վարույթ» բանաձևը, իսկ *in rem ուղղահայաց* սահմանի դեպքում գործում է «մեկ հանցավոր դեպք – տարբեր դրվագներ – մեկ քրեական վարույթ» բանաձևը:

2.3. Նախաքննության *in rem* և *in personam* սահմաններն անմիջականորեն և միջնորդավորված ընդլայնելը

Քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում ներկայացված առերևույթ հանցանքի փաստական նկարագրության համեմատությամբ՝ նախաքննության *in rem* սահմանը կարող է ընդլայնվել ինչպես *անմիջականորեն*, այնպես էլ *միջնորդավորված*:

Ինչպես նշվեց, անմիջականորեն կարող են ընդլայնվել միայն նախաքննության *in rem ուղղահայաց* սահմանը, երբ նույն վարույթի շրջանակում նույն հանցավոր արարքի կազմում ներառվում են նոր դրվագներ: Դրանք քրեական

վարույթի արձանագրությունում նկարագրված արարքից ինքնավար դեպքեր չեն, այսինքն՝ նոր դեպք կամ այլ հանցանքներ չեն, պարզապես նույն դեպքի տարբեր իրադարձային կողմերն են: Կրկին նշենք, որ այս դեպքում քննիչը նախաքննության համակողմանիության պահանջով պարտավոր է անմիջականորեն ընդլայնել նախաքննության *in rem* ուղղահայաց սահմանը:

Նախաքննության *in rem* սահմանը *միջնորդավորված* ընդլայնվում է վարույթները *in rem* չափանիշով միացման եղանակով: Այսպես, եթե քննիչը քննության ընթացքում հայտնաբերում է քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում նկարագրված արարքի հետ ակնհայտորեն կապ չունեցող նոր դեպք, ապա, ինչպես նշվեց, նա այլ դեպքի կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում նոր դեպքի հանգամանքները քննելու իրավասություն չունի: Այսինքն՝ քննիչը նախաքննության *in rem* հորիզոնական սահմանը չի կարող անմիջականորեն ընդլայնել: Նման իրավիճակում նա պետք է նոր դեպքի կամ ենթադրյալ այլ հանցանքի կապակցությամբ նախաձեռնի նոր քրեական վարույթ, այնուհետև քննարկի այդ վարույթները միացնելու հարցը: Վարույթները միացնելու դեպքում նախաքննության *in rem* սահմանն ընդլայնվում է *միջնորդավորված*:

Նախաքննության *in personam* սահմանը կարող է ընդլայնվել ինչպես *անմիջականորեն*, այնպես էլ *միջնորդավորված*: Նախաքննության *in personam* սահմանն ընդլայնվում է անմիջականորեն, եթե նախաքննության ընթացքում պարզվում է, որ նույն արարքի կատարմանը (այսինքն՝ *in rem* ուղղահայաց սահմանում) մասնակցել են նաև այլ անձինք: Այս պարագայում նոր քրեական վարույթ նախաձեռնելու, այնուհետև այն հիմնական վարույթին միացնելու անհրաժեշտությունը բացակայում է (նման նորմատիվ իրավական պահանջ չկա): Պարզապես նույն վարույթի սահմանում հետապնդում է հարուցվում նաև այլ անձանց նկատմամբ՝ ընդլայնելով նախաքննության *in personam* սահմանը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ մինչդատական վարույթի *in personam* սահմանի *անմիջականորեն* ընդլայնումը կարող է տեղի ունենալ բացառապես նախաքննության *in rem* ուղղահայաց սահմանում, եթե նույն արարքը (դրա տարբեր դրվագները) կատարել են մեկից ավելի անձինք: Այս պարագայում գործում է «մի հանցավոր դեպք - տարբեր դրվագներ - մի քանի մեղադրյալ - մի վարույթ» բանաձևը:

Նախաքննության *in personam* սահմանը *միջնորդավորված* ընդլայնվում է վարույթները *in personam* չափանիշով միացման եղանակով, երբ նույն արարքի կապակցությամբ ի սկզբանե նախաձեռնվել են տարբեր վարույթներ, սակայն հետագայում պարզվել է, որ դրանք *in personam* չափանիշով փոխկապակցված են, ուստի անհրաժեշտություն է ծագել այդ վարույթները միացնել: Այսպես, ՀՀ ԶԲԴՕ 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մեկ վարույթում կարող են միացվել մեկից ավելի անձանց կողմից նույն կամ մեկից ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու վերաբերյալ վարույթները:

Նախաքննության *in rem* և *in personam* սահմանները կարող են կրճատվել քրեական վարույթից նոր վարույթ անջատելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական հետապնդում չհարուցելու) դեպքերում:

3. Նախաքննության *in rem* հորիզոնական սահմանները խախտելու դատավարական հետևանքները

Եթե նախաքննության ընթացքում բացահայտված նոր դեպքի (այլ ենթադրյալ հանցանքի) կապակցությամբ քննիչը քրեական վարույթ նախաձեռնելու փոխարեն քննությունն իրականացնում է դրա հետ *in rem* կապ չունեցող քրեական վարույթի սահմաններում, ապա խախտում է ՀՀ ՔրԴՕ 178-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերի պահանջները: Ինչպես նշվեց, այս նորմերն անուղղակի կանխորոշում են նախաքննության *in rem* հորիզոնական սահմանը, և դրանք քննիչին իմպլիցիտ արգելում են նույն վարույթի շրջանակում անմիջականորեն քննել քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում նկարագրված արարքի հետ ակնհայտ առնչություն չունեցող նոր դեպքերը: Այս խախտումը ի՞նչ դատավարական հետևանքներ կարող է առաջացնել:

Նկարագրված իրավիճակում քննիչը նոր դեպքի կապակցությամբ քրեական վարույթ փաստորեն չի նախաձեռնում, սակայն օրենքով նախատեսված չէ, թե քրեական վարույթի նախաձեռնելու արձանագրության բացակայության դեպքում այդ մասով վարույթի «ճակատագիրը» ինչպես պետք է լուծել, օրինակ՝ ՀՀ ՔրԴՕ 12-րդ և 13-րդ հոդվածներում էքսպլիցիտ նախատեսված չէ վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայությունը՝ որպես քրեական հետապնդում չհարուցելու (հետապնդումը դադարեցնելու) և վարույթը կարճելու ինքնուրույն հիմք: Այս բացը բարդացնում է քննարկվող հարցի լուծումը, ուստի դրա կապակցությամբ պետք է առանձնացնել մի քանի հնարավոր ստրատեգիաներ (ճանապարհներ):

Առաջինը կարող է լինել քրեական հետապնդում չհարուցելու կամ հետապնդումը դադարեցնելու՝ «վարույթը նախաձեռնվել է սույն օրենսգրքով չնախատեսված աղբյուրից ստացված տեղեկության հիման վրա» հիմքը (ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը) նպատակաբանական (տեղեղոգիական) ընդլայնման կամ էքստենսիայի (*teleological extension*) ենթարկելու ստրատեգիան¹²: ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում և ՀՀ ՔրԴՕ 173-րդ հոդվածի 6-րդ մասում ամփա «տեղեկությունը օրենքով չնախատեսված աղբյուրից ստանալ» ձևակերպման նպատակաբանական ընդլայնման արդյունքում հան-

¹² Օրենքի տարածական մեկնաբանման և օրենքի նպատակաբանական էքստենսիայի տարբերությունների մասին տե՛ս Ларенц К., Канарис К. В., Методология юриспруденции. Пер. с нем. М.: М-Логос, 2024. С. 204, Аллахвердиев И.Г. Толкование contra legem: место в системе видов толкования // Теория государства и права. 2022. № 4 (29). С. 40-48.

Այս իրավիճակն ըստ էության *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի մասին է, սակայն այն ձևակերպվում է որպես իրավունքի մեկնաբանման տեսություն:

ցանքի մասին տեղեկությունը կհամարվի օրենքով չնախատեսված աղբյուրից ստացված նաև այն դեպքում, երբ առհասարակ բացակայում է քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունը: Եթե արգելվել է քրեական վարույթ նախաձեռնել օրենքով չնախատեսված աղբյուրի հիման վրա, բնականաբար, արգելվել է նաև քննություն կատարել քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայության պարագայում:

Նախաքննության *in rem հորիզոնական* սահմանի խախտման պարագայում բացակայում է ոչ միայն քրեական վարույթ նախաձեռնելու առիթը, այլև քրեական վարույթ նախաձեռնելու ակտը: Այս դեպքում մեկնաբանման *a fortiori* («առավել ևս»-ի) տրամաբանական կանոնի հիման վրա կարելի է եզրակացնել, որ եթե օրենքով չնախատեսված աղբյուրից ստացված տվյալների հիման վրա վարույթ նախաձեռնելը ճանաչվել է որպես քրեական հետապնդում չհարուցելու կամ հարուցված հետապնդումը դադարեցնելու հիմք, առավել ևս քրեական վարույթ նախաձեռնելու ակտի բացակայությունը պետք է ճանաչել հետապնդումը դադարեցնելու (հետապնդում չիրականացնելու) հիմք:

Այս ստրատեգիան հնարավոր չէ կիրառել այն իրավիճակներում, երբ նախաքննությունն իրականացվել է *in rem հորիզոնական* սահմանի խախտմամբ, սակայն տվյալ պահին հետապնդման ենթակա անձը հայտնի չէ: Այս իրավիճակում հետապնդում չհարուցելու ինստիտուտը չի կարող կիրառվել, իսկ օրենսդրությամբ վարույթի մասը կարճելու հնարավորություն նախատեսված չէ:

Երկրորդը կարող է լինել քրեական հետապնդումը բացառող հանգամանքների սպառնիչ (փակ) ցանկը *contra legem* տրամաբանությամբ «բացելու» ստրատեգիան: Սա նշանակում է, որ ՀՀ դատարանները հաստատում են, որ ՀՀ ՔրԴՕ 12-րդ 1-ին մասում առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանքների փակ ցանկ, ուստի գործում է օրենսդրի գիտակցված լռության կանխավարկածը¹³: Այնուհետև դատարանը, ղեկավարվելով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինով և հիմք ընդունելով քրեական վարույթի հանրայինության սկզբունքը ու դրանից անմիջապես բխող «վարույթի հանրային գործունեությունն իրականացվում է բացառապես իրավունքի շահից ելնելով՝ օրենքի հիման վրա ստեղծված իրավասու մարմինների կողմից» կանոնը, «բացում է» ՀՀ

¹³ Օրենսդրական փակ ցանկերի և օրենսդրի գիտակցված լռության կանխավարկածի մասին տե՛ս Դալլաքյան Ա. Ս., Դալլաքյան Ա. Ս., Զակրյուտե շարքեր (դոկտրինա, տեխնիկա և օրենսդրական գործունեություն): մոնոգրաֆիա. Մ.: Յուրլիտինֆորմ. 2025, Գալստյան Ա. Ս., Իրավունքի *extra legem* և *contra legem* զարգացումն օրենսդրական փակ ցանկերի պարագայում, ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2025, № 1 (118) էջեր 9-39:

ՔրԴՕ 12-րդ 1-ին մասում առկա փակ ցանկը և ճանաչում է քրեական հետապնդումը բացառող ևս մեկ հանգամանք՝ նախաքննությունը կատարվել է ՀՀ ՔրԴՕ 178-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների խախտմամբ՝ առանց քրեական վարույթ նախաձեռնելու:

Քննիչը չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված մարմին, եթե նա նախաքննությունը կատարել է *in rem հորիզոնական* սահմանի խախտմամբ, այսինքն՝ նախաքննությունը նոր դեպքով (այլ ենթադրյալ հանցանքով) փաստացի իրականացվել է քրեական վարույթ նախաձեռնելու առիթի և քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության բացակայության պայմաններում: Վարույթի հանրայնության սկզբունքի և դրանից անմիջականորեն բխող «օրենքի հիման վրա ստեղծած մարմին» կանոնի տեսանկյունից քրեական վարույթը (քրեական հետապնդումը) պետք է «փակվել»:

Երրորդը կարող է լինել նախաքննության *in rem հորիզոնական* սահմանի խախտմամբ ստացված ապացույցներն անթույլատրելի ճանաչելու ստրատեգիան: Այսպես, ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել տվյալ քրեական վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող անձի կողմից:

Քննիչի կողմից նախաքննություն կատարելու իրավասությունները ձեռք բերելու համար պետք է առկա լինեն քրեական վարույթ նախաձեռնելու առիթը, քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունը և քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննություն կատարելու հանձնարարությունը: Եթե նոր դեպքի (այլ ենթադրյալ հանցանքի) կապակցությամբ քրեական վարույթ չի նախաձեռնվել, ուստի բացակայում է նաև քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննություն կատարելու հանձնարարությունը: Այս իրավիճակում քննիչը պատշաճ սուբյեկտ չէ:

Ի տարբերություն վերը նշված երկու ստրատեգիաների՝ այս ճանապարհը քրեադատավարական մտածողությանն առավել «հոգեհարազատ է», և այն կարող է օգտագործվել ոչ միայն դատարանների, այլև քրեական վարույթի հանրային մասնակիցների կողմից:

4. Եզրակացություն

Քննիչի իրավասությունը որոշելու տեսանկյունից հատկապես կարևոր է նախաքննության *in rem հորիզոնական* սահմանը, որը համարվում է այն պատճենը, որից այն կողմ քննիչն իրավասու չէ կոնկրետ վարույթի շրջանակում ուսումնասիրել նոր բացահայտված դեպքը: Քննիչն այդ դեպքով քննություն կատարելու իրավասություն ձեռք բերելու համար պետք է նախաձեռնի նոր քրեական վարույթ:

Այդ սահմանը խախտելու տրամաբանական հետևանքը (անկախ ընտրված ստրատեգիայից) պետք է լինի այդ վարույթի «փակումը»:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, 613 էջ:
A Practical Guide to the Conceptual Solutions, Innovative Approaches and Commentary on the Main Institutes of the New Criminal Procedure Code of the Republic of Armenia. Yerevan, Council of Europe, 2022, 613 pp.
2. Ղամբարյան Ա. Ս., Իրավունքի extra legem և contra legem զարգացումն օրենսդրական փակ ցանկերի պարագայում, ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2025, № 1 (118), էջեր 9-39:
Ghambaryan A. S. Extra legem and Contra Legem Development of Law in the Case of Legislative Closed Lists // Journal of the Constitutional Court of the Republic of Armenia, 2025, № 1 (118), pp. 9-39.
3. Ղամբարյան Ա., Քրեական վարույթ նախաձեռնելը (գիտագործնական մեկնաբանություններ), Երևան, Տիգրան Մեծ, 2022, 96 էջ:
Ghambaryan A. The Initiation of Criminal Proceedings (Scientific-Practical Commentary). Yerevan, Tigran Mets, 2022, 96 pp.
4. Walter Wheeler Cook The Powers of Courts of Equity. I. "In Rem" and "In Personam" // Columbia Law Review, 1915, Vol. 15, № 1, pp. 37-54.
5. Аллахвердиев И.Г. Толкование contra legem: место в системе видов толкования // Теория государства и права. 2022. № 4 (29). С. 40-48.
Allahverdiev I.G. Interpretation contra legem: Its Place in the System of Types of Interpretation // Theory of State and Law. 2022. № 4 (29). Pp. 40-48.
6. Гамбарян А. С., Даллакян Л. Г., Закрытые законодательные перечни (доктрина, техника и правоприменительная практика): монография. М.: Юрлитинформ. 2025. 168с.
Ghambaryan A.S., Dallakyan L. G. Closed Legislative Lists (Doctrine, Technique and Law Enforcement Practice): Monograph. Moscow: Yurlitinform. 2025. 168 pp.
7. Жидкова Е. И. Формирование пределов производства по делу в досудебных стадиях уголовного процесса: автореф. дис. ...канд. юрид. наук. М., 2007. 34 с.
Zhidkova E. I. Formation of the Limits of Proceedings in the Pre-trial Stages of the Criminal Process: Abstract of the dissertation ... Candidate of Legal Sciences. Moscow, 2007. 34 pp.
8. Жогин Н.В., Фаткуллин Ф.Н. Предварительное следствие в советском уголовном процессе. М.: Юридическая литература, 1965. 367 с.
Zhogin N.V., Fatkullin F.N. Preliminary Investigation in the Soviet Criminal Process. Moscow: Legal Literature, 1965. 367 pp.
9. Клещина Е.Н., Крылова Д.С. Общие условия предварительного расследования: критический анализ системы и содержания, перспективы развития: монография. М.: Юрлитинформ, 2025. 192 с.
Kleshchina E.N., Krylova D.S. General Conditions of Pre-trial Investigation: A Critical Analysis of the System and Content, Development Prospects: Monograph. Moscow: Yurlitinform, 2025. 192 pp.
10. Ларенц К., Канарис К.-В. Методология юриспруденции. Пер. с нем. М.: М-Логос, 2024. 357 с.
Larenz K., Canaris C.-W. Methodology of Jurisprudence. Translated from German. Moscow: M-Logos, 2024. 357 pp.
11. Соловьев А.Б., Токарева М.Е., Власова Н.А. Общие условия предварительного рас-

следования. М.: Юрлитинформ, 2005. 144 с.

Soloviev A.B., Tokareva M.E., Vlasova N.A. General Conditions of Pre-trial Investigation. Moscow: Yurlitinform, 2005. 144 pp.

12. Строгович М. С. Уголовное преследование в советском уголовном процессе. М.: Изд-во Академии наук СССР, 1951. 191 с.

Strogovich M. S. Criminal Prosecution in the Soviet Criminal Process. Moscow: Publishing House of the USSR Academy of Sciences, 1951. 191 pp.

Artur Ghambaryan

Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law at the Russian-Armenian University, Doctor of Juridical Sciences, Professor, Professor at the Chair of Law of the Academy of Public Administration of the Republic of Armenia, Honored Lawyer of the Republic of Armenia, Member of the Editorial Board of the Scientific-Practical Journal "Legality" of the RA Prosecutor's Office

IN REM AND IN PERSONAM LIMITS OF PRE-TRIAL INVESTIGATION AND THE PROCEDURAL CONSEQUENCES OF THEIR VIOLATION¹

Abstract

The article examines the theoretical foundations, legislative regulation, and practical issues of applying the limits of pre-trial investigation: in rem (regarding the matter) and in personam (regarding the person). The author distinguishes between the horizontal and vertical in rem limits of pre-trial investigation. Focusing primarily on Article 178 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, the author analyzes the essence of the horizontal in rem limit, which prohibits the direct investigation within the same proceedings of "new episodes" separate from the episode described in the protocol on the initiation of criminal proceedings.

The article notes that the law does not explicitly provide for how the "fate" of that part of the proceedings should be resolved in case of a violation of the horizontal in rem limit. For this purpose, three possible approaches (strategies) to solving the problem are proposed. In the author's opinion, the approach most consistent with criminal procedural thinking is to recognize evidence obtained in violation of the horizontal in rem limit as inadmissible.

The author concludes that the horizontal in rem limit of pre-trial investigation is a crucial barrier for the investigator's authority, ensuring the legality and purposefulness of the proceedings. The logical consequence of violating this limit (regardless of the chosen strategy) should be the termination ("closure") of that part of the proceedings conducted in violation thereof.

Keywords: criminal procedure; pre-trial investigation; limits of pre-trial investigation; in rem; in personam; initiation of criminal proceedings; inadmissible evidence.

¹ The article was presented on 26.01.2026 and was reviewed on 25.05.2026.

Артур Гамбарян

Доктор юридических наук, заслуженный юрист РА, заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор кафедры права Академии государственного управления РА, член редакционной коллегии научно-практического журнала «Законность» Прокуратуры РА

IN REM И IN PERSONAM ПРЕДЕЛЫ ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ И ПРОЦЕССУАЛЬНЫЕ ПОСЛЕДСТВИЯ ИХ НАРУШЕНИЯ¹

Абстракт

В статье исследуются теоретические основы, законодательное регулирование и практические проблемы применения пределов предварительного следствия: *in rem* (по факту) и *in personam* (в отношении лица). Автор разграничивает горизонтальный и вертикальный пределы предварительного следствия *in rem*. Сосредоточив основное внимание на статье 178 УПК РА, автор уделяет внимание анализу сущности горизонтального предела *in rem*, который запрещает непосредственно в рамках одного производства расследовать «новые эпизоды», обособленные от эпизода, описанного в протоколе об инициации уголовного производства.

В статье отмечается, что законодательство прямо не предусматривает, как должна решаться «судьба» той части производства в случае нарушения горизонтального предела *in rem*. С этой целью предлагаются три возможных подхода (стратегии) для решения проблемы. По мнению автора, подход, наиболее созвучный уголовно-процессуальному мышлению, заключается в признании недопустимыми доказательств, полученных с нарушением горизонтального предела *in rem*.

Автор приходит к выводу, что горизонтальный предел предварительного следствия *in rem* является важной преградой для полномочий следователя, обеспечивающей законность и целенаправленность производства. Логическим следствием нарушения этого предела (независимо от избранной стратегии) должно быть прекращение («закрытие») той части производства, которая проведена с его нарушением.

Ключевые слова: уголовный процесс; предварительное следствие; пределы предварительного следствия; *in rem*; *in personam*; инициатива уголовного производства; недопустимые доказательства

¹ Статья была представлена 26.01.2026 и прошла рецензирование 25.05.2026.

Կարեն Թումանյան

Հայաստանի Հանրապետության քաղաքացույցն դատական խորհրդի անդամ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ¹

Համառոտագիր

Սույն հոդվածը վերլուծում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը՝ հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի, միջազգային և համեմատական սահմանադրական փորձի համակարգային վերլուծության վրա²:

Հոդվածում առանձնակի ուշադրություն է դարձվում սահմանադրական փոփոխությունների առաջարկությանը, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետության և յուրաքանչյուրի պարտականությունների հստակեցմանը, շրջակա միջավայրին պատճառված վնասի փոխհատուցման սահմանադրական ամրագրմանը, տեղեկատվության մատչելիության և հանրային մասնակցության իրավունքների ամրապնդմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության՝ անկախ խորհրդի ստեղծման սահմանադրական հիմքերի ձևավորմանը՝ վարչարարական լիազորություններով օժտված ինստիտուցիոնալ անկախ մարմնի կարգավիճակով:

Այդ փոփոխությունները նպատակ ունեն ձևավորել կանխարգելիչ, երկարաժամկետ և մարդու իրավունքների վրա հիմնված սահմանադրական մոդել՝ համապատասխան միջազգային չափանիշներին և համեմատական սահմանադրական փորձին:

Հիմնաբառեր - սահմանադրական իրավունք, շրջակա միջավայրի պահպանություն, կայուն զարգացում, միջսերնդային արդարություն, բնապահպանական քաղաքականություն, շրջակա միջավայրի պահպանության խորհուրդ:

Ներածություն

Շրջակա միջավայրի վիճակի շարունակական վատթարացումը ժամանակակից սահմանադրաիրավական համակարգերի առջև առաջացնում է նոր հիմ-

¹ Հոդվածը ներկայացվել է 06.04.2026 թ., գրախոսվել է 15.06.2026 թ.:

² Տե՛ս Պավոնի, Ռիկարդո, «Մարդու իրավունքների եվրոպական և միջամերիկյան դատարանների բնապահպանական նախադեպերը. համեմատական դիտարկումներ», 2010 (Pavoni, Riccardo, Environmental Jurisprudence of the European and Inter-American Courts of Human Rights: Comparative Insights, 2010), էջեր 233-264:

նախնդիրներ, ինչպիսի սահմանադրական մոդել կարող է ապահովել բնապահպանական պաշտպանության արդյունավետությունը, կանխարգելիչ քաղաքականության գերակայությունը և մարդու իրավունքների բարձր մակարդակի իրացումը³:

Միջազգային իրավունքի զարգացումները, եվրոպական նախադեպային պրակտիկան և համեմատական սահմանադրական փորձը վկայում են, որ շրջակա միջավայրն այլևս չի ընկալվում որպես միայն ոլորտային քաղաքականության առարկա, այլ նաև որպես սահմանադրական կարգի կառուցակարգային արժեք:⁴

Սույն հոդվածը նպատակ ունի հիմնավորել Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում (այսուհետ՝ Սահմանադրություն) շրջակա միջավայրի պաշտպանության համալիր մոդելի ներդրման անհրաժեշտությունը:

Մեթոդներ: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել և վերլուծվել են սահմանադրական և ներպետական իրավական նորմերը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և որոշ այլ երկրների ներպետական օրենսդրությունն ու այն փաստաթղթերը, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի քաղաքականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը: Հետազոտության շրջանակներում կիրառվել են համեմատական իրավական մեթոդը, համակարգային մոտեցումը, ինչպես նաև նկարագրական և մեկնաբանական վերլուծության մեթոդները:

Շրջակա միջավայրի պահպանության և բարելավման սահմանադրական ամրագրումը

Գործող սահմանադրական կարգավորումը (հոդված 12, մաս 2) սահմանում է, որ «յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանու-

³ Տե՛ս Մեյ, Ջեյմս Ռ., Դեյլի, Էրին, Շրջակա միջավայրի համաշխարհային սահմանադրականությունը, Cambridge University Press, 2015, էջ 1–14 (May, James R.; Daly, Erin, *Global Environmental Constitutionalism*, Cambridge University Press, 2015, pp. 1–14):

⁴ Տե՛ս Մեյ, Ջեյմս Ռ., Դեյլի, Էրին, Շրջակա միջավայրի համաշխարհային սահմանադրականությունը, Cambridge University Press, 2015, էջ 1–14 (May, James R.; Daly, Erin, *Global Environmental Constitutionalism*, Cambridge University Press, 2015, pp. 1–14): Ի լրումն՝ տե՛ս Stockholm Declaration of the United Nations Conference on the Human Environment (1972), Rio Declaration on Environment and Development (1992), ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 76/300 բանաձևը (2022), Aarhus Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters (1998), ինչպես նաև՝ Եվրոպական դատարանի *López Ostra v. Spain* (1994, Application no. 16798/90), *Guerra and Others v. Italy* (1998, Application no. 14967/89), *Hatton and Others v. the United Kingdom* (GC, 2003, Application no. 36022/97), *Taşkın kinand Others v. Turkey* (2004, Application no. 46117/99), *Öneryıldız v. Turkey* (GC, 2004, Application no. 48939/99), *Fadeyeva v. Russia* (2005, Application no. 55723/00), *Budayeva and Others v. Russia* (2008, Applications nos. 15339/02 et al.), *Hajiyev v. Azerbaijan* (2021, Application no. 5548/03), *Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland* (GC, 2024, Application no. 53600/20), ինչպես նաև՝ Ֆրանսիայի Շրջակա միջավայրի խարտիան (2004), Իսպանիայի Սահմանադրությունը (հոդված 45), Պորտուգալիայի Սահմանադրությունը (հոդված 66), Նորվեգիայի Սահմանադրությունը (հոդված 112), Հարավային Աֆրիկայի Հանրապետության Սահմանադրությունը (1996, հոդված 24), Բրազիլիայի Դաշնային Սահմանադրությունը (1988) և Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 2022 թվականի փոփոխությունները:

թյան մասին»՝ ամրագրելով **ընդհանուր արժեքային և վարքագծային պարտականություն**⁵: Այդ դրույթն ունի հիմնականում **ծրագրային-սկզբունքային բնույթ**. այն արտահայտում է հասարակական ակնկալիքը և սահմանադրական արժեքը, սակայն խախտման դեպքում չի հստակեցնում պարտականության բովանդակությունը, իրացման եղանակները կամ իրավական հետևանքները: «Հոգ տանել» ձևակերպումը բաց է մեկնաբանման համար և թողնում է լայն դիսկրեցիա օրենսդրին՝ կոնկրետ իրավական պարտավորությունները սահմանելու հարցում:

Հոդվածով առաջարկվող ձևակերպումը, ի տարբերություն գործող նորմի, ունի **ավելի նորմատիվ և օպերացիոն բնույթ**: Այն ոչ միայն վերահաստատում է մասնակցության պարտականությունը, այլև կապում է կոնկրետ իրավական վարքագծի հետ՝ «կանխել իր գործունեության արդյունքում շրջակա միջավայրին վնասի պատճառումը» և դա իրականացնել «օրենքով սահմանված կարգով»: Այսպիսով, պարտականությունը դուրս է գալիս ընդհանրական հռչակագրի մակարդակից և վերածվում է **իրավական որոշակիության սահմանադրական պահանջի**, որը կարող է հիմք ծառայել օրենսդրական պարտավորությունների, վերահսկողական մեխանիզմների և պատասխանատվության ռեժիմների զարգացման համար:

Գործող կարգավորումը սահմանում է շրջակա միջավայրի պահպանության **ընդհանուր սահմանադրական սկզբունք**, մինչդեռ առաջարկվող ձևակերպումը միտված է այդ սկզբունքը վերափոխելու **իրական գործառնական պարտավորության**, որը կարող է ունենալ անմիջական ազդեցություն դատական մեկնաբանության, կանխարգելիչ պաշտպանության և բնապահպանական պատասխանատվության սահմանադրաիրավական հիմքերի ձևավորման վրա:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում սահմանադրական պարտականությունների ամրագրումը բխում է ժամանակակից սահմանադրաիրավական մտածողության էվոյուցիայից, որի շրջանակներում բնապահպանական հարաբերությունները այլևս չեն սահմանափակվում միայն պետական կառավարման կամ վարչաիրավական կարգավորման դաշտով:

Դրանք ձևավորվում են որպես հասարակության բոլոր անդամների համատեղ պատասխանատվության ոլորտ՝ հիմնված հանրային շահի, սերունդների միջև համերաշխության և կայուն զարգացման գաղափարների վրա:

Շրջակա միջավայրի պահպանության ապահովումը պետության սահմանադրական պարտավորության մակարդակով ամրագրելը բխում է ժամանակակից սահմանադրաիրավական դոկտրինայի հիմնարար դիրքորոշումներից, համաձայն որոնց՝ շրջակա միջավայրը դիտվում է ոչ միայն որպես բնական կամ տնտեսական ռեսուրս, այլև որպես հասարակական կյանքի, մարդու հիմնարար իրավունքների և պետության կայուն զարգացման կառուցակարգային հիմք:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (Constitution of the Republic of Armenia), հոդված 12, մաս 2, 2015 թ.:

Առաջարկվող սահմանադրական նորմատիվ ձևակերպումը պետության համար ձևավորում է պոզիտիվ պարտավորությունների համալիր, որը ներառում է ոչ միայն շրջակա միջավայրին վնաս չպատճառելու պահանջը, այլև դրա պահպանման, բարելավման և վերականգնման գործառնությունները⁶:

Տեսական գրականության մեջ ընդգծվում է, որ նման բազմաշերտ պարտավորությունը բնորոշ է ժամանակակից «սոցիալական և էկոլոգիական պետության» մոդելին, որի շրջանակում պետությունը կոչված է արձագանքել արդեն իսկ առաջացած բնապահպանական խնդիրներին և իրականացնել կանխարգելիչ և ռազմավարական քաղաքականություն⁷: Այս համատեքստում առանձնահատուկ սահմանադրաիրավական նշանակություն ունի բնական պաշարների ողջամիտ (ռացիոնալ) օգտագործման պահանջի ամրագրումը, որը հիմնված է այն գիտական ըմբռնման վրա, որ բնական պաշարները սահմանափակ են, իսկ դրանց շահագործումը պետք է իրականացվի հանրային և երկարաժամկետ շահերի գերակայությամբ⁸: Շրջակա միջավայրի իրավունքի դոկտրինայում այդ սկզբունքը մեկնաբանվում է որպես տնտեսական գործունեության ազատության և բնապահպանական պաշտպանության միջև սահմանադրական հավասարակշռության արտահայտություն⁹:

Առաջարկվող նորմի առանցքային բաղադրիչներից է կայուն զարգացման սկզբունքը, որը միջազգային և սահմանադրական իրավունքում ճանաչվում է որպես համընդհանուր ուղղորդող սկզբունք: Կայուն զարգացումը բնութագրվում է որպես սոցիալական, տնտեսական և էկոլոգիական շահերի ինտեգրված մոդել, որի նպատակն է ապահովել ներկա սերունդների կարիքների բավարարումը՝ առանց վտանգելու ապագա սերունդների հնարավորությունները¹⁰: Սահմանա-

⁶ Տե՛ս Բոյլ, Ալան, Մարդու իրավունքներն ու շրջակա միջավայրը, ի՞նչ է հաջորդում, *European Journal of International Law*, հատ. 23, հմր. 3, Oxford University Press, 2012, էջ 613–642, մասնավորապես՝ էջ 620–628, 635–642 (Boyle, Alan, “Human Rights and the Environment: Where Next?”, *European Journal of International Law*, Vol. 23, No. 3, Oxford University Press, 2012, pp. 613–642, esp. pp. 620–628, 635–642):

⁷ Տե՛ս Բոյդ, Դեյվիդ Ռ., Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխությունը. սահմանադրությունների, մարդու իրավունքների և բնապահպանության համաշխարհային ուսումնասիրություն, UBC Press, 2012, էջ 3–11, 231–258, 281–290 (Boyd, David R., *The Environmental Rights Revolution: A Global Study of Constitutions, Human Rights, and the Environment*, UBC Press, 2012, pp. 3–11, 231–258, 281–290):

⁸ Տե՛ս Սենդս, Ֆիլիպ, Փիլ, Ժակլին, Միջազգային բնապահպանական իրավունքի սկզբունքները, 3-րդ հրատ., Cambridge University Press, 2012, էջ 187–237, մասնավորապես՝ էջ 198–212 (Sands, Philippe; Peel, Jacqueline, *Principles of International Environmental Law*, 3rd ed., Cambridge University Press, 2012, pp. 187–237, esp. pp. 198–212):

⁹ Տե՛ս Կիսս, Ալեքսանդր, Շելթոն, Դինա, *Միջազգային բնապահպանական իրավունք*, 3-րդ հրատ., Transnational Publishers, 2004, էջ 43–58, 782–810, մասնավորապես՝ էջ 789–801 (Kiss, Alexandre; Shelton, Dinah, *International Environmental Law*, 3rd ed., Transnational Publishers, 2004, pp. 43–58, 782–810, esp. pp. 789–801):

¹⁰ Տե՛ս Շրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ Ռիո դը Ժանեյրոյի հռչակագիրը, ընդունված՝ 1992 թ. հունիսի 14-ին, ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման համաժողովում, սկզբունքներ 1, 3 և 4 (Rio Declaration on Environment and Development, adopted at the United Nations Conference on Environment and Development, Rio de Janeiro, 14 June 1992, Principles 1, 3 and 4):

դրական մակարդակով այդ սկզբունքի ամրագրումը պետության քաղաքականությանը հաղորդում է երկարաժամկետ և ռազմավարական ուղղվածություն:

Նշված դրություն ամրագրված ապագա սերունդների նկատմամբ պատասխանատվությունը հիմնվում է միջսերնդային արդարության տեսության վրա, որը զարգացված է շրջակա միջավայրի իրավունքի և սահմանադրական փիլիսոփայության մեջ¹¹: Այդ մոտեցման համաձայն՝ պետությունը հանդես է գալիս որպես ոչ միայն ներկայիս հասարակության, այլև ապագա սերունդների շահերի վստահված անձ, ինչը պահանջում է շրջակա միջավայրի պաշտպանությունը դիտարկել որպես սահմանադրականորեն երաշխավորված հանրային շահ:

Ֆրանսիայի, Իտալիայի, Հարավային Աֆրիկայի, Իսպանիայի, Նորվեգիայի և Պորտուգալիայի սահմանադրական փորձի համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից սահմանադրաիրավական համակարգերում շրջակա միջավայրի պաշտպանությունը աստիճանաբար վերածվում է ինքնուրույն սահմանադրական արժեքի՝ համակցելով սուբյեկտիվ իրավունքների ճանաչումը, պահպանության պարտականությունների սահմանումը և պետության ակտիվ դերակատարումը¹²:

Առաջարկվող ձևակերպմամբ՝ սահմանադրական պարտականության սուբյեկտ է ճանաչվում յուրաքանչյուր մարդ, ինչը համապատասխանում է շրջակա միջավայրի՝ որպես համընդհանուր բարիքի բնույթին: Գրականության մեջ հիմնավորվում է, որ շրջակա միջավայրը, լինելով մարդու կյանքի և առողջության նյութական հիմքը, չի կարող պահպանվել բացառապես պետական միջոցով և պահանջում է անհատների վարքագծի սահմանադրական ուղղորդում և կանխարգելիչ իրավական մեխանիզմների զարգացում:

Առաջարկվող սահմանադրական ձևակերպումը հետևյալն է.

«Յուրաքանչյուր ոք ունի սահմանադրական պարտականություն՝ մասնակցելու շրջակա միջավայրի պահպանությանը և բարելավմանը, օրենքով սահմանված կարգով կանխելու իր գործունեության արդյունքում շրջակա միջավայրին վնասի պատճառումը»:

¹¹ Տե՛ս Վայս, Էդիթ Բրաուն, *Արդարություն ապագա սերունդների նկատմամբ. միջազգային իրավունքը, ընդհանուր ժառանգությունը և միջսերնդային արդարությունը*, United Nations University, 1989, էջ 38–45 (Weiss, Edith Brown, *In Fairness to Future Generations: International Law, Common Patrimony, and Intergenerational Equity*, United Nations University, 1989, pp. 38–45): Ի լրումն՝ տե՛ս Ֆրանսիայի Շրջակա միջավայրի խարտիա, 2004 թ., նախաբան և հոդված 6 (Charter for the Environment, 2004, Preamble and Article 6), ինչպես նաև՝ Նորվեգիայի Սահմանադրություն, հոդված 112 (Constitution of Norway, Article 112):

¹² Տե՛ս շրջակա միջավայրի սահմանադրական պաշտպանության ոլորտում եվրոպական պետությունների հիմնական ակտերը, ներառյալ՝ Ֆրանսիայի Շրջակա միջավայրի խարտիան (2004), Իտալիայի Հանրապետության Սահմանադրությունը՝ շրջակա միջավայրին վերաբերող 2022 թ. սահմանադրական փոփոխություններով, Իսպանիայի Սահմանադրությունը (1978, հոդված 45), Պորտուգալիայի Սահմանադրությունը (հոդված 66), ինչպես նաև՝ Նորվեգիայի Սահմանադրությունը (հոդված 112):

Ծրջակա միջավայրին պատճառած վնասի հատուցման սահմանադրական ամրագրումը

Ծրջակա միջավայրին պատճառված վնասի փոխհատուցման սահմանադրական պարտականության ամրագրումը բխում է ժամանակակից բնապահպանական իրավունքի հիմնարար դոկտրինալ մոտեցումներից, ըստ որոնց՝ էկոլոգիական վնասը չի կարող դիտարկվել որպես սովորական քաղաքացիաիրավական վնաս¹³: Այն ունի հանրային բնույթ, առնչվում է անորոշ շրջանակի անձանց իրավունքներին և խաթարում է հասարակական զարգացման կայուն հիմքերը:

Այս մոտեցման առանցքում գտնվում է միջազգային և եվրոպական բնապահպանական իրավունքում լայնորեն ճանաչված «աղտոտողը վճարում է» սկզբունքը (Polluter Pays Principle), որի համաձայն՝ շրջակա միջավայրին վնաս պատճառած սուբյեկտը պետք է կրի այդ վնասի կանխարգելման, վերացման և վերականգնման ծախսերը: Նշված սկզբունքը նորմատիվորեն ամրագրված է Եվրոպական միության բնապահպանական քաղաքականության շրջանակներում և իր կոնկրետ իրավական արտահայտությունն է ստացել ԵՄ Ծրջակա միջավայրի պատասխանատվության դիրեկտիվում¹⁴:

Սահմանադրական համեմատական իրավունքի տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի նաև Ֆրանսիայի Ծրջակա միջավայրի խարտիան, ըստ որի՝ «Յուրաքանչյուրը պարտավոր է մասնակցել շրջակա միջավայրին պատճառված վնասի վերացմանը՝ օրենքով սահմանված պայմաններով»¹⁵: Այս դրույթը մեկնաբանվում է որպես պատասխանատվության և փոխհատուցման սկզբունքի ուղղակի սահմանադրականացում:

¹³ Տե՛ս Սենդս, Ֆիլիպ, Փիլ, ժակլին, Միջազգային բնապահպանական իրավունքի սկզբունքները, 3-րդ հրատ., Cambridge University Press, 2012, էջ 205–212, 736–744 (Sands, Philippe; Peel, Jacqueline, Principles of International Environmental Law, 3rd ed., Cambridge University Press, 2012, pp. 205–212, 736–744): Ի լրումն՝ տե՛ս Բիրնի, Փաթրիսիա, Բոյլ, Ալան, Ռեդգուել, Քեյթրին, Միջազգային իրավունք և շրջակա միջավայր, 3-րդ հրատ., Oxford University Press, 2009, էջ 283–294, 317–326 (Birnie, Patricia; Boyle, Alan; Redgwell, Catherine, International Law and the Environment, 3rd ed., Oxford University Press, 2009, pp. 283–294, 317–326): Կիսս, Ալեքսանդր, Շելթոն, Դինա, Միջազգային բնապահպանական իրավունք, 3-րդ հրատ., Transnational Publishers, 2004, էջ 105–118, 553–566 (Kiss, Alexandre; Shelton, Dinah, International Environmental Law, 3rd ed., Transnational Publishers, 2004, pp. 105–118, 553–566):

¹⁴ Տե՛ս Ծրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ Ռիո դը Ժանեյրոյի հռչակագիրը, 1992 թ., սկզբունք 16 (Rio Declaration on Environment and Development, 1992, Principle 16): Ի լրումն՝ տե՛ս Սենդս, Ֆիլիպ, Փիլ, ժակլին, Միջազգային բնապահպանական իրավունքի սկզբունքները, 3-րդ հրատ., Cambridge University Press, 2012, էջ 228–236 (Sands, Philippe; Peel, Jacqueline, Principles of International Environmental Law, 3rd ed., Cambridge University Press, 2012, pp. 228–236): Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թ. ապրիլի 21-ի 2004/35/EC դիրեկտիվը շրջակա միջավայրի պատասխանատվության մասին՝ շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելման և վերականգնման առնչությամբ, նախաբան, պարբ. 2 և 18, ինչպես նաև՝ հոդված 1 (Directive 2004/35/EC of the European Parliament and of the Council of 21 April 2004 on environmental liability with regard to the prevention and remedying of environmental damage, Recitals 2 and 18, Article 1):

¹⁵ Տե՛ս Ֆրանսիայի Ծրջակա միջավայրի խարտիա, 2004 թ. (Charter for the Environment, 2004):

Առաջարկվող ձևակերպման առավելությունն այն է, որ այն սահմանադրական մակարդակով ամրագրում է փոխհատուցման պարտականության ընդհանուր սկզբունքը, իսկ դրա իրացման կոնկրետ մեխանիզմների սահմանումը թողնում է օրենսդրական կարգավորմանը:

Առաջարկվող սահմանադրական ձևակերպումը հետևյալն է.

«Յուրաքանչյուր ոք ունի սահմանադրական պարտականություն՝ օրենքով սահմանված կարգով փոխհատուցելու շրջակա միջավայրին իր պատճառած վնասը»:

Տեղեկատվության հասանելիության և հանրային մասնակցության ապահովման սահմանադրական ամրագրումը

Օրինակի կոնվենցիա

«Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացման գործընթացին հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան սահմանում է երեք հիմնարար իրավունքներ.

1. տեղեկատվության հասանելիություն,
2. որոշումների կայացմանը մասնակցություն,
3. դատական պաշտպանություն:

Հայաստանը վավերացրել է այս կոնվենցիան 2001 թվականին¹⁶:

ԵՄ դիրեկտիվներ

ԵՄ Շրջակա միջավայրի տեղեկատվության մատչելիության դիրեկտիվը սահմանում է հանրային մարմինների պարտավորությունը. տրամադրել շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվություն՝ առանց անհրաժեշտության հիմնավորելու հարցումը:¹⁷

Եվրոպական դատարանը «Հաջինն ընդդեմ Ադրբեջանի» (Hajiye v. Azerbaijan) (2021 թ.) ճանաչեց Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում¹⁸: Լրագրողը 2010 թ. հարցում էր ուղարկել Առողջապահության նախարարություն և Նախարարների Կաբինետ՝ պահանջելով Գաբալայի ռադիոլոկացիոն կայանի շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա ազդեցության մասին տեղեկատվություն, բայց պատասխան չէր ստացել: Դատարանը արձանագրել է, որ

¹⁶ Տե՛ս Օրինակի կոնվենցիա, 1998 թ. (Aarhus Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters, 1998), հոդվ. 4-9:

¹⁷ Տե՛ս Եվրոպական միության դիրեկտիվ՝ շրջակա միջավայրի տեղեկատվության մատչելիության մասին, 2003/4/EC (Directive 2003/4/EC on public access to environmental information), 28 հունվարի 2003 թ., հոդվ. 3(1):

¹⁸ Տե՛ս «Հաջինն ընդդեմ Ադրբեջանի» վճիռը, 2021 թ. (Rovshan Hajiye v. Azerbaijan, Applications nos. 19925/12 և 47532/13, ECtHR, 09.12.2021), §§ 39-49, 61-76: Տե՛ս նաև՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 1950 թ. (European Convention on Human Rights, 1950), հոդվ. 10:

լրագրողի՝ տեղեկատվության հարցմանը չպատասխանելը խախտում է խոսքի ազատության իրավունքը:

Առաջարկվող սահմանադրական ձևակերպումը հետևյալն է.

«Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված պայմաններով և ծավալով ունի հանրային մարմինների տիրապետման ներքո գտնվող շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության հասանելիության և շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող հանրային որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունք»:

Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհուրդ ստեղծելու սահմանադրական ամրագրումը

Հայաստանի Հանրապետությունում գործող պետական մարմինների լիազորությունների շրջանակում ներառված է շրջակա միջավայրի պահպանության ապահովման ինստիտուցիոնալ պարտականությունը և դրանից բխող մարդու իրավունքների պաշտպանության պետության պոզիտիվ պարտականությունների իրականացումը¹⁹:

Առկա ինստիտուցիոնալ կառուցվածքը ինքնին չի վերացնում պետական քաղաքականության և հանրային շահերի միջև շրջակա միջավայրի պահպանության հարցում հակասությունը: Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում պետական մարմինները միաժամանակ ներգրավված են տնտեսական զարգացման քաղաքականության մշակման, բնական պաշարների շահագործման թույլտվությունների տրամադրման և վերահսկողության գործառնություններում, ինչը կարող է հանգեցնել պետական և հանրային շահերի, ինչպես նաև ներկա և ապագա սերունդների շահերի միջև կառուցվածքային հակասություններ:

Այդ համատեքստում սահմանադրական մակարդակով շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի ստեղծումը կարող է ծառայել որպես ինստիտուցիոնալ հակակշիռ՝ ապահովելով գիտականորեն հիմնավորված գնահատականների ներկայացումը, միջսերնդային արդարության սկզբունքի գործնական իրացումը և մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջավայրային ռիսկերի նկատմամբ կանխարգելիչ վերահսկողությունը:

Միաժամանակ, նման մարմնի արդյունավետությունը կարող է զգալիորեն բարձրանալ այն դեպքում, երբ նրա լիազորությունները սահմանափակված չլինեն միայն խորհրդատվական գործառնություններով, այլ ներառեն նաև վարչարարություն իրականացնելու իրավասություններ՝ խոշոր շրջակա միջավայրի շահագործողների նկատմամբ ուսումնասիրություն իրականացնելու, վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու, այդ թվում՝ տուգանքներ սահմանելու կամ լիցենզիաների կասեցման և դադարեցման հարցեր հարուցելու հնարավորություն:

¹⁹ Տե՛ս Շելթոն, Դինա, Մարդու իրավունքներն ու շրջակա միջավայրը. նյութական իրավունքներ, 2015 (Shelton, Dinah, *Human Rights and the Environment: Substantive Rights*, 2015), էջեր 265-272:

Շրջակա միջավայրի՝ անկախ խորհրդի սահմանադրական ամրագրումը բխում է ժամանակակից սահմանադրաիրավական և բնապահպանական մտածողության այն միտումից, ըստ որի՝ շրջակա միջավայրի պաշտպանությունը չի կարող արդյունավետորեն ապահովվել բացառապես քաղաքական կամ վարչական մարմինների միջոցով: Շրջակա միջավայրի իրավունքի դոկտրինայում լայնորեն ընդունված է, որ էկոլոգիական որոշումները ունեն բարդ, գիտական բնույթ, ինչը պահանջում է անկախ, մասնագիտական և ինստիտուցիոնալ երաշխավորված գնահատում:

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ անկախ մարմինների ստեղծումը հիմնավորվում է այն ոլորտներում, որտեղ առկա են՝

1. **բարձր հանրային շահ,**
2. **քաղաքական մարմիններից և գործընթացներից կախվածության ռիսկ,**
3. **որոշումների անդառնալի հետևանքները:**

Շրջակա միջավայրը հենց այդպիսի ոլորտ է:²⁰

Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտը լիովին համապատասխանում է այս չափանիշներին, քանի որ բնապահպանական որոշումները ուղղակիորեն առնչվում են մարդու կյանքի և առողջության իրավունքներին, հանրային բարիքների պահպանությանը և ապագա սերունդների շահերին:

Միաժամանակ, տնտեսական զարգացման առաջնահերթությունների և քաղաքական հաշվարկների ազդեցությունը կարող է թուլացնել երկարաժամկետ բնապահպանական նպատակների իրացումը, իսկ շրջակա միջավայրին հասցվող վնասների մեծ մասը կրում է դժվար վերադարձելի կամ անշրջելի բնույթ: Այդ հանգամանքների համակցությունը սահմանադրաիրավական տեսանկյունից հիմնավորում է շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի ստեղծումը՝ որպես ինստիտուցիոնալ երաշխիք հանրային շահի գերակայության, գիտականորեն հիմնավորված որոշումների ընդունման և միջսերնդային արդարության ապահովման համար:

Համեմատական փորձը ևս վկայում է, որ ժամանակակից ժողովրդավարական պետություններում շրջակա միջավայրի և կլիմայական քաղաքականության արդյունավետ իրականացումը հիմնվում է ինստիտուցիոնալ անկախություն ապահովող հատուկ մարմինների ստեղծման վրա: Այդ առումով Նոր Զելանդիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Միացյալ Թագավորության, ինչպես նաև

²⁰ Տե՛ս Մեյ, Ջեյմս Ռ., Դեյլի, Էրին, Շրջակա միջավայրի համաշխարհային սահմանադրականությունը (May, James R.; Daly, Erin, Global Environmental Constitutionalism), Cambridge University Press, 2015, էջեր 27-33:

Շվեդիայի և Նիդերլանդների փորձը առանձնակի նշանակություն ունի²¹:

Մասնավորապես, Նոր Չելանդիայում 1986 թվականից գործող Շրջակա միջավայրի խորհրդարանական հանձնակատարը նշանակվում է խորհրդարանի կողմից և հաշվետու է անմիջականորեն օրենսդիր իշխանությանը, ինչը ձևավորում է նրա անկախության երկակի երաշխավորում, մինչդեռ Ֆրանսիայի Կլիմայի բարձրագույն խորհուրդը, ստեղծված 2019 թ., ներկայացնում է կլիմայական քաղաքականության գիտական փորձաքննության և անկախ մոնիթորինգի ժամանակակից ինստիտուցիոնալ մոդել:

Գերմանիայի Կայուն զարգացման խորհուրդը, հիմնադրված 2001 թ. դաշնային կառավարության որոշմամբ, ինստիտուցիոնալացնում է կայուն զարգացման համապարփակ մոտեցումը՝ հանդես գալով որպես խորհրդատվական հարթակ և հանրային երկխոսության միջավայր, իսկ Միացյալ Թագավորության Կլիմայական փոփոխությունների հանձնաժողովը, ձևավորված 2008 թ. Կլիմայական փոփոխությունների մասին օրենքի հիման վրա, համարվում է անկախ կլիմայական վերահսկողության առաջադեմ օրինակներից մեկը:

Նույն տրամաբանությամբ Շվեդիայի Շրջակա միջավայրի պահպանության գործակալությունը (1967 թ.) և Նիդերլանդների Շրջակա միջավայրի գնահատման գործակալությունը (2008 թ.) գործում են որպես վարչական լիազորություններ ունեցող, սակայն քաղաքական ազդեցություններից ինստիտուցիոնալորեն պաշտպանված մարմիններ՝ համադրելով գործառնական ինքնավարությունը կարգավորիչ և գնահատողական դերակատարության հետ և հաստատելով բնապահպանական կառավարման ոլորտում մասնագիտացված անկախ կառույցների ձևավորման համընդհանուր միտումը:

Առաջարկվող մոդել Հայաստանի համար

Հայաստանի Հանրապետության համար առաջարկվում է խառը (հիբրիդային) մոդել, որը համադրում է Միացյալ Թագավորության օրենսդրական հաստատմամբ պայմանավորված ինստիտուցիոնալ կայունությունը, Նոր Չելանդիայի խորհրդարանական հաշվետվողականությամբ ապահովվող անկախությունը և Նիդերլանդների գիտահետազոտական ինքնավարությունը՝ միաժամանակ

²¹ Տե՛ս Նոր Չելանդիայի Շրջակա միջավայրի խորհրդարանական հանձնակատարի մասին օրենք (New Zealand: Environment Act 1986), Section 4-11: Ինչպես նաև՝ տե՛ս Ֆրանսիայի Կլիմայի բարձրագույն խորհուրդ (France: Haut Conseil pour le climat), Décret n° 2019-439 du 14 mai 2019 relative au Haut Conseil pour le climat, Articles 1-3: Տե՛ս Գերմանիայի Կայուն զարգացման խորհուրդ (Germany: German Council for Sustainable Development (RNE)), Cabinet Resolution of 4 April 2001, updated 2020: Տե՛ս Միացյալ Թագավորության «Կլիմայական փոփոխությունների մասին» օրենք (United Kingdom: Climate Change Act 2008), Chapter 27, Part 2: "The Committee on Climate Change", Sections 32-38: Տե՛ս Շվեդիայի Շրջակա միջավայրի պահպանության գործակալություն (Sweden: Swedish Environmental Protection Agency (Naturvårdsverket)), Ordinance (2012:989) with instructions for the Swedish Environmental Protection Agency, Sections 1-5: Տե՛ս Նիդերլանդների Շրջակա միջավայրի գնահատման գործակալություն (Netherlands: Netherlands Environmental Assessment Agency (PBL)), Planbureau voor de Leefomgeving, Establishment Law of 2008, Article 2-4:

ներառելով վարչարարական գործառնությունների իրականացումը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

Այդպիսի մոդելի շրջանակում Խորհրդի հիմնական գործառնությունները պետք է ընդգրկեն ոչ միայն գիտական փորձաքննությունը, անկախ քաղաքականության գնահատումը, երկարաժամկետ մոնիթորինգը և հանրային իրազեկումը, այլև վերահսկողական և կարգավորիչ լիազորությունների իրականացումը՝ բնապահպանական պարտավորությունների կատարման ապահովման նպատակով, ինչը կարող է երաշխավորել բնապահպանական քաղաքականության շարունակական վերահսկողություն և հաշվետվողականություն:

Սահմանադրությամբ նպատակահարմար է ամրագրել Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի սահմանադրական կարգավիճակը՝ որպես ինքնուրույն և ինստիտուցիոնալորեն պաշտպանված մարմին, որը ոչ միայն կապահովի բնապահպանական քաղաքականության և ռազմավարությունների գիտական փորձաքննություն, անկախ գնահատում և երկարաժամկետ մոնիթորինգ, այլև կունենա վարչարարական լիազորություններ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում՝ որպես հանրային շահի գերակայության և միջսերնդային արդարության իրականացման սահմանադրական երաշխիք:

Եզրակացություն

Վերլուծված սահմանադրական հիմնավորումները ցույց են տալիս, որ շրջակա միջավայրի պաշտպանության արդյունավետ ապահովումը պահանջում է ոչ թե հատվածային, այլ համակարգային սահմանադրաիրավական մոտեցում: Պետության պոզիտիվ պարտավորությունների ամրագրումը, յուրաքանչյուրի մասնակցության և պատասխանատվության սահմանադրականացումը, բնապահպանական վնասի փոխհատուցման ընդհանուր սկզբունքը, տեղեկատվության հասանելիության և հանրային մասնակցության իրավունքները, ինչպես նաև անկախ ինստիտուցիոնալ վերահսկողության ստեղծումը միասին ձևավորում են կանխարգելիչ և երկարաժամկետ բնապահպանական կառավարման մոդել:

Այս մոդելը համապատասխանում է ժամանակակից սահմանադրական դոկտրինային, միջսերնդային արդարության պահանջներին և համեմատական իրավունքի զարգացումներին՝ ապահովելով մարդու հիմնարար իրավունքների իրական պաշտպանություն և պետական քաղաքականության ռազմավարական ուղղվածություն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների խորհրդին ներկայացնել առաջարկություն, նոր ընդունվող Սահմանադրության տեքստում ձևակերպել հետևյալ դրույթները.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներ գլխում սահմանել հետևյալ դրույթները.

1. «Յուրաքանչյուր ոք ունի սահմանադրական պարտականություն՝ մաս-

նակցելու շրջակա միջավայրի պահպանությանը և բարելավմանը, օրենքով սահմանված կարգով կանխելու իր գործունեության արդյունքում շրջակա միջավայրին վնասի պատճառումը»:

2. «Յուրաքանչյուր ոք ունի սահմանադրական պարտականություն՝ օրենքով սահմանված կարգով փոխհատուցելու շրջակա միջավայրին իր պատճառած վնասը»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում սահմանել հետևյալ դրույթները.

«Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված պայմաններով և ծավալով ունի հանրային մարմինների տիրապետման ներքո գտնվող շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության հասանելիության և շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող հանրային որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունք»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Ազգային ժողով» գլխում սահմանել օրենսդիր մարմնի լիազորություն:

«Ազգային ժողովը օրենքով սահմանված կարգով ձևավորում է «Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհուրդ»: Խորհուրդի գործունեության կարգը և լիազորությունները սահմանվում են «Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհուրդի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով»:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (Constitution of the Republic of Armenia):
2. ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի վերաբերյալ Ստոկհոլմի հռչակագիր, 1972 թ. (Stockholm Declaration of the United Nations Conference on the Human Environment, 1972):
3. Շրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ Ռիո դը Ժանեյրոյի հռչակագիր, 1992 թ. (Rio Declaration on Environment and Development, 1992):
4. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձև՝ «մաքուր, առողջ և կայուն միջավայրի իրավունք», 28 հուլիսի 2022 թ. (UN General Assembly Resolution 76/300: The human right to a clean, healthy and sustainable environment, 28 July 2022):
5. Օրհուսի կոնվենցիա՝ շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության հասանելիության, հանրային մասնակցության և արդարադատության մատչելիության մասին, 1998 թ. (Aarhus Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters, 1998):
6. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 1950 թ. (European Convention on Human Rights, 1950):
ԵՄ իրավունքի աղբյուրներ
7. Եվրոպական միության դիրեկտիվ՝ շրջակա միջավայրի տեղեկատվության մատչելիության մասին, 2003/4/EC (Directive 2003/4/EC on public access to environmental information):
8. Եվրոպական միության դիրեկտիվ՝ շրջակա միջավայրի պատասխանատվության մասին, 2004/35/EC (Directive 2004/35/EC on environmental liability): ՄԻԵԴ նախադեպային իրավունք
9. «Լոպեզ Օստրան ընդդեմ Իսպանիայի» վճիռ, 1994 թ., դիմում № 16798/90 (López Ostra v. Spain, Application no. 16798/90, ECtHR, 1994):
10. «Գյուերան և այլք ընդդեմ Իտալիայի» վճիռ, 1998 թ., դիմում № 14967/89 (Guerra and Others v. Italy, Application no. 14967/89, ECtHR, 1998):
11. «Հատտոն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» վճիռ, 2003 թ., դիմում № 36022/97 (Hatton and Others v. the United Kingdom, Application no. 36022/97, ECtHR, 2003):
12. «Թաշքին և այլք ընդդեմ Թուրքիայի» վճիռ, 2004 թ., դիմում № 46117/99 (Taşkın and Others v. Turkey, Application no. 46117/99, ECtHR, 2004):
13. «Օներյուլդզ ընդդեմ Թուրքիայի» Մեծ պալատի վճիռ, 2004 թ., դիմում № 48939/99 (Öneryıldız v. Turkey, Application no. 48939/99, ECtHR (GC), 2004):
14. «Ֆադեյևան ընդդեմ Ռուսաստանի» վճիռ, 2005 թ., դիմում № 55723/00 (Fadeyeva v. Russia, Application no. 55723/00, ECtHR, 2005):
15. «Բուդայևա և այլք ընդդեմ Ռուսաստանի» վճիռ, 2008 թ., դիմումներ № 15339/02 և այլն (Budayeva and Others v. Russia, Applications nos. 15339/02 et al., ECtHR, 2008):
16. «Հաջին և ընդդեմ Ադրբեջանի» վճիռ, 2021 թ. (Hajiyev v. Azerbaijan, ECtHR, 2021):
17. «Կլիմայի տարեց կանանց միությունը Շվեյցարիայում և այլք ընդդեմ Շվեյցարիայի» Մեծ պալատի վճիռ, 2024 թ., դիմում № 53600/20 (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland, Application no. 53600/20, ECtHR (GC), 2024):
18. «Գրինպեյս Նորդիկ և այլք ընդդեմ Նորվեգիայի» գործ, դիմում № 34068/21 (Greenpeace Nordic and Others v. Norway, Application no. 34068/21, ECtHR):
Համեմատական սահմանադրական աղբյուրներ
19. Ֆրանսիայի Շրջակա միջավայրի խարտիա, 2004 թ. (Charter for the Environment, 2004):

20. Իտալիայի սահմանադրություն (Constitution of the Italian Republic / Costituzione della Repubblica Italiana)՝ ներառյալ շրջակա միջավայրի վերաբերյալ փոփոխությունները (2022 constitutional amendment):
21. Իսպանիայի սահմանադրություն, 1978 թ., հոդված 45 (Spanish Constitution, 1978, Article 45):
22. Պորտուգալիայի սահմանադրություն, հոդված 66 (Constitution of the Portuguese Republic, Article 66):
23. Նորվեգիայի սահմանադրություն, հոդված 112 (Constitution of Norway, Article 112):
24. Հարավային Աֆրիկայի Հանրապետության սահմանադրություն, 1996 թ., հոդված 24 (Constitution of the Republic of South Africa, 1996, Section 24):
25. Բրազիլիայի Դաշնային Սահմանադրություն, 1988 թ., բնապահպանական դրույթներ (Constitution of the Federative Republic of Brazil, 1988):
Գիտական գրականություն և դոկտրինա
26. Բոյդ, Դեյվիդ Ռ. «Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխությունը. սահմանադրությունների, մարդու իրավունքների և բնապահպանության համաշխարհային ուսումնասիրություն», 2012 թ. (Boyd, David R., The Environmental Rights Revolution: A Global Study of Constitutions, Human Rights, and the Environment, 2012):
27. Մեյ, Ջեյմս Ռ., Դեյլի, Էրին, «Շրջակա միջավայրի համաշխարհային սահմանադրականությունը», 2015 թ. (May, James R.; Daly, Erin, Global Environmental Constitutionalism, 2015):
28. Բոյլ, Ալան, «Մարդու իրավունքներն ու շրջակա միջավայրը. ինչ է հաջորդում», 2012 թ. (Boyle, Alan, Human Rights and the Environment: Where Next?, 2012):
29. Շելթոն, Դինա, «Մարդու իրավունքներն ու շրջակա միջավայրը. նյութական իրավունքներ», 2015 թ. (Shelton, Dinah, Human Rights and the Environment: Substantive Rights, 2015):
30. Սենդս, Ֆիլիպ, Փիլ, Ժակլին, «Միջազգային բնապահպանական իրավունք» (Sands, Philippe; Peel, Jacqueline, Principles of International Environmental Law):
31. Բիրնի, Փաթրիսիա, Բոյլ, Ալան, Ռեդգուել, Զեթրին, «Միջազգային իրավունք և շրջակա միջավայր» (Birnie, Patricia; Boyle, Alan; Redgwell, Catherine, International Law and the Environment):
32. Կիսս, Ալեքսանդր, Շելթոն, Դինա, «Միջազգային բնապահպանական իրավունք» (Kiss, Alexandre; Shelton, Dinah, International Environmental Law):
33. Վայս, Էդիթ Բրաուն, Արդարություն ապագա սերունդների նկատմամբ. միջազգային իրավունքը, ընդհանուր ժառանգությունը և միջսերնդային արդարությունը, United Nations University, 1989 թ., (Weiss, Edith Brown, In Fairness to Future Generations: International Law, Common Patrimony, and Intergenerational Equity, United Nations University, 1989):
34. Պավոնի, Ռիկարդո, «Մարդու իրավունքների եվրոպական և միջամերիկյան դատարանների բնապահպանական նախադեպերը. համեմատական դիտարկումներ», 2010 թ. (Pavoni, Riccardo, Environmental Jurisprudence of the European and Inter-American Courts of Human Rights: Comparative Insights, 2010): Ինստիտուցիոնալ մոդելներ և քաղաքականության վերահսկողություն
35. Նոր Զելանդիայի շրջակա միջավայրի խորհրդարանական հանձնակատարի մասին օրենք, 1986 թ. (New Zealand: Environment Act 1986 / Parliamentary Commissioner for the Environment):
36. Միացյալ Թագավորության «Կլիմայական փոփոխությունների մասին» օրենք, 2008 թ. (United Kingdom: Climate Change Act 2008):

37. Ֆրանսիայի Կլիմայի բարձրագույն խորհուրդ. ստեղծման իրավական հիմք, 2019 թ. (France: Haut Conseil pour le climat, 2019):
38. Գերմանիայի Կայուն զարգացման խորհուրդ. ստեղծման հիմք, 2001 թ. (Germany: German Council for Sustainable Development (RNE), 2001):
39. Շվեդիայի շրջակա միջավայրի պահպանության գործակալություն (Sweden: Swedish Environmental Protection Agency (Naturvårdsverket)):
40. Նիդերլանդների շրջակա միջավայրի գնահատման գործակալություն (Netherlands: Netherlands Environmental Assessment Agency (PBL)):

Karen Tumanyan

Member of the Supreme Judicial Council of the Republic of Armenia

**THE NECESSITY OF CONSTITUTIONAL AMENDMENTS
AIMED AT ENVIRONMENTAL PROTECTION¹**

Abstract

This article examines the necessity of constitutional amendments aimed at environmental protection, based on a systematic analysis of the case law of the European Court of Human Rights, as well as international and comparative constitutional experience. Particular attention is devoted to proposals for constitutional reform designed to clarify the duties of the State and individuals in the field of environmental protection, to constitutionalize compensation for environmental damage, to strengthen the rights of access to information and public participation, and to establish the constitutional foundations for an independent environmental council vested with administrative powers as an institutionally autonomous body.

These proposed reforms seek to develop a preventive, long-term, and human-rights-based constitutional model consistent with international standards and comparative constitutional practice.

Keywords: constitutional law; environmental protection; sustainable development; intergenerational justice; environmental policy; environmental protection council.

¹ The article was presented on 06.04.2026 and was reviewed on 15.06.2026.

Карен Туманян

Член Высшего судебного совета Республики Армения

НЕОБХОДИМОСТЬ КОНСТИТУЦИОННЫХ ИЗМЕНЕНИЙ, НАПРАВЛЕННЫХ НА ОХРАНУ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ¹

Абстракт

В статье анализируется необходимость конституционных изменений, направленных на охрану окружающей среды, на основе системного исследования прецедентной практики Европейского суда по правам человека, а также международного и сравнительного конституционного опыта. Особое внимание уделяется предложениям по конституционному закреплению обязанностей государства и каждого в сфере защиты окружающей среды, возмещению экологического вреда, укреплению права на доступ к информации и участие общественности, а также формированию конституционных основ создания независимого совета по охране окружающей среды в статусе институционально автономного органа, наделённого административными полномочиями.

Предлагаемые изменения направлены на формирование превентивной, долгосрочной и основанной на правах человека конституционной модели, соответствующей международным стандартам и сравнительному конституционному развитию.

Ключевые слова: конституционное право; охрана окружающей среды; устойчивое развитие; межпоколенческая справедливость; экологическая политика; совет по охране окружающей среды.

¹ Статья была представлена 06.04.2026 и прошла рецензирование 15.06.2026.

Marc Azdaridis

*Chief Specialist of the Department for the Protection of the Interests of the Republic of Armenia in International Arbitration and Foreign Courts,
Office of the Representative of the Republic of Armenia on International Legal Matters, Office of the Prime Minister of the Republic of Armenia*

THE LEGAL NATURE OF ADMINISTRATIVE OFFENSES¹

Abstract

The Code on Administrative Offenses of the Republic of Armenia was adopted back in 1985 and it can be argued that it is rather outdated in the current legal system of the RA considering that it was passed during the USSR, which was fundamentally different from a democratic state governed by the rule of law because of which several provisions of the Code are incompatible with the current realities of the RA. This demonstrates the need for urgent reform. Moreover, the Constitutional Court of the Republic of Armenia has repeatedly referred to the non-modernity of the Code on Administrative Offenses of the Republic of Armenia and the need for changes, stating that part of the legal regulations provided for by the Code pose a legal threat inappropriate for a state governed by the rule of law. In turn, in 2022, the new Criminal Code of the Republic of Armenia entered into force, introducing several reforms. Research on the Criminal Code and the Code on Administrative Offenses shows that in many cases the actions (infractions) defined by the two legal acts are quite difficult to distinguish, which raises the question of the grounds for differentiating the latter and whether there are such grounds or not. Besides that, it is essential to find out the true legal nature of an “administrative offense”: whether it belongs to administrative or criminal law? In other words, the keystone of this paper is the following question: Should administrative offenses be a part of administrative law, or do they belong in essence to criminal law and just have a confusing name? The article will mainly focus on the normative side of the issue, without neglecting the practice.

Keywords: criminal law; crimes; administrative law; administrative offenses; misdemeanor; penalty.

Introduction

The Code on Administrative Offenses of the Republic of Armenia (hereinafter: CAO) was adopted back in 1985 and it can be argued that it is rather outdated in the current legal system of the RA considering that it was passed during the USSR, which

¹ The article was presented on 10.07.2025 and was reviewed on 06.10.2025.

was fundamentally different from a democratic state governed by the rule of law because of which several provisions of the Code are incompatible with the current realities of the RA. The above implies the need for urgent changes. Moreover, the Constitutional Court of the Republic of Armenia (hereinafter: CCT) has repeatedly referred to the non-modernity of CAO and the need for changes, stating that part of the legal regulations provided for by CAO pose a legal threat inappropriate for a state governed by the rule of law². In turn, in 2022, the new Criminal Code of the Republic of Armenia (hereinafter: CC) entered into force, introducing several reforms. Research on CC and CAO shows that in many cases the actions (infractions) defined by the two legal acts are quite difficult to distinguish, which creates the need to find out what the grounds are for differentiating the latter and whether there are such grounds or not. Besides that, it is essential to find out the true legal nature of an “administrative offense”: whether it belongs to administrative or criminal law? In other words, the keystone of this paper is the following question: Should administrative offenses be a part of administrative law, or do they belong in essence to criminal law and just have a confusing name? The article will mainly focus on the normative side of the issue, without neglecting the practice.

In the light of the above, in this paper I will discuss the legal nature of administrative offenses and the issue of the existence of the “Soviet” legacy concept of “administrative offenses” in the current RA and European law, particularly by comparing offenses under the CC and CAO, emphasizing the essence and the scope of the administrative and criminal law, considering also the approaches of Germany, France and Russia.

Additionally, the need for practical changes stemming from theoretical conclusions will also be discussed, as well as their feasibility.

The research will also discuss the issue in the scope of European human rights standards, particularly Article 6 of the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms (hereinafter: ECHR), revealing the autonomous concept of criminal prosecution through the case law of the European Court.

This paper is organized in the following way. Chapter 1 will elaborate on key aspects of criminal law, while Chapter 2 will reveal the essence of administrative law. Chapter 3 is dedicated to administrative offenses *per se* and in Chapter 4 administrative offenses will be considered in comparison with criminal and administrative laws. In Chapter 5 the experience of foreign countries on the issue in question is discussed. Chapter 6 will examine administrative offenses in the light of the ECHR. Lastly, Chapter 7 will address the practical side of the issue under discussion.

The relevance of the topic is evidenced by the planned and implemented reforms of the legislation on criminal, as well as administrative offenses, in light of which it is important to exclude in new legal acts the fundamental theoretical inconsistencies existing in previous substantive laws on public infractions.

² Inter alia decision No 1339 of 24 January 2017.

CHAPTER 1. Criminal Law

To clarify the normative nature of administrative offenses and their affiliation to a particular branch of law, it is first necessary to identify the principal elements of the relevant branch of law, because they predetermine the essence of the latter and make it possible to distinguish one branch of law from another. Thus, before analyzing administrative offenses, it is essential to outline the fundamental nature and evolution of criminal law. Only by understanding the conceptual and historical foundations of criminal liability can we later determine whether administrative offenses belong to this category or form an independent legal institution. For this reason, the key ideas of criminal law will be discussed in this section.

Ancient societies began defining certain actions as unacceptable and imposing punishments for them thousands of years before our era. The Code of Hammurabi, a Babylonian legal text composed during 1755–1750 BC is one of the most famous early sets of laws, which were written in clay tablets and included punishments for crimes such as murder, theft, and adultery³. The greatest representative of Armenian legal and political thought, Mkhitar Gosh, in his 12th-century work *“Girq Datastani”* (Book of Judgment) also addresses several issues of criminal law. Hence, Mkhitar Gosh believes that punishment should have the goal of admonishing, correcting, and educating, rather than inflicting suffering and revenge⁴.

